17503

323.1(91.542)
Д-53

323.1(91.542)
Ջ-53

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
„ՀԱՅՈՑ ՀԱՐՑ"-Ի ՇԱՐՔ — ԳԻՐՔ ՅԵՐԿՐՈՐԴ

ՋԵՄԱԼ-ՓԱՇԱ

„ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ"

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ԱՌԱՋԱԲԱՆՈՎ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1927

„ՀԱՅՈՑ ՀԱՐՑ"-Ի ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԾՐԱԳԻՐԸ

1. «Հայոց հարց»-ի նախապատմությունը
   ա) «Հայոց հարց»-ի միջնադարյան շրջանը.
   բ) Պարսկահայք.
   գ) Տաճկահայք.
   դ) Հայերը և Արևմտյան Յեվրոպան.
   ե) Հայերը և Ռուսաստանը։
2. «Հայոց հարց»-ը XIX դարում
   ա) Հայերի ներքին հասարակական-քաղաքական կենցաղն ու զարգացումը.
   բ) Հայերի ռուս-տաճկական պատերազմների ժամանակ.
   գ) Յեվրոպայի միջամտությունը Տաճկաստանի ներքին գործերին և բարենորոգումների խնդիրը։
3. «Հայոց հարց»-ը Բեռլինի պայմանագրից հետո (1878 թ.)
   ա) Յեվրոպական պետությունները Տաճկաստանում.
   բ) Հայերի ազգային քաղաքական կյանքը.
   գ) Ազգային հեղափոխական կուսակցությունները և ազգային հեղափոխական շարժումները.
   դ) Հայերի դիվանագիտական դիմումները։
4. Հայկական ջարդերը (1894 թ.)։
5. Յեվրոպական պետությունների շահերի բաղխումը Տաճկաստանում և Տաճկաստանի հեղափոխությունը (1908 թ.)։
6. Բալկանյան պատերազմը և Հայաստանի «բարենորոգումների հարցը (1912 թ.)։
7. Համաշխարհային պատերազմը և հայերը
   ա) Կամավորական շարժումները.
   բ) Տեղահանություն
   գ) Պատերազմողների միտումները։
8. Ռուսական մեծ հեղափոխությունը և «Հայոց հարց»-ի լուծումը
   ա) Ռուսահայկական քաղաքական կուսակցությունները և Ռուսաստանի հեղափոխությունը.
   բ) Հոկտեմբերյան հեղափոխությունը

26 SEP 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
„ՀԱՅՈՑ ՀԱՐՑ"-Ի ՇԱՐՔ — ԳԻՐՔ ՅԵՐԿՐՈՐԴ

323.1(91.542)
Ջ-53

ՋԵՄԱԼ-ՓԱՇԱ

„ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ"

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ԱՌԱՋԱԲԱՆՈՎ

609
1375

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1927

23.07.2013
14503
21315-1

№ 465 Գլաւլիտ № 872 (բ) Տիրաժ 1000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

ԱՌԱՋԱԲԱՆ

«Հայկական հարցը» վերտառությամբ լույս ընծայող այս պրակը հեղինակի 1919 թվին թուրքերեն լեզվով հրատարակած «Հիշողությունների» մի գլուխն է։ 1922 թվին «Հիշողությունները» լույս են տեսել գերմաներեն, ֆրանսերեն յեվ անգլերեն, իսկ 1923 թվին՝ նաև ռուսերեն (տ. "Записки Джемаль-паши„, 1913 – 1919 гг. изд. ЗКК РКП (б.), Тифлис, 1923 г.)։ Հայերեն այս քաղվածը թարգմանություն է գերմաներեն հրատարակությունից, վոր կատարել է Ա. Աթանասյան (տ. Djemal Pascha, Erinnerungen eines türkischen Staatsmannes, München, 1922)։

«Հայկական հարցի» մեջ մեծ տեղ են բռնում այն առարկությունները, վոր անում է հեղինակը ռուս յեվ յեվրոպական «հայասերներին»՝ տաճկահայ շարժման մասին։ Հեղինակի խորհրդածությունների այս առթիվ մի բանավեճ է առաջին հերթին ցարական Ռուսաստանի «ազատարար» քաղաքականության փաստաբան Ա. Մանդելշտամի հետ (տ. André Mandelstam „Le sort de l'Empire ottoman" Lausanne et Paris, 1917)։ Ցանկանալով ընթերցողին լիակատար գաղափար տալ բաղխվող տեսակետների մասին՝ անհրաժեշտ համարեցինք ներկա հրատարակության հավելվածների բաժնում թարգմանաբար ընդարձակ քաղվածներ անել նայեվ Մանդելշտամի գրքից։

*
* *

Մի քանի տեղեկություններ հեղինակ Ջեմալ-փաշայի մասին։

Ահմեդ Ջեմալը յերիտասարդ թյուրքերի — «Միություն յեվ Առաջադիմություն» կուսակցության ղեկավարներից է յեվ մեկը «սահմանադրական» Թյուրքիայի ռազմական յեվ պետական նշանավոր մարդկանցից։ Իմպերիալիստական պատերազմից առաջ վարել է պատասխանատու վարչական յեվ ռազմական պաշտոններ, ստանձնելով վերջում ծովային գործոց մինիստրի պաշտոն։ 1914 թվին Էնվեր փաշան, տարակարծիք լինելով Ջեմալի հետ յեվ յերկյուղ կրելով նրա աճող ազդեցությունից Պոլսում՝ Սիրիական զորաբանակի հրամանատարի պաշտոնով հեռացնում է նրան մայրաքաղաքից։ Պաղեստինի վրայով Ջեմալը ղեկավարում է թրքական ուժերի արշավանքը դեպի Սուեզի ջրանցքը, նպատակ ունենալով անմիջական հարված հասցնել անգլիական տիրապետությանն Արեվելքում։ Անհաջողության մատնվելով՝ 1917 թվին նա վերադառնում է Պոլիս, ստանձնելով իր նախկին պաշտոնը ծովային գործոց մինիստրության մեջ։ 1918 թվին, Թյուրքիայի պարտության տարում, փախուստ է տալիս դեպի Գերմանիա յեվ Շվեյցարիա։ Ջինդաղարից հետո՝ Անտանտին հետ Պոլսի կառավարությունը նրան մահվան եր դատապարտել՝ ամբաստանելով

հայերի տեղահանության յեվ ջարդերի մեջ։ 1921 թվին, անցնելով Ավղանիստան, ռազմական խորհրդատուի պաշտոն ե ստանձնում։ Հաջորդ տարին, 1922 թվին, սպանվում ե Թիֆլիսում, ինչպես յենթադրվում ե, դաշնակ տեռրորիստների ձեռքով։

*
* *

Հայ ընթերցողի համար առանձնապես անհրաժեշտ ե հիշատակել Ջեմալի կենսագրության հետ կապված մի միջադեպ։ Պատերազմի ժամանակ, 1915 թ. վերջերին, Պոլսի «հայկական շրջաններից», այսինքն՝ դաշնակների կողմից լիազորված բժ. Զավրիյեվը տեղեկացնում ե ռուսաց արտաքին գործոց մինիստրության, վոր իբր հույս կա Ջեմալին թեքել Պոլսի կառավարության յեվ գերմանացիների դեմ։ Անհրաժեշտ ե միայն, վոր Անտանտի կողմից բավարարվեն մի քանի պայմաններ, վորոնց շուրջ բանակցություններ սկսելու համար Զավրիյեվն առաջարկում ե յուրայինների միջնորդությունը։ Պայմանները սրանք են.

» 1) Պետությունները յերաշխավորում են անկախությունն ու անձեռնմխելիությունն Ասիական Տաճկաստանի, վորը պետք ե կազմված լինի Սուլթանի գերիշխանության ներքո գտնվող հետեվյալ ավտոնոմ նահանգներից—Սիրիայից, Պաղեստինից, Միջագետքից, Արաբիայից, Հայաստանից՝ Կիլիկիայով հանդերձ ու Քյուրդիստանից։

« 2) Սուլթան ե հայտարարվում Ջեմալ փաշան՝ հորից ավագ վորդուն անցնելու ժառանգական իրավունքով։

« 3) Ջեմալը պարտավորվում ե Կոստանդնուպոլսի կառավարությունն ու Սուլթանին, իբրեվ գերմանացիների ձեռքում գերի յեղածների, գահընկեց հայտարարելու, այլեվ արշավելու նրանց վրա։

« 4) Կ. Պոլսի վրա կատարելիք նրա արշավանքի ժամանակ պետությունները նրան մատակարարելու յեն զենք, մթերք ու հրետանի։

« 5) Պատերազմի վերջանալուց հետո պետությունները Ջեմալին ֆինանսական ոժանդակություն ցույց կտան։

« 6) Ջեմալը հաշտվում ե Կ. Պոլսի ու նեղուցների կորստի հետ։

« 7) Ջեմալը պարտավորում ե հենց այժմ յեվեթ միջոցներ ձեռք առնելու՝ հայերին փրկելու յեվ վերջիններիս մինչեվ պատերազմի վախճանը կերակրելու համար»։ (տ. «Հայաստանի ավտոնոմիան յեվ Անտանտը», Յերեվան, 1926, եջ 15)։

Ռուս դիպլոմատիայի ջանքերն իրենց «անձնվեր հայերի»—իմա բժ. Զավրիյեվի յեվ դաշնակների միջոցով ձեռնարկել այս հեղաշրջման կազմակերպությանը, հանդիպում ե Անգլիայի յեվ Ֆրանսիայի ընդդիմությանը։ Դաշնակների ձեռքով նյութվելիք դինաստիական հեղաշրջման ծրագիրը ջուրն ե ընկնում։

Կարեվորն այն չե այստեղ, թե վորքան ե իմպերիալիստական խաղերին անձնվիրաբար ծառայող դաշնակների ինֆորմացիան համապատասխանում Ջեմալի իրական տրամադրություններին։ Կարեվորն այն ե, թե ինչպես այստեղ յեվս նրանց քաղաքականությունը հավատարիմ ե մնում իր ավանտյուրիստական բնույթին։

Կարող ե միջանկյալ այս պատմությունը, մյուս կողմից, յերկմտություն առաջացնել այն յենթադրության մասին, թե Ջեմալի կյանքին վերջ ե դրել, իրոք, դաշնակ տեռրորիստի գնդակը։ Սակայն այդ յերկմտանքի համար յեվս ուղղակի հիմք չկա տակավին։ Ընդհակառակը։ Քաղաքական սերը, ինչպես յեվ քաղաքացիականը, արկածավոր ընթացք ստանալով, հանգում ե, յերբեմն, արյունոտ յելքերի։ Զավրիյեվի յեվ յուրայինների 1915 թվի հափշտակությունը զառամած սրտի ժամանակավոր մի պոռթկում եր միայն, վոր անզոր եր վառելու հայ յեվ թյուրք նացիոնալիստների քաղաքական կենակցության մեջ անցյալում վատնած յեռանդը։ Իսկ Դաշնակցության յեվ Ջեմալի նախընթաց սիրավեպը փոթորկահույզ եր կողմերի հանդիպման առաջին իսկ վայրկյանից։ «Սահմանադրության» մեղրամիսը 1907-9 թվերին սքողել եր նրանց մահիճը դառն հիասթափությամբ։ Այն, ինչ հաջորդեց, դառնությունների յերկար մի պատմություն եր հայ ու թյուրք նացիոնալիստների համար, վորճանապարհ եր հարթում թյուրք յեվ հայ մասսաների համար ճակատագրական դարձած փոհիրների առաջ։ Յեվ դառնությունների այս պատմությունն ե հենց, վոր գրի յե առնում իր «Հիշողությունների» մեջ կողմերից մեկը՝ Ահմեդ Ջեմալը։

*
* *

«Հայկական հարցին» նվիրված եջերում Ջեմալը փորձում ե հերքել իր մեղսակցությունը 1915 16 թվականների ջարդերին։ Նշելով, վոր ինքը վոչինչ մասնակցություն չի ունեցել հայերի տեղահանման ու նրանց կոտորելու մեջ, հեղինակը պաշտոնական մերկացումներին ե թողնում պարզելու հայկական կատաստրոֆի պատկերը յեվ դրա հետ կապված իր քաղաքական ընկերների գործողությանց շարժառիթները։ Շեշտում ե համենայն դեպս, վոր թյուրք բանակի թիկունքում հայերը ծրագրել եյին մի ապստամբություն, վոր կարող եր վոչնչացնել Փոքր-Ասիան։ «Կառավարությունը—նկատում ե Ջեմալը—հայերի տեղահանությունը համարում եր թյուրք յեվ քյուրդ ազգաբնակության պաշտպանության, զորքի յեվ Ոսմանյան պետության քաղաքական գոյության տեսակետից միակ դրական ու կտրուկ միջոցը, սակայն, մյուս կողմից, այս միջոցը թյուրքերին ու քյուրդերին հնարավորություն տվեց հանցագործության արհեստի մեջ վարժվել»։ «Անշուշտ,—գրում ե հեղինակը—1915 թվի տեղահանության ժամուն հայերի վերաբերմամբ գործած հանցանքներն ամենայն իրավամբ զզվանք են առաջ բերում, սակայն այն բոլորը, ինչ վոր արեցին հայերը թյուրքերի յեվ քյուրդերի դեմ, յերբ իրենք ապստամբել եյին, իրենց անխղճությամբ յեվ լրբությամբ առաջինների արածներից յետ չեյին մնում»։

Վո՞րտեղ փնտրել հանցանքի արմատը.—հարցնում ե Ջեմալը։ Յեվ պատասխանում ե—առաջին նվագ՝ խոտացած այն ատելության մեջ, վոր անցյալ դարի կեսերից ի վեր բուն ե դնում հայերի, թյուրքերի յեվ քյուրդերի սրտերում։ Հեղինակի կարծիքով այդ ատելությունը սկիզբ չի առել իրենց՝ ժողովուրդների, մեղքով։ Յերկու ժողովուրդներին իրար դեմ հանողը «մոսկովյան» քաղաքականությունն ե։ «Մոսկովները»,—պնդում ե Ջեմալը, վոր այլ ցանկություն չունեյին, քան թյուրքերին սպանելն ու, նրանց հազարամյա ազգային հուչակը վոչնչացնելուց հետո, թյուրքերի ժառանգությունը գրավելը՝ մոսկովցին ե, վորն արյան մեջ լողալու մասին ե միայն հոգում. նա յեր, վոր գրգռում եր հային թյուրքի դեմ։ Սրա հետեվանքն այն յեղավ, վոր թյուրքերը հաստատ ապացույցներ ստացան կարծելու, վոր «յեթե նրանք ցանկանում եյին ապահովել իրենց կյանքը, պետք ե վոր կոտորեյին հայերին»,

այնինչ հայերն ասում եյին, «վոր նորից ապրելու յեվ առաջնություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է, վոր նրանք կոտորեյին թյուրքերին»։ Ահա թե ինչպես պատրաստվեցին այն վողբերգական դեպքերը, վորոնց մենք վկա յեղանք։ Մի կողմում պետք է վեց հարյուրհազար հայեր վոչնչանային, իսկ մյուս կողմից՝ միլլիոն ու կես թյուրքեր ու քրդեր» (եջ 86)։

* * *

Անիմաստ գործ կլիներ զբաղվել այստեղ «կորուստների» վիճակագրության ստուգումով։ Պարապ զբաղմունք կլիներ նույնիվ նման դեպքերում նախահարձակ յեվ պաշտպանվող կողմեր վորոնել։ Թե մեկ յեվ թե մյուս տեսակետից թյուրք կամ հայ նացիոնալիստների վկայությունը չէ, վոր կարող է ճշմարտության կշիռ մատակարարել անկողմնակալ ընթերցողին։ Պետք է խոստովանել այնուամենայնիվ, վոր թյուրք քաղաքական գործիչը, չնայած իր կողմնակալ դիրքին, կարողացել է մոտենալ հարցերին քաղաքական մի լայնախոհությամբ, վորի նմանը դժվար կլիներ վորոնել հայ նացիոնալիստների խմբագրած «վշտապատումների» եջերում, վորտեղ ոգտագործվում է ամեն մի առիթ՝ կենդանաբանական ատելության համող ազգայնական կրքեր հրահրելու համար միայն։

Յեվ դարձյալ վորքա՛ն շահում է Ջեմալի մերձեցումը, յերբ այն համեմատում ենք ցարիզմի արտաքին քաղաքականության այն ջատագովության հետ, վոր անում է պարոն Մանդելշտամը։ «Յեթե ներքին քաղաքականության ասպարեզում—յեզրափակում է իր խորհրդածությունները այս հեղինակը—ցարիզմը կարողացավ իր լծի տակ կորացնել ռուս ժողովրդին, նա, ընդհակառակը, անգիտակցաբար յենթարկվեց ռուսական մեծ հոգու ազդեցությանը, յերբ նա իր դերն եր խաղում միջազգային ասպարեզում։ Իր ցարական վարչաձեվի մթին խորքից Ռուսաստանն Արեվելքում յերբեք չի վառել ուրիշ կրակ, բայց յեթե միայն ազատության» (եջ 125)։ «Ռուս ժողովուրդը յեվ նրա մեծ հոգին» հիշատակվում են միանգամայն անտեղի կերպով։ Մանդելշտամն արձանագրում է սոսկ այն փաստը, վոր ցարիզմի արտաքին քաղաքականությունն ավելի մեծ չափով եր հաշվի առնում ռուսական բուրժուազիայի շահերը, քան նրա ներքին քաղաքականությունը, վոր յենթարկվում եր առավելապես կալվածատեր դասակարգի շահերին։ Ինչ վերաբերվում է, մասնավորապես, Մերձավոր Արեվելքում ռուս բուրժուազիայի յեվ ցարիզմի ձեռքով վառած ազատության կրակին՝ այդ առթիվ կարելի յեր մատնանշել թեկուզ Արեվելյան Անատոլիայի ամայացած դաշտ ու ձորերը։ Ռուսական իմպերիալիզմի, ինչպես նույնիվ ընդհանրապես Անտանտի «ազատարար» միտումները համաշխարհային պատերազմի ժամանակ՝ այսոր ծանոթ են իրենց բովանդակ մերկությամբ։ Բավական է գեթ մատնանշել «Հայաստանի ավտոնոմիան յեվ Անտանտը» խորագրով Հայաստանի Հեղափոխության Թանգարանի լույս ընծայած վավերագրերի ժողովածուն՝ վորոշած լինելու համար «հայասեր» Մանդելշտամների արած հայտարարությանց արժեքը։

* * *

Ազգայնական յեվ դասակարգային նախապաշարումը հնարավորություն չի տալիս Ջեմալին ըմբռնելու յեվ վեր հանելու յերեվույթները սոցիալ-ժաղաքական լիակատար կապակցությամբ։ Նշելով «մոսկովյան» քաղաքա-

կանության դերը հայկական շարժման յեվ «հայոց հարցի» ձեվակերպման մեջ՝ Ջեմալը չի կարողանում դրսեվորել այդ քաղաքականության դասակարգային-քաղաքական բովանդակությունը։ Այստեղից՝ նրա կատարյալ անոգությունը Հոկտեմբերյան հեղափոխության յեվ Թյուրքիայի ազգային-հեղափոխական շարժման իմաստը հայ, թյուրք յեվ քյուրդ ժողովուրդների փոխհարաբերությունների նոր դասավորությունը ու սրա հեռանկարները վորոշելու խնդրում։ Ձեվակերպելով իթթիհատականների հակահեղափոխական ընդհանուր տեսակետը՝ 1919 թվին իսկ նա հետամուտ եր Թյուրքիայի ղեկավարությամբ Անդրկովկասյան դաշինք ստեղծելու՝ «մոսկովյան ներխուժման» դեմ՝ Կովկասյան լեռնաշղթայի այս կողմը ռազմական-քաղաքական պատնեշ կազմելու համար։ Զախողելով իր մարգարեյությունների մեջ նա համոզված եր, թե կը հաջողվի կազմակերպել վորպես՝ անկախ հանրապետություն նույնիվ Հյուսիսային Կովկասը՝ այն հարավի հակահեղափոխական ֆեդերացիայի մեջ առնելու համար...։ Մտորումներ եյին սրանք, վոր ավելի հասուն քաղաքական միտք չհայտնաբերեցին, քան այն, վոր ունեցան 1921 թ. հունիսին Խատիսով—Չխենկելի—Թոփչիբաշեվ փոհմակը։ Մտորումներ, վոր լեհական ֆաշիզմի թեվերի տակ այսոր իսկ վորոճում են վրացի, հայ յեվ թյուրք հակահեղափոխականները՝ առայժմ առանց հաջողության ավելի խոշոր յերաշխիքների, քան ինչ ունեցել են մինչ այսոր։

Ազգայնական ու դասակարգային սահմանափակ մտածողությունը լքում է Ջեմալին նույնիվ «հայկական հարցի» սոցիալ-քաղաքական ներքին շարժիչները յերեվան հանելու գործում։ Ցարիզմի յեվ առհասարակ իմպերիալիզմի քաղաքական մեքենայություններին կարելի յե վերագրել հազար ու բյուր չարիք։ Պարզ է սակայն, վոր չարիքը հայ, թյուրք յեվ քյուրդ մասսաներին 1915—16 յեվ 1917—18 թ. թ. կոտորածներին չեր հասցնի, յեթե Մերձավոր Արեվելքի հասարակական-քաղաքական ներքին պայմանները նպաստավոր միջավայր չը ստեղծեյին ոտար միջամտության համար։ Կա՞ր այդ միջավայրը։ Այս հարցումին Ջեմալը չունի դրական պատասխան։ Մինչեվ 19-րդ դարի կեսերը Արեվելյան Անատոլիան նրան ներկայանում է վորպես յերկիր դրախտավայր, իսկ հայերի յեվ թյուրքերի հարաբերությունները ոսմանյան կայսրության մեջ նա նկարագրում է վորպես լիակատար մի իդիլլիա։ Կարծես չեն յեղել անցյալում վոչ ազգային բախումներ յեվ վոչ ել դասակարգային ընդհարումներ, վոր ազգային գունավորում ստանալով ատաղձ կազմեյին բախումների համար, հանգեյին բնականորեն ազգային շարժումների կամ գեթ, ազգայնական մտայնություն հրահրեյին յերկրի ներսում։ Մի տեղ Ջեմալն ակնարկում է 19-րդ դարի կեսերին Յեվրոպայում տարածվող ազգայնական շարժումները վորով տարվում եր «առեվտրական կամ ուսում առնելու նպատակով Յեվրոպա յեվ Ամերիկա ուղեվորված հայ յերիտասարդությունը»։ Սակայն գաղափարական այդ հոսանքն իսկ մեր հեղինակը հիշատակում է միայն վորպես ոտար ազդեցություն, մատնանշելու համար դարձյալ, թե ինչպես ռուս դիպլոմատիան վողջունեց այն «վորպես աստվածային մի պարգեվ» հայերին թյուրք կառավարության դեմ գրգռելու համար։

Հայ կղերը, սեղանավորը, առեվտրականը, քաղքենին կամ գեղջուկը այս կամ այն իմաստով մեղսակից չեն այսպիսով ազգային շարժման։ Այդ շարժումը չունի իր ներքին սոցիալ-տնտեսական դրդիչներն ու զապա-

նակները։ Անգամ Թյուրքիայի ազգային-քաղաքական միջավայրը համապատասխան մթնոլորտ չեր ստեղծում այդ շարժման համար։ Ահա Ջեմալի «պատմահայեցողությունը»։ Հեղինակը սուր խոսք չի ուղղում անգամ հայ «հեղափոխական» կազմակերպությունների դեմ։ Ինչո՞վ բացատրել այս ներողամտությունը։ Ակներեվ ե Ջեմալի ձգտումը. **արտաքին** գործոնների, միջազգային քաղաքական ինտրիգների վրա փոխադրել **ամբողջ** պատասխանատվությունը, քանի վոր նա նպատակ ունի ազատել **վորեվե** պատասխանատվությունից Թյուրք տիրող դասակարգերին։ Այդ ե պատճառը, վոր նա խոսք չի կորցնում հին Թյուրքիայի սոցիալ-քաղաքական ռեժիմի հոռի հատկությունների մասին։ Մոռանում ե, վոր դարեր շարունակ Թյուրքիայում տիրել ե բռնակալական մի ռեժիմ, վորպեսզի տապալելու համար իր իսկ կուսակցությունը հարկ եր տեսել գլուխ բերելու թեկուզ 1908 թվականի…«պանծալի» հեղաշրջումը։ Սակայն Ջեմալը պատրաստ ե ձեռք քաշել նույնիսկ այդ հեղաշրջման «բարիքների» թվարկումից, վորովհետեվ, կրկնում ենք, նա նպատակ ունի վանել ընթերցողի ուշադրությունը Թյուրքիայի ներքին հարաբերություններից յեվ կենտրոնացնել այն յերկրի «անդորրը» խանգարող օտար դրդիչների վրա։ Նա մոռացության ե տալիս անգամ հայկական «ապստամբությունների» պատմությունը, վորոնց մասին հիշատակում ե անցողակի՝ 1915—16 թ. թ. ջարդերն արդարացնելու համար։ Իր նպատակին հասնելու համար նա պատրաստ ե նույնիսկ «ներումն» շնորհելու 1917—18 թ. թ դաշնակ ջարդարարներին…։Վոչինչ, յեթե «ներումը» շնորհվեր միայն գիշատիչ իմպերիալիզմի հաշվին։ Դժբաղդությունն այն ե, սակայն, վոր այն վերջ ի վերջո շնորհվում ե հայ, թյուրք յեվ քյուրդ այն մասսաների հաշվին, վոր հոշոտվել են վոչ միայն օտար այլեվ «սեփական» գիշատիչների մագիլներով։

*
* *

Այնուամենայնիվ հարկ ենք համարում մատչելի դարձնել հայ ընթերցողին Ջեմալի այն բացատրությունները «հայկական հարցի» մասին, վոր ամփոփված են ներկա հրատարակության մեջ։ Մեզ առաջնորդում ե այն գիտակցությունը, թե հայ յեվ թյուրք նացիոնալիստների ըմբռնումները մոտիկ անցյալի մասին սկզբունքորեն չեզոքացնում են միմյանց՝ նպաստավոր հող պատրաստելով հարցերի մարքսիստական ուսումնասիրության համար յեվ վորոշ չափով՝ փաստական նյութ մատակարարելով այդ ուսումնասիրությանը։

Յեթե անգամ մի կողմ թողնենք Ջեմալի բացատրությունները, ներկա հրատարակությունը լիովին կարդարացներ իրեն իր մատակարարած փաստական նյութի տեսակետից՝ թեկուզ հենց գրքույկում զետեղված այն յերկու ընդարձակ գրությունների համար, վորտեղ ռուս գնդապետ Տվերդոխլեբովի ձեռքով նկարագրված են 1917—18 թվականներին Երզրումի շրջանում հայ զինվորականների ձեռքով կատարված կոտորածները։ Հայտնի յե, վոր 1918 թվի Երզրումի անկումն յեվս մեր հակառակորդները, դաշնակները, վերագրում են «բոլշեվիկյան ագիտացիայի» շնորհիվ ֆրոնտում առաջացած քայքայմանը։ «Բոլշեվիկյան ագիտացիան» Աղամա այն մեղքն ե, վորով դաշնակցական հրապարակախոսությունը փորձում ե բացատրել հայ նացիոնալիզմի գործած բոլոր չարիքները, ի թվիս վորոնց

նույնիսկ…1918 թ. մայիսի 28-ի ակտը։ Տվերդոխլեբովի յերկու գրությունները ցույց են տալիս սակայն, թե ինչպես Երզրումի «պաշտպանության» ժամանակ անպատիժ մնացող թալանն ու ջարդերը զարկ եյին տալիս Անդրանիկի յեվ բժ. Զավրյեվի խնամքին հանձնված բանակի քայքայմանը, գժտություն առաջացնելով հայ յեվ ռուս զինվորականների միջեվ յեվ նախապատրաստելով բերդի անկումը։ Երզրումի 1918 թվի անձնատվությունը հիշեցնում ե Կարսի անձնատվությունը 1920 թվին։ Յերկու դեպքում էլ հայ նացիոնալիստները յեվ դրանց թվում առաջին հերթին՝ դաշնակներն իրենց վրա ընկնող պատասխանատվությունը բարձում են ուրիշի ուսերին։ Մինչդեռ փաստերը համառ են նայեվ այս դեպքում։ Նրանք ապարդյուն են դարձնում ազգային «մեր» ջարդարարների ինքնարդարացման բոլոր ջանքերը։

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

„ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ“

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

I. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻՔԱՆԻ ԵՋԵՐ

Մենք՝ յերիտասարդ թյուրքերս հայերին և հատկապես հայ հեղափոխականներին նույն և բուլղար հեղափոխականներից անհամեմատ գերադասում ենք։ Հայերն ավելի շիտակ են և ավելի քաջ, քան հիշածս յերկու ազգերի հեղափոխականները. Նրանք ավելի անկեղծ են իբրև բարեկամներ և ավելի համառ՝ յերբ ատում են։ Մենք խորապես համոզված ենք, վոր հայերի և թյուրքերի մեջ գոյություն ունեցող թշնամության միակ հեղինակը յեղել է ռուս դիպլոմատիան։ Յեվ իրոք, վաթսուն տարիներից իվեր, կամ, ավելի ճիշտ, 1877—78 թվի ռուս-տաճկական պատերազմից դեռ տաս տարի առաջ այդ յերկու ցեղերի մեջ կրոնական հողի վրա ծագած ընդհարման վոչ մի դեպք չի յեղել, ուրիշ խոսքով՝ մահմեդականների և քրիստոնյաների մեջ մտքերի տարաձայնություն չկար։ Ընդհակառակը. Անատոլիայում, Ռումելիայում, Կ.-Պոլսում հայերի և թյուրքերի միջև այնպիսի համերաշխություն եր տիրում, վոր այն ժամանակների պատմագրությունը «հայկական հարցի»-ի մասին հիշատակություն անգամ չունի։ Գալով ընտանեկան հարաբերություններին, այստեղ էլ թյուրք-հայկական բարեկամությունն անսահման եր։ Յերբ Փոքր-Ասիայի մի թյուրք, առևտրական նպատակներով, իր գյուղից հեռանալ եր ուզում, նա հայ հարևանի խնամքին ու պաշտպանությանն եր վստահում իր ընտանիքը, պատիվը ու իրավունքները. Նույն վստահությունն եր տածում նաև հայը իր թյուրք հարևանների վերաբերմամբ։

Ամբողջ Անատոլիայում, Ռումելիայում, նույնիսկ Կ.-Պոլսում չկար մի հայ, վորը հայերեն խոսել կարողանար։ Բոլոր դպրոցներում թյուրքերենը հայ տառերով եյին սովորեցնում, իսկ հայ յեկեղեցիներում պատարագը թյուրքերեն լեզվով եր մատուցվում։ Հայերի համար բաց եյին պետական ամենակարևոր պաշտոնները, և նրանք Օսմանյան կայսրության ամենահավատարիմ հպատակներն եյին համարվում։

Յերբ թյուրքերը տապալեցին Քյուրդիստանի բեյերին, որոնց իշխանության տակ գտնվող հայությունն անկախ պետականություն չեր կազմում, և նրանք չենթակա եյին քյուրդերի սոսկալի ճնշումներին: Թող ասի՝ ինչ ուզում ե՝ դեսպան պարոն Մորգենտաուն*, նա կարող ե պատմական փաստերը հեղաշրջել, սակայն անհերքելի ճշմարտություն ե, վոր, ինչպես արդարամտությունն ու համբերատարությունը պատճառ են դարձել Թյուրքիայի պետություն դառնալուն և նրա արագ ծավալմանը, նմանապես հայերի դեպի թյուրքերը տածած յերախտագիտությունն արդյունք ե յեղել թյուրքերի դեպի հայերն ունեցած մեծահոգության և բարեկամության: Ահա թե ինչու հինգհարյուր տարիների ընթացքում այդ յերկու ժողովուրդների միջև վոչ մի ընդհարում չի յեղել, և դժվար եր գտնել մի հատիկ հայ, վորը թյուրքի լեզուն և նրա նիստ ու կացն իրեն հարազատ չհամարեր:

Յերբ սուլթան Ֆաթի Մահմեդ Խանը Կ.-Պոլիսը վերցնելուց հետո թույլ տվեց որթոդոքս պատրիարքին մնալ իր տեղումը և հույներին, առանց վորևե կողմնակի ճնշման, այլ բացառապես իր մեծահոգության և ազնվամտության հետևանքով «կրոնական արտոնություններ» անունով հայտնի առանձնաշնորհումները տվեց, նա անմիջապես կայսրության մայրաքաղաքում հիմնեց նաև հայոց պատրիարքարան, վորպեսզի Անատոլիայի մահմեդականության մեջ ապրող հայ փոքրամասնության իրավունքներն ուժգին կերպով պաշտպանել կարողանա, և հայերին շնորհեց միևնույն իրավունքներն ու արտոնությունները, վորպիսին նա տվել եր հույներին:

Պարոն Մանդելշտամն** իր գրքի*** 190-րդ յերեսում, հիմնվելով պատմական փաստերն անամոթաբար հեղաշրջող մի շարք պատմաբանների ասածների վրա, թյուրքերի այս մեծահոգությունը նրանց դեպի քրիստոնեյությունն ունեցած արհամարհանքով ե բացատրում, ըստ վորում կրոնական տեսակետից թյուրքերն իբր թե ամեն ինչ, վոր քրիստոնեյական ե, «մունդառ» եյին համարում:

Այնինչ դեռևս 1462 թվին, ըստ քրիստոնեյական ժամանակագրության, այսինքն այն ժամանակներում, յերբ ամբողջ Յեվրոպային դեռևս անծանոթ եր «ազգային փոքրամասնությունների իրավունք» հասկացողությունը, մի մահմեդական սուլթան, իր հզորության գագաթնակետին հասած, թույլատրում ե, վոր Կ.-Պոլսում հաստատվի հունական պատրիարքություն և «կրոնական արտոնություններ» անվան տակ հույներին իրավունք ե տալիս օգտվել ամուսնության,

* Հյուսիս. Ամերիկ. Միացյալ Նահանգների Կ.-Պոլսի դեսպանը:—Ծ. Թ.:

** Կ.-Պոլսի ռուսական դեսպանության առաջին դրագոմանը:

*** Տես հավելված:—Ծ. Թ.:

ժառանգության և լուսավորության վերաբերյալ մի շարք արտոնություններով. դրա հետ միաժամանակ նույն սուլթանն իր մայրաքաղաքում մի այլ ազգության՝ հայերի համար, վորոնք մինչ այդ քյուրդ ֆեոդալների լծի տակ եյին, պատրիարքություն ե հիմնում, շնորհելով նրանց միևնույն արտոնություններն ու առանձնաշնորհումները: Մանդելշտամի նման անպատկառ մարդիկ համարձակվում են այսորինակ մեծահոգությունը քրիստոնյաների հանդեպ ունեցած արհամարհանքի զգացմունքին վերագրել: Վորպիսի անարդարություն:

Միթե XV դարում թյուրքական մեծ սուլթանի կողմից շնորհված այս իրավունքներն ամենակատարյալ գործադրությունը չե այն սկզբունքի, վորը միայն այժմ Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնը «փոքրամասնությունների իրավունք» անվան տակ ցանկանում ե, վոր քաղաքակիրթ աշխարհին ճանաչել տա:

Միթե նույն սկզբունքը, վոր այնպես պարզ և լայնորեն գործադրություն գտավ Թյուրքիայի կողմից իր քրիստոնյա փոքրամասնության իրավունքները պաշտպանելու խնդրում, միայն նորերումս չեր, վոր մտցվելու յեր Ավստրիայի հետ Սեն-Ժերմենում կապված հաշտության պայմանագրի մեջ,—վորը, սակայն, ռումինական և Հարավ-Սլավիայի կառավարությունները մերժեցին ընդունել:

Հայերը շատ լավ գիտեն, վոր այդ արտոնությունների հետևանքով ե, վոր նրանք պահպանեցին իրենց կրոնն ու ազգությունը: Քյուրդ ավատական իշխանության ճնշման տեղ հայերը թյուրքերի, և մանավանդ թյուրք կառավարության հետ, լավագույն հարաբերությունների մեջ ապրելու հնարավորությունն ստացան: Ինչո՞ւ պարոն Մանդելշտամը, վորն իր ապացույցները Ցարժեսկիի և նման մարդկանց գրվածներից ե քաղում, չի հիշատակում հայերի XIX դարում քյուրդ ֆեոդալ բեյերից կրած տանջանքների ու բռնությունների մասին. ինչո՞ւ նա չի վերհիշում այն ճորտությունը, վորի մեջ ապրում եր Ֆրանսիայի ժողովուրդը Մեծ Հեղափոխությունից առաջ: Ինչո՞ւ հեռուներում փնտռենք: Միթե ռուս «մուժիկ»-ի վիճակն ավելի տանելի յեր, քան հայերի վիճակը Թյուրքիայում: Միթե պարոն Մանդելշտամը, վորը համարձակություն ունի իրեն ռուս հեղափոխական կուսակցության վոգևորված կողմնակից համարել, կարծում ե, վոր մենք անծանոթ ենք ռուս հեղափոխական գրականությանը և չգիտենք այն բռնությունների մասին, վորոնց, դեռ վոչ շատ հեռու ժամանակներում, յենթարկվում եյին ռուս գյուղացիները կալվածատերերի կողմից: Յեթե պարոն Մանդելշտամը համարձակվի պնդել, վոր ասածս գրվածներում փաստերը չափազանցված են, այն ժամանակ մենք առանց քաշվելու կասենք, վոր նա ստում ե:

Կրկնում եմ, վոր մինչև 1856 թվի Ղրիմի պատերազմի վերջը թյուրքերը հայերի հետ ամենամեծ համերաշխության մեջ եյին գտնվում և նրանք հայերի վերաբերմամբ վոչ մի բռնություն չեն արել։ Սակայն այն որից, յերբ ռուսներն իրենց ագահ և ավազակաբարո հայացքը գցեցին Օսմանյան կայսրության վրա, նրանք գտան, վոր քաղաքական տեսակետից իրենց ձեռնտու կլինի, յեթե նրանք Ռումելիայի քրիստոնյա տարրերն իրենց աջողության գործիք դարձնեն։

Բավականին նշանակալից ե պարոն Մանդելշտամի իր գրքի 300-րդ յերեսում արած այն հայտարարությունը, թե ռուս հեղափոխական կառավարությունը ևս ամբողջովին համամիտ եր ցարական Ռուսաստանի այն բոլոր քայլերին, վորոնք ուղղված եյին քրիստոնյա ազգերին թյուրքական իշխանությունից բոլորովին ազատելու գործին. այստեղ նա ավելացնում ե. «Ռուս մուժիկը, անձամբ ապրելով ամենամեծ ճնշման տակ, միշտ պատերազմել ե, նպատակ ունենալով փրկել հույներին, բուլղարներին և սերբերին»։—«Դու պետք ե քրիստոնյաներին մահմեդականների ձեռքից ազատես»։—Կարո՞ղ եր արդյոք պարոն Մանդելշտամը, վորի քրիստոնյա լինելը, իմիջի այլոց, մեր մեջ վորոշ կասկածներ ե առաջացնում, մի այլ, ավելի լավ լոզունգ հնարել, քան մուժիկին ուղղած այս կոչը, այն մուժիկին, վորի կրոնական ֆանատիկոսությունն ամեն մի չափից վեր ե, և վորը գործադրվելու յե նրան իր յերկրում ել ավելի խիստ գերության մեջ պահելու նպատակով։

Այս բոլորն արդյունք եր այն հրաշալի քաղաքականության, վորն ամբողջ աշխարհում անխտիր սարսափ ու զզվանք առաջացրեց։ Համայն մարդկության բարօրության համար չենք կարող մի ուրիշ բան ցանկալ, քան այն, վոր մի անգամ ընդմիշտ խորտակվի և վոչնչանա այսօրինակ քաղաքականությունը, և դրա հետ խորտակվի նրա հեղինակ ցարիզմը։

Պետք ե այստեղ նաև խոստովանվել, վոր ազգայնական ձգտումները, վոր XIX դարի կիսում նկատվեցին և տարածվեցին Յեվրոպայում, իրենց անմիջական այն հետևանքն ունեցան, վոր առևտրական կամ ուսում առնելու նպատակով Յեվրոպա և Ամերիկա ուղևորված հայ յերիտասարդությունը տարվեց այն գաղափարով, վոր իր ազգին ևս անհրաժեշտ ե ձգտել ձեռք բերելու անկախ կյանք և սկսել ինքնուրույն գործունեություն։ Այս գաղափարական ձըգտումը, վորպես աստվածային մի պարգև, վողջունվեց ռուս դիպլոմատիայի կողմից, և, սկսած այս րոպեյից, նա ամեն ջանք գործ դրեց, վորպեսզի հայերին գրգռի թյուրք կառավարության դեմ։

Սուլթան Մահմուդ Բ.-ը XIX դարի սկզբին, իր պետության մեջ կարգ ու կանոն հաստատելու և յերկու հարյուր տարիներից

ի վեր վարչական և զինվորական հաստատություններում գոյություն ունեցող անարխիան վերացնելու նպատակով, դիմեց ամենակտրուկ միջոցների։ Նա վոչնչացրեց յենիչերիությունը, սահմանափակեց Անատոլիայի և Ռումելիայի բեյերի իրավունքները, հասցնելով այն գրեթե անզորության աստիճանի և ծանր հարված հասցրեց քյուրդ բեյերի իշխանությանը։ Յեվ մինչդեռ անբախտ թագավորն իր յերկրում ներքին կարգ վերահաստատել եր ձգտում, նա իրեն հազար դժվարություններով շրջապատված տեսավ։ Յեվ մինչ նա ջանում եր ռուս զրամով պահպանվող և «Ետնիկա Հետերիա» կազմակերպության շնորհիվ ծագած հունական ապստամբությունը մի կերպ հանգցնել, մեկ ել նրա վրա հարձակվեցին ֆրանսիացիներն, անգլիացիներն ու ռուսները։ Նավարինի մոտ կորցնելով իր ամբողջ նավատորմիղը, նա ստիպված յեղավ ճանաչել Հունաստանի անկախությունը։ Այնուհետև, Ֆրանսիայի հրահրումներից ազդվելով, ապըստամբում ե սուլթանի դեմ Յեգիպտոսի գեներալ-նահանգապետ Մահմադ Ալի փաշան, վորն ուզում եր տաճկական թագը ձեռք բերել, հասցնելով իշխանության սահմանները մինչև Քաթանիա։

Կարելի՞ չե արդյոք մեղադրել մի պետության, վորը շրջապատված եր այսպիսի ներքին և արտաքին դժվարություններով, նրա համար, թե ինչու նա ձեռք չի առել բոլոր միջոցները՝ կարգավորելու համար վոչ միայն հայ, այլ ընդհանրապես իր բոլոր հպատակների բարեկեցությունը։

Սուլթան Աբդյուլ Մեջիտի թագավորության ժամանակ հայերն այնպիսի ընդարձակ արտոնություններ են ստանում, վորոնցով վոգևորվում ե նույնիսկ ինքը՝ Մանդելշտամը։ Իր գրքի 190-րդ յերեսում նա գրում ե. «1863 թվին հայերն իսկական սահմանադրություն ստացան։ Սահմանադրությունը նրանց իրավունք եր տալիս ընտրելու բարձրագույն մի խորհուրդ, վորը գտնվելու յեր Կ.-Պոլսում և վորը բաղկանում եր 140 պատգամավորներից. դրանցից 140-ին ընտրում եր ինքը՝ հայ ժողովուրդը»։

Կարո՞ղ եր արդյոք նախագահ Վիլսոնն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար սրանից ավելի իրական միջոց հնարել։

Օսմանյան կառավարությունը տվեց հայերին այս սահմանադրությունն առանց վորևե արտաքին ճնշման։ Հայ ժողովրդի դեպի Թյուրքիան արտաբերած լոյալ դիրքը մինչ այն աստիճան գրավեց կառավարության համակրությունը, վոր նա, առանց մի րոպե անգամ տատանվելու, «հավատարիմ հայ ազգին» շնորհեց հիշյալ սահմանադրությունը, վորը հայերի համար մի նոր, բախտավոր դարա-

շրջանի սկիզբը եր դառնալու: Սակայն ռուսներն այս սահմանադրությունն ոգտագործեցին հայկական գործերին միջամտելու նպատակով:

Արդեն 1856 թվի ռուս-թյուրքական պատերազմին մի շարք հայ ապստամբություններ ռուսներին ոգնություն մատուցին: Սկսած այդ որվանից՝ ռուսները սերտ կապ են պահպանում տաճկահայերի հետ և հայ հեղափոխականներին անընդհատ խրախուսում են: Այդ գործելակերպի հետևանքը շուտով յերևան յեկավ: Սահմանադրություն ստանալուց ընդամենը չորս տարի անց (1867 թ.) Զեյթունում բռնկվեց հայկական առաջին ապստամբությունը:

Հայկական այս առաջին զինյալ ապստամբությունը, բնականաբար, զգալի ազդեցություն թողեց կառավարության վրա: Անհագին եյին այն դժվարությունները, վորոնք 1877—78 թվին ռուսական բանակը և Անատոլիայի հայերը պատճառեցին թյուրք բանակին:

Կ.-Պոլսի հայոց պատրիարք Ներսես եֆենդին Սան-Ստեֆանո յե գնում, վորպեսզի ռուսաց ցարի ոգնությամբ հայերի համար անկախություն ձեռք բերի. իր այդ քայլով նա պատճառ ե դառնում, վոր հայերը «հավատարիմ ազգի», «միլլեթ սադիկա» հինավուրց կոչումից ընդմիշտ զրկվում են:

Ռուս դիպլոմատիան շատ լավ հաշվի չեր առնում այն հանգամանքը, վոր Բուլգարիայի անկախություն ստանալուց հետո ինքն այլևս զրկվելու յե Թյուրքիայի ներքին գործերի մեջ խառնվելու առիթից: Յեվ վորովհետև ռուս կառավարությունը չեր ուզում այդ իրավունքը կորցնել, ուստի հենց այդ նպատակն աչքի առաջ ունենալով Սան-Ստեֆանոյում Թյուրքիայի հետ կապած դաշնագրի մեջ մտցնում ե հայերին վերաբերյալ հատուկ մի հոդված, վորը հետագայում փոքր ինչ փոփոխված ձևով մտցվում ե Բեռլինի դաշնագրի մեջ:

Յեվ ահա սրանից հետո յե, վոր հայերի, քյուրդերի և թյուրքերի հարաբերությունները ծայր աստիճան լարվում են: Ոսմանյան պետության մեջ, ամենուրեք մեծ քաղաքներում, վորպես և ամենափոքր գյուղերում, առաջ են գալիս շատ լավ կազմակերպված հայ հեղափոխական գաղտնի կոմիտեներ:

Այս գաղտնի միություններն անընդհատ ջանք են թափում գրգռելու հայերին քյուրդերի ու թյուրքերի դեմ և պահանջում են կազմել մի անկախ, առանձնաշնորհված Հայաստան, վորը բաղկացած եր լինելու վոչ ավելի, վոչ պակաս, քան Արևելյան Անատոլիայի վեց նահանգներից: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր թե կառավարությունը և թե թյուրք ու քյուրդ ազգաբնակչությունը լավ տեղյակ եյին ռուսական այս խնդիրների մասին:

Յեվ վորովհետև հայերն անկախ մի պետություն հիմնելու ձգտում ունեյին, մի պետություն, ուր նրանք, չնայած քյուրդերի և թյուրքերի թվական գերազանցությանը, պետք ե վերջինների վրա իշխեյին, ուստի, ինքնըստինքյան հասկանալի յե, վոր սրանք ել իրենց կողմից ամեն կերպ աշխատում եյին իդերև հանել հայերի այդ ծրագիրը: Պարզն ասած՝ քյուրդերն ու թյուրքերը շատ լավ ըմբռնում եյին, վոր այդ բոլորը վոչ այլ ինչ են, յեթե վոչ ռուսների կողմից սարքած մի պատրվակ, վորպեսզի բացառապես քյուրդերով և թյուրքերով բնակեցրած Անատոլիայի մի խոշոր մաս իրենց ճանկը գցեն, իսկ անկախ Հայաստանը նրանք համարում եյին Ռուսաստանի կողմից իրենց բռնելու համար դրած մի ծուղակ միայն:

1880 թվին, մի կողմից Ռուսաստանի անընդհատ ճնշման ազդեցության տակ, իսկ մյուս՝ հայերի կողմից քանիցս բարձրացրած ապստամբության, յեվրոպական պետությունները Բարձր Դռանը ներկայացրին մի հուշագիր, վորով առաջարկում եյին նրան հայկական նահանգներում վարչական ռեֆորմներ մտցնել: Դա ճիշտ այն միջոցին եր, յերբ Բուլգարիան փորձում եր Արևելյան Ռումելիան միացնել իրեն:

Նշանակալից ե, վոր ամեն անգամ, յերբ Թյուրքիան ձեռնարկում եր իր արտաքին կամ ներքին կյանքում վորևե կարևոր մի հարց լուծել, Ռուսաստանն իսկույն հրապարակ եր հանում հայկական հարցը: Այս անգամ ել Աբդուլ Համիդ II-ն այս հարցը լուծեց նրանով, վոր Ռուսաստանին մի շարք զիջումներ արեց:

1894—96 թվականներին հայերն ուժգին գործունեյություն սկսեցին և ամենուրեք մեծ կամ փոքր ապստամբություններ առաջացրին: Այդպիսով ահա հայկական խռովությունները մինչ այն աստիճան գրգռեցին այդ յերեք, մինչ այդ գրեթե հինգ-վեց դար շարունակ իրարու կողքին խաղաղ ու հաշտ ապրող ազգերին, վոր այժմ դրանք պատրաստ են հարձակվել իրարու վրա՝ իրար արյունով ներկելու Անատոլիայի հողը և նույնիսկ Կ.-Պոլսի փողոցները:

Մանդելշտամի նման կատաղի թյուրքատյաց մարդիկ իսկ, անշուշտ, չեն ուրանա, վոր նույնիսկ այդ դեպքերի շրջանում թյուրքերը դեպի հայերը թշնամական վոչ մի զգացում չեյին տածում: Շատ թյուրքեր մրցում եյին իրարու հետ հայերին իրենց պաշտպանության տակ առնելու ձգտման մեջ: Կ.-Պոլսում բազմաթիվ թյուրք ընտանիքներ հայերի վերաբերմամբ ունեցած իրենց հարևանական զգացմունքն այն աստիճանի հասցրին, վոր, սրանց կյանքը մահից փրկելու նպատակով, նրանց թաքցնում եյին իրենց տներում: Յեվ չպետք ե թաքցնել, վոր բազմաթիվ պետական թյուրք բարձրաստի-

Կրկնում ենք, վոր մինչև 1856 թվի Ղրիմի պատերազմի վերջը թյուրքերը հայերի հետ ամենամեծ համերաշխության մեջ եյին գտնվում և նրանք հայերի վերաբերմամբ վոչ մի բռնություն չեն արել։ Սակայն այն օրից, յերբ ռուսներն իրենց ագահ և ավազակաբարո հայացքը գցեցին Օսմանյան կայսրության վրա, նրանք գտան, վոր քաղաքական տեսակետից իրենց ձեռնտու կլինի, յեթե նրանք Ռումելիայի քրիստոնյա տարրերն իրենց աջողության գործիք դարձնեն։

Բավականին նշանակալից է պարոն Մանդելշտամի իր գրքի 300-րդ յերեսում արած այն հայտարարությունը, թե ռուս հեղափոխական կառավարությունը ևս ամբողջովին համամիտ եր ցարական Ռուսաստանի այն բոլոր քայլերին, վորոնք ուղղված եյին քրիստոնյա ազգերին թյուրքական իշխանությունից բոլորովին ազատելու գործին. այստեղ նա ավելացնում է. «Ռուս մուժիկը, անձամբ ապրելով ամենամեծ ճնշման տակ, միշտ պատերազմել է, նպատակ ունենալով փրկել հույներին, բուլղարներին և սերբերին»։—«Դու պետք է քրիստոնյաներին մահմեդականների ձեռքից ազատես»։—Կարո՞ղ եր արդյոք պարոն Մանդելշտամը, վորի քրիստոնյա լինելը, իմիջի այլոց, մեր մեջ վորոշ կասկածներ է առաջացնում, մի այլ, ավելի լավ լոզունգ հնարել, քան մուժիկին ուղղած այս կոչը, այն մուժիկին, վորի կրոնական ֆանատիկոսությունն ամեն մի չափից վեր է, և վորը գործադրվելու յե նրան իր յերկրում ել ավելի խիստ գերության մեջ պահելու նպատակով։

Այս բոլորն արդյունք եր այն հրաշալի քաղաքականության, վորն ամբողջ աշխարհում անխտիր սարսափ ու զզվանք առաջացրեց։ Համայն մարդկության բարօրության համար չենք կարող մի ուրիշ բան ցանկալ, քան այն, վոր մի անգամ ընդմիշտ խորտակվի և վոչնչանա այսօրինակ քաղաքականությունը, և դրա հետ խորտակվի նրա հեղինակ ցարիզմը։

Պետք է այստեղ նաև խոստովանվել, վոր ազգայնական ձգտումները, վոր XIX դարի կիսում նկատվեցին և տարածվեցին Յեվրոպայում, իրենց անմիջական այն հետևանքն ունեցան, վոր առևտրական կամ ուսում առնելու նպատակով Յեվրոպա և Ամերիկա ուղևորված հայ յերիտասարդությունը տարվեց այն գաղափարով, վոր իր ազգին ևս անհրաժեշտ է ձգտել ձեռք բերելու անկախ կյանք և սկսել ինքնուրույն գործունեություն։ Այս գաղափարական ձգտումը, վորպես աստվածային մի պարգև, վողջունվեց ռուս դիպլոմատիայի կողմից, և, սկսած այս րոպեյից, նա ամեն ջանք գործ դրեց, վորպեսզի հայերին գրգռի թյուրք կառավարության դեմ։

Սուլթան Մահմուդ Բ.-ը XIX դարի սկզբին, իր պետության մեջ կարգ ու կանոն հաստատելու և յերկու հարյուր տարիներից

ի վեր վարչական և զինվորական հաստատություններում գոյություն ունեցող անարխիան վերացնելու նպատակով, դիմեց ամենակտրուկ միջոցների։ Նա վոչնչացրեց յենիչերիությունը, սահմանափակեց Անատոլիայի և Ռումելիայի բեյերի իրավունքները, հասցնելով այն գրեթե անզորության աստիճանի և ծանր հարված հասցրեց քյուրդ բեյերի իշխանությանը։ Յեվ մինչդեռ անբախտ թագավորն իր յերկրում ներքին կարգ վերահաստատել եր ձգտում, նա իրեն հազար դժվարություններով շրջապատված տեսավ։ Յեվ մինչ նա ջանում եր ռուս դրամով պահպանվող և «Ետնիկա Հետերիա» կազմակերպության շնորհիվ ծագած հունական ապստամբությունը մի կերպ հանգցնել, մեկ ել նրա վրա հարձակվեցին ֆրանսիացիներն, անգլիացիներն ու ռուսները։ Նավարինի մոտ կորցնելով իր ամբողջ նավատորմիղը, նա ստիպված յեղավ ճանաչել Հունաստանի անկախությունը։ Այնուհետև, Ֆրանսիայի հրահրումներից ազդվելով, ապստամբում է սուլթանի դեմ Յեգիպտոսի գեներալ-նահանգապետ Մահմադ Ալի փաշան, վորն ուզում եր տաճկական թագը ձեռք բերել, հասցնելով իշխանության սահմանները մինչև Քաթահիա։

Կարելի՞ յե արդյոք մեղադրել մի պետության, վորը շրջապատված եր այսպիսի ներքին և արտաքին դժվարություններով, նրա համար, թե ինչու նա ձեռք չի առել բոլոր միջոցները՝ կարգավորելու համար վոչ միայն հայ, այլ ընդհանրապես իր բոլոր հպատակների բարեկեցությունը։

Սուլթան Աբդուլ Մեջիտի թագավորության ժամանակ հայերն այնպիսի ընդարձակ արտոնություններ են ստանում, վորոնցով վոգևորվում է նույնիսկ ինքը՝ Մանդելշտամը։ Իր գրքի 190-րդ յերեսում նա գրում է. «1863 թվին հայերն իսկական սահմանադրություն ստացան։ Սահմանադրությունը նրանց իրավունք եր տալիս ընտրելու բարձրագույն մի խորհուրդ, վորը գտնվելու յեր Կ.-Պոլսում և վորը բաղկանում եր 140 պատգամավորներից. դրանցից 140-ին ընտրում եր ինքը՝ հայ ժողովուրդը»։

Կարո՞ղ եր արդյոք նախագահ Վիլսոնն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար սրանից ավելի իրական միջոց հնարել։

Օսմանյան կառավարությունը տվեց հայերին այս սահմանադրությունն առանց վորևէ արտաքին ճնշման։ Հայ ժողովրդի դեպի Թյուրքիան արտահայտած լոյալ դիրքը մինչ այն աստիճան գրավեց կառավարության համակրությունը, վոր նա, առանց մի րոպե անգամ տատանվելու, «հավատարիմ հայ ազգին» շնորհեց հիշյալ սահմանադրությունը, վորը հայերի համար մի նոր, բախտավոր դարա-

Կրկնում եմ, վոր մինչև 1856 թվի Ղրիմի պատերազմի վերջը թյուրքերը հայերի հետ ամենամեծ համերաշխության մեջ եյին գտնվում և նրանք հայերի վերաբերմամբ վոչ մի բռնություն չեն արել։ Սակայն այն որից, յերբ ռուսներն իրենց ագահ և ավազակաբարո հայացքը գցեցին Ոսմանյան կայսրության վրա, նրանք գտան, վոր քաղաքական տեսակետից իրենց ձեռնտու կլինի, յեթե նրանք Ռումելիայի քրիստոնյա տարրերն իրենց աջողության գործիք դարձնեն։

Բավականին նշանակալից է պարոն Մանդելշտամի իր գրքի 300-րդ յերեսում արած այն հայտարարությունը, թե ռուս հեղափոխական կառավարությունը ևս ամբողջովին համամիտ եր ցարական Ռուսաստանի այն բոլոր քայլերին, վորոնք ուղղված եյին քրիստոնյա ազգերին թյուրքական իշխանությունից բոլորովին ազատելու գործին. այստեղ նա ավելացնում է. «Ռուս մուժիկը, անձամբ ապրելով ամենամեծ ճնշման տակ, միշտ պատերազմել է, նպատակ ունենալով փրկել հույներին, բուլղարներին և սերբերին»։—«Դու պետք է քրիստոնյաներին մահմեդականների ձեռքից ազատես»։—Կարող եր արդյոք պարոն Մանդելշտամը, վորի քրիստոնյա լինելը, խիղճի այլոց, մեր մեջ վորոշ կասկածներ է առաջացնում, մի այլ, ավելի լավ լոզունգ հնարել, քան մուժիկներին ուղղած այս կոչը, այն մուժիկներին, վորի կրոնական ֆանատիկոսությունն ամեն մի չափից վեր է, և վորը գործադրվելու չե նրան իր յերկրում ել ավելի խիստ գերության մեջ պահելու նպատակով։

Այս բոլորն արդյունք եր այն հրաշալի քաղաքականության, վորն ամբողջ աշխարհում անխտիր սարսափ ու զզվանք առաջացրեց։ Համայն մարդկության բարօրության համար չենք կարող մի ուրիշ բան ցանկալ, քան այն, վոր մի անգամ ընդմիշտ խորտակվի և վոչնչանա այսօրինակ քաղաքականությունը, և դրա հետ խորտակվի նրա հեղինակ ցարիզմը։

Պետք է այստեղ նաև խոստովանվել, վոր ազգայնական ձգտումները, վոր XIX դարի կեսում նկատվեցին և տարածվեցին Յեվրոպայում, իրենց անմիջական այն հետևանքն ունեցան, վոր առևտրական կամ ուսում առնելու նպատակով Յեվրոպա և Ամերիկա ուղևորված հայ յերիտասարդությունը տարվեց այն գաղափարով, վոր իր ազգին ևս անհրաժեշտ է ձգտել ձեռք բերելու անկախ կյանք և սկսել ինքնուրույն գործունեյություն։ Այս գաղափարական ձըգտումը, վորպես աստվածային մի պարգև, վողջունվեց ռուս դիպլոմատիայի կողմից, և, սկսած այս րոպեյից, նա ամեն ջանք գործ դրեց, վորպեսզի հայերին գրգռի թյուրք կառավարության դեմ։

Սուլթան Մահմուդ Բ.-ը XIX դարի սկզբին, իր պետության մեջ կարգ ու կանոն հաստատելու և յերկու հարյուր տարիներից

ի վեր վարչական և զինվորական հաստատություններում գոյություն ունեցող անարխիան վերացնելու նպատակով, դիմեց ամենակտրուկ միջոցների։ Նա վոչնչացրեց յենիչերիությունը, սահմանափակեց Անատոլիայի և Ռումելիայի բեյերի իրավունքները, հասցնելով այն գրեթե անզորության աստիճանի և ծանր հարված հասցրեց քյուրդ բեյերի իշխանությանը։ Յեվ մինչդեռ անբախտ թագավորն իր յերկրում ներքին կարգ վերահաստատել եր ձգտում, նա իրեն հազար դժվարություններով շրջապատված տեսավ։ Յեվ մինչ նա ջանում եր ռուս դրամով պահպանվող և «Եթնիկա Հետերիա» կազմակերպության շնորհիվ ծագած հունական ապստամբությունը մի կերպ հանգցնել, մեկ ել նրա վրա հարձակվեցին ֆրանսիացիները, անգլիացիներն ու ռուսները։ Նավարինի մոտ կորցնելով իր ամբողջ նավատորմիղը, նա ստիպված յեղավ ճանաչել Հունաստանի անկախությունը։ Այնուհետև, Ֆրանսիայի հրահրումներից ազդվելով, ապըստամբում է սուլթանի դեմ Յեգիպտոսի գեներալ-նահանգապետ Մահմադ Ալի փաշան, վորն ուզում եր տաճկական թագը ձեռք բերել, հասցնելով իշխանության սահմանները մինչև Քաթահիա։

Կարելի՞ չե արդյոք մեղադրել մի պետության, վորը շրջապատված եր այսպիսի ներքին և արտաքին դժվարություններով, նրա համար, թե ինչու նա ձեռք չի առել բոլոր միջոցները՝ կարգավորելու համար վոչ միայն հայ, այլ ընդհանրապես իր բոլոր հպատակների բարեկեցությունը։

Սուլթան Աբդյուլ Մեջիդի թագավորության ժամանակ հայերն այնպիսի ընդարձակ արտոնություններ են ստանում, վորոնցով վոգևորվում է նույնիսկ ինքը՝ Մանդելշտամը։ Իր գրքի 190-րդ յերեսում նա գրում է. «1863 թվին հայերն իսկական սահմանադրություն ստացան։ Սահմանադրությունը նրանց իրավունք եր տալիս ընտրելու բարձրագույն մի խորհուրդ, վորը գտնվելու յեր Կ.-Պոլսում և վորը բաղկանում եր 140 պատգամավորներից. դրանցից 140-ին ընտրում եր ինքը՝ հայ ժողովուրդը»։

Կարող եր արդյոք նախագահ Վիլսոնն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար սրանից ավելի իրական միջոց հնարել։

Ոսմանյան կառավարությունը տվեց հայերին այս սահմանադրությունն առանց վորևէ արտաքին ճնշման։ Հայ ժողովրդի դեպի Թյուրքիան արտաբերած լոյալ դիրքը մինչ այն աստիճան գրավեց կառավարության համակրությունը, վոր նա, առանց մի րոպե անգամ տատանվելու, «հավատարիմ հայ ազգին» շնորհեց հիշյալ սահմանադրությունը, վորը հայերի համար մի նոր, բախտավոր դարա-

շրջանի սկիզբը էր դառնալու: Սակայն ռուսներն այս սահմանադրությունն օգտագործեցին հայկական գործերին միջամտելու նպատակով:

Արդեն 1856 թվի ռուս-թյուրքական պատերազմին մի շարք հայ ապստամբություններ ռուսներին օգնություն մատուցին: Սկսած այդ օրվանից՝ ռուսները սերտ կապ են պահպանում տաճկահայերի հետ և հայ հեղափոխականներին անընդհատ խրախուսում են: Այդ գործելակերպի հետևանքը շուտով յերևան յեկավ: Սահմանադրություն ստանալուց ընդամենը չորս տարի անց (1867 թ.) Զեյթունում բռնկվեց հայկական առաջին ապստամբությունը:

Հայկական այս առաջին զինյալ ապստամբությունը, բնականաբար, զգալի ազդեցություն թողեց կառավարության վրա: Ահագին էին այն դժվարությունները, որոնք 1877—78 թվին ռուսական բանակը և Անատոլիայի հայերը պատճառեցին թյուրք բանակին:

Կ.-Պոլսի հայոց պատրիարք Ներսես եֆենդին Սան-Ստեֆանո յե գնում, որպեսզի ռուսաց ցարի օգնությամբ հայերի համար անկախություն ձեռք բերի. իր այդ քայլով նա պատճառ է դառնում, որ հայերը «հավատարիմ ազգի», «միլլեթ սադիկա» հինավուրց կոչումից ընդմիշտ զրկվում են:

Ռուս դիպլոմատիան շատ լավ հաշվի չէր առնում այն հանգամանքը, որ Բուլղարիայի անկախություն ստանալուց հետո ինքն այլևս զրկվելու յե Թյուրքիայի ներքին գործերի մեջ խառնվելու առիթից: Յեվ որովհետև ռուս կառավարությունը չէր ուզում այդ իրավունքը կորցնել, ուստի հենց այդ նպատակն աչքի առաջ ունենալով Սան-Ստեֆանոյում Թյուրքիայի հետ կապած դաշնագրի մեջ մտցնում է հայերին վերաբերյալ հատուկ մի հոդված, որը հետագայում փոքր ինչ փոփոխված ձևով մտցվում է Բեռլինի դաշնագրի մեջ:

Յեվ ահա սրանից հետո յե, որ հայերի, քյուրդերի և թյուրքերի հարաբերությունները ծայր աստիճան լարվում են: Օսմանյան պետության մեջ, ամենուրեք մեծ քաղաքներում, որպես և ամենափոքր գյուղերում, առաջ են գալիս շատ լավ կազմակերպված հայ հեղափոխական գաղտնի կոմիտեներ:

Այս գաղտնի միություններն անընդհատ ջանք են թափում գրգռելու հայերին քյուրդերի ու թյուրքերի դեմ և պահանջում են կազմել մի անկախ, առանձնաշնորհված Հայաստան, որը բաղկացած էր լինելու ոչ ավելի, ոչ պակաս, քան Արևելյան Անատոլիայի վեց նահանգներից: Ինքնըստինքյան հասկանալի յե, որ թե կառավարությունը և թե թյուրք ու քյուրդ ազգաբնակչությունը լավ տեղյակ էին ռուսական այս խնդիրների մասին:

Յեվ որովհետև հայերն անկախ մի պետություն հիմնելու ձգտում ունեյին, մի պետություն, ուր նրանք, չնայած քյուրդերի և թյուրքերի թվական գերազանցությանը, պետք է վերջինների վրա իշխեյին, ուստի, ինքնըստինքյան հասկանալի յե, որ սրանք էլ իրենց կողմից ամեն կերպ աշխատում էին իդերև հանել հայերի այդ ծրագիրը: Պարզն ասած՝ քյուրդերն ու թյուրքերը շատ լավ ըմբռնում էին, որ այդ բոլորը ոչ այլ ինչ են, յեթե ոչ ռուսների կողմից սարքած մի պատրվակ, որպեսզի բացառապես քյուրդերով և թյուրքերով բնակեցրած Անատոլիայի մի խոշոր մաս իրենց ճանկը գցեն, իսկ անկախ Հայաստանը նրանք համարում էին Ռուսաստանի կողմից իրենց բռնելու համար դրած մի ծուղակ միայն:

1880 թվին, մի կողմից Ռուսաստանի անընդհատ ճնշման ազդեցության տակ, իսկ մյուս՝ հայերի կողմից քանիցս բարձրացրած ապստամբության, յեվրոպական պետությունները Բարձր Դռանը ներկայացրին մի հայտագիր, որով առաջարկում էին նրան հայկական նահանգներում վարչական ռեֆորմներ մտցնել: Դա ճիշտ այն միջոցին էր, յերբ Բուլղարիան փորձում էր Արևելյան Ռումելիան միացնել իրեն:

Նշանակալից է, որ ամեն անգամ, յերբ Թյուրքիան ձեռնարկում էր իր արտաքին կամ ներքին կյանքում որևէ կարևոր մի հարց լուծել, Ռուսաստանն իսկույն հրապարակ էր հանում հայկական հարցը: Այս անգամ էլ Սուլթան Համիդ II-ն այս հարցը լուծեց նրանով, որ Ռուսաստանին մի շարք զիջումներ արեց:

1894—96 թվականներին հայերն ուժգին գործունեյություն սկսեցին և ամենուրեք մեծ կամ փոքր ապստամբություններ առաջացրին: Այդպիսով ահա հայկական խռովությունները մինչ այն աստիճան գրգռեցին այդ յերեք, մինչ այդ գրեթե հինգ-վեց դար շարունակ իրարու կողքին խաղաղ ու հաշտ ապրող ազգերին, որ այժմ դրանք պատրաստ են հարձակվել իրարու վրա՝ իրար արյունով ներկելու Անատոլիայի հողը և նույնիսկ Կ.-Պոլսի փողոցները:

Մանդելշտամի նման կատաղի թյուրքատյաց մարդիկ իսկ, անշուշտ, չեն ուրանա, որ նույնիսկ այդ դեպքերի շրջանում թյուրքերը դեպի հայերը թշնամական ոչ մի զգացում չէյին տածում: Շատ թյուրքեր մրցում էին իրարու հետ հայերին իրենց պաշտպանության տակ առնելու ձգտման մեջ: Կ.-Պոլսում բազմաթիվ թյուրք ընտանիքներ հայերի վերաբերմամբ ունեցած իրենց հարևանական զգացմունքն այն աստիճանի հասցրին, որ, սրանց կյանքը մահից փրկելու նպատակով, նրանց թաքցնում էին իրենց տներում: Յեվ չպետք է թաքցնել, որ բազմաթիվ պետական թյուրք բարձրաստի-

ճան պաշտոնյաներ զզվանքով դատապարտում էյին Կ.-Պոլսի մաքսատան բեռնակիրների կողմից հայերի վերաբերմամբ կատարած կոտորածը: Նրանք վոչ մի առիթ չէյին թողնում հայերին պաշտպանելու համար:

Ամբողջ աշխարհին հայտնի չեն այն կարուկ միջոցները, վորին դիմեց մարշալ Ֆուադ փաշան Կադի-Քյոյում հայերին փրկելու նպատակով: Մանդելշտամն ինքը պնդում է, վոր Ֆուադ փաշան հենց այդ հայասիրության համար էլ հետագայում բարձրագույն վողորմածությունից զրկվեց, սակայն Կ.-Պոլսում բոլորն էլ գիտեն, վոր դա սուտ է:

Այն յերկու-յերեք տարիների ընթացքում, յերբ տեղի էյին ունենում այդ կոտորածները, հայերի ձեռքով սպանվեցին բազմաթիվ քյուրդեր և Թյուրքեր. յերկու կողմերն էլ իրարու վոչնչացնելու գործում մրցման էյին մտել: Յեվ քանի վոր ամեն տեղ հայերը թվով քիչ էյին, ուստի, բնական է, վոր Թյուրքերն ու քյուրդերը ջնջման գործն ավելի աջողությամբ էյին առաջ տանում. պարզ է, վոր յեթե հայերը մեծ թիվ կազմեյին, այս անգամ նրանք ավելի շատ թիվ քյուրդ ու Թյուրք կկոտորեյին: Դրան վորպես ապացույց կարող է ծառայել հույների ձեռքով Մորեյայում սպանված Թյուրքերի թիվը: Բայց վորովհետև այս անգամ զոհերը Թյուրքեր ու մահմեդականներ էյին, ուստի չգտնվեցին Բայրոնի և Շատոբրիանի նման բանաստեղծներ, վորոնք այդ Թշվառ մարտիրոսների կորուստը վողբային, ուստի արյունալից այդ յեղելությունը, ոսմանյան պատմագրությունից բացի, ուրիշ վոչ մի տեղ չարձանագրվեց:

Պետություն կառավարելու մասին իմ ունեցած հայացքներով յես զզվանքով դատապարտում եմ «հեղափոխությունը խեղդելու» նպատակով մասսայական կոտորածներին դիմելու սիստեմը. այդ միջոցը բացի այն, վոր յերկրին մեծ վնաս է հասցնում, միաժամանակ արատավորում է մի ժողովրդի պատմությունը:

Այս հայացքն ունեյին նաև բոլոր այն հայրենասերները, վորոնք խմբված էյին «Յերիտասարդ Թյուրքեր»-ի հեղափոխական կազմակերպության մեջ: Նրանք դատապարտում էյին 1894—96 թվականների հայկական կոտորածները, համարելով այն սուլթան Համիդ Յերկրորդի գործած ամենածանր սխալներից մեկը, վորով նա իր բռնակալական կառավարությունն ամրացնել էր ուզում: Ահա այս տեսակետից յելնելով Ահմեդ Ռիզա բեյը և նրա ընկերները, վոր այդ ժամանակ Յեվրոպայումն էյին գտնվում, ապստամբած հայերին էյական օգնություն ցույց տվին: Մյուս Թյուրք հեղափոխականները, վորոնք, ինչպես յես, ապրում էյինք բուն յերկրում, միևնույն հայացքին էյինք,

ինչ և Յեվրոպայում ապրողները, նմանապես խստագույնս դատապարտում էյինք Աբդյուլ Համիդին, վորը հայկական իր կոտորածներով վոչ միայն Թյուրքական, այլ առավելապես ոսմանյան գործին ահագին վնաս էր հասցնում:

Հայ հեղափոխականների միքանի ականավոր ներկայացուցիչներ այդ ժամանակ միայն սկսեցին ըմբռնել իրերի իսկական դրությունը: Նրանք տեսան, վոր այնինչ մի կողմից Ռուսաստանը դիմում է ամեն տեսակ միջոցների տաճկահայերի համար անկախություն ձեռք բերելու խնդրում, մյուս կողմից Կովկասում ապրող ռուսահայերը գալարվում են ռուսական բռնապետության ճիրաններում: Ցար Նիկոլայ Բ.-ը խոստացել էր Աբդյուլ Համիդ Բ.-ին, վոր յեթե սա Արևելյան Անատոլիայում յերկաթուղիներ չշինի, ինքն էլ իր կողմից թույլ չի տա 1896 թվի հեղափոխությունից հետո Տաճկաստանից Կովկաս գաղթած հայերին նորից Թյուրքիա վերադառնալ: Լավագույն ապացույց, թե ինչ նպատակներով էր ղեկավարվում Ռուսաստանը հայերի և Թյուրքիայի վերաբերմամբ—հազիվ թե կարելի լիներ գտնել:

Կասկածից դուրս է, վոր մի ժողովրդի գոյության համար քաղաքակրթությունն ու նյութական բարեկեցությունն ամենամեծ գործոններն են, և այդ բարեկեցությունն սկսվում է յերկաթուղու և խճուղու նման հաղորդակցության միջոցներ անցկացնելով: Յեվ ահա ռուսները մի կողմից հայերով բնակեցրած վիլայեթների բարեկեցության և ինքնուրույնության համար բարենորոգումներ են պահանջում, իսկ մյուս կողմից, այն միջոցները, վորոնք բերելու յեն յերկրին այդ բարեկեցությունը—ինչպես, օրինակ, յերկաթուղիներն են—նրանք արգելում են: Ի՞նչպես է բացատրում պարոն Մանդելշտամը այս փաստերը. նա բավականանում է միայն նրանով, վոր հայհոյում է յեվրոպացի մի գրողի, վորն այս հանգամանքի վրա մատնացույց էր արել: Բայց չէ՞ վոր հայհոյանքն ապացույց չէ:

Ռուս դիպլոմատիայի այս յերկդիմի քաղաքականությունն ազնվամիտ հայերին Ռուսաստանից խրտնել տվեց. Նրանք իրենց հետևյալ հարցն էյին տալիս. յեթե հայերն ինքնավարություն ստանան, արդյոք նրանք դրանով իրենց վզերին չե՞ն դնի ռուսական լուծը, վորը Թյուրքականից հազար անգամ ավելի զզվելի յեր լինելու: Դրա համար էլ Թյուրք հեղափոխական կոմիտեն ամեն կերպ ձգտում էր համոզել «Դաշնակցություն» կուսակցությանը, վորը հայ կուսակցություններից ամենից լավ կազմակերպություն ունեցող և ամենից լավ ղեկավարվող կուսակցությունն էր, օգնել իրենց Ոսմանյան կայսրության բոլոր ազգերի համար ռեֆորմներ մտցնելու գործում:

Պարոն Մանդելշտամը չի պնդի, վոր այս իմ ասածները հնարովի յեն, քանի վոր Դաշնակցությունը մասնակցում էր 1907 թվին Պա-

բեգում կայացած «Միության և Առաջադիմության» կուսակցության համագումարին, և այդ համագումարին ներկայացրած նրա ծրագիրը գրեթե ամբողջովին համապատասխանում էր մեր կուսակցության կողմից նախագծած բարենորոգումների ծրագրին։ «Դաշնակցությունը» խոստացավ «Միություն և Առաջադիմություն» կոմիտեյի հետ համերաշխ գործել։ Մալումյանը (Ակնունի), Դաշնակցության ղեկավարներից մեկը, որին 1908 թվի ապրիլին ես հանդիպեցի Կ.-Պոլսում, հաճախ խոսում էր ինձ հետ հայ ժողովրդի գլխին կախված ռուսական վտանգի մասին։

Սակայն հայկական զանազան հեղափոխական կուսակցությունների թվում կային նաև «Հնչակյան» և «Վերակազմյալ Հնչակյան» կուսակցությունների նմանները, որոնց ղեկավարներն ու անդամները մեծ մասամբ կաշառված լինելով ռուսներից, խույս էին տալիս թյուրք կուսակցություններից և յերազում էին ստեղծել Ռուսաստանի հովանավորության տակ գտնվող հայկական մի պետություն։

Շնորհիվ մի կողմից կոմիտեների այս ներկայացուցիչների և ապա հեղափոխական կազմակերպությունների մեջ յեռանդուն մասնակցություն ունեցող և բոլոր ռուս հյուպատոսարանների կողմից բաժանվող դրամի, հայ կղերական կուսակցությունը ևս սկսեց բացարել, որ հայերի համար ռուսական ցարի պաշտպանությունը մահմեդական խալիֆի պաշտպանությունից գերադասելի չէ։

Ահա այն դրությունը, որի մեջ գտնվում էին հայ և թյուրք հեղափոխականները, երբ 1908 թվին բռնկվեց թյուրքական հեղափոխությունը։ «Միություն և Առաջադիմություն» գաղտնի կոմիտեն, որը կազմվել էր Սալոնիկում, իր քաղաքական ներքին գործերին վերաբերյալ ծրագրի որպես հիմնական կետ ընդունել էր «Միդհատ փաշայի սահմանադրություն» անունով հայտնի սահմանադրությունը։ Որպես այս սահմանադրության հիմնական սկզբունք նա ընդունում էր ոսմանիզմի ճանաչումը՝ վարչական ապակենտրոնացման հետ զուգահեռաբար, մինչդեռ մակեդոնա-բուլղարական կոմիտեները, «Ետնիկա Հեթերիա»-յի ղեկավարության տակ գտնվող մակեդոնա-հունական կոմիտեները, մակեդոնական-ազգային զինվորական կոմիտեն, որպես նաև ալբանական, հայկական, արաբական հեղափոխական կոմիտեները ձգտում էին «քաղաքական ապակենտրոնացման» սկզբունքին, սակայն առանց ոսմանիզմն ընդունելու։

«Վարչական ապակենտրոնացման» տակ հասկացվում էր Ոսմանյան միացյալ պետության զանազան մասերում ապրող տարբեր ազգերի ինքնավար վարչական ձևը։ Յեթե «Միություն և Առաջադիմություն» կուսակցությունն ունենար նույն տեսակետը, ինչ որ

ունեյին մեր արտաքին թշնամիները, որոնք ամբողջ հոգով ձգտում էին, և դրա համար ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում, որպեսզի Ոսմանյան պետությունը բաժան-բաժան անեն, և դրա համար հազարավոր ինտրիգներ էին լարում, այդ դեպքում, պարզ է, որ հանցանք պետք էր համարել կուսակցության կողմից ընդունել քաղաքական կամ կառավարության «վարչական անկախության» սկզբունքը, որի ամենայեռանդուն պաշտպանն էր պրինց Սաբահեդդինը։ Բայց այդ դեպքում Ֆրանսիան, որն ագահորեն պահանջում էր մեզնից Սիրիան, անգլիացիները, որոնք Միջագետքն ու ամբողջ Արաբիայի թերակղզու տերն էին ուզում դառնալ, ռուսները, որ միայն հարմար առիթ էին փնտրում Արևելյան Անատոլիայի նահանգներին տիրանալու, իտալացիներն ու ավստրիացիները, որոնք Ալբանիան էին ուզում ձանկել, բուլղարներն ու սերբերը, որոնք Մակեդոնիան իրանց մեջ բաժանել էին ուզում, և հույները, որ Արխիպելագի կղզիներն էին ուզում յուրացնել — միթե դրանք բոլորը թեկուզ ամենաչնչին դժվարություն կզգային մեկը մյուսի յետևից կուլ տալու հիշածս բոլոր նահանգներն ու յերկրները, որոնք առաջ չեկած կլինեյին «քաղաքական ապակենտրոնացման» սկզբունքի իրականացման հետևանքով։ Միթե մեր ապակենտրոնացման սկզբունքն իր կենսունակությամբ ավելի ուժեղ կլիներ Ավստրո-Հունգարիայի ապակենտրոնացման սկզբունքից։ Այդ սկզբունքը չէ՞ր միթե, որ չեխո-սլովակներին, կրոատներին և սլավոններին Ավստրիայից իսպառ բաժանվելու հույս ներշնչեց։ Միթե մեր կենտրոնական իշխանության կողմից արտաբերած ուժի միջոցները, մեր ինքնուրույն նահանգներն ավելի մեծաթիվ և մեր ագահ թշնամիներից փրկելու համար ավելի իրական կլինեյին, քան այն, որ ուներ Ավստրիայի կենտրոնական կառավարությունը։ Հազիվ թե գտնվի մի այլ, ավելի ընդարձակ ինքնավարություն, քան այն, որ տրված է Կրետե կղզուն. սակայն աջողվե՞ց արդյոք մեզ համոզել կրետացիներին, որպեսզի նրանք Հունաստանի հետ միանալու իրենց հույսը մի կողմ թողնեն։ Միթե մենք Կիպրոս կղզու բնակչությունից, որը մինչև անգլիական տիրապետությունը առանձնաշնորհված դրության մեջ էր, ամեն տարի միևնույն յերգը չենք լսում, թե նրանք Հունաստանի հետ միանալու հաստատ ցանկությամբ են տարված։

Կարողացա՞նք մենք արգելել Բուլղարիային Արևելյան Ռումելիան գրավելու, չնայած այն բանին, որ Ռումելիան օգտվում էր ամենալայն ինքնավարությամբ։ Միթե Անգլիան դժվարությունների հանդիպեց Յեգիպտոսը գրավելիս, չնայած որ Յեգիպտոսն առանձնաշնորհված յերկիր էր։ Միթե անգլիացիները քաշվեցին

տիրապետել Կովկասը, որը դարերից ի վեր օսմանյան խալիֆատին չենթարկված շրջան էր, չէ՞ որ նրանք նախապես հայտարարեցին, որ չէին Մուբարեք-էլ-Սաբահն ընդունել և անգլիական գերիշխանությունը։ Դժվա՞ր էր միթե անգլիացիներին Միջագետքն իրենց հովանավորության տակ առնել—այն պատրվակի տակ, իբր թե ազգաբնակությունն անգլիական պաշտպանության տակ է ուզում գտնվել։ Մի՞թե նույն նկատառումներով չեն ղեկավարվում ֆրանսիացիները Սիրիայի վերաբերմամբ։ Կարո՞ղ ենք արդյոք մենք Մակեդոնիայի և Ալբանիայի վրա այլ կերպ նայել, քան այն, ինչ որ տեղի ունեցավ Արևելյան Ռումելիայում և Բոսնիա-Հերցեգովինայում։

Ցես կասկածում եմ, որ «Բաղաքական Ապակենտրոնացման» կուսակցության կողմնակիցները դրանց այս բոլոր հարցերին կարողանան տրամաբանական բավարար պատասխան տալ։ Իսկ այն անձանց, որոնք մեզ մեղադրում են նրանում, որ իբր մենք առաջ ենք տանում «Թյուրքացման քաղաքականություն», դրանց ես կրաբականապես պատասխանում եմ, որ մենք ոչ թե թյուրքական քաղաքականություն է, որ առաջ ենք քաշում, այլ Օսմանյան Միության քաղաքականությունը. այնինչ, չեթե մենք ընդունենք «ապակենտրոնացման» սկզբունքը, ահա այդ դեպքում է, որ մեր կուսակցությունը, ճիշտ որ, ստիպված պետք է լինի «թյուրքական քաղաքականություն» առաջ տանել, և մենք զուտ թյուրքաբնակ վիլայեթների համար պահանջելու չենք նույն տեղական ինքնավարությունը, ինչ որ պահանջելու չեն մեր մյուս նահանգները։ Ուստի նրանք, որոնք իրենց միայն զուտ «թյուրքեր» են համարում—այսինքն «ապակենտրոնացման» կողմնակիցները—ահա դրանք են, որ փաստորեն առաջ են քաշում իսկական «թյուրքական» քաղաքականությունը։ Այնինչ մենք, որ Օսմանյան Միություն ենք պահանջում, որպես հիմնական կետ ընդունել ենք հետևյալը—ոչ մի կերպ թույլ չտալ, որ վիլայեթներում թուլանա համապետական կենտրոնական կառավարությունը, պահպանելով, սակայն, տեղական վարչական լայն արտոնությունները, միայն պայմանով, որ դրանով չխախտվի մեր բանակի ամբողջությունը։

Թյուրք չերխասարդությունն ըմբռնեց, որ Օսմանյան պետության մեջ ապրող բոլոր ժողովուրդներից, որոնք իրենց զարգացման համար կռիվ են մղում, միայն թյուրքերն են, որ մնացել են բարձիթողի և անտեր, ուստի նա իր կողմից սկսեց աշխատել, որպեսզի իր ազգի մեջ ևս տարածի ուսում, գիտություն և քաղաքական կրթություն։ Ցեվ ինչպես որ «Միություն և Առաջադիմություն» կուսակցությունն իրավունք չունի արգելելու թյուրք չերի-

տասարդությանը, որ սա իր ձգտումներն իրագործի, նմանապես ես չեմ կարող չերևակայել, որ «ապակենտրոնացման» սկզբունքի կողմնակիցներն արգելեն նրան այդ նույն բանն անել։

Կարելի՞ չե արդյոք թյուրք լեզուն Օսմանյան կայսրության սահմաններում տիրապետող լեզու դարձնելու մեր ձգտումը մյուս ազգերի «թյուրքացում» համարել։ Մի՞թե «թյուրքացում» է, չերբ մենք ուզում ենք, որ կրթական գործը պետության մեջ պետական հսկողության տակ լինի և այդպիսով նա լավագույն կերպով տարվի։

Ցերբ սահմանադրություն հայտարարելու առաջին շրջանում Կ.-Պոլսում բազմաթիվ ազգային կոմիտեներ կազմվեցին, ինչպես, օրինակ, «Արաբական Միություն»-ը, «Չերքեզների Փոխադարձ Օգնության Կոմիտե»-ն, «Բյուրդական ակումբ»-ը, «Ալբանական կլուբ»-ը և մի շարք ուրիշ կազմակերպություններ, ինչու «Օսմանյան Օջախ»-ի հիմնումը համարվեց ապացույց այն բանի, որ իբր միացյալ պետությունը թյուրքացման քաղաքականության է ձգտում։

Գալով անձնապես ինձ, ես կասեմ, որ ես նախ և առաջ օսմանցի եմ, իսկ դրանից հետո ես չերբեք չպետք է մոռանամ, որ նաև թյուրք եմ։ Իմ հաստատ համոզմունքն է, որ թյուրքն Օսմանյան պետության հիմնաքարն է. Օսմանյան Միությունն է, որ ամրացնում և հիմնավորում է թյուրքական քաղաքակրթության ու կուլտուրայի զարգացումը։

Վորպես դրան ապացույց կբերեմ հենց մեր այսօրվա վողբալի դրությունը։ Ցես մատնացույց կանեմ արաբներին, որոնք ինքնուրույնություն ստանալու հույսով մեր դեմ ապստամբեցին։ Թե ինչ դրության մեջ են նրանք—դրա մասին ես արդեն խոսել եմ։

Հենց որ Ցեգիպտոսը Օսմանյան Միությունից բաժանվեց—նա իսկույն ընկավ Անգլիայի գերիշխանության տակ։ Ցեվ բավական էր չեգիպտական չերիտասարդությանն այդ իշխանության դեմ բողոքի մի ցույց անել, որպեսզի անգլիական ոչնչացնող բռունցքը նրա գլխին իջներ։ Սիրիայի ծովափնյա շրջանն ու Լիբանանը ֆրանսիացին այսպես չեն բավարարում, նա այժմ ուզում է տիրել նաև չերկրի ներքին մասերը։ Իսկ այդ չերկրներից վորևէ մեկում մեկնումեկն «օսմանիզմի» մասին խոսք բանում է։ Ընդհակառակը, «փառք աստուծո, վերջապես մենք ազատվեցինք օսմանիզմից» կոչերը դուք այժմ միշտ էլ կլսեք այն մեծաթիվ գավառների բերնից, որոնք ներկա կառավարության ընակալեզներն են դարձել։

Սակայն միայն Արևմտյան Թրակիայից՝ թյուրքական այս փոքրիկ անկյան ազնիվ գավառների բերնից է, որ դուք կլսեք «Օսմանյան պետություն» անունը, քանի որ սրանք են, որ դեռ կապ-

1003
21315

ված են Ոսմանյան պետության հետ. մի խոսքով՝ ամեն տեղ, ուր դեռ կան թյուրքեր, նրանք ձգտում են իրենց գոյությունը պահպանել նրանով, վոր ոսմանյան անվան մեջ են փնտրում իրենց փրկությունը։ Դրա համար ել բոլոր այն անձինք, վորոնք Ոսմանյան Միության գոյությունն իրագործել են ուզում, դրանց ուշադրությունը պետք ե ուղղված լինի թյուրքերին բարձրացնելու, նրանց թիվը ավելացնելու և նրանց գոյության հնարավորությունն ապահովելու մեծ պարտականության վրա։

Խնդրում եմ իմ այս փոքրիկ հապավումը, վոր յես արի՝ նպատակ ունենալով բոլորի առջև պարզելու իմ հայացքները, թող ավելորդ չհամարվի։

Համաձայն սահմանադրության բուն իմաստի, «Միություն և Առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն ցանկություն եր հայտնել, վոր յերկրում գոյություն ունեցող զանազան հեղափոխական-քաղաքական կուսակցությունները ձուլվեն մի միակ «Ոսմանյան Միության Քաղաքական Կոմիտե» կազմակերպության մեջ։ Այս նպատակով կենտրոնը առաջին հերթին կապի մեջ մտավ բուլղարական հեղափոխական մի շարք կուսակցությունների հետ։ Նախ և առաջ մենք բանակցություններ վարեցինք հայտնի Սանդանսկու, Չերնոպեյևի և սրանց համախոհների հետ։ Յեվ վորովհետև մեր բանակցությունների վորպես հիմք մենք դրել եյինք ոսմանիզմի սկզբունքը, ուստի հիշյալ անձինք մեզ ամենաչնչին զիջում չարին և պահանջեցին մեզնից Մակեդոնիայի ինքնավարությունը։ Թե այս բանակցությունների ընթացքում, ուր վորպես ներկայացուցիչներ մտել եյինք Թալեաթ բեյն ու յես, մենք ինչ նեղություններ քաշեցինք—դա միայն աստծուն ե հայտնի։ Յերբեք յես չեմ մոռանա այն տանջալի որերը, վոր մենք—յես և Սանդանսկին, ունեցանք Մենլիկ, Պետրիչ, Ոսմանիյե և Ջումայի-Բալա բուլղար գյուղերում ընտրական առաջին պայքարի ժամանակ։ Չնայած այդ բոլորին, մենք Սանդանսկու հետ ավելի շուտ համաձայնության յեկանք, քան մնացյալ հեղափոխական կազմակերպությունների, վորովհետև Մակեդոնիայի բուլղարական կուսակցությունն իր քաղաքական ծրագրից վոչ մի զիջում չեր ուզում անել։

«Ետնիկա-Հետերիա»-յի անունից բանակցություններ վարելու նպատակով Հունաստանից Սալոնիկ յեկած մի հույն առաջարկեց մեզ միացնել Հունաստանին Կրետեն և Սամոսը, մյուս կղզիներին տալ ամենալայն ինքնավարություն, իսկ գալով, այսպես ասած, Հունական Մակեդոնիային, սրան տալ ամենամեծ արտոնություններ. վորպես այդ բոլոր զիջումների փոխադարձ հատուցում Հունաստանն

իր կողմից պարտավորվելու յեր Տաճկաստանի հետ դաշն կապել։ Այդ առաջարկը մենք կտրականապես մերժեցինք, քանի վոր մեր նպատակը վոչ թե հույն-թյուրքական դաշնակցությունն եր, այլ այն, վոր մենք թյուրքերս հույներին «Միություն և Առաջադիմություն» կուսակցության մեջ մտցնենք և դրանով նպաստենք Ոսմանյան Միությանը։

1908 թվի ոգոստոսին մեր Կենտրոնական Կոմիտեն ժամանակավորապես Կ.-Պոլիս փոխադրվեց, ուր և մենք նույն նպատակներով բանակցություններ վարեցինք պրինց Սաբահեդդինի և հայ Դաշնակցության կոմիտեյի հետ։ Մեր կուսակցության կողմից ներկայացուցիչներ եյին Թալեաթ բեյը, Բեհաեդդին Շաքիրը և յես։ Դոկտոր Ռեշադ Նիհադը պրինց Սաբահեդդինի լիազորն եր, իսկ Մալումյանն ու Շահրիկյանը հայերի ներկայացուցիչներն եյին։ Մենք սրանց ապացուցում եյինք այն մի շարք դժվարությունները, վոր Ոսմանյան պետության համար առաջ կբերի վարչական ապակենտրոնացման սկզբունքի գործադրությունը։ Պրինց Սաբահեդդինի հայացքները շատ թե քիչ համանման եյին Դաշնակցության հայացքներին. յերկուսն ել գրեթե միևնույնն եյին ասում։ Տարորինակն այն եր, վոր Ռեշադ Նիհադն ավելի լայն արտոնություններ եր պահանջում, քան այն, վոր ուզում եր ինքը հայ հեղափոխական կուսակցությունը։ Յեվ վորովհետև մենք մերժում եյինք ընդունել այդ առանձնաշնորհումները, ուստի և նա մեզ հետ վոչ մի համաձայնության չեկավ։ Վերջապես, Մալումյանը Դաշնակցության անունից հետևյալ առաջարկն արեց.—«Դաշնակցությունը, ցանկանալով պաշտպանել ոսմանյան սահմանադրությունը, գործում ե «Միություն և Առաջադիմություն» կուսակցության հետ համերաշխ. կուսակցություններից յուրաքանչյուրը, սակայն, իր գլխավոր ծրագիրն իրագործելու համար պահպանում ե իր գործունեյության և միջոցների ընտրության ազատությունը»։ Սա նշանակում ե, վոր Դաշնակցությունը պահպանում ե յերկրում իր հեղափոխական կազմակերպությունը, այն միակ տարբերությամբ, վոր այն, ինչ մինչ այժմ այդ կազմակերպությունը գաղտնի յեր գործում, սրանից հետո նա, վորպես քաղաքական կուսակցություն, հրապարակ ե դուրս գալու ազատ, և նրա անդամները գործելու յեն հրապարակորեն։

Բնական ե, վոր մեզ ուրիշ վոչինչ չեր մնում, յեթե վոչ ընդունել այս առաջարկը։ Կարճ ասած՝ չնայած մեր կողմից արված բոլոր զիջումներին և յերեք-չորս ամսվա անչափ ջանքերին, մեզ չհաջողվեց մյուս ազգային հեղափոխական կազմակերպություններին ընդունել տալ մեր «Միություն և Առաջադիմություն» կուսակցու-

թյան կազմի մեջ—մինչ այն աստիճան մեր և նրանց նպատակներն իրարից տարբերվում էին։ Նրանք ցանկանում էին, որպեսզի ավտոնոմիայի և անկախության համար իրենց մինչև օրս գաղտնորեն տարած և մեծ վտանգների հետ կապված պրոպագանդան այսուհետև տանեն հրապարակորեն, որով և նրանք իրենց նպատակին ավելի շուտ կհասնեին, մինչդեռ մենք ձգտում էինք իբրև «Միություն և Առաջադիմություն» կուսակցության Օսմանյան կայսրության մեջ գտնվող բոլոր ազգությունների հեղափոխական կուսակցություններից մի կենտրոնական դաշնակցություն ստեղծել և դրա հետ միաժամանակ ստեղծել մի պետություն, որն իրենից ներկայացներ օսմանյան բոլոր ազգերի միությունը, և դրանով հասներ նրան, որ բոլոր տարրերը ճանաչեն և ըմբռնեն Օսմանյան Միության անհրաժեշտությունը. դրանով միայն պաշտպանված կլիներ մեր սահմանադրությունն ամեն տեսակ վտանգներից։

Ինչպես Ֆրանսիայում, երբ հանրապետությունը մի վտանգ է սպառնում, յուրաքանչյուր հանրապետական դուրս է գալիս հարձակվողի դեմ միացյալ ուժերով, այդպես էլ «Միություն և Առաջադիմություն» կուսակցությունը պետք է դառնար բոլոր նախկին հեղափոխական կուսակցությունների միությունը, որի անդամները, հենց որ սահմանադրությանը որևէ վտանգ հասներ, պետք է ընկերաբար և միասին դիմադրություն ցույց տային։ Ճիշտ այնպես, ինչպես Ֆրանսիացի հանրապետականները, կազմված լինելով քաղաքական տարբեր հայացքների տեր անհատներից, պատկանում են տարբեր կուսակցությունների, այդպես էլ «Միություն և Առաջադիմություն»-ը պետք է միացներ քաղաքական տարբեր կուսակցություններին և աշխարհայացք ունեցողներին—անկախ նրանից, թե նրանք ինչ ազգության են պատկանում և կրոնական ինչ դավանանք ունեն։

Քաղաքական կուսակցություններից և ոչ մեկը չուզեց ընդունել մեր այս վերազգային ուրիենտացիան, որովհետև նրանք իրենց գործունեության որոշումները գործնականում ստանում էին արտասահմանից և մեր հանդեպ հանդիսանում էին ուրիշների զուռնայով պարողների դերում։

Նույնիսկ Դաշնակցություն կուսակցությունը, որը գրեթե միշտ մեզ հետ էր գործում և վախ ուներ տեսնել մի օր Հայաստանը ընկած ռուսական լծի տակ, նա իսկ պահեց իր սեփական կազմակերպությունը և հայտարարեց իսկ ամենքի, որ ինքը ցանկանում է հասնել իր քաղաքական նպատակներին։ Հայ «հնչակյաններն» ու «վերակազմյալ հնչակյանները» խուսափեցին մեզ հետ որևէ հարաբերությունների մեջ մտնելու փորձից. Նրանց ղեկավարները Կ.-Պոլ-

սի ռուսաց դեսպանության հետ ակնհայտնի հարաբերությունների մեջ էին գտնվում։

1909-ի հունվարին Հիլմի-փաշայի կաբինետը «Միություն և Առաջադիմություն» կուսակցության պահանջով, նպատակ ունենալով հայերի, թյուրքերի և քյուրդերի միջև առաջացած հողային վեճերը կանոնավորել, որոշեց արևելյան վիլայեթները մի քննիչ հանձնաժողով ուղարկել։ Այդ հանձնաժողովի նախագահ նշանակվեց սենատի և վարչական գերագույն դատարանի անդամ Հալիբ-բեյը, երկու թյուրք և երկու հայ ուրիշ անդամների հետ։ Հանձնաժողովի թյուրք անդամներից մեկը գերագույն շտաբի մայոր Զեքի-բեյն էր, որը Եվրոպայում գտնված ժամանակ Դաշնակցություն կուսակցության հետ ամենալավ հարաբերությունների մեջ էր, երկրորդ թյուրք անդամը ես էի։ Իմ մասնակցությունը հանձնաժողովի մեջ խնդրել էին դաշնակցականները։ Մ[illegible]խորդ բանակցությունների ընթացքում նրանք ճանաչում էին ինձ որպես արդարամիտ և անաչառ հայացքների տեր մարդ և կարծում էին, որ ես, որպես Կենտրոնական Կոմիտեի անդամ, իմ որոշումներով կարտահայտեմ այդ կուսակցության պահանջները։ Այս որոշմանը հպատակվելու պատրաստ, ես Սալոնիկից Կ.-Պոլիս եկա։ Սակայն պարլամենտում կառավարության այս առաջարկին արևելյան նահանգների պատգամավորների կողմից խիստ հարձակումների ենթարկվեց. պատգամավորները պնդում էին, որ այդպիսի քննիչ հանձնաժողովի ուղևորումը ոչ այլ ինչ է, եթե ոչ սահմանադրությամբ այդ նահանգների գեներալ-նահանգապետներին տված լիազորությունների ոտնահարում։ Եվ որովհետև ներքին գործերի մինիստր Ֆերիդ-փաշան չկարողացավ պարլամենտում կառավարության տեսակետը պաշտպանել, ուստի ես, մնալով առանց գործի, սպասեցի Կ.-Պոլսում մինչև 1909 թվի մարտի պատմական դեպքերը։ Մարտի 31-ին այդ դեպքերը մոռացնել տվին քննիչ հանձնաժողով ուղարկելու ծրագիրը, և ես 1909 թվի մայիսի վերջին նշանակվեցի Սկուտարիի նահանգապետ։

II. ԱԴԱՆԱՅԻ ԴԵՊՔԵՐԸ

Ճիշտ նույն օրերում, երբ Կ.-Պոլսում բռնկեց մարտի 31-ի ապստամբությունը, որն իրեն նպատակ էր դրել կատարելապես անվնաս դարձնել «Միություն և Առաջադիմություն» կուսակցության ղեկավարներին իրենց բոլոր համախոհներով, Ադանայում առաջացան թյուրք-հայկական արյունալից կոտորածները։ Եվ քանի որ այդ դեպքերից չորս ամիս հետո, այն է՝ 1909 թվի օգոստոսի կեսին

յես Ադանայի նահանգապետ նշանակվեցի, ուստի թույլ եմ տալիս պնդել, վոր փոքրինչ ավելի լավատեղյակ յեմ այդ արյունհեղության հոգեբանական շարժառիթներին, մի արյունհեղություն, վորը մեր սահմանադրության պատմության ամենացավոտ եջերից մեկն ե կազմում։

Հենց վոր սահմանադրությունը հռչակվեց, Ոսմանյան պետության բոլոր մասերում ազգաբնակությունն այնպիսի մի գրգռման մեջ ընկավ, վոր, սկսած վոստիկանության ժանդարմից մինչև մեծ լիազորություններով ոժտված գեներալ-նահանգապետներն այլևս կորցրին մասսաների վրա իրենց ազդեցությունը։ «Ազատություն» խոսքը ինչպես մամուլի, նույնպես և ժողովրդի կողմից ամենաթյուր մտքով հասկացվեց. յուրաքանչյուրը հավատացած եր, վոր այժմ նա կարող ե անպատիժ անել՝ ինչ ել վոր ուզի։ Բազմաթիվ վալիներ, վարչական, վոստիկանական և դատական պաշտոնյաներ, վորոնք միապետական ռեժիմի որոք ճնշել եյին ազգաբնակությունը, այժմ առանձին ատելության և անթույլատրելի հարձակումների առարկա եյին դարձել։ Մարդիկ, վորոնք մինչև սահմանադրության հռչակումը «Միություն և Առաջադիմություն» կուսակցության անունն իսկ չեյին լսել, այժմ հրապարակ եյին գալիս ազատագրության հերոսների դերում և իրենց վոգևորությամբ այն աստիճան տարվում եյին, վոր պետական ծառայողներին արգելք եյին հանդիսանում իրենց պարտականությունները կատարելու։ Սահմանադրության առաջին որերին, յերբ յես Կենտրոնական Կոմիտեյում եյի, իմ հիշողություններս լի յեն այդորինակ դեպքերով։

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն ամենախիստ միջոցների յեր դիմում, վորպեսզի այդորինակ սանձարձակություններին արգելք հանդիսանա և նախազգուշացնի, վոր վոչվոք և վոչ մի տեղ, մեղավոր թե անմեղ՝ միևնույն ե, այդորինակ հակաորինական գործողություններին զոհ չգնա։ Յեվ վորպեսզի ազգաբնակությանը կուսակցության ծրագրի եյական կետերի հետ ծանոթանալու հնարավորություն տրվի, Կոմիտեն գավառները հատուկ ներկայացուցիչներ ուղարկեց, վորոնց հանձնարարված եր՝ այն տեղերում, ուր քաղաքական կազմակերպություններ չկային, կուսակցության ճյուղեր հիմնել։ Սակայն այս ներկայացուցիչների ընտրությունը, ընդհանուր առմամբ, շատ անհաջող դուրս յեկավ։ Միքանիսը սրանցից, առանց իրենց հաշիվ տալու, վոր մեր վորոշման գլխավոր նպատակը կառավարության հեղինակությունը յերկրում պահպանելն եր, հենց իրենք իրախուսում եյին անարխիան։

Հետագայում «Միություն և Առաջադիմություն» կուսակցու- [illegible] հակառակորդներ, պոլիտիկոսների դիմակի տակ,

ցանկանալով իրենց հարձակումները կառավարության դեմ ուղղել, [illegible] և աններելի արտահայտություններով դուրս յեկան նաև մամուլի մեջ և դրանով յերկիրն խռովական և անլուծելի անարխիայի մատնեցին։ Յեվ քանի վոր պետության մայրաքաղաքն իսկ ամեն մի հեղինակությունից ու ուժից զուրկ եր, հեշտ ե յերևակայել, թե ինչ դրության մեջ եյին գտնվում գավառները։ Շատերը, վորոնց չեր աջողվել գավառական քաղաքների կուսակցության ճյուղերում աչքի ընկնող տեղեր գրավել, ինքնագլուխ կերպով Կ.-Պոլսում հետզհետե կազմակերպվող զանազան կուսակցությունների գավառական ճյուղեր եյին հիմնում, նպատակ ունենալով դրանց միջոցով հագուրդ տալ իրենց վրեժխնդրության զգացմունքին։

Յեվ այնինչ մահմեդական և թյուրք ազգաբնակությունն անմիաբան եր և բաժան-բաժան, քրիստոնյա տարրերը, ընդհակառակը, շնորհիվ իրենց կուսակցությունների, ամենայն յեռանդով իրենց ծրագիրներն իրականացնել եյին աշխատում։

Ադանայի վիլայեթում թյուրք ազգաբնակությունն իր թվով գերազանցում եր քրիստոնյաներին. ապա գալիս եյին հայերը, հետո արաբները, վորոնք հայտնի եյին «արաբ-ուշաղ» անվան տակ, և վերջապես հույները։ Ամբողջ վիլայեթը 550 հազար շնչից եր բաղկացած, վորոնցից մոտավորապես 60 հազարը հայեր եյին, 20—25 հազար «արաբ-ուշաղ»-ներ, 10—15 հազար հույներ, մնացածները բոլորն ել թյուրքեր եյին։ Դարերի ընթացքում ազգաբնակությունը, վորի մեծագույն մասը յերկրագործությամբ եր պարապում, իրարու հետ ապրում եր շատ համերաշխ։

Անհերքելի փաստ ե, վոր Ադանայի վիլայեթն ոսմանցիներից շատ առաջ թյուրքերին եր պատկանում և ոսմանցիները խլում են այն «Ռամազան-ողուլլար» անվան տակ հայտնի թյուրք իշխանական տան ձեռքից։ Չնայած պատմության այն պնդումին, ըստ վորի այս յերկրում, վորը Խաչակրաց արշավանքների ժամանակ Կիլիկիա յեր կոչվում, հայկական թագավորություն կար, սակայն անհերքելի յե, վոր այն ժամանակներում իսկ այդ յերկրում թյուրքեր եյին ապրում, և թյուրք ավատական բեյերը հայկական այդ թագավորության հետ թշնամական հարաբերությունների մեջ եյին գտնվում։

Ներկայումս Ադանայի վիլայեթում ապրող հայերի մեծագույն մասը Դիարբեքիրի, Սվազի և Մամուրեթ-ուլ-Ազիզ նահանգների բնիկներ են, վորոնք XIX դարի ընթացքում, բախտ վորոնելու հույսով, Ադանա յեն գաղթել։ Ադանայի հայ նախաբնակիչները նրանք են, վորոնք այժմ ապրում են Հաջին քաղաքում, վիլայեթի հյուսիսային մասերում և Կոզան սանջակի գլխավոր քաղաք Սիսի շրջակայքի մի-

քանի գյուղերում. կան հայեր նաև Դորա-Յոլում և Ալեքսանդրետտի ծոցի ծովափնյա և նրա շուրջ գտնվող միքանի գյուղերում:

Ինչ վերաբերում է «արաբ-ուշաղներ»-ին, դրանք սուլթան Աբդուլ-Ազիզի ժամանակ Լազկիյե սանջակից յեկած գաղթականներ են, վորոնք բերված եյին այստեղ Ադանայի դաշտավայրի նոսր ազգաբնակություն ունեցող, բայց շատ պտղատու մասում դաշտային մշակույթներ զարգացնելու նպատակով: Ինչպես յես արդեն ասացի, հայերն ու թյուրքերը, ինչպես և վիլայեթի մնացյալ բնակչությունը, առաջներում ապրել են իրարու մեջ հաշտ և լի փոխադարձ վստահությամբ, և յերբեք նրանց մեջ վոչ մի անբավականություն տեղի չեր ունեցել: 1894—96 թվականների բռնկումների և կոտորածների ժամանակ Ադանայի վիլայեթում ամենաչնչին միջադեպ անգամ չի յեղել, և հայերն ու թյուրքերը, ձեռք-ձեռքի տված, ամեն ջանք գործ են դրել թույլ չտալու, վոր կռիվը իրանց շրջանն անցնի, և նրանց ջանքերը, իրոք, իզուր չեն անցել:

Սահմանադրությունը հռչակելուց հետո հայերն Ադանայում կազմակերպված թյուրք քաղաքական կուսակցության դեմ կազմում են «Դաշնակցություն», «Հնչակյան» և «Վերակազմյալ Հնչակյան» կուսակցությունների ճյուղեր: Ճիշտն ասած՝ սրանք, վոր առաջներում գաղտնի կազմակերպություններ եյին, այժմ հրապարակ են գալիս բաց և ազատ:

Այդ ժամանակներում Ադանայում հայ առաջնորդի պաշտոն եր կատարում Մուշեղ եֆենդին, մի յերիտասարդ փառասեր անձ, վորը միաժամանակ «վերակազմյալ հնչակյաններ»-ի ղեկավարն եր: Հայերն այս անձի անմտությունների մասին բազմաթիվ դեպքեր եյին պատմում: Յեթե միայն ճիշտ եյին հայերի սրա մասին յեղած պատմությունները, կարելի յեր պնդել, վոր այդ մարդն ամենաստոր բնազդների մարմնացում է յեղել:

Սահմանադրության հայտարարումից հետո «մոնսինյոր Մուշեղն» իրեն Ադանայի հոգևոր և քաղաքական պետ է հայտարարում: Ինձ պատմեցին, վոր այս հոգևոր պետը, օգտվելով կառավարության թուլությունից և անզորությունից, գեներալ-նահանգապետի ներկայությամբ նահանգական ժողովում թույլ է տալիս իրեն մի վերին աստիճանի վիրավորական քայլ. նա վիլայեթի ժանդարմական գնդապետին ապտակ տալու սպառնալիքով մեծ դրգման մեջ թողնում է ժողովը ու հեռանում: Հայերը նույնպես պատմում եյին ինձ, վոր այդ օրերում բազմաթիվ հայ յերիտասարդներ, վորոնք «մոնսինյոր Մուշեղի» հոգևոր զավակներն եյին համարվում, իրենց հանդգնու-
[...] մինչև այն աստիճանի յեն հասցրել, վոր զանազան միտինգնե-

րում հայտարարում են, թե հայերի թյուրքական լծից ազատվելու ժամանակները հեռու չեն:

Արդարացի լինելու համար պետք է ավելացնեմ, վոր «Դաշնակցության» ներկայացուցիչը Մուշեղ յեպիսկոպոսի այս սանձարձակությունների մեջ վոչ մի մաս չուներ և նա չե լինում, վոր Դաշնակցության ներկայացուցիչների ուշադրությունը հրավիրում է այսօրինակ վարմունքից ծագելիք անցանկալի հետևանքների վրա:

Սակայն մոնսինյոր Մուշեղը չի բավականանում դրանցով: Հայերին զինելու նպատակով նա Յեվրոպայից հրացաններ ու ատրճանակներ է բերել տալիս: Այդ ժամանակաշրջանում կառավարությունը, ինչպես ամեն բանում, այնպես էլ զենքերի առևտրի ազատություն եր տվել և դրա հետ միասին նաև զենքեր ներմուծելու իրավունք: Մոնսինյոր Մուշեղն ի լուր ամենեցուն հայտարարում է. «Քանի վոր հայերը վերջապես զինված են և դրա հետևանքով նրանք այլևս վախ չունեն, վոր 1894 թվի կոտորածները կարող են կրկնվել, ուստի այժմ յեթե մի հայ սպանվի, նրա տեղ կսպանվեն տաս թյուրքեր»: Մոնսինյոր Մուշեղի այս հայտարարությունն ստիպում է Ադանայի թյուրքերին ևս նույն միջոցներին դիմել:

Ահա այստեղ է վոր սկսվում է այն ժամանակվա Ադանայի վարչական կազմի մեղսակցությունը, վորովհետև իր թուլության և անզորության խոստովանությունը մի կառավարության կողմից արդարացում չի կարող համարվել: Հենց վոր պարզվեց Մուշեղ յեպիսկոպոսի ազգաբնակության վրա ունեցած վատ ազդեցությունը, լավագույն միջոցը կլիներ, յեթե կառավարությունը ինչպես Մուշեղ յեպիսկոպոսին իր համախոհներով, նույնպես և այն բոլոր թյուրքերին, վորոնք խռովարարների դերի մեջ եյին, ձերբակալեր և դատի տար, իսկ կարևոր դեպքում ամբողջ վիլայեթում պատերազմական դրություն մտցներ: Բայց այդ ժամանակ հենց ինքը մեծ-վեզիր Հյուսեյին-Հիլմի-փաշան չեր համարձակվում Կ.-Պոլսում կտրուկ միջոցների դիմել: Յեվ նա, յերբ կատարվում եր ժուռնալիստ Հասան-Ֆեհմի-բեյի հուղարկավորության հանդեսը, Մեծ-Դոնից պալատ տանող փողոցում «Մոհամեդիյե» կուսակցությանը պատկանող անդամներից մեկի կողմից վիրավորանքի յենթարկվեց:

Ամեն մի կառավարության պարտականությունն է պարզել ժողովրդին, վոր ազատությունն ու անարխիան յերկու տարբեր բաներ են: Դժբախտաբար թյուրքիան 1908 թվի վերջերին և 1909-ի սկզբներին այդպիսի կառավարություն չուներ:

Այդ օրերում Ադանայի գեներալ-նահանգապետ Ջավադ-բեյն եր: Նա, անկասկած, կարող է բարձր բարոյականության տիպար համար-

վել, սակայն նրա վարչական ընդունակությունները նույն բարձրության վրա չեյին կանգնած: Նա վոչ մի բանով չեր համապատասխանում այն պահանջներին, վոր պետք է ունենար Ադանայի վալին: Դիվիզիայի զորահրամանատարի պաշտոն եր կատարում մի ծերունի զինվորական—գեներալ Մուստաֆա-Ռեմզի-փաշան: Յերիտասարդ հասակում նա աչքի չեր ընկել իր մեծ յեռանդով և այնուհետև նա ապրում եր հայրենասերի պատվասիրական ավանդներով: Սակայն չի կարելի ասել, վոր այդ անձը, վորը նախ և առաջ ծեր եր և զուրկ վոստիկանական ուժերից, Ադանայի կոմենդանտից պահանջվող հատկությունների տերն եր: Ջեբել-Բերեքեթ սանջակում այդ ժամանակ մյութեսարիֆի պաշտոն եր վարում Ասադ-բեյը, վախկոտի մեկը, վորն իր սեփական ստվերից իսկ վախենում եր: Յես չկարողացա հասկանալ, թե ինչպես կարելի յեր այդպիսի մի մարդու փոխ-նահանգապետ նշանակել:

1909 թվի սկզբներին բերնից-բերան եր անցնում այն լուրը, թե հայերը թյուրքերին վոչնչացնելու նպատակով շուտով վոտքի յեն կանգնելու: Դա նշանակում եր, վոր նրանք այս առիթից ոգտվելու եյին վիլայեթը յեվրոպական նավատորմիղի ուժով գրավել տալու և դրանով հայկական թագավորությունն աջողեցնելու համար: Թյուրքերն այն աստիճան հավատ եյին ընծայում այս լուրերին, վոր ունևորներից շատերն իրենց ընտանիքն ապահով տեղեր եյին փոխադրում:

Ինձ ասացին, վոր իբր թե «Մոհամեդիյե» կուսակցության կողմից Կ.-Պոլսից Ադանա եյին ուղարկված յեղել վորոշ մարդիկ, վորոնք յեկել եյին թյուրք ազգաբնակությանը նախազգուշացնելու հայերի կողմից սկսվող ապստամբության մասին: Այս լուրի իսկության ապացույցները, սակայն, ինձ չաջողվեց գտնել:

1909 թվի ապրիլի սկզբին տրամադրությունների փոխադարձ լարվածությունն այն աստիճանի յեր հասել, վոր ամեն որ կարելի յեր սպասել, վոր ազգաբնակությունը, վորտեղ-վոր է, հրես իրարու վրա կսկսի հարձակվել: Ապրիլի 14-ին, վերջապես, Մուշեղ յեպիսկոպոսի հայերին տված հարձակման հրամանով, սկսվեցին «Ադանայի դեպքերը»:

Ադանայում, Տարսոնում, Համիդիյեյում, Երզինում, Դորտ-Յոլում, Այիբլիում—կարճ՝ հայերով բնակեցված բոլոր տեղերում տեղի ունեցավ այնպիսի մի կոտորած, վորի մանրամասների նկարագրությունն իսկ սարսափ է ազդում: Կառավարությունը, վորը նույնիսկ վիլայեթի գլխավոր քաղաքում իր կատարյալ անզորությունն ապացուցեց, իր կուրությամբ այն տեղը հասավ, վոր, հայերի մուսուլմանների վրա հարձակման առաջն առնելու նպատակով, շրջաններում

մասսայորեն վոտքի կանգնելու հրաման եր տվել: Մյութեսարիֆ Ասադ-բեյը հենց վոր լուր է ստանում, վոր Դորտ-Յոլի զինված հայերը հարձակվել են Ջեբել-Բերեքեթ սանջակի գլխավոր քաղաք Երզինի վրա, չի ամաչում և, մտնելով իր սենյակը, մնում է այնտեղ փակված: Նա Լիվայի բոլոր կողմերը հեղեղում է հեռագրերով, վորոնց մեջ գրում է. «Այստեղի մահմեդականները վոչնչանալու վտանգի մեջ են, ուստի իր հայրենիքն ու ազգը սիրող ամեն մի անձի պարտքն է զենք առնել և Դեգե-Բերեքեթ սանջակ շտապել»:

Համենայն դեպս ձայն է տարածվել, վոր Դորտ-Յոլի հայերն ուղղվել են դեպի Երզին, նպատակ ունենալով կոտորել Դեբեա-Բերեքեթի թյուրքերին: Անկասկած, աններելի սխալ է մի մյութեսարիֆի համար փակվել սենյակում և թույլ տալ, վոր ազգաբնակությունն անի ինչ վոր ուզում է: Քանի վոր, յերբ ազգաբնակությունն իրեն վտանգի մեջ է զգում, նա հարձակվում է վոչ միայն հարձակման հրահրողների, այլ նաև անմեղ կանանց, ծերերի և յերեխաների վրա. այդ դեպքում ամբոխն անձնատուր է լինում թալանի, քաղաքներ, գյուղեր և կալվածներ է հրդեհում:

Յեվ փաստորեն այս բոլորն էլ տեղի յեն ունեցել:

Ահա այն պատճառները, վորոնք առաջացրին Ադանայի առաջին դեպքերը: Հետագա կոտորածները, վորոնք սահմանափակվեցին Ադանա քաղաքով, տեղի ունեցան տաս որ հետո, շնորհիվ հայ յերիտասարդների, վորոնք սկսել եյին կրակ բացել զինվորական զորահրապարակի վրա: Դրա հետևանքով էլ Ադանայի կոտորածներն այդպիսի սոսկալի կերպարանք են ստանում:

Իմ անձնական համոզմունքով «Կիլիկիայի գիշեր» առաջացնելու հեղինակը յեղել է մոնսինյոր Մուշեղը, իսկ իսկական մեղավոր և պատասխանատուն, իմ կարծիքով, այն ժամանակվա նահանգապետն եր, վորը, չնայած վոր գիտեր, թե ինչ վտանգավոր անձ եր Մուշեղ յեպիսկոպոսը, ձեռք չի առել պաշտպանության անհրաժեշտ միջոցներ: Անուրանալի յե, վոր նա այսորինակ դեպքերի միջոցին ձեռքից բաց եր թողել վարչական սանձը, և նրա վարմունքը թալանչիների և մարդասպանների դիմաց յեղել է թույլ և վողորմելի:

Ինչ վոր անպայման ճիշտ է, դա այն յե, վոր այս դեպքերից դեռ յերկու-յերեք ամիս առաջ Ադանայի վիլայեթի բոլոր պաշտոնական և վարչական շրջանների թյուրքերն ու մահմեդականները հաստատ համոզված են յեղել, վոր հայերը, որ-ավուր զինվելով, մասսայական կոտորածի պատրաստություն են տեսնում, և վոր իրենք փաստորեն մեծ վտանգի մեջ են գտնվում: Ինչ վերաբերում է Մուշեղ յեպիսկոպոսին և նրա համախոհներին—դրանց անպայման ճառերն ու յելույթներն էլ ավելի հաստատել են այս կարծիքը:

Հոգեբանական այն պատճառները, որոնք ես վերևը հիշեցի, միայն իմ անձնական համոզումը չեն։ Անգլիացի մայոր Դոուտի-Վիլլին, Անգլիայի այն ժամանակվա հյուպատոսը, միևնույն կարծիքին էր։ Ես անչափ ցավում եմ, որ այս հարգելի ջենտլմենը, որը Դարդանելում ահագին քաջություններ էր գործել և որն իր կյանքը զոհեց հայրենիքին, այլևս կենդանի չէ, որպեսզի հաստատեր իմ ասածները։

Ամերիկացի միսիոներ միստր Չեմբերսը և Տարսոնի կոլեջի տեսուչ միստր Քրիստին երբ պատմում էին ինձ թյուրքերի և արաբ-ուշագների արած կոտորածների մասին, նրանք նմանապես հաստատում էին, որ Մուշեղ եպիսկոպոսն այդ կոտորածների գլխավոր դրդիչն էր։

Այս արյունահեղությանն Ադանայում զոհ գնացին 17 հազար հայեր և հազար ութ հարյուր հիսուն թյուրքեր։ Այս թվերը ցույց են տալիս, որ եթե Ադանայում հայերը մեծամասնություն կազմեին, տեղի կունենար դրա հակառակը—հայերը մեծ թվով թյուրքեր կկոտորեին։ Գալով փոխադարձաբար գործած վայրագություններին՝ հակառակորդներից ոչ մեկը մյուսից ետ չէր մնում։ Հայերն ամեն մի հարմար դեպքից օգտվել են թյուրք կանանց ու երեխաների վրա հարձակվելու. թյուրքերն անում էին նույնը. և այս երկու կատաղած ազգերն ապացուցեցին, որ այդ կողմից նրանց մեջ ոչ մի տարբերություն չկա։

Երբ ես Ադանայի գեներալ-նահանգապետ նշանակվեցի, կառավարությունն իմ տրամադրության տակ երկու հարյուր հազար ֆունտ-ստերլինգի վարկ բացեց. դրա հարյուր հազարը ծառայելու էր հայերի և թյուրքերի տների վերաշինության գործին, քանի որ թե քաղաքներում և թե գյուղերում դրանք կրակի և բոցի զոհ էին դարձել. իսկ գումարի մյուս կեսը տրվելու էր հայ վաճառականներին, արհեստավորներին ու կապալառուներին որպես փոխատվություն, պայմանով, որ նրանք նորից վերսկսեն իրենց պարապմունքները և ապա տարվա ընթացքում ստացած գումարը վերադարձնեն։ Ադանայում, իմ նախագահության տակ, ես կազմակերպեցի մի Շինարար Հանձնաժողով։ Հանձնաժողովի մեջ էին մտնում տարբեր միսիոներ Չամբերը և մեծ թվով տեղացիներ, որոնցից շատերը հայեր էին։

Շնորհիվ իմ կողմից ձեռք առնված միջոցների իմ այնտեղ մնացած չորս ամիսներում վիլայեթի հայերի քանդված տները նորից շինվեցին, և Ադանայի մեջ չկար մի հատիկ ընտանիք, որի կարիքները բավարարված չլինեին։ Կարճ՝ ընդամենը հինգ-վեց ամիսնե-

րի մեջ հայերը նորից ամբողջովին կգան իրենց առևտրին, երկրագործությանն ու արհեստներին, և թյուրքերի ու հայերի միջև, գոնե արտաքնապես, նախորդ դեպքերից մնացած թշնամության ոչ մի հետք չէր երևում։

Երբ պարոն Մանդելշտամն իր գրքի 205-րդ երեսում*, հիմնվելով Ադոսիդես անունով մի հույնի գրվածների վրա, որոնք լի են դեպի թյուրքերը տածած ատելությամբ, պնդում է, թե այդ դեպքերի ժամանակ մահմեդականներից ընդամենը ինն աննշան թյուրքեր սպանվեցին, պարզ է, որ նա Ադոսիդեսին համահավասար ստում է։

Իմ Ադանա գալուց ընդամենը չորս ամիս անց զինվորական դատարանի միջոցով ես երեսունից ոչ պակաս մահմեդականների մահապատժի ենթարկեցի, իսկ դրանից երկու օր անց, Երզինայում, դարձյալ տասնյոթ հոգի նույն պատիժն ստացան։ Դրանց թվումն էին Ադանայում շատ նշանավոր և ամենից հին ընտանիքներին պատկանող անձինք, իմիջի այլոց Բաղչե-Ղազայի մուֆթին, որը շրջանի թյուրքերի կողմից մի շատ հարգված անձ էր։

Ես խորապես ցավում եմ, որ մոնսինյոր Մուշեղը, որին դեպքերից երկու օր հետո հաջողվել էր օտար շոգենավով Ալեքսանդրիա փախչել, իմ ձեռքը չընկավ։ Նա—ի բացակայություն—ամենայն իրավամբ մահվան դատապարտվեց։ Եթե միայն աջողվեր ինձ նրան ձերբակալել—ես նրան Բաղչեյի մուֆթիի դեմառդեմ կախել կտայի։

Իրենք հայերը շնորհապարտ էին ինձ այն ջանքերի համար, որ ես գործադրեցի իմ կառավարության ամբողջ ընթացքում նրանց ինչքն ու տնտեսությունը վերականգնելու գործում։ Բազմաթիվ օտարազգիներ—ֆրանսիացիներ, անգլիացիներ, ամերիկացիներ և ռուսներ, որոնք այդ պահին Ադանայումն էին և իմ աշխատանքներին ականատես վկաներ, այդ առթիվ ինձ աջողություն էին մաղթում։ Մինչև այժմ էլ գոյություն ունի այն մեծ որբանոցը, որ ես կառուցել տվի՝ ջարդերի հետևանքով որբացած երեխաներին ընդունելու և կրթելու համար։

1912 թվի օգոստոսին, երբ ես թողեցի Բաղդադի նահանգապետության պաշտոնը, ուր ես նշանակվեցի Ադանայից հետո, և Կ.-Պոլիս վերադարձա, Օսմանյան պետությունն ապրում էր իր գոյության ամենավտանգավոր րոպեները։ Իտալիայի հետ դեռևս պատերազմում էինք, Բուլղարիան, Սերբիան, Չերնոգորիան և Հունաստանը դաշնակցած իրարու հետ մի առիթ էին փնտրում մեզ

* Տես Մանդելշտամ։

պատերազմ հայտարարելու, ապստամբել եր Ալբանիան. Սիրիայի արաբական ամբողջ մամուլը, կրակ ու բոց դարձած, արաբական նահանգների համար կառավարությունից ռեֆորմներ եր պահանջում, հայոց պատրիարքը հուշագրեր եր, վոր իրարու յետևից Բարձր-Դուռն եր ուղարկում և Հայաստանի համար ռեֆորմներ ուզում, իսկ ամենից մեծ վտանգը վոր կար, դա այն եր, վոր թյուրք սպաների մի մեծ թիվ «Ազատարար Սպաների Խումբ» («Հալասկյարան») անվան տակ միանալով իրարու հետ՝ բանակում մեզ համար ճակատագրական նշանակություն ունեցող անարխիա եյին մտցնում: Կարելի չեր հաստատ ասել, վոր Դարդանելի, Զմյուռնիայի և Ալբանիայի մեր զորամասերն իսկական մի ապստամբության դրոշակ եյին բարձրացրել:

Այդ ժամանակ կառավարության գլուխ եր կանգնած Ղազի-Մուխթար-փաշան:

Այս խառնակ որերին ել սկսվեց բալկանյան պատերազմը: Ռուս և ֆրանսիական դիպլոմատիան պատերազմի բեմում ունեցած մեր բազմազան անաջողություններից օգտվեց՝ իրենց գործերն առաջ տանելու համար: Այնինչ Ֆրանսիան գրգռում եր արաբներին Սիրիայի համար ռեֆորմներ պահանջելով, Կ.-Պոլսի ռուսաց դեսպան պարոն Հիրսը նորից բարձրացրեց հայկական հարցը և 1912 թ. նոյեմբերի 26-ին ներքին գործերի մինիստրին ուղղեց հետևյալ հուշագիրը.

«Սկսած 1894—96 թվերի նշանավոր դեպքերից, յերբ Փոքր-Ասիան և Կ.-Պոլիսը ներկվեցին բարբարոսորեն կոտորված հայերի արյունով, հայերի դրությունը վոչնչով չի լավացել: Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմից գործադրած ճնշման ազդեցության տակ սուլթան Աբդուլ-Համիդի կողմից 1895 թ. օգոստոսի 20-ին ստորագրած ռեֆորմների դեկրետը մնացել ե չիրագործված»:

«Հողային հարցն որ-որի վրա ավելի և ավելի սրվում ե, հայերին պատկանող հողերի մեծագույն մասը յուրացվել կամ յուրացվում են քյուրդերի կողմից, իսկ վարչական մարմիններն այդորինակ հողային ապորինի խլումներին վերջ դնելու փոխարեն, ընդհակառակը, պաշտպանում և հեշտացնում են դրանց իրագործումը: Մեր բոլոր հյուպատոսներից ստացված տեղեկագրերը լի յեն հայերի վրա քյուրդերի կողմից կատարվող ավազակային թալանների, անթույլատրելի ճնշումների և հայերին սպանելու և հայ կանանց առևանգելու փաստերով: Հանցավորները, գրեթե, յերբեք որինական պատասխանատվության չեն կանչվում: Կ.-Պոլսի հայոց պատրիարքի Մեծ-Դռանը և ներքին գործոց մինիստրին ներկայացրած հուշագիրը ճիշտ պատկեր ե տալիս այն սարսափների ու հալածանքների, վորոնց յենթարկվում են Սուլթանի հայ հպատակները»:

«Իրերի այսորինակ դրությունը,—շարունակում ե պարոն Հիրսը,—բավականաչափ պարզում ե, թե ինչու հայ ժողովուրդն անընդհատ հակվում ե դեպի Ռուսաստան: Հայաստանում գտնված բոլոր ռուս հյուպատոսներն անխտիր վկայում են այդ տեղերում գտնվող ժողովրդի այդորինակ տրամադրության մասին: Հայերը պահանջում են, վոր ռեֆորմների իրագործումը կատարվի Ռուսաստանի հսկողության տակ, կամ, վոր Ռուսաստանն այդ յերկիրը նույնիսկ գրավի: Կաթոլիկ դավանանքին պատկանող հայերը խնդրում են Ռուսաստանին՝ «Արևելքի քրիստոնյաների այս յերկարամյա պաշտպանին, վոր նա, հանուն Ամենաբարձրյալի, իր պաշտպանության տակն առնի Թյուրքահայաստանի հայ ժողովրդին»: Դեսպանն այն կարծիքին ե, վոր «հայկական հարցը Ռուսաստանի համար առաջին կարևորություն ե ներկայացնում», և ցանկություն ե հայտնում, վոր Ոսմանյան կառավարությունն այս հարցը կարգավորելու համար ձեռք առնի անհրաժեշտ միջոցներ: Ռուսների կողմից Հայաստանի գրավումը վաղաժամ համարելով, արտահայտվում ե ի նպաստ ռեֆորմների իրագործման: Կանգնելով այս հողի վրա և մատերելով 1895 թվականի որենքի ցավալի վախճանը, նա պնդում ե, վոր ռեֆորմների մտցնումը ռուս կամ յեվրոպական պաշտոնյաների հսկողության տակ—անհրաժեշտ ե դառնում: «Ի նկատի ունենալով այն անարխիան, վորի մեջ գտնվում ե ներկայումս Թյուրքիան,—վերջացնում ե պարոն Հիրսը,—հնարավոր ե, վոր ռեֆորմներն իսկ ցանկալի խաղաղություն չեն բերի, և հավանականորեն մեր զորքն այդ շրջանը մտնելու կարիք կլինի»:

Դեռևս 1912 թվի սկզբին Եջմիածնի կաթողիկոսը—Ռուսաստանում—յեվրոպական պետությունների մոտ եր ուղարկել Պողոս Նուբար փաշային, հանձնարարելով նրան թյուրքահայերի համար անկախություն ձեռք բերել: Պարզ ե, վոր դա յել ռուսաց դիպլոմատիայի գործերից մեկն եր:

Վորքան նման ե ռուսների կողմից առաջ տարած այս քաղաքականությունը, համաձայն վորի պետք եր հայերից ծածուկ պահել կառավարության իսկական դիտավորությունները—այն քաղաքականությանը, վորը տանում եր Սիրիայում Ֆրանսիան:

1913 թվին Պարիզում գումարված արաբական կոնգրեսի բեյրութցի մի անդամ, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Պիշոնին ասաց. «Չնայած վոր մենք մեր կոնգրեսը գումարել ենք Պարիզում, բայց միակ նպատակը, վոր մենք դրել ենք մեզ, կայանում ե նրանում, վոր Ոսմանյան կառավարությունից արաբական նահանգների համար ռեֆորմներ կորզենք: Մենք չենք ուզում, վոր վոչ

Սիրիան ֆրանսիացիների կողմից գրավվի, և վոչ էլ Ֆրանսիան մեզ խնամակալի։

Պարոն Պիշոնը, վորպեսզի ցույց տա, վոր Ֆրանսիան Սիրիայի վերաբերմամբ վոչ մի չարին միտք չունի, այս խոսակցության մասին հայտնում է Կ.-Պոլսի ֆրանսիական դեսպան պարոն Բոմպարին։ Գրեթե միևնույն ժամանակում, այն է՝ 1913 թվի մարտի 15-ին, միևնույնն ասել են ռուսները Պողոս Նուբար փաշային—գուցե հենց նույն բառերով։ Մեր ասածները հաստատում են Պարիզի ռուսաց դեսպան պ. Իզվոլսկու ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազոնովին ուղղած փետրվարի 28 (մարտի 13) թվակիր նամակը—«Պողոս Նուբար փաշան,—գրում է դեսպանը,—հաճախ կրկնել է, վոր հայերը վոչ մի կերպ չեն ուզում Հայաստանի անկախության կամ պետական իրավասության փոփոխությունների խնդիր արծարծել. Նրանց միակ ձգտումը կայանում է նրանում, վոր Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից մշակված և Բեռլինի դաշնագրով նախատեսված ռեֆորմների իրագործումը տեսնեն, մի բան, վորը մինչև օրս մնացել է վորպես մեռյալ տառ»։

Ինձ թվում է, վոր արաբական և հայկական ռեֆորմների վերաբերմամբ յեղած հայացքների այս նմանությունն արդյունք է այն համաձայնության, վորը կապել են իրարու հետ Ռուսաստանն ու Ֆրանսիան՝ նպատակ ունենալով մասնատել Թյուրքիան։

1913 թվի մարտի 22-ին, վերջապես, ռուսաց արտաքին գործերի մինիստրը հայկական ռեֆորմների իրագործման համար անում է առաջին քայլը։ Պարոն Սազոնովը նույն թվին առաջարկում է Բեռլինի ռուսաց դեսպանին՝ խնդրել Գերմանիային, վոր նա էլ մասնակցի միջազգային այն դիմումին, վոր ուղղվելու յէ Բարձր-Դռանը։ Այս թվականը զուգադիպում է ճիշտ այն մոմենտին, յերբ Թուլացած Օսմանյան կառավարությունն ստիպված էր Լոնդոնում ստորագրել խաղաղության նախնական պայմանագիրը, ըստ վորի նա համաձայնել էր, վոր Թյուրքիայի և Բուլղարիայի միջև վորոշած սահմանագիծն անցներ Յենոս-Միդիայի միջով։

Այդ ժամանակներում է, վոր հայերի ազգային ցույցերը Կ.-Պոլսում տանում են անբնական արտահայտություններ։ Ի հիշատակ չգիտեմ վոր դարում տեղի ունեցած հայ գրերի գյուտի, հայերը կազմակերպում են մի մեծ հոբելյանական հանդես։ Նրանք իրենց հանդգնությունը հասցնում են մինչ այն աստիճանի, վոր փողոցներում իրենց ազգային գույների կոնֆետտիներ են շաղ տալիս։ Մենք տեսնում եյինք այդ բոլորը, սակայն անդրդվելի սառնասրտությամբ տանում եյինք. միակ բանը, վոր արեցինք, այդ այն եր, վոր, վորպեսզի անցանկալի միջադեպներ չպատահեն, ձեռք առանք մի շարք նախազգուշական միջոցներ։ Յես այդ ժամանակ Կ.-Պոլսի զինվորական նահանգապետ եյի և, հրավիրված լինելով հայերի կողմից, գնացի Թաքսիմի այգին—տոնակատարման տեղը—և այնտեղ հայ ազգի հասցեյին գովասանական մի ճառ արտասանեցի։

Ռուսաց արտաքին գործերի մինիստրի արած քայլերը կայանում եյին նրանում, վոր նա մեծ պետությունների Կ.-Պոլսի ներկայացուցիչներին ներկայացրեց հայկական ռեֆորմների մի նախագիծ, վորին, վորպես հիմք, ծառայում եր 1898 թվին Օսմանյան պետության կողմից մշակած նախագիծը։

Անգլիան և Ֆրանսիան իսկույն համաձայնեցին այդ առաջարկին. միայն Գերմանիան եր, վոր առաջարկեց, վոր մեծ պետությունների դեսպաններից կազմված այդ Համաժողովի մեջ հրավիրվեն նաև Մեծ-Դռան ներկայացուցիչները։ Այս առաջարկը Ռուսաստանն ուժգնորեն մերժեց և վերջապես նրան այդ հաջողվեց, յերբ Գերմանիան նույնպես համաձայնեց, վոր Համաժողովը բաղկացած լինի մեծ պետությունների դեսպանների դրագոմաններից, վորոնք Յենի-Քյոյում, շահագրգռված Օսմանյան կառավարության ներկայացուցչի բացակայությամբ, պետք է ուսումնասիրեյին հայկական հարցը։

Նախքան այդ Համաժողովն իր աշխատանքներին կանցներ, Ռուսաստանը ներկայացրեց Կ.-Պոլսի դեսպանատան դրագոման Մանդելշտամի կողմից կազմված ռեֆորմների մի նախագիծ։

Յես հեղինակի խղճին եմ թողնում վճռել այն հարցը, թե անամոթություն չէ՞ արդյոք ազգային փոքրամասնության իրավունքի պաշտպանության դիմակի տակ ներկայացնել մի նախագիծ, վորը վոչ այլ ինչ է, յեթե վոչ անկախ պետություն հիմնելու մի ծրագիր։ Ինկատի ունենալով այդ նախագծի արտակարգ կարևորությունը, յես տալիս եմ այստեղ ռուսական նախագիծը բառ-առ-բառ։

III. ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

ՌՈՒՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

(Ծիրանի գիրք № 30)

Հայաստանում մտցվելիք ռեֆորմների նախագիծ, մշակված ռուսական դեսպանատան առաջին քարտուղար պ. Մանդելշտամի կողմից։

Նախագծին վորպես հիմունքներ ծառայել են.

Ֆրանսիայի, Ռուսաստանի, Անգլիայի Կ.-Պոլսի դեսպանների հայկական ռեֆորմներին վերաբերյալ հուշագիրը (1895 թ. մարտից մինչև ապրիլ).

Հայկական նահանգների վարչական ռեֆորմների նախագիծը, մշակված ֆրանսիական, ռուսական և անգլիական դեսպանների կողմից․

Նորին Կայսերական Մեծության Սուլթանի 1895 թ. հոկտեմբերի 20-ին հայկական ռեֆորմներին վերաբերյալ դեկրետը․

«Նախագիծ Յեվրոպական Թյուրքիայի վիլայեթների մասին որենքի», 11—23-ը ոգոստոսի 1880 թվի, կազմված Յեվրոպական Հանձնաժողովի կողմից․

1913 թվի վիլայեթներին վերաբերյալ որենքը․

Լիբանանին վերաբերող վորոշումներ և արձանագրություններ:

I

1. Հետևյալ վեց վիլայեթներից, այն ե—Երզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սվազի—բացառությամբ սահմանամերձ հետևյալ շրջանների—Հեքիարի՝ Սղերդի հարավային մասում, Բիշերիքի, Մալաթիայի և հյուսիս-արևմուտք գտնվող հողամասի—կազմվում ե մի նահանգ:

2. Այդ նահանգն ունի հետևյալ վարչական բաժանմունքները․

1. Սանջակ (վարչական շրջան), 2. Կազա (շրջան), 3. Նահիյե (համայնք):

3. Վարչական այս բաժանումների սահմանները պետք ե կատարել այնպես, վորպեսզի նրանք, վորքան այդ հնարավոր ե, ընդգրկեն իրենց մեջ ազգագրական վորոշ խմբավորումներ:

(Համեմատ. Յերեք դեսպանների 1895 թ. հուշագրի կետ 1-ին):

II

Հայկական նահանգի գեներալ-նահանգապետը (վալի ումումի) պետք ե լինի կամ ոսմանյան հպատակ քրիստոնյա, կամ, ավելի լավ՝ Նորին Կայսերական Մեծության Սուլթանից մեծ պետությունների համաձայնությամբ հինգ տարի ժամանակով նշանակված մի յեվրոպացի:

(Համեմատ. Բեռլինի դաշնագրի 17-րդ հոդված, Կրետեյի 1896 թվի ռեգլամենտի հոդված 1-ին, Յերեք դեսպանների 1895 թվի հուշագրի II և III հոդվածներ, Հայաստանում մտցվելիք ռեֆորմների կանոնադրության առաջաբանի 1 կետ, հոկտ. 20-ից 1895 թ.):

III

1. Գեներալ-նահանգապետը նահանգի կառավարչական վարչության գլուխն ե: Նա լիազորված ե նահանգի բոլոր վարչական պաշտոնյաներին նշանակելու և պաշտոնից հեռացնելու իրավունքներով: Նա յե նշանակում նաև նահանգի բոլոր դատավորներին:

2. Վոստիկանությունը և ժանդարմերիայի կազմը յենթարկվում ե գեներալ-նահանգապետին:

3. Յերկրում կարգ ու կանոն պահպանելու համար, յերբ այդ ցանկանում ե գեներալ-նահանգապետը, նրա տրամադրության տակ են դրվում զինվորական ուժեր:

(Համեմատ. Լիբանանի 1864 թ. ռեգլամենտի 1-ին կետ, Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թվի նախագծի հոդվածներ 27, 32 և 44, Վիլայեթների վարչական որենքներ 1913 թ., հոդվածներ 10, 25, 26):

IV

1. Գեներալ-նահանգապետին ոգնում ե խորհրդակցական իրավունքներով ոժտված Վարչական Խորհուրդը, վորը կազմված ե լինելու․

ա. Նահանգի վարչական զանազան բաժանումների գլխավորներից․

բ. Կրոնական համայնքների հոգևոր պետերից․

գ. Յեվրոպացի տեխնիկական այն խորհրդականներից, վորոնք գտնվում են պետական ծառայության մեջ և վորոնք պաշտոնավարում են վարչական բաժանմունքների գլխավորների կից․

դ. Նահանգական ժողովի կողմից ընտրված վեց (յերեքը մահմեդական և յերեքը քրիստոնյա) խորհրդականներից:

(Համեմատ. Յեվրոպական Հանձնաժ. 1880 թվի նախագծի հոդ. 40, Վիլայեթների վարչության 1913 թ. որենքի հոդված 62, 1895 թ. հոկտեմբերի 20-ի դեկրետի հոդ. 6):

V

1. Նահանգական ժողովը կազմված ե հավասար թվով մահմեդականներից և քրիստոնյաներից:

2. Նահանգական ժողովի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ շրջանների (կազա), հատկապես դրա համար ընտրված, կոլլեգիայի կողմից:

3. Նահանգի կողմից ընտրված քրիստոնյաների և մահմեդականների թիվը վորոշվելու յե ամեն մի գավառի համար առանձին: Այդ թիվը կախված ե շրջանի ազգաբնակության թվից, վորը բղխելու յե այս հոդվածի առաջին պրակում ընդունված սկզբունքից:

(Համեմատ. Լիբանանի վերակազմության արձանագրություններ ու վորոշումներ 1861 թ. հունիսի 9-ից, Յերեք դեսպանների 1895 թվի նախագծի հոդված 3 և 5, Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թվի նախագծի հոդված 69, 1913 թվի որենքի հոդված 103):

VI

1. Նահանգական ժողովն ընտրվում ե հինգ տարով, նա գումարվում ե տարեկան մի անգամ յերկու ամիս տևող կանոնավոր նստաշրջանի աշխատանքներ տանելու համար: Նստաշրջանի տևողությունը կարող ե գեներալ-նահանգապետի կողմից յերկարվել:

2. Նահանգական ժողովը կարող է հրավիրվել արտակարգ նըստաշրջանի, յեթե այդ ցանկանում է գեներալ-նահանգապետը, կամ յեթե այդ պահանջում է ժողովի անդամների յերկու յերրորդը։

3. Գեներալ-նահանգապետը կարող է ժողովն արձակել։ Այս դեպքում յերկու ամսվա ժամանակամիջոցում պետք է ընտրողները կենտրոն հրավիրվեն, և նորընտիր ժողովն աշխատանքի պետք է հրավիրվի արձակման հրամանից չորս ամիս անց։

4. Ժողովի արձակման և նորից հրավիրման հրամանները տըրվում են Նորին Կայսերական Մեծություն Սուլթանի անունից։

(Համեմատ. Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թ. նախագծի 73—75 հոդվածներ, Նահանգական 1913 թ. օրենքի հոդվ. 111—115 և 125)։

VII

1. Նահանգական ժողովը նահանգի շահերին վերաբերյալ օրենսդրական հաստատությունն է։

2. Նահանգական ժողովի օրենսդրական և բյուջետային լիազորությունների ծավալը նախատեսված է Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թվի նախագծի 82—93 հոդվածներով։

3. Նահանգական ժողովի կողմից ընդունված օրենքները ներկայացվում են Նորին Կայսերական Մեծություն Սուլթանին ի հաստատություն։ Դրանց հաստատումը կամ մերժումը պետք է տեղի ունենա յերկու ամիսների ժամանակամիջոցում. դրանից հետո կառավարության լռությունն ընդունվելու յե նրա կողմից յեղած համաձայնության իմաստով։

(Համեմատ. Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թ. նախագծի հոդ. 83—93, Վիլայեթների վարչական 1913 թ. օրենքի հոդվածներ 123, 124, 128—135)։

VIII

1. Սանջակի Վարչական Խորհրդի նախագահը մյութեսարիֆն է։ Վարչական Խորհուրդը կազմված է սանջակի վարչական բաժանումների գլխավորներից, կրոնական համայնքների հոգևոր պետերից և կազաների վարչական խորհուրդներից ընտրված չորս (յերկուսը մահմեդական և յերկուսը քրիստոնյա) անդամներից։

2. Կազայի Վարչական Խորհրդի նախագահը գայմագամն է։ Վարչական Խորհուրդը կազմված է կազայի վարչական պետերից, կրոնական համայնքների հոգևոր գլխավորներից և Վարչական Խորհրդից ընտրված չորս (յերկուսը մահմեդական և յերկուսը քրիստոնյա) անդամներից։

3. Այս խորհուրդների իրավասության սահմանները վորոշվելու յեն համաձայն Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թվի նախագծի 115—116 և 139—140 հոդվածների իմաստի։

(Համեմատ. Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թ. նախագծի 114, 115, 116, 138, 139, 140 հոդվածներ, 1895 թվի հոկտ. 20-ի դեկրետի հոդված 6, 1913 թ. օրենքի 62, 63, 64 և 65 հոդվածներ)։

IX

1. Յուրաքանչյուր համայնքի (նահիյե) սահմանները պետք է այնպես գծված լինեն, վորպեսզի միևնույն ազգության պատկանող գյուղերը հնար յեղածին չափ մի համայնքի մեջ միացած լինեն։

2. Յուրաքանչյուր համայնք կառավարվում է իր մյուդիրով՝ ազգաբնակությունից ընտրված քիչը չորս, շատը—ութ հոգուց բաղկացած խորհրդի ոգնությամբ։ Խորհուրդն ընտրում է մյուդիրին կից յեղող անդամներ և նրա ոգնականները։ Մյուդիրը պետք է պատկանի ազգային այն խմբակցությանը, վորը նահիյեյի մեծամասնությունն է կազմում, իսկ նրա ոգնականը հակառակ խմբակցությունից է լինելու։

3. Այն համայնքներում, վորոնք ազգային խառը բնակչություն ունեն, փոքրամասնությունը, վորի թիվը 25 տնից պակաս չի կարող լինել, իր արտահայտությունը գտնելու յե ունենալով խորհրդում իր ներկայացուցիչը։

4. Համայնքների ունեցած իրավունքների սահմանները կվորոշվեն համաձայն Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թ. նախագծի 163—168 հոդվածների իմաստի։

(Համեմատ. Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թ. նախագծի 167—168 հոդվ., Յերեք դեսպանների 1895 թ. ռեֆորմների նախագծի 7, 8, և 9 հոդվածներ, 1895 թ. հոկտ. 20-ի դեկրետի 7, 8, 9 հոդվածներ)։

X

1. Յուրաքանչյուր համայնքում պետք է լինի գեներալ-նահանգապետից նշանակված և համայնքի մեծամասնության կրոնը դավանող հաշտարար դատավոր։

2. Հաշտարար դատավորը վճռում է.

ա. Բոլոր այն տուգանքի դեպքերը, վորոնք վոստիկանական պարզ տուգանքներ են—առանց բողոքելու իրավունքի, նաև այն դեպքերը, վորոնց համար մինչև 500 պիաստր տուգանք կամ յերեք ամսյա բանտարկություն է նշանակվում։

բ. Քաղաքացիական կարգով, սակայն առանց բողոքի իրավունքի, բոլոր մինչև 1000 պիաստր հասնող քաղաքացիական, առևտրական հայցերը և, բողոքի իրավունքով, 5000 պիաստրից վեր չանցնող հայցերը։

3. Հաշտարար դատավորն իրավունք ունի գործը նաև հաշտությամբ վերջացնելու։ Կողմերի ցանկությամբ նա կարող է միջնորդ դատարաններ նշանակել բոլոր այն գործերի համար, վորոնց հայցը 5000 պիաստրից անցնում է։ Միջնորդ դատերի դեպքում կողմերը հրաժարվելու չեն գործի բեկման իրավունքից։

4. Սանջակի դատարաններն ունենում են միայն քաղաքացիական բաժին. սրանք կազմված են լինելու մի նախագահից և չերկու իրավաբանական կոչում ունեցող անդամներից (մեկը մահմեդական, մյուսը քրիստոնյա), վորոնց նշանակում է գեներալ-նահանգապետը։ Սանջակի դատարանները քննում են առաջին ատյանում քաղաքացիական և առևտրական այն հայցերը, վորոնց պահանջը 5000 պիաստրից վեր չեն, իսկ վերաքննության կարգով՝ հաշտարար դատավորների այն վճիռները, վորոնք քաղաքացիական և առևտրական գործերին են վերաբերում։

5. Սանջակային դատարանների քրեական բաժանմունքները փոխարինվելու չեն չերդվյալների դատարաններով։ Սրանք կազմված են մի նախագահից, վորն ընտրվում է վերաքննական այն դատարանի անդամների միջից, վորին չենթարկվում է սանջակի դատարանը, և նույն վերաքննական դատարանի կողմից նշանակված սանջակի չերկու հաշտարար դատավորներից, վորոնցից մեկը մահմեդական է լինելու, մյուսը՝ քրիստոնյա։

6. Քրեական դատարանը հերթով նստաշրջան է ունենալու բոլոր այն կազաներում, ուր նրա լինելն անհրաժեշտ կգտավի։

7. Յուրաքանչյուր կազայում լինելու չե մի դատաստանական քննիչ։ Հենց վոր կազա չե գալիս քրեական դատարանի նախագահը, նա պահանջում է այն բոլոր գործերը, վորոնք չենթակա չեն դատաստանական քննության, վորպես և այն գործերը, վորոնց քննությունը դեռ ավարտված չէ։ Յեթե վերջիններում նա գտնում է վորևե անկանոնություն կամ չհիմնավորված ձգձգումներ, այդ մասին նա զեկուցում է վերաքննող դատարանի նախագահին։

8. Քրեական դատարանը վերաքննական կարգով քննում է հաշտարար դատավորի վճիռների դեմ արված բողոքները։ Առաջին և վերջին ինստանցիաներում նա քննում է հանցանքներին և զործողություններին վերաբերյալ այն գործերը, վորոնց համար վորոշվում են դրամական հայցեր 500 պիաստրից վեր կամ բանտարգելություն 3 ամսից ավելի։

9. Լինելու չեն առնվազն վեց բողոքարկու դատարաններ, վորոնցից յուրաքանչյուրը կազմված է լինելու գեներալ-նահանգապետից նշանակված մի իրավաբանական կոչում ունեցող նախագահից

և այնքան թիվ անդամներից, վորոնք կարող կլինեն վերաքննել առաջարկված քաղաքացիական այն գործերը, վորոնց մասին ներկայացված կլինեն վերաքննական բողոքներ քրեական տեղից-տեղ փոխադրվող դատաստանական նախագահներին ներկայացնելու համար։

10. Առևտրական դատարանները հիմնվում են այն բոլոր տեղերում, ուր դրանց կարիքը կզգացվի։ Այն տեղերում, ուր դրանք իրենց նստաշրջանն ունեն, քաղաքացիական դատարաններն առևտրական գործեր չեն քննում։

11. Շարիաթի (հոգևոր գործեր) դատարանների իրավասությունները պետք է ճշտորեն սահմանվեն և գեներալ-նահանգապետին կմնա հսկել, վորպեսզի նրանք չմիջամտեն նահանգի դատաստանական ուրիշ հաստատություններին չենթակա գործերին։ Շարիաթի դատավորները միաժամանակ գավառական այլ դատարանների նախագահ լինելու իրավունքից զրկվում են։

(Համեմատ. Յերեք դեսպանների 1895 թվականի ռեֆորմների նախագծի 29—39 հոդվ., Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թվի նախագծի 125—263 հոդվածներ)։

XI

1. Նահանգում կազմակերպվում է մի վոստիկանական և մի ժանդարմիական զորագունդ։ Դրանց կազմի կեսը լինելու չե նահանգի մահմեդական ազգաբնակությունից, մյուս կեսը—քրիստոնյա։

2. Հիշյալ զորագնդերի կազմակերպումը և ղեկավարությունը հանձնվելու չե ոսմանյան ծառայության մեջ գտնվող չեվրոպացի սպաներին։

3. Համայնքների համար կազմվում են գյուղական պահակներ, վորոնք նշանակվում են գեներալ-նահանգապետի կողմից և չենթարկվում են մյուդիրներին։

(Համեմատ. Յերեք դեսպանների 1895 թվի ռեֆորմների նախագծի 18—21 հոդվածներ, 1895 թ. հոկտ. 20-ի դեկրետի 24 հոդվ.)։

XII

Խաղաղ ժամանակ նահանգի զինվորակոչներն իրենց ծառայությունը կատարում են իրենց հայրենիքում։ Քյուրդական թեթև հեծելազորի գնդերը (համիդիյե) լուծվում են։

(Համեմատ. Յերեք դեսպանների 1895 թ. ռեֆորմների նախագծի հոդված 25, 1895 թ. հոկտ. 20-ի դեկրետի հոդվ. 28)։

XIII

1. Վարչական պաշտոնյաներն ու նահանգի դատավորները նշանակվում են մահմեդական և քրիստոնյա ազգաբնակությունից հավասար թվով։

2. Սանջակներում կառավարիչներ (մյութեսարրիֆ) և կազաներում պետեր նշանակելիս պետք է ի նկատի առնել դրանց ազգային կազմն ու տնտեսական շահերը։

(Համեմատ. 1885 թ. հոկտ. 20-ի դեկրետի հոդվ. 5)։

XIV

Ընտրելու և ընտրվելու իրավունքներով օգտվում է միայն նստակյաց բնակչությունը։

(Համեմատ. Յերեք դեսպանների 1895 թ. նախագծի հոդվ. 8-ի 24-րդ կետը, 1895 թ. հոկտ. 20-ի դեկրետի հոդվ. 27)։

XV

1. Բոլոր օրենքները, հրամանները, վճիռները, շրջաբերականները, վորպես և պետական բոլոր կարգադրությունները կատարվում են նահանգի տեղական մայրենի յերեք (թյուրքերեն, հայերեն և քյուրդերեն) լեզուներով։

2. Բոլոր խնդիրները, դիմումները, վարչական ու դատական պետական հաստատությունների անուններով տրվող գրությունները կազմվում են տեղական յերեք լեզուներից մեկով՝ ըստ կողմերի հոժարակամ ընտրության։

3. Դատարաններում կողմերը կարող են պաշտպանվել իրենց մայրենի լեզվով։

4. Դատական վճիռներն արձակվում են թյուրքերեն լեզվով, իսկ թարգմանությունը տրվում է կողմերի մայրենի լեզվով։

(Համեմատ. Յերեք դեսպանների 1895 թ. նախագծի հոդվ. 40, Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թ. նախագծի հոդվ. 22, Ներքին գործերի մինիստրի վիլայեթներին արաբական լեզվի մասին 1913 թ. ապրիլի 6-ի շրջաբերական)։

XVI

1. Նահանգի յուրաքանչյուր ազգություն իրավունք ունի հիմնել ամեն կարգի մասնավոր դպրոցներ և նպաստել նրանց։

2. Ամեն ազգություն իրավունք ունի իր համայնքին պատկանողներին դպրոցների պահպանման նպատակով հատուկ տուրքի յենթարկել։

3. Դպրոցներում դասավանդությունը կատարվում է յերեխաների մայրենի լեզվով։

4. Այդ դպրոցների վերին տեսչությունը պատկանում է գեներալ-նահանգապետին, համաձայն այն կանոնների, վորոնք նախատեսված կլինեն նահանգի հիմնական օրենքներով։

5. Թյուրքական լեզուն բոլոր մասնավոր դպրոցներում պարտադիր է։

(Համեմատ. Յեվրոպական Հանձնաժողովի 1880 թ. նախագծի պրակ XIV)։

XVII

Գեներալ-նահանգապետի նախագահությամբ հատուկ մի հանձնաժողով վորոշելու յե այն պայմանները, համաձայն վորոնց հայերից խլված հողերը պետք է նորից վերադարձվեն, բատվորում տերերին տրվում է կամ հող կամ դրա դրամական արժեքը։

(Համեմատ. Յերեք դեսպանների 1895 թ. նախագծի հոդվ. 26, 1895 թ. հոկտ. 20-ի օրենքի հոդվ. 29)։

XVIII

Անպայմանորեն ճանաչվելու յե 1868 թվականին սահմանադրության ուժով հայ ազգին շնորհված իրավունքների և արտոնությունների անձեռնմխելիությունը և Սուլթանից տրված բարաթները։

(Համեմատ. Յերեք դեսպանների 1895 թ. հուշագրի XI կետ)։

XIX

Նահանգի սահմաններում արգելվում է մուհաջիրների (մուսուլման գաղթականության) հաստատումը։

XX

Հրատարակվելու յեն հատուկ կանոններ, համաձայն վորոնց բարելավելու յեն նահանգից դուրս գտնված և մասնավորապես Կիլիկիայում ապրող հայերի դրությունը։

(Համեմատ. Յերեք դեսպաններիի 1895 թ. հուշագրի հոդվ. 12 ,1895 թ. հոկտ. 20-ի դեկրետի առաջարանի հոդվ. 12)։

XXI

Ոսմանյան պետության և մեծ պետությունների ներկայացուցիչներից կազմված մի հատուկ հանձնաժողով մշակելու յե նահանգի կազմակերպությանը վերաբերող մի կանոնադրություն, նմանապես սույն նախագծի XX պրակում հիշված և ներկա նախագծի սկզբունքներին համապատասխանող կարգ ու կանոն։

XXII

Մեծ պետությունները հսկելու յեն այս բոլոր կանոնների իրագործման վրա։

(Համեմատ. 1895 թ. դեսպանների հուշագրի VIII պրակ, 1895 թ. հոկտ. 20-ի դեկրետի հոդվ. 32, Կրետեյի 1896 թ. կանոնադրության հոդվ. 14)։

Յես կարծում եմ, և դա ամեն կասկածից դուրս է, վոր այս նախագիծն ընդունելուց ամենաուշը մի տարի անց Երզրումի, Սվազի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթները կամ Ռուսաստանի պրոտեկտորատի տակ կլինեյին կամ, վոր ավելի հավանական է, Ռուսաստանը կտիրապետեր նրանց։

Բանակցությունների ընթացքում Գերմանիայի ներկայացուցիչն ամեն կերպ աշխատում եր պաշտպանել Օսմանյան պետության իրավունքները, Ռուսաստանի ներկայացուցիչը, ընդհակառակը, ամեն ինչ անում եր այդ իրավունքները նսեմացնելու համար:

Անգլիայի և Ֆրանսիայի լիազորները ռուսական ձգտումներն եյին պաշտպանում, այն ինչ իտալական և ավստրիական ներկայացուցիչները բաժանում եյին իրենց գերմանացի ընկերոջ տեսակետը:

Այդ հանձնաժողովը, որը գումարվեց 1913 թվի հուլիսի 3-ին, ցրվեց հուլիսի 23-ին: Չնայած իր բազմաթիվ նիստերին, նա ոչ մի հետևանքի չհանգեց, որովհետև, այն ինչ ռուսները հայկական այս նախագիծն ամբողջովին անցկացնել եյին ձգտում, Գերմանիան, ընդհակառակը, ուզում եր հնար յեղածին չափ Օսմանյան կառավարության իրավունքները պաշտպանել: Վերջապես 1913 թ. սեպտեմբերին պարոն Հիրսին հաջողեց համոզել Կ.-Պոլսի գերմանական դեսպան Վագենհեյմին ընդունելու ծրագրի վեց կետերից բաղկացած հիմնական սկզբունքները:

Դրանից հետո սկսվեցին մեծ-վեզիր և արտաքին գործոց մինիստր Սայիդ-Հիլմի-փաշայի և յերկ-յերկու դիպլոմատների միջև բանակցությունները:

Յերբ մենք ծանոթացանք վեց կետերից բաղկացած այս ծրագրի հետ, մենք տեսանք, որ կարող ենք այն մտցնել տալ առանց որ Օսմանյան կառավարության վրա արտաքին ճնշում գործադրվի: Մենք ռեֆորմների մի ընդարձակ ծրագիր մշակեցինք մեր ամբողջ պետության համար և մեր դեսպանների միջոցով այդ մասին հաղորդեցինք մեծ պետություններին: Ըստ այդ ծրագրի ամբողջ պետությունը բաժանվելու յեր վեց գլխավոր տեսչությունների, որոնցից յերկուսը կազմված եյին լինելու Արևելյան Անատոլիայի վիլայեթներից:

Ռուսական ինտրիգներից խույս տալու նպատակով մենք ուզեցինք այդ յերկու շրջանների վերատեսուչների պաշտոններն անգլիացիներին հանձնել: Յեվ յերբ Լոնդոնի մեր դեսպան Թեֆիք-փաշան, որին հանձնարարված եր իմանալ սըր Եդվարդ Գրեյից՝ համաձայն ե արդյոք նա այդ յերկու պաշտոնյաներին նշանակել, մեր դեսպանը պատասխանեց, որ Անգլիան դրան դեմ չե,—դրանից հետո չե, որ մեծ-վեզիրը պաշտոնական հարցադրում արեց: Յեթե Անգլիան այս առաջարկն ընդուներ, ռուսական դիտումները ջուր կընկնեյին: Տասնհինգ օր հետո, յերբ մեզ հաղորդեցին, որ Անգլիան առանց Ռուսաստանի համաձայնության չի ցանկանում Արևելյան Անատոլիա իր աստիճանավորներին նշանակել, մենք թողինք

ալես մեր բոլոր հույսերը և համոզվեցինք, որ այսուհետև Անգլիան մեզ ռուսական փառասիրությանը զոհ ե բերում:

Մենք ստիպված եյինք մեծ-վեզիրի և գերմանական ու ռուսական դեսպանների միջև սկսած բանակցությունները շարունակել, և 1914 թվի փետրվարի 8-ին ռուսական դեսպանության լիազոր Գուլկևիչի և Սայիդ-Հիլմի-փաշայի կողմից ռեֆորմների նախագծի վերաբերյալ համաձայնությունն ստորագրվեց:

ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի (ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի) 1914 Թ. ԹՅՈՒՐՔ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

(«Ծիրանի գիրք» № 147)

Ռուսական գործերի հավատարմատար նորին գերազանցություն պարոն Կոնստանտին Գուլկևիչը և մեծ-վեզիր և արտաքին գործերի մինիստր նորին բարձրություն Սայիդ-Հիլմի-փաշան համաձայնել են, որ Արևելյան Անատոլիայի յերկու շրջանների գլխավոր վերատեսուչներ նշանակելու հետ միաժամանակ Բարձր-Դուռը մեծ պետություններին ներկայացնի հետևյալ հուշագիրը.

«Արևելյան Անատոլիայի յերկու շրջանների կառավարության գլխի պաշտոնով նշանակվում են յերկու օտարերկրյա գլխավոր-վերատեսուչներ. դրանցից առաջինին հանձնվում են Երզրումի, Տրապիզոնի և Սվազի վիլայեթները, իսկ յերկրորդին՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները:

Գլխավոր-վերատեսուչների հոգացողությանն են վերապահվում այդ յերկու շրջանների վարչության, արդարադատության, ոստիկանության և ժանդարմերիայի վերաբերյալ գործերը: Այն դեպքերում, յերբ հասարակական կարգ պահպանելու համար տեղում յեղած պահնորդական ուժերն անբավարար կհամարվեն, գլխավոր-վերատեսուչներին նրանց պահանջով տրամադրվելու յեն զինվորական ուժեր՝ իրանց լիազորություններով հարկ յեղած միջոցներն իրագործելու համար:

Գլխավոր-վերատեսուչները, յերբ դրան կարիք կլինի, կարող են պաշտոնանկ անել բոլոր այն պաշտոնյաներին, որոնք իրենց անպետքությամբ և կամ վատ արարքների պատճառով անհանդուրժելի կհամարվեն. նաև իսկ նրանց, որոնք հակաօրինական գործերի մեջ կմեղադրվեն, այդպիսիներին գլխավոր-տեսուչներն իրավունք ունեն դատի տալ: Նրանք իրավունք ունեն ավելի բարձր պաշտոնյաներին Նորին Մեծություն Սուլթանի կողմից նշանակվելու առաջարկել: Պաշտոնյաներին հեռացնելու մասին համառոտ պատճառաբանությամբ հեռագրով տեղեկացնում են համապատասխան մինիստրներին, իսկ մի շաբաթվա մեջ ուղարկում են դրանց վերաբերյալ

արձանագրություններն ու քննական նյութերը։ Կարևոր դեպքերում, յերբ անհրաժեշտ կհամարվի անհապաղ քայլեր անելու, գլխավոր-վերատեսուչներն իրավունք ունեն դատարանների անփոփոխելի պաշտոնյաներին իսկույն պաշտոնից հեռացնել, պայմանով, վոր դեպքի մասին նրանք առանց ուշացնելու տեղեկացնեն արդարադատության դեպարտամենտին։

Այն բոլոր դեպքերում, յերբ վալիները հանցանքներ են կատարում, և անհապաղ միջոցներ ձեռք առնելու կարիք է լինում, այդ մասին գլխավոր-վերատեսուչները հեռագրով հաղորդում են ներքին գործոց մինիստրին. վերջինս դեպքի մասին զեկուցանում է մինիստրների խորհրդին, վորը, հեռագիրն ստանալուց չորս որից վոչ ուշ, պարտավոր է իր վորոշումը տալ։

Գյուղական տնտեսությանը վերաբերյալ վեճերը վճռվում են գլխավոր-վերատեսուչների անմիջական հայեցողությամբ։

Գլխավոր-վերատեսուչներ նշանակելուց հետո նրանց անմիջական մասնակցությամբ մշակվելու յեն նրանց պարտականություններին և իրավունքներին վերաբերյալ հրահանգներ։

Յեթե տաս տարվա ընթացքում գլխավոր-վերատեսուչներից մեկն ու մեկի պաշտոնն ազատ մնա, Բարձր-Դուռը համապատասխան վերատեսուչ նշանակելու խնդրում դիմելու յե մեծ պետությունների բարյացակամ ոգնությանը։

Որենքները և պաշտոնական հաղորդագրությունները կատարվում են ամեն մի շրջանում գործածելի լեզվով։ Կողմերին իրավունք է տրվելու դատարաններում և վարչական հիմնարկներում գործածել իրենց մայրենի լեզուն, յեթե միայն գլխավոր-վերատեսուչն այդ հնարավոր կհամարի։ Դատաստանական վճիռներն արձակվում են թյուրքերեն լեզվով, վորոնք կթարգմանվեն նաև կողմերի լեզուներով, յերբ դա հնարավոր համարվի։

Յուրաքանչյուր ազգության վիլայեթի դպրոցական բյուջեից նրան բաժին ընկնող մասը վորոշվում է ըստ նրա տված դպրոցական տուրքի։ Կայսերական կառավարությունը վոչ մի արգելք չի դնի, յեթե կրոնական համայնքներն իրենց դպրոցների պահպանման գործում մասն ունենան։

Խաղաղ ժամանակ ոսմանյան ամեն մի հպատակ զինվորական իր ծառայությունը կատարում է իր ապրած բնակավայրի զինվորական տեսչության շրջանում։ Սակայն Բարձր-Դուռը, ցնոր կարգադրություն, Յեմենի, Ասիրի և Հեջասի հեռավոր վայրերի համար ցամաքային զորք կազմակերպում է կայսրության բոլոր մասերից՝ համաձայն տեղերում ապրող ազգաբնակության թվի։ Դրանից դուրս զորք կազմելիս նա զորահավաք է անում պետության բոլոր մասերից։

Համիդիյեի գնդերը վերակազմվում են պահեստի հեծելազորքի գնդերի։ Նրանց զենքերը պահվում են զինվորական զինապահեստներում և իրանց են տրվում զորահավաքի և զորաշարժումների ժամանակ։ Նրանք յենթարկվում են այն կորպուսների հրամանատարներին, վորի հրամանատարության շրջանում նրանք գտնվում են։ Խաղաղ ժամանակ գնդերի, եսկադրոնների և ջոկատի պետերը նշանակվում են ոսմանյան գործող բանակի սպաներից։ Այս գնդերի զինվորների զինվորական ծառայությունը տևում է մի տարի։ Այս գնդերում ընդունվողները պետք է ունենան սեփական ձիեր և սրանց լրիվ սարքավորում։ Ամեն վոք, առանց ցեղի և դավանանքի խտրության, վոր ապրում է զինվորական այդ շրջանում և յենթարկվում է այս պահանջներին, կարող է ընդունվել հիշյալ գնդերի մեջ։ Պատերազմի կամ զորաշարժման ժամանակ նրանք, կանոնավոր զորքերին հավասար, յենթարկվում են կարգապահության միևնույն կանոններին։

Վիլայեթների գլխավոր-վերատեսուչների լիազորությունները բղխում են 1329/1913 թ. մարտի 13-ի որենքների հիմնական կանոններից։

Յերկու շրջանների բնակչության ճիշտ հարաբերությունները կրոնական, ազգային և լեզվական խնդիրներում կվորոշվեն գլխավոր-վերատեսուչների վերահսկողության տակ ամենակարճ ժամանակամիջոցում — այն է՝ մի տարուց վոչ ուշ կատարվող մարդահամարի միջոցով։ Մինչ այդ Վանի և Բիթլիսի Գլխավոր Խորհուրդների (մեջլիս ումումի) և Ժողովների (ենջիմեն) միջոցով ընտրված անդամների կեսը լինելու յե մահմեդականներից, իսկ մյուս կեսը վոչ-մահմեդականներից։ Երզրումի վիլայեթում, յեթե մի տարվա ընթացքում մարդահամարն ավարտված չլինի, Գլխավոր Խորհրդի անդամներն ընտրվում են նույն հարաբերությամբ, ինչ և վերև հիշած յերկու վիլայեթներում։ Խարբերդի, Սվազի և Դիարբեքիրի վիլայեթների Խորհուրդների անդամներն ընտրվում են հենց այժմենից՝ ըստ ազգաբնակության ազգային համեմատական թվի։ Այս նպատակով, մինչև նոր մարդահամարը, մահմեդական ընտրողների թիվը վորոշվում է ընտրական հին ցուցակներով, իսկ վոչ-մահմեդական անդամների թիվը վորոշվում է համաձայն համայնքներում յեղած ցուցակների։ Յեթե ընտրական ժամանակավոր այս յեղանակն անգործնական համարվի և զգալի դժվարություններ առաջացնի, գլխավոր-վերատեսուչներին իրավունք է տրվում Սվազի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթների համար այդ վիլայեթների կարիքներին և պայմաններին ըստ ամենայնի համապատասխանող Գլխավոր Խորհուրդների ընտրական նոր սիստեմ առաջարկել։

Բանակցությունների ընթացքում Գերմանիայի ներկայացուցիչն ամեն կերպ աշխատում էր պաշտպանել Օսմանյան պետության իրավունքները, Ռուսաստանի ներկայացուցիչը, ընդհակառակը, ամեն ինչ անում էր այդ իրավունքները նսեմացնելու համար։

Անգլիայի և Ֆրանսիայի լիագորները ռուսական ձգտումներն էին պաշտպանում, այն ինչ իտալական և ավստրիական ներկայացուցիչները բաժանում էին իրենց գերմանացի ընկերոջ տեսակետը։

Այդ համաժողովը, որը գումարվեց 1913 թվի հուլիսի 3-ին, ցրվեց հուլիսի 23-ին։ Չնայած իր բազմաթիվ նիստերին, նա վոչ մի հետևանքի չհանգեց, վորովհետև, այն ինչ ռուսները հայկական այս նախագիծն ամբողջովին անցկացնել էին ձգտում, Գերմանիան, ընդհակառակը, ուզում էր հնար եղածին չափ Օսմանյան կառավարության իրավունքները պաշտպանել։ Վերջապես 1913 թ. սեպտեմբերին պարոն Հիրսին հաջողեց համոզել Կ.-Պոլսի գերմանական դեսպան Վանգենհեյմին ընդունելու ծրագրի վեց կետերից բաղկացած հիմնական սկզբունքները։

Դրանից հետո սկսվեցին մեծ-վեզիր և արտաքին գործոց մինիստր Սայիդ-Հալիմ-փաշայի և յերկ-յերկու դիպլոմատների միջև բանակցությունները։

Յերբ մենք ծանոթացանք վեց կետերից բաղկացած այս ծրագրի հետ, մենք տեսանք, վոր կարող ենք այն մտցնել առանց վոր Օսմանյան կառավարության վրա արտաքին ճնշում գործադրվի։ Մենք ռեֆորմների մի ընդարձակ ծրագիր մշակեցինք մեր ամբողջ պետության համար և մեր դեսպանների միջոցով այդ մասին հաղորդեցինք մեծ պետություններին։ Ըստ այդ ծրագրի ամբողջ պետությունը բաժանվելու յեր վեց գլխավոր տեսչությունների, վորոնցից յերկուսը կազմված էին լինելու Արևելյան Անատոլիայի վիլայեթներից։

Ռուսական ինտրիգներից խույս տալու նպատակով մենք ուզեցինք այդ յերկու շրջանների վերատեսուչների պաշտոններն անգլիացիներին հանձնել։ Յեվ յերբ Լոնդոնի մեր դեսպան Թևֆիք-փաշան, վորին հանձնարարված էր իմանալ սըր Եդվարդ Գրեյից՝ համաձայն է արդյոք նա այդ յերկու պաշտոնյաներին նշանակել, մեր դեսպանը պատասխանեց, վոր Անգլիան դրան դեմ չէ,—դրանից հետո չէ, վոր մեծ-վեզիրը պաշտոնական հարցադրում արեց։ Յեթե Անգլիան այս առաջարկն ընդուներ, ռուսական դիտումները ջուրը կընկնեյին։ Տասնհինգ օր հետո, յերբ մեզ հաղորդեցին, վոր Անգլիան առանց Ռուսաստանի համաձայնության չի ցանկանում Արևմտյան Անատոլիա իր ատրիճանավորներին նշանակել, մենք թողինք

այլևս մեր բոլոր հույսերը և համոզվեցինք, վոր այսուհետև Անգլիան մեզ ռուսական փառասիրությանը զոհ է բերում։

Մենք ստիպված եյինք մեծ-վեզիրի և գերմանական ու ռուսական դեսպանների միջև սկսած բանակցությունները շարունակել, և 1914 թվի փետրվարի 8-ին ռուսական դեսպանության լիագոր Գուլկևիչի և Սայիդ-Հալիմ-փաշայի կողմից ռեֆորմների նախագծի վերաբերյալ համաձայնությունն ստորագրվեց։

ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի (ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի) 1914 Թ. ԹՅՈՒՐՔ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

(«Ծիրանի գիրք» № 147)

Ռուսական գործերի հավատարմատար Նորին գերազանցություն պարոն Կոնստանտին Գուլկևիչը և մեծ-վեզիր և արտաքին գործերի մինիստր Նորին բարձրություն Սայիդ-Հալիմ-փաշան համաձայնել են, վոր Արևելյան Անատոլիայի յերկու շրջանների գլխավոր վերատեսուչներ նշանակելու հետ միաժամանակ Բարձր-Դուռը մեծ պետություններին ներկայացնի հետևյալ հուշագիրը.

«Արևելյան Անատոլիայի յերկու շրջանների կառավարության գլխի պաշտոնով նշանակվում են յերկու օտարերկրյա գլխավոր-վերատեսուչներ. դրանցից առաջինին հանձնվում են Երզրումի, Տրապիզոնի և Սվազի վիլայեթները, իսկ յերկրորդին՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները։

Գլխավոր-վերատեսուչների հոգացողությանն են վերապահվում այդ յերկու շրջանների վարչության, արդարադատության, վոստիկանության և ժանդարմերիայի վերաբերյալ գործերը։ Այն դեպքերում, յերբ հասարակական կարգ պահպանելու համար տեղում յեղած պահնորդական ուժերն անբավարար կհամարվեն, գլխավոր-վերատեսուչներին նրանց պահանջով տրամադրվելու յեն զինվորական ուժեր՝ իրանց լիազորություններով հարկ յեղած միջոցներն իրագործելու համար։

Գլխավոր-վերատեսուչները, յերբ դրան կարիք կլինի, կարող են պաշտոնանկ անել բոլոր այն պաշտոնյաներին, վորոնք իրենց անպետքությամբ և կամ վատ արարքների պատճառով անհանդուրժելի կհամարվեն. նաև իսկ նրանց, վորոնք հակաօրինական գործերի մեջ կմեղադրվեն, այդպիսիներին գլխավոր-տեսուչներն իրավունք ունեն դատի տալ։ Նրանք իրավունք ունեն ավելի բարձր պաշտոնյաներին Նորին Մեծություն Սուլթանի կողմից նշանակվելու առաջարկել։ Պաշտոնյաներին հեռացնելու մասին համառոտ պատճառաբանությամբ հեռագրով տեղեկացնում են համապատասխան մինիստրներին, իսկ մի շաբաթվա մեջ ուղարկում են դրանց վերաբերյալ

արձանագրություններն ու քննական նյութերը։ Կարևոր դեպքերում, յերբ անհրաժեշտ կհամարվի անհապաղ քայլեր անելու, գլխավոր-վերատեսուչներն իրավունք ունեն դատարանների անփոփոխելի պաշտոնյաներին իսկույն պաշտոնից հեռացնել, պայմանով, վոր դեպքի մասին նրանք առանց ուշացնելու տեղեկացնեն արդարադատության դեպարտամենտին։

Այն բոլոր դեպքերում, յերբ վալիները հանցանքներ են կատարում, և անհապաղ միջոցներ ձեռք առնելու կարիք է լինում, այդ մասին գլխավոր-վերատեսուչները հեռագրով հաղորդում են ներքին գործոց մինիստրին. վերջինս դեպքի մասին զեկուցանում է մինիստրների խորհրդին, վորը, հեռագիրն ստանալուց չորս որից վոչ ուշ, պարտավոր է իր վորոշումը տալ։

Գյուղական տնտեսությանը վերաբերյալ վեճերը վճռվում են գլխավոր-վերատեսուչների անմիջական հայեցողությամբ։

Գլխավոր-վերատեսուչներ նշանակվելուց հետո նրանց անմիջական մասնակցությամբ մշակվելու յեն նրանց պարտականություններին և իրավունքներին վերաբերյալ հրահանգներ։

Յեթե տաս տարվա ընթացքում գլխավոր-վերատեսուչներից մեկն ու մեկի պաշտոնն ազատ մնա, Բարձր-Դուռը համապատասխան վերատեսուչ նշանակելու խնդրում դիմելու յե մեծ պետությունների բարյացակամ ոգնությանը։

Որենքները և պաշտոնական հաղորդագրությունները կատարվում են ամեն մի շրջանում գործածելի լեզվով։ Կողմերին իրավունք է տրվելու դատարաններում և վարչական հիմնարկներում գործածել իրենց մայրենի լեզուն, յեթե միայն գլխավոր-վերատեսուչն այդ հնարավոր կհամարի։ Դատաստանական վճիռներն արձակվում են թյուրքերեն լեզվով, վորոնք կթարգմանվեն նաև կողմերի լեզուներով, յերբ դա հնարավոր կհամարվի։

Յուրաքանչյուր ազգության վիլայեթի դպրոցական բյուջեից նրան բաժին ընկնող մասը վորոշվում է ըստ նրա տված դպրոցական տուրքի։ Կայսերական կառավարությունը վոչ մի արգելք չի դնի, յեթե կրոնական համայնքներն իրենց դպրոցների պահպանման գործում մասն ունենան։

Խաղաղ ժամանակ ոսմանյան ամեն մի հպատակ զինվորական իր ծառայությունը կատարում է իր ապրած բնակավայրի զինվորական տեսչության շրջանում։ Սակայն Բարձր-Դուռը, ցնոր կարգադրություն, Յեմենի, Ասիրի և Հեջասի հեռավոր վայրերի համար ցամաքային զորք կազմակերպում է կայսրության բոլոր մասերից՝ համաձայն տեղերում ապրող ազգաբնակության թվի։ Դրանից դուրս զորք կազմելիս նա զորահավաք է անում պետության բոլոր մասերից։

Համիդիյեյի գնդերը վերակազմվում են պահեստի հեծելազորքի գնդերի։ Նրանց զենքերը պահվում են զինվորական զինապահեստներում և իրանց են տրվում զորահավաքի և զորաշարժումների ժամանակ։ Նրանք յենթարկվում են այն կորպուսների հրամանատարներին, վորի հրամանատարության շրջանում նրանք գտնվում են։ Խաղաղ ժամանակ գնդերի, եսկադրոնների և ջոկատի պետերը նշանակվում են ոսմանյան գործող բանակի սպաներից։ Այս գնդերի զինվորների զինվորական ծառայությունը տևում է մի տարի։ Այս գնդերում ընդունվողները պետք է ունենան սեփական ձիեր և սրանց լրիվ սարքավորում։ Ամեն վոք, առանց ցեղի և դավանանքի խտրության, վոր ապրում է զինվորական այդ շրջանում և յենթարկվում է այս պահանջներին, կարող է ընդունվել հիշյալ գնդերի մեջ։ Պատերազմի կամ զորաշարժման ժամանակ նրանք, կանոնավոր զորքերին հավասար, յենթարկվում են կարգապահության միևնույն կանոններին։

Վիլայեթների գլխավոր-վերատեսուչների լիազորությունները բխում են 1329/1913 թ. մարտի 13-ի որենքների հիմնական կանոններից։

Յերկու շրջանների բնակչության ճիշտ հարաբերությունները կրոնական, ազգային և լեզվական խնդիրներում կվորոշվեն գլխավոր-վերատեսուչների վերահսկողության տակ ամենակարճ ժամանակամիջոցում—այն է՝ մի տարուց վոչ ուշ կատարվող մարդահամարի միջոցով։ Մինչ այդ Վանի և Բիթլիսի Գլխավոր Խորհուրդների (մեջլիս ումումի) և Ժողովների (ենջիմեն) միջոցով ընտրված անդամների կեսը լինելու յե մահմեդականներից, իսկ մյուս կեսը վոչ-մահմեդականներից։ Երզրումի վիլայեթում, յեթե մի տարվա ընթացքում մարդահամարն ավարտված չլինի, Գլխավոր Խորհրդի անդամներն ընտրվում են նույն հարաբերությամբ, ինչ և վերև հիշածս յերկու վիլայեթներում։ Խարբերդի, Սվազի և Դիարբեքիրի վիլայեթների Խորհուրդների անդամներն ընտրվում են հենց այժմենից՝ ըստ ազգաբնակության ազգային համեմատական թվի։ Այս նպատակով, մինչև նոր մարդահամարը, մահմեդական ընտրողների թիվը վորոշվում է ընտրական հին ցուցակներով, իսկ վոչ-մահմեդական անդամների թիվը վորոշվում է համաձայն համայնքներում յեղած ցուցակների։ Յեթե ընտրական ժամանակավոր այս յեղանակն անգործնական համարվի և զգալի դժվարություններ առաջացնի, գլխավոր-վերատեսուչներին իրավունք է տրվում Սվազի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթների համար այդ վիլայեթների կարիքներին և պայմաններին ըստ ամենայնի համապատասխանող Գլխավոր Խորհուրդների ընտրական նոր սիստեմ առաջարկել։

Բոլոր վիլայեթներում, ուր Գլխավոր Խորհուրդներն ընտրվում են ազգաբնակության թվի հարաբերական իրավունքով (անջումաններում), վիլայեթների ժողովներում ազգային փոքրամասնությունները ունենալու չեն իրենց ներկայացուցչությունը։ Վարչական Խորհուրդների անդամներն առաջվա պես ընտրվում են հավասար թվով մահմեդականներից և ոչ-մահմեդականներից։ Գլխավոր-վերատեսուչների հսկողությանն է թողնվում ոստիկանական և ժանդարմերիական մասերի կազմը յերկու շրջաններումն էլ սահմանել ըստ ազգային հավասար հարաբերության։ Հավասարության նույն սկզբունքը, որքան այդ հնարավոր է, կկիրառվի պաշտոնեության պաշտոններ տալու դեպքում։

Վերև հիշածները, այս արձանագրությունն իրենց ստորագրությամբ հաստատում և կնիքներով կնքում են։

Ստորագրել են՝ ԳՈՒԼԿԵՎԻՉ, ՍԱՅԻԴ-ՀԻԼՄԻ

Կ.-Պոլիս, 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին)։

Ռուսաստանն այս համաձայնությունը համարում է որպես իր քաղաքականության փաստական մի աջողություն։ Այդ գնահատության որպես չափանիշ կարող են ծառայել պարոն Գուլկևիչի ռուսաց արտաքին գործերի մինիստր պարոն Սազոնովին գրած հեռագրի հետևյալ տողերը․

«Այսպիսով 1914 թ. հունվարի 26-ի «համաձայնությունը», անկասկած, հայ ժողովրդի պատմության մի նոր բախտավորագույն դարաշրջան է նշանակում։ Իր քաղաքական նշանակությամբ նա 1870 թվականի ֆերմանին հավասարազոր է, որի ուժով բուլղարական եքզարքաթ հիմնվեց, և դրանով բուլղարներն ազատվեցին հույների հոգաբարձությունից։ Հայերը պետք է զգան, որ թյուրքական լծից նրանց ազատելու առաջին քայլն արված է»։

«1914 թվի հունվարի 26-ի «համաձայնությունը» միաժամանակ ահագին նշանակություն է ներկայացնում Ռուսաստանի միջազգային դրության համար։ Այս պաշտոնագիրը, ստորագրված լինելով մեծվեզիրի և Ռուսաստանի ներկայացուցչի կողմից, Թյուրքիային պարտավորեցնում է Ռուսաստանի հանդեպ մեծ պետություններին ներկայացնել մի հուշագիր, որի բովանդակությունը ճշտորեն սահմանված է։ Դրանով ընդգծվում է Ռուսաստանի հայկական հարցում ունեցած ղեկավարող դերը և որոշ չափով հաստատվում է Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը։ Այս հանգամանքը Ռուսաստանի միջազգային խնդրում ունեցած հեղինակավորության վրա ամենաբարենպաստ ազդեցությունն է ունենալու, և միևնույն ժամա-

նակ նա միապետի անունը Մոտավոր Արևելքի քրիստոնյաների աչքում լուսավորելու յե փառքի նոր լուսով։ Թյուրքիայի հետ հայկական խնդրի շուրջ համաձայնության գալու համար կայսերական դեսպանատանը կարիք յեղավ արտակարգ կարգի դժվարություններ հաղթել։ Մի կողմից նա հաշվի չեր առնելու հայերի կողմից սպասվող հնար յեղածին չափ լայն բարենորոգումներ ստանալու բնական ցանկությունը, մյուս կողմից Բարձր-Դռան այն համառ ընդդիմադրությունը, որով նա ձգտում եր առաջարկված ռեֆորմներին հակառակել և մերժել նախագծի գլխավոր կետերը։ Գալով Գերմանիային, նա մեզ հետ համաձայնության մտավ յերկու նպատակներով. առաջինը այն, որ նա դրանով ուզում եր Բարձր-Դռանը հավատացնել, որ համաձայնվելով Թյուրքիայի համար ավելի քիչ վտանգ ներկայացնող այս սահմանափակ ռեֆորմների հետ, Գերմանիան պաշտպանում է Թյուրքիային ավելի լայն ռեֆորմներ ընդունելու անհրաժեշտությունից, իսկ յերկրորդ՝ նա ցանկություն ուներ իր կողմը գրավել հայերի համակրությունը Կիլիկիայի պատճառով, որը նա ուզում է իր ազդեցության շրջանի մեջ դնել։ Բանակցությունների ամբողջ ընթացքում Գերմանիայի բռնած դիրքը զուրկ եր անկեղծությունից, իսկ հայերի վերաբերմամբ ցույց տված օգնությունը միայն առերես եր։ Փաստորեն Գերմանիայի դիպլոմատները Թյուրքիայի հավատարիմ խորհրդատուների դերումն եյին»։

Ստորագրություն՝ ԳՈՒԼԿԵՎԻՉ

Ռուսական գործերի լիազորը հայկական ռեֆորմների նախագիծը համարում է «առաջին քայլ Ռուսաստանի կողմից Հայաստանը գրավելու համար». և նա կատարելապես իրավացի յե։ Այս առթիվ յես չեմ կարող իմ զարմանքը չհայտնել, որ այս տողերը, որոնք Ռուսաստանի հայերի վերաբերմամբ ունեցած քաղաքական նպատակների բացահայտ արտահայտություններն են, հրապարակվում են «Ծիրանի գրքում»։ Յես կարող եմ ամենայն իրավունքով ասել. «Աստված մեղավորներին իրենց մեղքերը խոստովանելու ստիպեց»։

Վերջին տարիներում ռուսներն իրենց քաղաքականությունը դեպի կովկասահայերը փոխեցին։ Ինկատի առնելով, որ այնտեղի հայերի ռուսներից կրած ճնշումներն իսկական հայ հեղափոխականների մեջ դեպի Ռուսաստանն անվստահություն են առաջ բերել, ռուսներն իրենց դժխային չարամտությունն իսկույն փոխում են, նրանք Եջմիածնի վանքին վերադարձնում են նրանից գրաված կալվածները, հայ քաղաքական բոլոր հանցավորներին ընդհանուր ներում են շնորհում և դեպի հայերը ցուցադրում են մեծ բարյացակամություն։

Այս նոր քաղաքականությունը Ռուսաստանի կողմն է գրավում նույնիսկ հեղափոխականորեն մտածող հայերին, վորոնք մինչ այդ զզվում եյին Ռուսաստանից։

Ինկատի ունենալով այս գործունեյությունը, վոր Պողոս Նուբար փաշան մանավանդ 1913 թվի միջին ծավալում եր Յեվրոպայում, մենք քանիցս առաջարկեցինք Դաշնակցության ղեկավարներին աջակցել մեզ ռուսների կողմից ռեֆորմների նախագծի Հայաստանում մտցնելու մեր կողմից սկսած կռվում—նամանավանդ վոր այժմ, յերբ Բալկանյան պատերազմն ավարտված եր, մենք ամեն հնարավորություն ունեյինք քյուրդերին ամենախիստ կարգի հրավիրել և դրանով հայերին խաղաղ կյանք ապահովել։ Դաշնակցությունը մեզ այսպես եր պատասխանում. «Քանի վոր այժմ այդ գործում մասնակցում են մեծ պետությունները—մենք ռեֆորմներից այլևս հրաժարվել չենք կարող»։

Վորչափ և մեզ համար ցավալի չեր, իսկ Ռուսաստանի համար, ընդհակառակը, ձեռնտու 1914 թ. փետրվար 8-ի «համաձայնությունը», այնուամենայնիվ Օսմանյան կառավարությունը մտադիր եր կատարել իր վրա վերցրած բոլոր պարտականությունները։ Սակայն չեղել է դեպք, վոր Ռուսաստանի դիպլոմատիան մեր դեմ նորանոր արգելքներ հանելուց հրաժարվեր։ Միթե նա իրեն նպատակ չեր դրել այնպես անել, վորպեսզի Արևելյան Անատոլիայում յերբեք խաղաղություն չլինի։ Դրա համար անհրաժեշտ եր նախ՝ ձեռք ձգել Հայաստանի վրա իր պրոտեկտորատը, ապա նա պետք է զարթեցներ Յեվրոպայի ցավակցությունը դեպի հայերը, իսկ դրանից հետո նա պետք է քյուրդ բեյերին և ամենաազդեցիկ շեյխերին կառավարության և հայերի դեմ ապստամբելու դրդեր։ Առաջ գնալով նախամտածած այս ծրագրով, ռուսաց կառավարությունը նշանավոր Աբդուլ-Ռիզակ-բեյ Բեդերխանիին ներքին Ռուսաստան տարավ և դրամական մեծ միջոցներ տալով նրան Սինայում քյուրդական իշխանությունը վերականգնեց, իսկ մյուս կողմից Բիթլիսի իր հյուպատոսի միջոցով նա շեյխ N-ին կառավարության դեմ յելնելու դրդեց։

Վորքան և Մանդելշտամը ջանա*, այս ճշմարտությունը ծածկել նա չի կարող։

Մինչդեռ հայկական ռեֆորմների հարցն իր զարգացման այս աստիճանի վրա յեր, սկսվեց մեծ պատերազմը։ Օսմանյան կառավարությունը գիտեր, վոր շնորհիվ Գերմանիայի հետ կապած իր դաշինքի, ուշ թե շուտ, ինքը պատերազմին պետք է մասնակցեր։ Յեվ վորովհետև նախատեսում եր, վոր պատերազմի յերկարատև և

* Տես՝ Հավելված։

ծանր տարիներում նա անկարող եր ներքին ռեֆորմների հարցով զբաղվել, ուստի նա հարկավոր չհամարեց Արևելյան Անատոլիայի նահանգները կառավարելու համար նշանակված յերկու ոտարազգի վերատեսուչների լիազորությունները յերկարել։

Իմիջի այլ նպատակների մեր միակ հույսը կայանում եր նրանում, վոր, շնորհիվ համաշխարհային պատերազմի, մեզ կաջողվի ազատվել այն բոլոր պարտավորություններից, վորոնք այնպես ճնշում եյին մեր անկախությունը։ Մենք հուսով եյինք, վոր կարող կլինենք ապրել վորպես անկախ և ազատ ազգ, վորն իր սեփական հայրենիքում տեղական կարիքներին համապատասխանող անհրաժեշտ ռեֆորմներն ինքը կմտցնի։ Ինչպես վոր մեր գլխավոր նպատակն եր վերացնել կապիտուլյացիաներն ու Լիբանանի սահմանադրությունը, նմանապես մենք ցանկանում եյինք վերացնել հայկական ռեֆորմներին վերաբերյալ այն «համաձայնությունը», վորը մենք ընդունել եյինք լոկ Ռուսաստանի ճնշման տակ։

Ինչպես վոր մի այլ գլխում յես մանրամասն խոսել եմ, մենք համաշխարհային պատերազմին մասնակցեցինք այն հուսով, վոր յերբևիցե ազատ և ինքնուրույն գոյություն կարող ենք ձեռք բերել վորպես մի ժողովուրդ, վորն իր արժանապատվությունը ճանաչում է։

Այս եր մեր նպատակը. ուստի հայերով բնակեցված վիլայեթներում բարենորոգումներ մտցնելու պայմանագիրը, վորը խլված եր մեզնից մեր հինավուրց թշնամի Ռուսաստանի գործած ճնշման հետևանքով, մեզ համար անընդունելի յեր։ Դա չի նշանակում, սակայն, վոր մենք ինքներս լուրջ նպատակ չունեյինք մեր յերկրում բարենորոգումներ մտցնել։ Ընդհակառակը, մենք վորոշել եյինք ամենահիմնական ռեֆորմներ մտցնել, վորովհետև մենք համոզված եյինք, վոր հակառակ պարագաներում մեզ անհնար կլինի ապրել։

Ռեֆորմներին գալով՝ մենք առաջնորդվում եյինք այն տեսակետով, վոր ցարիզմը, վորը յերկու հարյուր տարիներից ի վեր կախված եր մեր գլխի վերևում, վորպես մի չարիք, պետք է վոչնչացվի։ Միայն դրանով է, վոր կվերանային այն խնդիրները, վորոնք խռովություն եյին գցում մեր յերկրում։ Յեվ այս նպատակին մենք կհասնեյինք միայն այն պայմանով, յերբ համաշխարհային պատերազմին մասնակցելով, մենք հրապարակ կբերեյինք ամենամեծ չափով մեր պատերազմական բոլոր կարողությունները։

Ահա թե ինչու մենք վճռել եյինք ներքին բարենորոգումների իրագործումը հետաձգել մինչև պատերազմի վերջը և ժողովրդի բոլոր ուժերը նվիրել պատերազմի կողմից առաջադրած կարիքներին։

Մեր այս տեսակետի մասին մենք մեր պարտքը համարեցինք հայտնել Դաշնակցության ղեկավարներին։

IV. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԱՏՈԼԻԱՅԻ ԱՆՑՈՒԴԱՐՁԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Վերջապես մենք ել ակտիվ մասնակցություն ունեցանք համաշխարհային պատերազմում։ Պատերազմ հայտարարելուց միքանի օր հետո յես նշանակվեցի IV բանակի հրամանատար և թողի Կ.-Պոլիսը Սիրիա ուղևորվելու նպատակով։ Այնուհետև յես վոչ մի տեղեկություն չունեի Արևելյան Անատոլիայի դրության մասին, նմանապես չգիտեի, թե ինչ դրդապատճառներից ստիպված կառավարությունը բոլոր հայերին տեղահան եր արել։ Նույնպես յես վոչ մի մասնակցություն չեմ ունեցել, յերբ այդ խնդիրը քննվել ե Կ.-Պոլսում։ Հայերի տեղահանության մասին առաջին անգամ յես իմացա վիլայեթներին ուղղած կառավարչական այն հաղորդագրությունից, ըստ վորի հայերը ժամանակավորապես պետք ե Միջագետք տեղափոխվեյին, ուր և նրանք մնալու եյին մինչև պատերազմի վերջը։

Գլխավոր հրամանատարի պաշտոնակատարն ինձ ևս հաղորդեց, վոր պետք ե անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեմ վորպեսզի, յերբ հայերն իմ բանակի շրջանից անցնելու կլինեն, յես նրանց ամեն տեսակ հարձակումներից պաշտպանեմ։ Հայերի տեղահանության գործը ղեկավարում եյին քաղաքացիական իշխանությունները։ Այդ միջոցին յես զբաղված եյի Բոզանտի և Հալեպի գծի վրա ետապային հաղորդակցություն ստեղծելու գործով։ Դա միակ ճանապարհն եր, վորի վրայով զինվորական ուժերը 1915 թվի աշնան վերջին Սիրիա պետք ե ուղարկվեյին՝ Սուեզի ջրանցքի յերկրորդ արշավանքին մասնակցելու համար. յես պետք ե զորքի մթերավորման պատրաստություններ տեսնեյի։

Յես անչափ վրդովվեցի, յերբ իմացա, վոր աքսորված հայերը Բոզանտի յեն գալիս, վորպեսզի այդտեղից Տավրոսի և Ամանայի վրայով Հալեպ հասնեն, քանի վոր ինչ վոր արգելք եր հանդիսանում ետապների ճանապարհի ազատ յերթևեկությանը, կարող եր ահագին վնաս հասցնել Սուեզի ջրանցքի արշավանքին։

Գլխավոր հրամանատարի պաշտոնակատարի հետ ունեցած իմ նամակագրությունը պահվում ե բանակի ռազմական որագրության մեջ։ Հետագայում, յերբ այդ որագիրը լույս կտեսնի, բոլորը կհամոզվեն, վոր յես անհրաժեշտ եմ համարել պնդել, վորպեսզի հայերին, փոխանակ Միջագետք քշելու, տեղավորեն Կոնիայի, Անգորայի և Կաստամոնիի ներսերում։

Յեվ քանի վոր յես չեյի կարող փոխել կառավարության կարգադրությունը, վորը հիմնված եր որենքի վրա, և բացի այդ կտրուկ

հրաման ստացա՝ չարգելել հայ գաղթականական հոսանքի Ադանայի, Հալեպի վրայով Միջագետք ուղղվելու. բնական ե, վոր ստիպված եյի տեղի տալ։

Յերբեմնապես ինձ լուրեր եյին հասնում, վոր գաղթող հայերը, Մամուրեթ-ուլ-Ազիզի և Դիարբեքիրի վիլայեթներով անցնելիս, բռնությունների յեն յենթարկվում։ Ինչպես արդեն ասացի, գաղթականական գործերը ղեկավարում եյին, քաղաքացիական մարմինները, և բանակը դրանում վոչ մի մասնակցություն չուներ։ Սակայն, քանի վոր ինձ համար անհանդուրժելի յեր, վոր իմ բանակի շրջանից անցնող հայերի վերաբերմամբ բռնություններ գործադրվեն, մի բան, վոր տեղի յեր ունենում մյուս շրջաններում, ուստի այդ մասին յես համապատասխան հրաման արձակեցի։ Անդադար գանգատներ եր, վոր լսում եյին, թե քաղաքացիական իշխանությունները Բոզանտի ու Հալեպի ճանապարհին չեյին կարողանում գաղթող խմբերին բավականաչափ պարեն մատակարարել, և այդ պատճառով ել մարդիկ յերկարատև ճանապարհորդության հետևանքով ամենախղճալի վիճակում եյին գտնվում։ Այդ բոլորն իմ աչքով տեսնելու նպատակով յես Հալեպից Բոզանտի ուղևորվեցի և հրամայեցի, վոր մեր զինվորական մթերապահեստներից գաղթողներին հաց բաց թողնեն, իսկ ետապների բժիշկներին հանձնարարեցի, վոր հիվանդներին բժշկական ոգնություն ցույց տան։

Այս տեղահանության ամբողջ ընթացքում հայերին ոգնելու ցանկությամբ յես արի այն բոլորը, ինչ վոր հնարավոր եր, մի բան, վոր կվկայեն վորպես իրենք հայերը, նույնպես և բոլոր անաչառ ոտարերկրացիները։ Յես այստեղ մատնացույց կանեմ այն միքանի հրամանների ու կարգադրությունների վրա, վորոնք տպված են Լեպսիուսի հրատարակած գրքում, ուր տեղ են գտել գերմանական արտաքին գործերի մինիստրության հայերին վերաբերող պաշտոնական գրությունները։ Կ.-Պոլիս, վորպես և զանազան շրջանների կոմենդանտներին ու վիլայեթների պետերին խփած եմ հեռագրները ժողովված են իմ բանակի պատերազմական որագրության մեջ. այն որը, յերբ նրանք լույս կտեսնեն, հասարակությունը հնարավորություն կունենա ի մոտո ծանոթանալ այն մարդասեր հայացքների հետ, վորոնք իմ գործառնությունների հիմքն են կազմել։

Յերբ Անատոլիայի հայերին տեղահանելուց հետո քաղաքացիական իշխանությունները հրաման ստացան այժմ ել Ադանայի բոլոր հայերին Հալեպ գաղթեցնել, յես այս անգամ ել այդ միջոցի դեմ բողոքեցի։ Այդ խնդրի մասին յես մի ընդարձակ տեղեկագիր ուղարկեցի Կ.-Պոլիս, վորի մեջ յես պնդում եյի, վոր այդորինակ կարգա-

դրության անհրաժեշտություն յես չեմ գտնում և վոր, իմ կարծիքով, այդ կարգադրությունը իմ IV բանակի շրջանի տնտեսական և մանավանդ գյուղատնտեսական դրության վրա ամենավատ հետևանքներ կարող է ունենալ։ Բայց ինձ հասկացնել տվին, վոր յես չպետք է խառնվեմ քաղաքացիական իշխանությունների գործերին, այլ, ընդհակառակը, պետք է նրանց օգնեմ, դրա համար ել յես այս հրամանն իկատար ածելուն արգելք լինել չկարողացա։

Այնուհետև, յերբ յես համոզվեցի, վոր տեղահանված հայերին Միջագետք աքսորելը նրանց թշվառության և մեռնելու, նպատակահարմար գտա նրանց մի մեծ թիվ Բեյրութի և Հալեպի սիրիական վիլայեթներում տեղավորելու։ Դա ինձ հաջողվեց Կ.-Պոլիս արածս յեռանդագին դիմումներից հետո միայն, և վերջապես յես ստացա ցանկացածս թույլտվությունը։

Այդպիսով ինձ աջողվեց մոտ 150.000 հայեր հիշյալ վիլայեթներում տեղավորել։

Յես անչափ ամաչում եմ թվելու այստեղ այն բոլորը, ինչ վոր յես արել եմ հոգուտ այրիների ու վորբերի։ Ինձ թվում է, վոր դրանով յես վիրավորում եմ մարդասիրության զգացմունքից բղխած գործողությունների բարոյական արժեքը։

Բայց և այնպես, չնայած մեր մատուցած այդ բոլոր օգնություններին, արտասահմանի մեր թշնամիներն ուզում են ինձ բարոյապես պատասխանատու համարել յեղած-անցած դեպքերի համար։ Յեվ կառավարության այն ծաղրանկարը, վորը զինադադարից հետո կազմվել է Կ.-Պոլսում, ինձ մինչև իսկ մահվան է դատապարտել, ամբաստանելով ինձ հայերի տեղահանման ու նրանց կոտորածների հանցանքի մեջ. ահա թե ինչու իմ այս գրածներս յես համարում եմ ինքնապաշտպանության միջոց, վորպիսի նպատակով և տալիս եմ միայն զուտ ճշմարտությունից բղխող բացատրություններ։ Հասարակական կարծիքը կխոստովանի, վոր յես հայերի տարագրության և կոտորածների հետ վոչ մի գործ չունեյի։ Յեվ ինչպես վոր յես հայերի տեղահանման հանգամանքների մեջ վոչ մի մասնակցություն չեմ ունեցել, նույնպես և յես նրանց կոտորած չեմ սարքել։ Ընդհակառակը, յես ամեն հնարավոր միջոցների դիմել եմ արգելելու այդ կոտորածները, իսկ գաղթելու ժամանակ նրանց օգնություն եմ հասցրել։

Գալով այն հարցին, թե, յեթե յես այդ ժամանակներում Կ.-Պոլսում լինեյի և, իմանալով այն հանգամանքները, վոր տեղի եյին ունենում զորքի թիկունքում՝ Արևելյան Անատոլիայում, և յեթե յես մասնակցեյի այդ խնդրի քննությանը—արդյոք յես ևս համամիտ չեյի՞

լինի հայերի աքսորին։ Այդ հարցին նախապես պատասխան տալ յես չեմ կարող։ Համենայն դեպս, յես կարծում եմ, վոր իմ քաղաքական ընկերները, նախքան այդպիսի մի սոսկալի վորոշում անելը, վորպիսին հայերի տեղահանությունն եր և վորը գրգռեց մեր դեմ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, պետք է վոր ունենային ծանրակշիռ շարժառիթներ։ Յես չեմ կասկածում, վոր մոտ որերումս լույս տեսնելիք պաշտոնական մերկացումներն այդ խնդրի շուրջ յեղած մեր կասկածներն ու հետաքրքրությունը կփարատեն։

Համենայն դեպս, յես այն հաստատ համոզմանն եմ, վոր հայերը ծրագրել եյին մի ապստամբություն, վորը վտանգում եր մեր բանակի թիկունքը և վորը, ըստ հանգամանքի, կարող եր նրան վոչնչացման տանել։ Այդ ունենալով աչքի առաջ, իմ ընկերները յեկել են այն վորոշմանը, վոր անհրաժեշտ է ամբողջ հայ ժողովուրդը մի այնպիսի յերկիր տեղափոխել, ուր նրանք մեզ վոչ մի վնաս չեյին կարող հասցնել. այնինչ, հայերին իրենց տեղերում թողնելով, նրանք Ոսմանյան հայրենիքը յենթարկած կլինեյին մի կատաստրոֆայի, վորը տեղի կունենար, յեթե Ռուսաստանը Փոքր-Ասիան տիրեր։

Ինչ վերաբերում է այն անցքերին, վոր տեղի յեն ունեցել այս աքսորման ընթացքում, այդ պետք է վերագրել այն խորացած ատելությանը, վոր վաթսուն-յոթանասուն տարիներից իվեր գոյություն ուներ թյուրքերի, քյուրդերի և հայերի միջև։

Թող անիծյալ լինի մոսկովյան այն քաղաքականությունը, վորի հետևանքով յերեք ազգերի, վորոնք դարերի ընթացքում խաղաղ ապրել եյին իրարու հետ, իրարու մահացու թշնամի դարձրեց։ Անշուշտ, 1915 թվի տեղահանության ժամուն հայերի վերաբերմամբ գործած հանցանքներն ամենայն իրավամբ զզվանք են առաջ բերում, սակայն այն բոլորը, ինչ վոր արեցին հայերը թյուրքերի և քյուրդերի դեմ, յերբ իրենք ապստամբել եյին, իրենց անխղճությամբ և լրբությամբ առաջիններին արածներից յետ չեյին մնում։

Կառավարությունը հայերի տեղահանությունը համարում եր թյուրք և քյուրդ ազգաբնակության պաշտպանության, զորքի և Ոսմանյան պետության քաղաքական գոյության տեսակետից միակ դրական և կտրուկ միջոցը, սակայն, մյուս կողմից, այս միջոցը թյուրքերին և քյուրդերին հնարավորություն տվեց հանցագործության արհեստի մեջ վարժվել։ Միթե հնարավոր չեր այս հարցն այլ կերպ լուծել, կամ միթե կարելի չեր գաղթողներին կոտորածից փրկել։ Այս հարցերը կարող են լուծվել միայն այն ժամանակ, յերբ մենք բացատրություններ կլսենք վորպես նրանց կողմից, վորոնք կարգադրել եյին այս տեղափոխությունը, նույնպես և նրանց, վորոնք

ղեկավարում էին այն։ Համենայն դեպս յես կարող եմ պնդել, վոր իմ բանակի շրջանում, բացառությամբ միքանի դեպքերի, հայ գաղթականների վերաբերմամբ վոչ մի խժդժություն տեղի չի ունեցել։

Ինչ վերաբերում է իրադարձությունների թողած վատ տպավորությանը—մի՞թե ավելի պակաս աղաղակող էր այն պատկերը, յերբ ռուսների առաջից, հայերի կողմից արած սարսափի ու կոտորածի հետևանքով թյուրքերը փախչում էին Դիարբեքիրից Հալեպի ու Ադանայի վրայով դեպի Կոնիա, իսկ Երզրումի ու Յերզնկայի վրայով դեպի Սվազ։ Բայց չէ՞ վոր այս թշվառները միայն հասարակ մահմեդականներ էին, ուստի չգտնվեց մի հատիկ ամերիկացի կամ գերմանացի միսիոներ, վորը դրանց վրա ուշք դարձներ և կամ իր պարտքը համարեր վոգևորված խոսքերով նրանց թշվառությունները նկարագրել։

Ընդունենք, վոր Օսմանյան կառավարությունը մեկ ու կես միլիոն հայեր Արևելյան Անատոլիայի նահանգներից տեղահանեց, և վոր դրանցից վեց հարյուր հազարը մասամբ սպանվեցին, մասամբ էլ քաղցի ու թշվառության հետևանքով կորան։ Բայց գիտե՞ արդյոք մեկն ու մեկը, թե քանի հազար Տրապիզոնի, Երզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթների թյուրք բնակիչներ հայերի ձեռքով կոտորվեցին, յերբ ռուսներն այդ նահանգներն էին մուտք գործում։ Ընդունենք նաև, վոր այս պարագաներում սպանված թյուրքերի ու քյուրդերի թիվը մեկ ու կես միլիոնից անց է։ Յեթե թյուրքերը պատասխանատու յեն հայերի կոտորածների համար, ինչու՞ հայերն էլ պատասխանատու չեն թյուրքերի կոտորածների համար։ Գուցե թյուրքերն ու քյուրդերը մարդկության կամ գուցե Մանդելշտամի, Մորգենտաուի և նրանց նման պոլիտիկոսների աչքում ճանճերի արժեք անգամ չունեն։

V· ԵՐԶՐՈՒՄԻ ԱՆՑՔԵՐԸ

Յես խնդրում եմ ընթերցողներից ուշադրություն շնորհել ռուսական ծագում ունեցող այս յերկու հուշագրերին։ Սրանք գաղափար են տալիս հայերի թյուրքերի վերաբերմամբ ունեցած թշնամության և նրանց կողմից կատարած բռնությունների մասին։

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ. № 1

Ռուսական զորքերի նահանջը

Հիշատակարան շտաբս-կապիտան Տվերդոխլեբովի հայերի կողմից Երզրումում և նրա շրջակայքում թյուրք ազգաբնակության վրա

կատարած բռնությունների մասին, սկսած հեղափոխության սկզբից մինչև քաղաքի թյուրք զորքերի կողմից (1918 թ. փետրվարի 27-ին) վերագրավումը։

Առաջաբան

Ամբողջ Յեվրոպան վկայում է, վոր յերկար ժամանակներից ի վեր թյուրքերի և հայերի միջև գոյություն ունեցած թշնամանքը պատերազմի ժամանակ արտահայտվեց աներևակայելի յեղանակով։ Բոլորին ծանոթ փաստ է, վոր հայերն ատում էին թյուրքերին. չնայած դրան, հայերին միշտ էլ հաջողվել է նահատակների դերում դուրս գալ և ամբողջ աշխարհին հավատացնել, վոր նրանք, շնորհիվ բարձր աստիճանի վրա կանգնած իրենց քաղաքակրթության և քրիստոնեյական հավատի, սոսկալի բռնությունների չեն յենթարկվել։

Ռուսները, վոր բոլոր յեվրոպացիներից համեմատաբար ավելի հաճախ են շփվել հայերի հետ, բոլորովին այլ համոզմունք ունեն այս ազգի քաղաքակրթության և բարոյականության մասին։ Նրանք հայերին համարում են ժլատ, ագահ և շողոքորթ մի ժողովուրդ, վորը միայն ուրիշների հաշվին ապրել է ուզել։ Ռուս գյուղացին շատ լավ է ճանաչել այս ժողովրդի հոգին. շատ հաճախ յես լսած կլինեմ ռուս զինվորներից այսպիսի արտահայտություններ. «Թյուրքերը հայերի հետ վատ են վարվել, ճիշտ է, բայց նրանք այնպես պետք է անեյին, վորպեսզի վոչ մի հայ կենդանի չմնար»։

Վորպես զինվորականներ էլ հայերն անպետք են. ռուս բանակի հայ զինվորներն աննշան դեր են կատարում։ Զորքի թիկունքում ծառայությունը, վորքան և սա ստորացուցիչ լիներ, սրանք միշտ էլ գերադասել են ճակատային ծառայությունից։ Հաճախ տեղի ունեցող դասալքությունը և իրենք իրենց վիրավորելու դեպքերը հաստատում են այն կարծիքը, վոր կազմվել է հայերի քաջության մասին։ Սակայն այն դեպքերը, վորոնք տեղի ունեցան ռուսական հեղափոխության սկզբից մինչև Երզրումի թյուրք զորքերի կողմից վերագրավումը, գերազանցում են այն բոլորին, ինչ կարելի յեր այս ազգից սպասել։ Այս անցքերի մի մասը յես իմ աչքերով եմ տեսել, մի մասն էլ լսել եմ ուրիշ ականատեսներից։

Յերբ 1916 թվին ռուսները վերցրին Երզրումը, վոչ մի հայի չէր թույլատրվում այդ քաղաքը կամ նրա շրջակայքը մտնելու։ Յերբ առաջին զորաբանակի գլուխ էր կանգնած գեներալ Կալիտինը, վորը վերցրել էր քաղաքն ու շրջակայքը, նա հրամայել էր, վորպեսզի այն զորամասերին, վորոնց մեջ հայ տարրեր կային, թույլ չտրվի այդ տեղերը գալ։ Ռուսական հեղափոխությունից հետո այս կարգադրությունը փոխվեց. և հայերն օգտվեցին դրանից ու ներս խուժեցին

Երզրում ու նրա շրջակայքը։ Յեվ ահա այդ որվանից սկսվեցին տների ու գյուղերի թալանն ու կոտորածները։

Ռուսական տիրապետության ժամանակ հայերը չեյին համարձակվում բաց-աշկարա հանցանքներ գործել. թալաններն ու սպանությունները կատարվում եյին ծածուկ։ 1917 թվին հայ հեղափոխական կոմիտեն, վորը մեծ մասամբ զինվորներից եր բաղկացած, ազգաբնակությանը զինաթափ անելու պատրվակով սկսեց ընդհանուր տնային խուզարկություններ կատարել։ Յեվ վորովհետև դա կատարվում եր առանց վորոշ կարգի, ուստի շատ շուտով դա կանոնավոր թալանի կերպարանք ընդունեց, վորը և գործադրում եյին զինվորներն ընդարձակորեն և առանց քաշվելու։ Հայ զինվորներից նրանք, վորոնք թշնամու հանդեպ աչքի եյին ընկել իրենց ծայր վախկոտությամբ, դրանք այժմ ամենաառաջ թալանչիների դեր եյին կատարում։

Մի որ, յերբ յես ձիով անցնում եյի քաղաքի միջով, նկատեցի մի խումբ ռուս զինվորներ, վորոնք մի հայ զինվորի գլխավորությամբ բանտ եյին քարշ տալիս յերկու վաթսունամյա թյուրք ծերունիների։ Հայ զինվորը շատ բարկացած եր յերևում և յերկաթյա լարերից հյուսված մտրակով ծեծում եր խեղճ թյուրքերին։ Զինվորներին արած իմ բոլոր դիմումները՝ համոզելու, վորպեսզի յերկու ծերունիների վերաբերմամբ փոքր ինչ մարդասեր գտնվեն, ապարդյուն անցան։ Հայը բարձրացնելով յերկաթե մտրակը, վրա յեկավ ինձ և գոռաց. «Ի՞նչ, դուք համարձակվում եք մեզ կոտորողներին պաշտպանե՞լ»։ Ներկա գտնված հայերը, բնականաբար, հայի կողմն անցան. իմ դրությունը ռուս զինվորների դիմաց, վորոնք ոգտվելու եյին այս առիթից իրենց սպային ջարդելու և հավանականորեն նաև սպանելու, սկսեց կրիտիկական դառնալ. սակայն հենց վոր սպաների պահակը յերևաց, դրությունը փոխվեց։ Հայերը քաջությունը կորցրին, և զինվորները յերկու ծերերին առանց այլևայլության բաց թողին։

Ռուսական ճակատային զորքերի տուն դառնալու պատճառով վտանգ կար, վոր ճակատում գտնված կամ Երզրում յեկող հայերը մինչև մի այլ զորամասի գալը թյուրք ազգաբնակության վերաբերմամբ ամեն տեսակ խժդժություններ կանեին։ Հայ յերևելիները, սակայն, հավատացնում եյին, վոր այդպիսի բան տեղի չի ունենա։ Նրանք պնդում եյին, վոր հոգալու յեն այդ յերկու ազգերի ապահովության մասին և վոր ձեռք առած անհրաժեշտ միջոցների վերաբերմամբ կարելի յե աներկմիտ լինել։

Սկզբում թվում եր, վոր այս հավաստիացումները ճիշտ վոր արդարանում են։

Այսպես ահա այն մզկիթները, վոր զորանոցների եյին փոխված, ազատվեցին և մաքրվեցին և նրանք այլևս զինվորական կարիքներին

չեյին ծառայեցնվում։ Հայերից և թյուրքերից բաղկացած միլիցիական պահակներ կազմակերպվեցին, և իրենք հայերն եյին, վոր բարձրաձայն պահանջում եյին հիմնել զինվորական դատարան՝ թյուրքերի դեմ կատարվող հանցագործությունները պատժելու համար։

Միայն վերջերում իմացվեց, վոր այդ բոլոր գործողությունները վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ խորամանկություն և խորամանկորեն քողարկված խաբեբայություն։ Այն թյուրքերը, վորոնք միլիցիայի կազմի մեջ եյին մտել, շատ շուտով հրաժարվեցին ծառայությունից, հենց վոր տեսան, վոր իրենցից նրանք, վորոնք գիշերային պահակ են գնում, մեծ մասամբ այլևս տուն չեն վերադառնում, և նրանց ուր լինելու մասին վոչ մի տեղեկություն չի ստացվում. իսկ այն թյուրքերը, վորոնք դաշտային աշխատանքների եյին գնում, նույնպես անհետ կորչում եյին։ Մյուս կողմից զինվորական դատարանների անդամները, վորոնք սկսել եյին գործել, վախենալով, վոր հենց իրենք կարող են սպանվել, վոչ մի պատիժ չեյին տալիս։ Այսպես ահա սպանություններն ու թալանը բազմացան։ Հունվար թե փետրվար ամիսների մեջ իր սեփական տանն սպանվեց Երզրումի աչքի ընկնող քաղաքացիներից մեկը՝ Բեքիր-Հաջի-եֆենդին։

Զորքերի հրամանատար գեներալ Ոդիշելիձեն այդ առթիվ մի հրաման արձակեց զորամասերի գլխավորների անունով, պահանջելով յերեք որվա ընթացքում մարդասպանին գտնել։ Բայց այս հրամանը մնաց անհետևանք։ Նա հայ զորամասերի գլխավորներին խստորեն նախատեց այն անտանելի կարգազանցության համար, վոր նկատվում եր նրանց մարդկանց մեջ։ Նա դիմեց նաև հայ պատվելիներին՝ նախատելով նրանց բանդաների կողմից գործադրված բռնությունների առթիվ, իմիջի այլոց նրա համար, վոր դաշտային աշխատանքների գնացած թյուրքերի կեսից ավելին յետ չեն դառնում. բացատրեց նրանց, վոր յեթե հայերը տեր են ուզում դառնալ գրավված յերկրներին, նրանք պետք է ապացուցեն, վոր արժանի յեն դրան։ Նա ավելացրեց, վոր այսորինակ հանցանքներն արատավորում են հայ ազգի անունը։ «Պատերազմը դեռևս վերջացել չե, ասաց նա, և հաշտության կոնգրեսն այս յերկիրը դեռևս հայերին չի խոստացել, ուստի հայերը հենց այժմից պետք է ցույց տան, վոր նրանք, վորպես ազատության արժանի մի ազգ, որենքները հարգել գիտեն»։

Հայ ներկայացուցիչները պատասխանեցին, վոր մի ամբողջ ժողովրդի պատիվը չեն կարող արատավորել չնչին փոքրամասնության կողմից կատարած հանցանքները. Նրանք վստահացնում եյին, վոր քաղաքի խելահաս հայերն ամեն հնարավոր միջոցներ գործ են դնում թյուրքական նախորդ բռնության դեմ վրեժխնդրության այսորինակ

արտահայտությունների առաջն առնելու։ Այնուհետև նրանք հայտնեցին, վոր իրանք նպատակ ունեն ամենախիստ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի այսուհետև արդար ու ազնվամտորեն վարվեն։

Այսօրինակ հանգստացուցիչ հավաստիացումներից քիչ անց մենք լուր առանք Յերզնկայում տեղի ունեցած կոտորածների մասին։ Յեղած մանրամասնությունները լսեցի յես գլխավոր հրամանատար Ոդիշելիձեյի բերնից։ Այդ կոտորածն արել են վոչ թե բանդիտները, այլ քաղաքի մի բժիշկ և զորքի մատակարարները։ Յեվ վորովհետև այդ հայերի անունները չգիտեմ, ուստի և չեմ կարող գրել։

Տեղեկագիրն ասում եր.

«800-ից ավելի անզեն, անպաշտպան թյուրքեր են կոտորված։ Հայերը փորում են հսկայական փոսեր, վորոնց մեջ անասունների նման մորթում են խեղճ թյուրքերին և գցում են այդ փոսերի մեջ։ Մի հայ, վորը ղեկավարում եր այս գործողությունները, հաշվում եր անբախտ զոհերին. «Այժմ վաթսուն են, գոռում եր նա, տասի համար դեռ տեղ կա, շարունակեցեք կոտորել»—և հետևյալ տասը թշվառները մորթվում են, վորպեսզի իրենց դիակներով լցնեն փոսը, վորը այնուհետև ծածկում են հողի թեթև շերտով։ Զորքի մատակարարը, ցանկանալով իր համար բավականություն պատճառել, մի տան մեջ լցնում է ութսուն թշվառ թյուրքեր և մեկ-մեկ կանչում է և սեփական ձեռքերով ջախջախում է դրանց գլուխները»։

Յերզնկայի կոտորածից հետո վոտից մինչև գլուխ զինված հայերը Երզրում ճանապարհվեցին։ Մի ռուս սպա, վորը թնդանոթներով պաշտպանում եր զորքի նահանջի ճանապարհը քյուրդերի կողմից կատարվող հարձակումներից, մի անգամ փորձում է հայ զորամասերից մեկին կռվի տանել։ Այս մարդիկ, սակայն, կանոնավոր կռվի վոչ մի ցանկություն չեն ցույց տալիս. դրա տեղ նրանք սպայից ազատվելու նպատակով հրդեհում են այն տունը, ուր գտնվում եյին ռուս սպաները։ Սպաներն ազատվում են մահից, կորցնելով իրենց ամբողջ ունեցվածքը։

Յերզնկայից Երզրում փախչող հայկական բանդաները ճանապարհին վոչնչացնում են բոլոր թյուրք գյուղերն իրենց բնակիչներով հանդերձ։

Ռուսական զորքն Երզրում յետ դառնալիս զորամթերք փոխադրելու համար քյուրդերին և շրջանի խաղաղ ազգաբնակությանը սայլապանություն անելու համար դուրս եր բերել։ Սրանցից և վոչ մեկը զենք չուներ։ Յերբ մոտենում են Երզրումին, հայերը, ոգտվելով նրանից, վոր ռուս սպաները քնելու եյին գնացած յեղել, սայլապաններին կոտորում են։ Ռուս սպաներն այս թշվառների ցավի

աղաղակների վրա զարթնում են, սակայն հայերը զենքերը ձեռներին շրջապատում են սպաներին, սպառնալով սրանց, վոր յեթե նրանք միջամտեն, սպանվածների բախտին կարժանանան։ Յեվ այսպես ամենաանխիղճ կերպով կատարվում է այն թշվառների սպանումը։

Երզրումի սպայաժողովարանում ռուսական հրաձիգ գնդի սպա Մդիվանին բոլորի ներկայությամբ պատմեց տեղի ունեցած հետևյալ դեպքը.

«Մի հայ մի քյուրդ սայլապանի մահվան է դատապարտում։ Սա մահամերձ ընկնում է մեջքի վրա։ Հայը, սակայն, ցանկանում է իր ձեռնափայտը զոհի բերանը կոխել, և վորովհետև զոհի ատամները մահվան ջղաձգությունից իրար եյին կպել, մարդասպանը չի կարողանում իր զզվելի նպատակն իրագործել. զայրացած դրանից, նա մեռնող քյուրդին սպանում է փորին աքացիներ տալով»։

Ոդիշելիձեն անձամբ ինձ պատմեց, վոր Իլիջա գյուղի այն բոլոր թյուրքերը, վորոնք չեյին կարողացել փախչել, խմբովին կոտորվել են։ Նա ինքը տեսել եր յերեխաների դիակները, վորոնց գլուխները բութ կացիններով ջախջախված եյին։

Շտաբս-կապիտան Գրյազնովը, վորը փետրվարի 28-ին, Իլիջայի կոտորածից յերեք շաբաթ անց, Երզրում եր յեկել, պատմեց ինձ իր աչքով տեսած հետևյալ դեպքը.

«Գյուղ տանող ճանապարհի վրա նա տեսնում է հոշոտած անդամներով մի դիակույտ. ամեն մի հայ, վոր անցնում եր դիակույտի մոտից, անեծքներ թափելով թքում եր այդ կույտի վրա։ Իլիջայի մզկիթի բակում իրարու վրա թափված եյին յերկու նիզակի բարձրության հասնող մարդկային դիակներ։ Կանանց դիակների հետ խառը կային տղամարդկանց, յերեխաների, ծերունիների և ամեն հասակի մարդկանց դիակներ։ Կանանց դիակների վրա պարզորեն նկատվում եյին բռնաբարության հետքեր. կանանց և աղջիկների սեռական անդամների մեջ ներս եյին կոխված փամփուշտներ։ Շտաբս-կապիտան Գրյազնովը յերկու ջահել հայ որիորդների, վորոնք հայկական զորամասերում հեռախոսային ծառայության մեջ եյին, հրավիրում է իր հետ մզկիթ գնալ։ Նա սրանց ցույց է տալիս իրենց հայրենակիցների զզվելի արարքը և, նախատելով, ասում է. «Ահա, պարծեցեք սրանով»։ Սակայն վորքան մեծ է լինում նրա զարմանքն ու վրդովմունքը, յերբ տեսնում է, թե ինչպես այս տեսարանը, փոխանակ նորատի որիորդներին վրդովելու, նրանց մեջ ուրախ ծիծաղ է առաջացնում։ Լցված վրդովմունքով, նա սկսում է սրանց ամոթահարել. Նա ասում է, վոր հայերը, առանց կանանց բացառու-

թյան, բոլոր ազգերից ամենավախկոտ, ամենաբարբարոս ազգն են, և այն փաստը, վոր զարգացած և բարեկիրթ աղջիկներն այսօրինակ մի տեսարանի դիմաց, վորից նույնիսկ սպայի մազերը ցից-ցից են կանգնում, կարող են ծիծաղել, այդ ցեղի բնածին բարբարոսության ապացույց կարող ե համարվել: Այս խոսքերն աղջիկներին, կարծես, ստիպում են ուշքի գալ, և նրանք բացատրում են, վոր իրենց ծիծաղը նյարդայնության հետևանք եր: Սակայն խաբվելն այլևս անկարելի չեր»:

Իլիջայի ետապի զորքի մատակարար մի հայ հետևյալը պատմեց ինձ. «Փետրվարի 27-ին մի պատի վրա խաչում են դեռ շնչող մի թյուրք կնոջ և նրա սիրտը հանելուց հետո կախում են նրան գլխիվայր»: Փետրվարի 7-ին սկսվեց Երզրումի մեծ կոտորածը: Հայ թնդանոթաձիգ զինվորները փողոցներում բռնում են 270 մարդ և, դրանց զգեստները հանելուց հետո, կողպում են դրանց մի բաղնիքի մեջ, վորով բավարարություն են տալիս իրենց զզվելի ուրախության զգացմունքին: Գերմարդկային ջանքեր թափելով հազիվ աջողվեց ինձ այս թշվառներից 100 հոգու, վորոնք դեռ կենդանի եյին, փրկել. մնացյալներն սպանվեցին այն մարդկանց ձեռքով, վորոնք իրենց զինվոր եյին համարում: Այս վոճրագործության ղեկավարը թնդանոթաձիգներին միացած հայկական հետևակ գնդի Կարաբեգով ազգանունով մի յենթասպա յեր: Նույն յերեկոյան քաղաքի փողոցներում բազմաթիվ թյուրքեր սպանվեցին: Փետրվարի 12-ին Երզրումի յերկաթուղու կայարանի մոտ հայերն սպանում են տաս խաղաղ և անզեն թյուրքեր, իսկ այն սպաներին, վորոնք միջամտել եյին ուզում, մահի սպառնալիքներ են տալիս:

Հենց նույն ժամանակ յես բանտարկել եմ տալիս մի հայի, վորն առանց հարգելի պատճառի մի թյուրք եր սպանել: Գլխավոր հրամանատարը հրամայեց նրան զինվորական դատի տալ: Ըստ օրենքի հանցավորին մահապատիժ ավին: Մի հայ սպա մարդասպանին հայտնում ե, վոր սա իր հանցանքը քավելու համար կախվելու չե:—«Ի՞նչ, բռնկված ասում ե սա, միթե տեսնված բան ե, վոր մի հայ մի թյուրքի պատճառով սպանվի»:

Երզրումում հայերը հրդեհեցին թյուրքական շուկան: Փետրվարի 17-ին յես լսեցի, վոր թնդանոթաձիգ գնդի շրջանի մեջ մնող Թեփե-քյոյ գյուղի բոլոր բնակիչները՝ կանայք, տղամարդիկ, յերեխաներ—գլխովին ջնջվել են: Նույն որը յես հանդիպեցի Անդրանիկին, վորը կովկասյան կառավարության կողմից Երզրում եր ուղարկված այստեղ կարգ ու կանոն հաստատելու: Յես նրան հաղորդեցի այս կոտորածի մասին և խնդրեցի հանցավորների վերաբերյալ

քննություն կատարել: Յես այնպես ել չիմացա, թե իմ խնդիրքն ինչ հետևանք ունեցավ: Թնդանոթաձիգների ժողովարանում նա հրապարակորեն խոստացավ, վոր ինքը կարգ կհաստատի, սակայն կովկասյան կառավարության այս յերկու ներկայացուցիչների՝ Անդրանիկի և դոկտոր Զավրիևի խոստումն, այնուամենայնիվ, չիրագործվեց:

Քաղաքում խռովությունները համեմատաբար նվազեցին, սակայն գյուղերում, ուր, բնականաբար, կատարյալ լռություն եր տիրում, սպանվում եյին բոլոր բնակիչները: Քաղաքում նորից ծայր առան թյուրք ազգաբնակության ձերբակալությունները, հենց վոր թյուրք զորքի Իլիջայի կողմից մոտենալու մասին լուրն ստացվեց: Այս ձերբակալությունները, նամանավանդ, բազմացան փետրվարի 26-ից 27-ը: Այդ գիշեր հայերը, օգտվելով նրանից, վոր ռուս սպաները քնած եյին, մի նոր արյան-բաղնիս կազմակերպեցին և, թյուրքերի մոտենալը պատրվակ բռնելով, իսկույն փախուստի դիմեցին:

Արյունհեղությունը, սակայն, մի պատահական բան չեր. նա վաղուց նախապատրաստված եր: Բոլոր մինչ այդ կալանավորված թյուրքերին ժողովում են և մեկը մյուսի յետևից կոտորում: Հայերը պարծանքով ասում եյին, վոր այդ գիշերվա զոհերի թիվը 3000-ի յե հասնում:

Քաղաքը պաշտպանող հայերի թիվն այնքան քիչ եր, վոր նրանք 1500 հոգի թյուրքական զորքի և յերկու թնդանոթների առաջ փախուստի դիմեցին: Այնուամենայնիվ այս գիշեր նրանց կատարած սպանությունների թիվը չափից դուրս մեծ եր:

Յեվ վորովհետև հայերի ավելի լուսավորված դասը շատ հեշտությամբ կարող եր այս կոտորածի առաջն առնել, դրանից պետք ե յեզրակացնել, վոր այս վոճրագործությանը մասնակցել եյին բանդաներից դուրս ազգաբնակության նաև այս շերտերը, և վոր, համենայն դեպս, նրա վրա յե ընկնում դրա գլխավոր պատասխանատվությունը: Հասարակ ժողովուրդը միշտ ել յենթարկվում ե իրենից բարձր կանգնածների ազդեցությանը: Իմ գունդը, ուր միայն ռուս սպաներ եյին ծառայում, կազմված եր բացառապես հայ զինվորներից. սակայն, չնայած վոր մենք նրանց դեմ վոչ մի ուժ չեյինք գործադրել, այնուամենայնիվ մեզ աջողվում եր մեր բոլոր հրամաններն իկատար ածել տալ, և նրանք ափաշկարա վոչ մի թալան չարին: Այն գիշեր, յերբ տեղի ունեցան սպանությունները, զորանոցում, ուր ապրում եյին գնդի միքանի մասեր, վոչ մի քյուրդ ձիապան չսպանվեց, չնայած վոր այդ գիշեր հերթապահը մի հատիկ ռուս սպա յեր, և քառասուն քյուրդ ձիապաններ շրջապատված եյին հարյուրավոր հայերով:

Ես, իհարկե, չեմ պնդում, որ հայ ազգի բարձր շրջաններն առանց բացառության մասնակցել են այդ վոճրագործությանը։ Ես գիտեմ հայեր, վորոնք վոչ թե լոկ խոսքերով, այլ և գործով դրա դեմ եյին. աչնուամենայնիվ, չես հաստատում եմ, վոր այսպիսիների թիվը շատ քիչ եր, և նրանք հենց իրենց հայրենակիցներից պարսավվում եյին։ Նրանց մեղադրում եյին նրանում, վոր դեմ են գնում ազգի իդեալին։ Ուրիշներն արտաքուստ իրենց ցույց եյին տալիս վորպես այդպիսի վոճրագործությունների հակառակորդներ, սակայն ծածուկ նրանք հովանավորում եյին վոճրագործներին։ Միքանի հայեր բոլոր այս նախատինքների հանդեպ լռություն եյին պահպանում, իսկ մեծ մասը միանման պատասխան եր տալիս։ «Դուք ռուսներ եք, ասում եյին նրանք մեզ, դուք անկարող եք ըմբռնել հայ ազգի իդեալները»։ Ցերբեմնապես նրանք աշխատում եյին իրենց պաշտպանել հետևյալ պատճառաբանությամբ. «Իսկ թյուրքերը, միթե նրանք հայերի վերաբերմամբ ուրիշ կերպ են վարվել։ Այն, ինչ վոր մենք անում ենք, դա լոկ վրիժառություն ե»։ Վերև հիշատակած անցքերն ապացուցում են, թե վոր աստիճան ավազակաբարո յե հայ ազգի և նրա ավելի բարձր դասի իդեալը։

Մարդկային ուժերից վեր եր այս ազդակող դեպքերի առաջն առնել։ Հայերը քամի եյին ցանում, առանց մտածելու, վոր փոթորիկ են հնձելու։

Երզրումի և Դևե-Բոյունի դիրքերի ժամանակավոր պետ և 2-րդ ինժեներական ու թնդանոթաձիգ գնդի հրամանատար՝ ՏՎԵՐԴՈԽԼԵԲՈՎ.

Երզրում, 1918 թ. ապրիլի 16-ին.

ԳԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՈՐԱԳԻՐ ԵՐԶՐՈՒՄԻ ՌՈՒՍԱԿԱՆ 2-ՐԴ ԲԵՐԴԱՊԱՀ ՀՐԵՏԱՆԻ ԳՆԴԻ. № 2

1917 թվի կեսերին ռուսական կովկասյան բանակը թողեց մինչ այդ բռնած իր դիրքերը և, առանց գերագույն հրամանատարի կամ բանակի հրամանատարի հրամանի, յետ դարձավ տուն։ Բերդապահ ամրաձիգ գունդը հետևեց բանակին։ Դևե-Բոյունի ամրացած շրջանի և Երզրումի ամրաձիգ գնդից միայն քառասուն սպաներ իրենց տեղերումը մնացին։ Սրանք լքած լինելով իրենց զինվորներից, լոկ իրենց պարտքի զգացմունքին հավատարիմ, մնացին իրենց թնդանոթների մոտ։ Ամրացած դիրքերում 400-ից ավելի թնդանոթներ կային, վորոնք, փոխադրության միջոցների պակասության պատճառով, յետ չտարվեցին։ Պատվի և պարտքի զգացմունքը թելադրում եյին սպաներին սպասել բարձր հրամանատարության կարգադրությանը՝ կամ թողնել թնդանոթներն ու հեռանալ, կամ մնալով ամրություններում,

շարունակել նրանց պաշտպանության գործը։ Պետք եր զգացվում առաջին գնդի սպաների հետ զուգահեռաբար կազմակերպել նաև 2-րդ թնդանոթաձիգ գնդի զինվորների կազմ։

Յեվ վորովհետև ռուս բանակը հեռացել եր, ուստի Երզրումում կազմակերպվեց հայ հեղափոխական կոմիտե, վորը «Հայկական զինվորական միություն» անունն եր կրում։ Միևնույն ժամանակ բանակի հրամանատարը չերկրորդ թնդանոթաձիգ գնդին ուղարկեց 400 անփորձ հայեր, վորոնց մեծ մասը դասալքեցին, իսկ մնացյալները կարող եյին ծառայել ամրությունների մարտկոցներում լոկ վորպես պահակներ։

Բանակի յետ դառնալուց փոքր ինչ անց, յերբ Ռուսաստանի և Անդրկովկասի միջև յեղած կապը խզվեց, Թիֆլիսում ժամանակավոր մի կառավարություն կազմվեց, վորը «Անդրկովկասյան կոմիսարիատ» անվանվեց։ Կոմիսարիատը հայտարարեց, վոր նա նպատակ չունի անկախ կառավարություն դառնալու, այլ, ինչպես առաջ, նույնպես և այսուհետև, նա Ռուսաստանի անբաժան մասն ե կազմում և մինչև կարգ ու կանոնի հաստատվելն իր վրա չե վերցնում կենտրոնական կառավարության ներկայացուցչությունը։

1917 թ. դեկտեմբերի 17-ին Կոմիսարիատը տեղեկացրեց, վոր կազմալուծված ռուս բանակի տեղ կազմակերպվել ե ազգային սկզբունքի վրա հիմնված մի նոր բանակ, վորը բաղկացած ե լինելու զինվորական յերեք կորպուսներից, այն ե՝ մի ռուս, մի վրացի և մի մահմեդական կորպուսից և միքանի յել ավելի մանր ազգերից կազմված զորամասերից, ինչպես, որինակ՝ չերքեզների, ասերի, ասորիների և այլն։

Իր նախկին դրության մեջ եյին մնալու միայն Երզրումի և Դևե-Բոյունի դիրքերի թնդանոթաձիգները, մինչև վոր ռուս սպաների և հայ զինվորների մասին ապագայում մի վորոշում կլիներ։ Պարզ ե, վոր այս զորամասերը, վորոնց ղեկավարությունն ու կազմը ռուսների ձեռքումն եր, վոչ մի դեպքում հայկական չեյին կարող համարվել։ Դրանից հետո յել մենք վոչ մի հրաման չստացանք այս կազմի հայկական բնույթի մասին, ուստի նրանք, վորպես ռուս զորամասեր, ռուս սպաների հրամանատարության տակ եյին, ռուս բանակին եյին ծառայում և իրենց ռոճիկները ռուսական գանձարանից եյին ստանում։ Այն փաստը, վոր կրոնական ծեսերը ռուս քահանայի միջոցով ռուսերեն եյին կատարվում, դա ինքը մի նոր ապացույց եր զորքի զուտ ռուսական բնույթի։

Բանակի հեռանալուց հետո յերկու ամիսների ընթացքում զինվորական մասերում դեռևս կարգապահություն չեր հաստատվել։

Նրանք դեռ դասալքում, թալանում և իրենց սպաներին սպանում եյին, գտնվելով կատարյալ անարխիայի վիճակում։

Գնդապետ Թորգոմը, ըստ յերևույթին, մի բուլղարահայ, Երզրումի և նրա ամբողջ շրջանի բերդապետ նշանակվեց։

1918 թվի հունվարի կեսին հետևակ զորամասերի միքանի հայեր սպանեցին իր սեփական բնակարանում երզրումցի մի պատվավոր թյուրք քաղաքացու և տունն էլ թալանեցին։ Գլխավոր հրամանատար Օդիշելիձեն ժողովեց բոլոր զորամասերի պետերին և պահանջեց նրանցից ամենից ուշը յերեք որվա մեջ գտնել այդ դաժան հանցանք գործողին։ Ապա, դառնալով հայ սպաներին, նա ասաց, վոր հայ ազգի պատիվը այս գործի պատճառով վտանգված է, ուստի նրանց պարտքը պիտի լինի այս հանցանքի մեջ աշխարհի աչքում մաքուր դուրս գալ, ուստի նրանք ամեն ջանք պետք է գործ դնեն գտնելու հանցավորներին. «Վորովհետև, ավելացրեց նա, յեթե հայերին արատավորող այս չարագործությունները չդադարեն, այն ժամանակ յես ստիպված պետք է լինեմ մահմեդական ազգությանը զենք բաժանել, վորպեսզի նրանք հնարավորություն ունենան պաշտպանել իրենց կյանքը, ունեցվածքն ու գույքը»։

Գնդապետ Թորգոմը, լսելով այս մեղադրանքը, նեղացած տոնով պատասխանեց, վոր «անարդարացի յե միքանի անհատների կողմից կատարած հանցանքները մի ժողովրդի վրա բարդել»։ Այս առթիվ զորամասերի պետերը խոսք ուզեցին և առաջարկեցին կազմել զինվորական դատարան, վորը, ըստ պատերազմական որենքի, սպանությունը մահվան պատժով կպատժի։ Օդիշելիձեն պատասխանեց, վոր իր կողմից արդեն ձեռք են առնված անհրաժեշտ միջոցներ։

Յեթե չեմ սխալվում, հունվարի 25-ին գնդապետ Թորգոմը զորատես նշանակվեց և, իր զինվորական ուժը ազգաբնակությանը ցուցադրելու նպատակով, պատվիրեց 21 թնդանոթային զարկ տալ։ Այս առթիվ նա հայերին ճառ է արտասանում. այս ճառի մեջ, վորի մասին հաղորդում են գեներալ Օդիշելիձեյին, նա հայտարարում է հայերի անկախությունը և շեշտում է, վոր ինքը, վորպես նոր պետության գլուխ, ստանձնել է իշխանությունը։ Գեներալ Օդիշելիձեն հենց վոր իմանում է այս—յեթե ավելին չասենք, տարորինակ հայտարարության մասին, նոր պետության գլուխ գնդապետ Թորգոմին հեռացնել է տալիս Երզրումից։

Այս կարգադրությունը բավականաչափ պարզեց, վոր ռուս կառավարությունը, ինչ գնով և լինի, ցանկանում եր արգելել հայկական անկախ պետության հիմնվելուն։ Յես իմացա, վոր ռուսական

գլխավոր շտաբը քանիցս հիշեցրել է հայերին, վոր Երզրումում և այլ պահեստներում գտնված զինվորական գույքն ու սարքավորումը վորպեսզի ուրիշ զորքերի ձեռք չընկնեն, տրվում են հայերին միայն ժամանակավորապես։ Հետևապես զենքերը հայերին տրված եյին ի պահպանություն, և հենց վոր կարևոր կլիներ, այդ բոլորն իսկույն պետք է վերադարձվեյին։

Այս որերում հայերն աներևակայելի դաժան կոտորած եյին սարքել Յերզնկայի թշվառ թյուրք ազգաբնակության մեջ. թյուրքերը անզեն են լինում և պաշտպանվելու վորևե միջոցից զուրկ։ Հենց վոր թյուրքական զորքերի մոտենալու մասին լուր է հասնում, հայերը, կատարելով նորանոր վոճիրներ, փախչում են Երզրում։

Համաձայն գլխավոր հրամանատարին տեղում գտնված սպաների կողմից ուղարկված զեկուցման, հայերը Յերզնկայում 800 թյուրք են սպանում, և իրանց տմարդ հանցակիցներից միայն մի հոգի չի սպանվում, և այն թյուրքի ինքնապաշտպանության հետևանքով։

Մյուս կողմից հայերը Երզրումի մոտերքում գտնված Իլիջայում կոտորում են մահմեդականներին՝ առանց խնայելու կանանց ու յերեխաներին։

Փետրվարի 7-ին յես տեղեկացա հետևյալ դեպքի մասին։ Յես նկատեցի, վոր միլիցիան և տեղացի հայերը, միքանի հարյուր թյուրքերի ձգած առաջ, նրանց մի ինչ-վոր տեղ են տանում։ Յերբ յես հետաքրքրվեցի, թե ինչ նպատակով է դա արվում, ինձ պատասխանեցին, թե դրանց տանում են յերկաթուղու գծի վրա յեղած ձյունը մաքրել տալու։ Այս բացատրությունը բավարարեց ինձ։ Բայց այն պատմությունը, վոր յես այժմ անելու յեմ, ցույց կտա, թե վոր աստիճան ճիշտ եր դա։

Ժամը մոտ յերեքին իմ գնդի մի սպա՝ կապիտան Լիպսկին հեռախոսով հաղորդում է ինձ, վոր միքանի հայ զինվորներ փողոցներում բռնել են հինգ թյուրքեր և դրանց զորանոցների բակի մի անկյուն ձգելով, փայտերով անխնա ջարդում են և, անկասկած, դրանց ծեծամահ կանեն, և վոր ռուս սպայի ինպաստ այդ թշվառների արած միջամտությանն սպառնալիքներով են պատասխանել, վոր միաժամանակ մի հայ սպա, վորը նույնպես ներկա յե յեղել այդ տեսարանին, միացել է բանդիտներին և իր կողմից էլ արգելել է Լիպսկուն միջամտել։

Այս լուրն ստանալուն պես յես յերեք սպաների ուղեկցությամբ շտապեցի հանցանքի տեղը։ Ճանապարհին յես հանդիպեցի ինձ հետ հեռախոսող սպային և քաղաքապետ Ստավրովսկուն, վորոնք հայերի կողմից ձերբակալված իրենց մի թյուրք բարեկամին եյին փնտրում։

Լիպսկին հայտնեց ինձ, վոր հայերը զենքի ուժով արգելում են իրենց զորանոց մտնել։ Յես շարունակեցի իմ ճանապարհը։ Զորանոցի մոտ յես տեսա 12 թյուրքեր, վոր անցնում եյին․ նրանք սարսափահար փախչում եյին։ Յես կանգնեցրի նրանցից մեկին, բայց վորովհետև յես նրանց լեզուն չգիտեյի, ուստի մենք իրար չհասկացանք։ Վերջապես, մեծ դժվարությամբ աջողվեց ինձ զորանոց մտնել։ Յես իսկույն հարցուփորձ արի փողոցում ձերբակալված թյուրքերի մասին։ Զինվորները պնդում եյին, վոր զորանոցում վոչ մի թյուրք քաղաքացի չկա։ Յես սկսեցի փնտրել զորանոցի բոլոր անկյուններն ու ծակուծուկերը և գտա 70 մահմեդականներ այս քստմնելի տերրորի զոհերին բաղանիքի մեջ։ Յես իսկույն քննություն կատարեցի և այս հանցանքի հեղինակ վեց հայերի բռնել տվի։ Դրանից բացի, քննությունից իմացա, վոր մի հայ, վորի ով լինելը չկարողացա պարզել, գնդակահար է արել զորանոցի մոտ գտնված տան տանիքում յերևցած մի թշվառ թյուրքի։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր յես այս զազրելի վոճրի խեղճ զոհերին ազատեցի։ Քննության արձանագրությունները, վորպես նաև իմ դիվանի գրությունները, դրանց հետ նաև այն մահմեդականների, վորոնց յես ազատել եյի, անվանացուցակը յես կորցրի փետրվարի 27-ին, յերբ Երզրումը թյուրք զորքերի կողմից նորից գրավվեց։ Այս դեպքը կարելի յե հաստատել հարցուփորձի յենթարկելով այդ թյուրքերին, վորոնք ամեն անգամ, յերբ հանդիպում եյին ինձ, խորին շնորհակալություն եյին հայտնում։ Բացի դրանցից, Ալի-բեյ Պիպեյովը՝ քաղաքապետ Ստավրովսկու քարտուղարը, վորը կազմեց հիշածս ցուցակը և արձանագրությունը, համենայն դեպս, կհաստատի տեղի ունեցածը։

Քննությունը պարզեց, վոր այդորինակ հանցանքի դրդողը թնդանոթաձիգ գնդի յենթասպա Կարապետովն եր։ Նա, առած իր հետ այդպիսի հանցանքների սովոր միքանի հայ զինվորներ, առանց վախենալու ձեռնարկում է թյուրքերի տներ խուզարկել, յուրացնելով միաժամանակ տների կահկարասիքն ու տնտեսության իրերը։ Հենց նույն յերեկոյան այդ մասին հաղորդում են գլխավոր հրամանատարին, ներկայությամբ կառավարության կոմիսարի և նրա ոգնականի։ Նույն որը հայերը նորից սպանում են միքանի թյուրքեր և հրդեհում են թյուրքական շուկան։ Բոլորին հայտնի յեր, վոր այս որերում Երզրումում և նրա շրջակայքում տեղի յեն ունեցել միքանի սպանության դեպքեր։ Յես իմ ձեռքով բռնեցի մի հայի, վորը Թափթալի մոտերքին սպանել եր մի թյուրքի, և նրան յես բերդապահին հանձնեցի։ Քաղաքում պատմում եյին, վոր դաշտային աշխատանք-

ների գնացող թյուրքերն այլևս աշխատանքից չեյին վերադառնում, և վոր նրանց ուր մնալու մասին անկարելի յեր մի բան իմանալ։ Քաղաքային վարչությունը կորած մարդկանց մասին տեղեկացրել եր գլխավոր հրամանատարին։

Գլխավոր հրամանատարին մեր սպայակույտի կողմից ներկայացրած մեր դիմումի մեջ մենք, ինկատի ունենալով մեր կատարյալ անզորությունն ու անհնարությունը հայերի կողմից կատարվող վոճիրների առաջն առնելու, նրանից խնդրում եյինք, վոր մեզ թույլ տա Երզրումից հեռանալ, քանի վոր մենք վախենում եյինք արատավորել մեր կոչումը։ Ոդիշելիձեն հայտնեց մեզ այն ռադիո-հեռագիրը, վոր նա ստացել եր թյուրքական զորքի հրամանատար գեներալ Վեհիբ-փաշայից, վորով փաշան հայտնում եր իրեն, վոր նա հրաման է ստացել գրավել Յերզնկան և այնքան է առաջանալու, մինչև վոր շփման մեջ կմտնի ռուսաց զորքի հետ։ Վեհիբ-փաշան այնուհետև նկատում է, վոր սա միակ միջոցն է վերջ դնելու հայերի թյուրք ազգաբնակության վերաբերմամբ կատարած բարբարոսական խստություններին։

Դրա հետևանքով Անդրկովկասյան Կոմիսարիատն Ոսմանյան կառավարությանը հաշտություն է առաջարկել։ Իր պատասխան հեռագրի մեջ ոսմանյան զորքերի հրամանատարը հայտնել է, վոր Անդրկովկասյան կառավարության այս առաջարկն իր միջնորդության հետ միասին նա հայտնել է իր կառավարությանը։ Մեր կողմից ներկայացրած խնդրին գալով, գեներալ Ոդիշելիձեն կապվեց Անդրկովկասյան Կոմիսարիատի նախագահ Գեգեչկորիի և գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկու հետ։

Այնտեղից յեկած պատասխանի մեջ հաղորդվում եր, վոր հայոց Ազգային Ժողովին ներկայացված է մի վերջնագիր, վորի մեջ կտրականապես պահանջվում է, վոր վերջ արվի հայերի բոլոր վոճրագործություններին, իսկ ցավալի դեպքերի առաջն առնելու նպատակով վորպես լիազորներ Երզրում են ուղարկվում դոկտոր Զավրիևն ու Անդրանիկը։ Ինչ վերաբերում է սպաների դիմումին, Կոմիսարիատի խորհուրդը խնդրում է դրանց մնալ իրենց պաշտոններում, մինչև վոր ստացվի Ոսմանյան կառավարության կողմից հաշտության մասին սպասվող պատասխանը։ Խորհուրդն իր շնորհակալությունն է հայտնում սպաներին նրանց մատուցած ծառայությունների համար և ավելացնում է, վոր, յեթե Ռուսաստանին մի վտանգ սպառնա, ինքը վստահ է, վոր սպաներին մինչև վերջին վայրկյան իրենց դիրքերում կգտնեն։

Մյուս կողմից գլխավոր հրամանատարը զորքին ուղղած մի հրաման արձակեց, վորի մեջ սպաներին առաջարկում եր չթողնել իրենց

պաշտոնները և ավելացնում, որ նրանց կյանքն ու պատիվը պաշտպանելու նպատակով նա հայ հանցագործների դեմ ձեռք կառնի ամենախիստ միջոցներ:

Ահա այս պայմանով մենք մնացինք Երզրումում, վերջնական նպատակ դնելով պաշտպանել ռուսաց շահերը, գտնվելով միմիայն գլխավոր հրամանատարի հրամանի տակ: Շուտով մենք իմացանք, որ Ոսմանյան կառավարությունը համաձայնել է ընդունել Անդրկովկասյան Կոմիսարիատի առաջարկը և պատասխանել է, որ փետրվարի 17-ին Տրապիզոնում բացվելու յեն տեղի ունենալիք հաշտության բանակցությունները:

Մեր զորքերի հրամանատարը հաղորդեց բոլոր սպաներին, որ, քանի որ ոսմանյան զորքերի դեմ Երզրումում և նրա շրջակայքում վոչ մի թշնամական գործողություն կատարել չի յենթադրվում, ուստի մինչև հաշտություն կայացնելը մենք մնալու յենք Երզրումում և, նայած հաշտության պայմաններին, զենքերն ու պատերազմական գույքը կամ Ռուսաստան կտեղափոխվեն, կամ ամբողջովին ոսմանյան կառավարությանը կթողնվեն: Այն դեպքում, յեթե ոսմանյան զորքը փորձի, նախ քան հաշտություն կայացնելը, Երզրումը վերցնել, թնդանոթները պետք է անգործադրելի դարձնել, իսկ զորքն սպաների հետ կվերադառնա Ռուսաստան, և որ այս բոլորի մասին վերջնական հրամաններ կտրվեն ամենաքիչը յոթն որ առաջ:

Մեր այստեղ մնալու վճիռը նպաստավոր պայմանների մեջ դնելու համար նախ և առաջ հարկավոր եր, որ մենք ապահովեյինք մեզ քյուրդական հարձակումներից:

Զինադադարի շրջանում Ոսմանյան կառավարությունը հայտնեց մեզ, որ քյուրդերը վոչ մի հրամանի չեն յենթարկվում և գործում են ինչպես ուզում են: Այդ պատճառով ել զորքի հրամանատարը հունվարի մոտավորապես վերջերին վճռեց Երզրում-Յերզնկա գիծը համապատասխան թիվ թնդանոթներով ամրացնել և այդպիսով մեր ետապների պահեստները քյուրդերի թալաններից պաշտպանել: Ռազմական ամեն մի կետում մի սպա և յերկու թնդանոթ դրվեցին:

Յերբ հայերը Յերզնկայից Երզրում եյին վերադառնում, թնդանոթները նրանց հետ յետ բերվեցին: Փետրվարի 10-ին նույն նպատակով բոլոր դիրքերում, սկսած Բոյուք-Քիրեմիջիից—Տրապիզոն Սուրեպ-Միխան խճուղու վրա, նմանապես քաղաքի ռազմական միքանի կետերում յերկ-յերկու թնդանոթներ դրվեցին: Ինկատի ունենալով քյուրդերի հավանական հարձակումը Փալան-Թոքյանի կողմից, անհրաժեշտ եր նույնպես Կարսի և Խարբերդի դռներին թնդա-

նոթի համար դիրքեր բռնել: Այս թնդանոթները, վորոնք քյուրդերի հանկարծակի հարձակման առաջն առնելուն պետք է ծառայեյին և այդ նպատակի համար նրանք իրոք բավական եյին, իհարկե, չեյին կարող գործադրվել թյուրքական կանոնավոր զորքի դեմ, վորովհետև միքանի կրակումից հետո կռվի ասպարեզից նրանք կհեռացվեյին: Փետրվարի կեսերին հեռավոր դիրքերում գտնված թնդանոթները մենք մի տեղ ժողովեցինք և կենտրոնական պահեստ բերեցինք: Նույնն այժմ պետք եր անել ավելի մոտ տեղերում գտնված թնդանոթների վերաբերմամբ, մի բան, վորը, սակայն, չիրագործվեց: Միայն այն թնդանոթները, վորոնք քյուրդերի դեմ եյին դրված, դրանց բանալիները հանվեցին: Համենայն դեպս ոսմանյան զորքի կողմից մոտալուտ գործողություններ չեյին սպասվում, քանի որ կարգապահությունից զրկված թյուրքական զորքը լուրջ դիմադրության համար անընդունակ եր, ուստի մի ամսից շուտ չեր կարող նա առաջ շարժվել:

Փետրվարի 12-ին վոտից մինչև գլուխ զինված հայ բանդաները ցերեկով յերկաթուղու գծին մոտ տասն-տասներկու թյուրքեր են սպանում: Այս լրբության դեմ կատաղած, յերկու ռուս սպաներ միջամտել են ուզում, սակայն հայերը նրանց զենքով սպառնում են, և սրանք ուժի առաջ տեղի յեն տալիս, թողնելով թշվառ զոհերին իրենց բախտին:

Փետրվարի 13-ին գլխավոր հրամանատարը պաշարման դրություն է հայտարարում և զինվորական դատարան կարգում, վորը, ըստ հին որենքի, պետք է մահվան պատիժ տար: Գնդապետ Մորելն Երզրումի ամրությունների գլխավոր նշանակվեց, իսկ մի հայ՝ զինվորական դատարանի նախագահ: Նույն որը գլխավոր հրամանատարը և գեներալ Գերասիմովը քաղաքից հեռացան: Նրանք ուզում եյին այն դեպքում, յեթե կարիք լինի, թնդանոթները դուրս տանել, նրանց ժողովելու համար մի տեղ ընտրել: Յես մնացի Երզրումում ամրությունների հրետանու գլխավորի պաշտոնում: Գնդապետ Մորելի շտաբը կազմված եր բացառապես ռուս սպաներից, և շտաբի պետ եր գլխավոր շտաբի գնդապետ Շնաուերը:

Գլխավոր հրամանատարի մեկնումից հետո գնդապետ Մորելն իսկույն իր վերաբերմունքը փոխեց: Նա հայտարարեց, որ Երզրումը մինչև վերջին վայրկյան պետք է պաշտպանվի, ուստի սպաներին և զենք բանեցնելու ընդունակ բնակիչներին արգելեց քաղաքից հեռանալ: Յերբ յես զինվորական դատարանին հայտնեցի միքանի սպաների ցանկությունը՝ թույլ տալ իրենց Երզրումից հեռանալ, դատարանի անդամներից մեկը՝ Սողանյան ազգանունով պատասխանեց ինձ ադայական տոնով, որ յուրաքանչյուրին, ով քաղաքը թողնել

և հեռանալ կուզե, դրանց նա իր ձեռքով կսպանի, իսկ նրանք, ովքեր գաղտնի կերպով կփախչեն, նրանք Քյոփրի-քյոյ և Հասան-ղալա գտնված հայ կռվող ուժերի կողմից կձերբակալվեն և զինվորական դատի կտրվեն։ Յես հասկացա, վոր մենք թակարդի մեջ ենք գտնվում, վորից դուրս գալ խիստ դժվար ե լինելու, և վոր զինվորական դատարանը և պաշարման դրությունը վոչ այնքան բանդիտների դեմ գործելու համար եր, վորքան ռուս սպաների։

Բռնությունները քաղաքում առաջվա պես սանձարձակ իշխում եյին, և խեղճ, անզեն ու անպաշտպան թյուրքերը շարունակում եյին յենթարկվել հայերի հարձակումներին։ Իրենց միակ պաշտպանությունը նրանք փնտրում եյին ռուս սպաներից գտնել, վորոնք, սակայն, անկարող եյին այդ պաշտպանությունը տալ նրանց։ Իմ իրավասության տակ գտնվող սպաներից միքանիսին միայն աջողվում ե, այն էլ ուժի միջոցով, փողոցներում փրկել թյուրքերի կյանքը։ Զինվորական ինժեներ Կարպովը հրացանով գետին ե գլորում մի հայի, վորն որը ցերեկով փողոցում, մի թյուրք թալանելուց հետո, փախչում եր։ Այն խոստումը, թե բանդիտներից նրանք, ովքեր խաղաղ անզեն մահմեդականներին կսպանեն, խստորեն կպատժվեն—ըստ սովորության մեռած տառ մնաց։

Զինվորական դատարանը հայերի կողմից լինելիք վրեժի վախից քաշվում եր մի հայ անգամ դատապարտել, չնայած վոր նա մեծ մասամբ հայերի պահանջով եր կազմվել։ Թյուրքերը գուշակում եյին, վոր հայերից կազմված զինվորական դատարանն իր հայրենակիցներից վոչ մեկին էլ չի պատժի։ Ահա այստեղ եր, վոր նրանք պետք ե հասկանային այն առածի ճշմարտությունը, թե «գայլերը, միմյանց մեջ մնալով, իրարու չեն ուտում»։ Կռվի պլանի բոլոր հայերը, առած իրենց կանանց, փախչում եյին քաղաքից այն պատրվակի տակ, թե իրենք պարտական են պաշտպանել իրենց կանանց։

Յես իմացա, վոր յենթասպա Կարագեոզովին առանց իմ թույլտվության բանտից ազատ են արձակել։ Յերբ յես գնդապետ Մորելին հարցրի ազատ արձակման պատճառները, նա ինձ պատասխանեց. «Կարագեոզովի անմեղությունն ապացուցված ե մի նոր քննության միջոցով»։ Չնայած վոր իմ յերկու սպաները և յես այդ անցքի գլխավոր վկաներն եյինք, հենց մեզ եր, վոր այս քննության չեյին կանչել։ Դժգոհ գնդապետ Մորելի տված պատասխանից՝ մենք քննումեր գնդի հետ պայմանավորվեցինք վերանորոգել գործը և քննության թղթերը հանձնեցինք գնդապետ Ալեքսանդրովին։ Թաֆթայում բռնած մարդասպանը նույնպես անպատիժ մնաց։

Գնդապետ Մորելը խիստ յերկյուղ եր կրում, վոր Երզրումի ազգաբնակությունը մի որ կարող ե ապստամբություն բարձրացնել։

Փետրվարի 17-ին Երզրում ժամանեց Անդրանիկը նվաճած վայրերի կոմիսարի ոգնական դոկտոր Զավրիևի ուղեկցությամբ։ Յեվ վորովհետև մենք հայկական հարցի հետ ծանոթ չեյինք, չգիտեյինք, վոր Անդրանիկը թյուրք կառավարության կողմից մահվան դատապարտված հանցագործ ե։ Այս մանրամասնությունը յես առաջին անգամ իմացա մարտի 7-ին թյուրք հրամանատարի հետ ունեցած իմ զրույցի ժամանակ։

Անդրանիկն Երզրումում յերևաց ռուս բրիգադայի գեներալի համազգեստ հագած։ Նա կրում եր Վլադիմիրի IV և Գեորգիի II աստիճանի, վորպես նաև Գեորգիի զինվորական 2-րդ աստիճանի խաչի շքանշաններ։ Նրան ուղեկցում եր գլխավոր շտաբի պետ ռուս գնդապետ Զինկևիչը։ Անդրանիկի գալու նախորդ յերեկոյան գնդապետ Մորելը մեզ հաղորդեց, վոր, համաձայն Անդրանիկից ստացված հեռագրի, պետք ե Քյոփրի-քյոյում գնդացիրներ դնել գնդակահարելու այն բոլոր փախկոտներին, վորոնք Երզրումից փախչել են մտադրվում։ Անդրանիկը, հենց վոր յեկավ, անմիջապես վերցրեց իր վրա ամրությունների հրամանատարությունը. այդպիսով գնդապետ Մորելը յենթարկվում եր նրան, իսկ յես՝ Մորելին։

Հենց նույն որը, յերբ Անդրանիկը յեկավ, Թեփե-քյոյում, վորն իմ հրամանատարության շրջանումն եր գտնվում, բոլոր բնակիչները, նրանց թվում նաև կանայք և յերեխաները, կոտորվեցին։ Այս սոսկալի լուրը հաղորդեց ինձ շրջանի պաշտոնատար սպան։ Յես մեր առաջին խոսակցության ժամանակ այս մասին հաղորդեցի Անդրանիկին։ Իմ ներկայությամբ նա հրամայեց 20 ձիավորներ ուղարկել Թեփե-քյոյ և հանցավորներից գոնե մեկին բերել։ Մինչև որս էլ յես չգիտեմ, թե ինչ հետևանք ունեցավ այդ հրամանը։

Գնդապետ Թորգոմը նորից յերևաց քաղաքում, հենց վոր Երզրում յեկավ հայկական հրետանու գնդապետ Դոլուխանովը։ Սրա առաջին հայտարարությունն այն յեղավ, վոր ինքը, վորպես հրետանու գնդի տեսուչ, իպաշտոնե իմ գլխավորն ե լինելու։ Յես նրան պատասխանեցի, վոր լինելով իպաշտոնե դիվիզիայի հրամանատարի աստիճանում, յես պետերի կարիք չեմ զգում, իսկ յեթե հանգամանքներն այլ կերպ կդասավորվեն, ավելացրի յես, այդ դեպքում յես կհրաժարվեմ ծառայությունից։ Այդ առթիվ ինձ հայտնեցին, վոր գնդապետ Դոլուխանովն ամրությունների հրետանիների վարչական գործերը պետք ե վարի, ուստի և ինձ արվելիք հրամանները լինելու յեն վոչ թե իր, այլ, ինչպես և առաջ եր, Անդրանիկի անունից։ Մի որ հայ շտաբս-կապիտան Ջանփոլադյանը, վորն իմ հրամանատարության տակ գտնվող հրետանի բատարեյնի պետն եր, նույնպես փորձեց

միջամտել իմ գործերին։ Յերբ յես կարգադրեցի, վոր գիտական գործիքներն ու դինամոն յետ տարվեն, նա պատասխանեց, վոր ինքը թույլ չի տա, վոր այստեղից ռազմական նյութեղեններ տարվեն, վորովհետև հայերն անպայմանորեն մնալով Երզրումում, դրանց գործադրելու պետք կունենան։ Այս բացատրությունից պետք եր յեզրակացնել, վոր հայերը մտադիր եյին իրենց ձեռքն առնել հրամանատարական բոլոր պաշտոնները, իսկ ռուս սպաներին գործադրելու եյին լոկ վորպես իրենց հրամանակատարներ։ Նրանք ուզում եյին, առանց վոր վերջինների կողմից այդ աչքի ընկներ, ռուս սպաներին իրենց անկախության իրագործմանը ծառայեցնել, և վորովհետև ռուս սպաները նկատեցին, թե հայերն ինչ նպատակների յեն ձգտում, ուստի նրանց մեծամասնության հրաժարական տալով հայ սպաների թիվը պակասելու յեր։

Կովկասյան 7-րդ լեռնային հրետանի բատալյոնի գլխավոր գրնդապետ Պելխատի վերաբերմամբ յեղած անցուդարձը ցույց տվեց, թե ինչքան վախենում եյին հայերը հրետանու սպաների հրաժարականից։ Հենց վոր հայերն իմացան, վոր 7-րդ լեռնային հրետանի բատալյոնը պատրաստվում ե փետրվարի 7-ին Սարիղամիշ մեկնել, նույն ամսի 5-ին ձերբակալեցին նրա գլխավորին և, չնայած վոր համաձայն բանակի հրամանատարի հրամանի, նրան պետք ե ազատ թողնեյին, սակայն նույն փորձը նրանք յերեք անգամ կրկնեցին։

Երզրումի հայերն սպառնացին գլխավոր հրամանատարությանը, վոր յեթե թնդանոթները քաղաքից հեռացվեն, նրանք քաղաքն արյան մեջ կխեղդեն։ Դրա հետևանքով բանակի հրամանատարը հրետանին յետ տանելու մասին տված իր հրամանն ստիպված յեղավ յետ վերցնել։

Մեզ մնում եր պայմանավորվել 7-րդ հրետանի բատալյոնի հրամանատարի հետ։ Մենք ծածուկ վորոշեցինք, վոր յեթե հայերը ռուս սպաների վերաբերմամբ բռնություն գործադրեն և պաշտոնապես մեզ առաջարկեն պաշտպանել հայկական գործերը, մենք փոխադարձաբար իրարու պետք ե ոգնենք։ Մեր տրամադրության տակն եյին նյութական ուժի բոլոր միջոցները՝ թնդանոթները, գնդացիրները և սպաները։ Լեռնային հրետանու սպաները քաղաքում ապրում եյին, վորքան այդ հնարավոր եր, իրարու մոտ, իսկ մենք ամրությունների հրետանու տեղից վերադառնում եյինք քաղաքի թյուրքական մասը, ուր Երզրումը վերցնելուց հետո գտնվում եր մեր գլխավոր դիվանատունը, և հնար յեղածին չափ իրարու մոտ եյինք ապրում։

Անդրանիկի գալուց հետո գնդապետ Մորելի շրջանում Երզրումի բնակչության ապստամբության մասին յեղած վախերն ավելացան։ Գնդապետ Մորելը պատվիրեց Մեջիդիյե ամրությունը կառավարելու համար մի հմուտ սպա ուղարկել, վորպեսզի նա ապստամբության դեպքում գլխավորներին ձերբակալելու նպատակով ղեկավարի քաղաքի ռմբակոծությունը։ Մենք բոլորս թյուրքական քաղաքամասը թողնելու և հայկական թաղերը տեղափոխվելու հրաման ստացանք։ Յեվ վորովհետև յերկու տարիներից իվեր մենք թյուրքական քաղաքամասում եյինք ապրում և մահմեդականների հետ ամենալավ հարաբերությունների մեջ եյինք, ուստի այդ առաջարկը գտանք առնվազն տարորինակ։

Ռուս հրետանու սպաները միաձայն բացատրեցին, վոր յեթե նրանք ծառայության մեջ են մնացել, դա նրա համար ե, վորպեսզի կռվեն արժանավոր հակառակորդի հետ և վոչ թե նրա համար, վորպեսզի կրակ բացեն կանանց ու յերեխաների վրա, քանի վոր բոլորովին պարզ եր, վոր հայերը, պատրվակ բռնելով թյուրքական առաջիկա ապստամբությունը, պահանջելու եյին, վոր կրակը բացվի քաղաքի թյուրքական թաղերի վրա։ Ինչ վերաբերում ե հայկական թաղ փոխադրվելու հարցին, դա, ասացինք մենք, յերեք պատճառներով անիրագործելի յե,—առաջինը, վոր անհնար ե ներկայումս տեղափոխությունը գլուխ բերել, յերկրորդ՝ հենց վոր ռուս սպաները թյուրքական մասից հեռանան, ինքնըստինքյան հասկանալի յե, վոր առաջ կգա մի նոր կոտորած, և յերրորդ, ինկատի ունենալով, վոր վերջերում ռուս սպաների և հայերի միջև փոխադարձ վստահության հնարավորությունները խախտված են, ուստի ռուսները չեն վստահում հայերի մեջ ապրել։

Լեռնային հրետանու բատալյոնի սպաները, վորոնք Երզրումի ամրությունների զինվորական կազմին չեյին պատկանում, հայկական թաղ փոխադրվելու առաջարկը նույնպես մերժեցին։ Հայերը, վերջապես, տեսնելով, վոր իրենց վոչինչ չի մնում, քան այն, վոր իրենք իրենց կեղտոտ գործերը պետք ե գլուխ բերեն, միքանի կասկածելի խռովարարների ձերբակալեցին։

Յեվ քանի վոր գնդապետ Մորելի քաղաքը ռմբակոծելու առաջարկը շատ եր տարորինակ, յես հարկավոր համարեցի իմ հրամանատարության տակ գտնված բոլոր սպաներից մի ժողով գումարել։ Յերեք որվա մեջ յերկու ժողով ունեցանք։ Առաջին ժողովին ներկա եյին Երզրումի բոլոր հրետանու սպաները, ապա՝ միքանի որ դրանից առաջ Երզրում յեկած յերկու անգլիացի սպաներ, հետո գնդապետներ Մորելը, Զինկևիչը, Դոլուխանովը և Թորգոմը, Անդրանիկն ու դոկտոր Զավրիևը։ Անգլիացի սպաներին հրավիրելով մենք ուզում եյինք ցույց տալ նրանց ռուս սպաների և հայ հրա-

մանատարների միջև ստեղծված հարաբերությունները. Նրանք թող իրենք յեզրակացնեն, թե ինչ միջոցների յեն դիմում ռուսները հայերի վոճրագործություններից ազատվելու համար, և յերբ նրանք տուն կվերադառնան, իրենց ստացած դիտողությունների համար շատ շահեկան ապացույցներ կունենան: Յեվ վորովհետև յես անձնապես ինձ յենթակա վոչ հետախուզային և վոչ էլ հեռագրական վարչություն չունեյի, ուստի յես համոզված եյի, վոր իմ խփած հեռագրները յերբեք իրենց նպատակին չեն հասնում: Դրա համար էլ յես ոգտվեցի այս ժողովի ինձ ընձեռած առիթից և այն բոլորը, ինչ վոր յես տեսել եյի և հայերի տմարդությունների և զզվելիությունների մասին ինչ վոր հաստատ աղբյուրներից լսել եյի, մանրամասն նկարագրեցի: Յես պատկերացրի ունկնդիրների առաջ հայ զորամասերում տիրող կարգապահության բացակայության աստիճանը և վորպես որինակներ բերեցի այն, ինչ վոր լսել եյի գեներալ Ոդիշելիձեյից: Իմ ճառը յես վերջացրի հետևյալ խոսքերով. «Մենք Երզրումում մնացող ռուս սպաներս մեզ յերբեք նպատակ չենք դրել մեր համազգեստը հայերի զզվելի տմարդությունների համար ծածկույթի տեղ ծառայեցնել, այլ մենք ցանկություն ունենք, յենթարկվելով միմիայն մեր գլխավորներին, պաշտպանել Ռուսաստանը: Յեվ յեթե մեր Երզրումում գտնված միջոցին հայերի կողմից տմարդությունները չդադարեն, ավելացրի յես, այն ժամանակ բոլոր ռուս սպաներս ստիպված պետք է լինենք թողնել քաղաքն ու մեր ծառայությունը»: Միքանի սպաներ, վորոնք ինձնից հետո խոսք առան, ամենախիստ արտահայտություններով հաստատեցին իմ այս հայտարարությունը:

Անդրանիկն իր պատասխանի մեջ շեշտեց, վոր հայերը հավիտյան շնորհակալ են Ռուսաստանից, նա ասաց, վոր հայերը կազմել են մեծ Ռուսաստանի ազգաբնակության անբաժանելի մասը և չեն ունեցել այլ ձգտումներ, քան այն, ընչին վոր ձգտել է Ռուսաստանը: Ինչ վերաբերում է հայերի կողմից կատարած կոտորածներին, դրանք հետևանք են հայերի և թյուրքերի մեջ գոյություն ունեցող թշնամության: Նա ավելացրեց, վոր իր Երզրում գալու գլխավոր նպատակը կայանում է նրանում, վորպեսզի վերջ դնի այդորինակ հանցագործություններին, և յեթե նրան չհաջողվի այդ խնդրում հայերին խելքի բերել, նա ինքն առաջինը կլինի, վոր կհեռանա քաղաքից:

Ժողովի խոսակցությունները տեղի եյին ունենում թարգմանի միջոցով: Գալով սպաների կողմից դրված քաղաքից հեռանալու հարցին, Անդրանիկն ասաց, վոր բոլոր նրանք, վորոնք իրենց քաջու-

թյան վրա հույս չունեն—այդպիսիները կարող են հեռանալ, և ինքն իր կողմից, վորքան հնարավոր է, կոգնի դրանց այստեղից գնալուն:

Գնդապետ Զինկևիչը բոլոր ներկա յեղողներին բացատրեց, վոր «միայն համոզմամբ, վոր ռուս սպաների Երզրումում մնալը Ռուսաստանի ոգտին է ծառայում—յես պատրաստ եմ այստեղ մնալ»: Վերջում բոլոր սպաները վորոշեցին—սպասել ելի տաս որ, վորպեսզի իրենց վարմունքը համաձայնեցնեն գալիք դեպքերին, վորոնք կամ կհաստատեն Անդրանիկի տված խոստումները, կամ կժխտեն այն»:

Այս ժողովը տեղի ունեցավ փետրվարի 20-ին կամ 21-ին: Դրանից քիչ հետո գնդապետ Դոլուխանովը ինձ իր զարմանքը հայտնեց իմ և միքանի ուրիշ սպաների այն ատելության, նույնիսկ զզվանքի առիթով, վոր տածում են ռուս սպաները դեպի հայերը: Հետևյալ որերում Անդրանիկը պատերին փակցրած թյուրքերեն լեզվով մի կոչով հայտարարում եր, վոր յեթե մեկն ու մեկն սպանի մահմեդականի թե հայի, կձերբակալվի և նույնանման պատժի կարժանանա. և հետո, թե թյուրքերն առանց վախենալու կարող են նորից իրենց պարապմունքները վերսկսել, և վոր յեթե դաշտային աշխատանքների տարված վորևե մահմեդական աշխատանքից յետ չդառնա, այն ժամանակ նա պատասխանատվության կկանչի վոստիկանության ամբողջ կազմին:

Յերբ յես մոտակա որերում հայ գնդապետ Զանփոլադյանի ուղեկցությամբ ձիով անցնում եյի քաղաքի փողոցներով, մենք տեսանք բազմաթիվ մարդկանց, վորոնք կարդում եյին պատերին փակցրած այդ հայտարարությունը: Զանփոլադյանը հավատացնում եր այդ թյուրքերին, վոր յեթե մահմեդական ազգաբնակությունը վոտքի չկանգներ, այդ դեպքում նրանք հայերից վախենալու վոչ մի հիմք չպետք է ունենան: Նրանք պատասխանեցին, վոր յերկու տարիներից իվեր մահմեդականները վոչ մի այնպիսի գործ չեն կատարել, վորի համար կարելի լիներ պատժել նրանց, և վոր իրանցից և վոչ մեկը վոչ մի դիտավորություն չունի առաջիկայում այդորինակ մի բան անել. Նրանք խնդրում են միայն, վոր անզեն և անպաշտպան մահմեդականներին չսպանեն: Յես խնդրեցի գնդապետին, վոր նա ասի այդ մարդկանց, վոր յես ռուսական հրետանու հրամանատարն եմ, և բացատրի դրանց, վոր յես և իմ ռուս ընկերները համակրանքով ենք վերաբերվել դեպի մահմեդականները և այսուհետև էլ նույն վերաբերմունքը կունենանք դեպի խեղճ մարդիկ: Ներկա գտնվող միքանի թյուրքեր, մանավանդ դրանցից յերկու-յերեքը հաստատեցին իմ ասածները և ասացին, վոր յես փետրվարի 7-ի կոտորածների ժամանակ նրանց կյանքը փրկել եմ:

Զանփոլադյանը, վոր մեր միջնորդ-թարգմանն եր, ինքը հայկական կոմիտեյի անդամ եր։

Յերկրորդ ժողովին ներկա եյին միայն ռուս սպաները։ Միակ կողմնակի անձը, վոր թույլ եր տրված ներկա լինելու, դոկտոր Զավրիևն եր։ Քննության եյին դրված հետևյալ կետերը։ Պետք ե խնդրել, վորպեսզի Երզրումի ամրությունների 2-րդ հրետանի գնդի գրությունը հասկացվի այն մտքով, վոր նա վոչ թե հայկական մի գունդ ե, ինչպես այդ յերևակայում են, այլ վոր նա ռուսական ե, վոր վոչ մի սպա իրավունք չունի ինքնակամ հայկական ծառայության մեջ մտնել, և մեզնից վոչվոք չպետք ե այդ մտքով նրան արած առաջարկությունն ընդունի։ Յեվ քանի վոր գունդը ռուսական ե, մենք պետք ե պնդենք, վոր այսուհետև ել մենք մնալու յենք ռուսական, իսկ յեթե մեզ հայկական գունդ են դարձնելու, մենք խնդրում ենք, վորպեսզի թույլ տան մեզ ինքնակամ կերպով հեռանալու քաղաքից ռուսաց բանակի մեջ ծառայելու համար, վոր պաշարողական գրությունը միայն նրա համար եր, վորպեսզի այն սպաներին, վորոնք ցանկանում են հեռանալ, վոչ կովկասյան, այլ ուրիշ ճակատներում ծառայելու, այդպիսիներին պաշտոնանկ անելը վերացվի։ Իսկ մյուս կողմից յեթե հաստատվի պտտվող այն զրույցը, թե Անդրկովկասը բաժանվում ե Ռուսաստանից, այդ դեպքում միանգամայն անհրաժեշտ ե թույլ տալ, վոր ռուս սպաներն այստեղից հեռանան և այս յերկրում վորպես օտարականներ չմնան։

Յերկար վիճաբանություններից հետո մենք այն յեզրակացության յեկանք, վոր, համաձայն ստացված շրջաբերականի, յուրաքանչյուր սպա իրավունք ունի խնդիր տալ, վորպեսզի իրեն կամ ռուսական մի այլ բանակ փոխադրեն, կամ թե զինվորական մինիստրության տրամադրության տակ թողնեն։ Այդ պատճառով ել յես ասացի, վոր ամեն մի այդօրինակ դիմում համապատասխան հաստատության ուղարկվի։

Ժողովի մեջ, վորպես աչքի ընկնող փաստ, մեջ բերվեց 7-րդ կովկասյան լեռնային հրետանի բատալյոնի շտաբս-կապիտան Յերմոլովի գլխին պատահածները։ Սա խնդրել եր, վոր իրեն ազատեն հայկական մի նոր բատալյոնում ծառայելուց, վորպիսի նշանակում արդեն տեղի յեր ունեցել։

Գնդապետ Մորելն սկզբում փորձել եր յետ պահել նրան այդ մտադրությունից. բայց, ինկատի առնելով Յերմոլովի հաստատ վորոշումը, Մորելը շտաբս-կապիտանի խնդրի վրա մակագրել եր, վոր հիշյալ սպան ապացուցում ե, վոր իր կոչմանն անհամապատասխան ե, ուստի նրա առաջարկով գլխավոր շտաբը հրամայում ե Յերմոլովին

24 ժամվա ընթացքում թողնել Երզրումը։ Յեվ ահա այդպիսի մի արժանավոր սպայի պատիվը շոշափվում ե լոկ այն պատճառով, վոր նա չի ուզում հայոց շահերին ծառայել. թող թույլ տրվի պարզորեն ասել, վոր գնդապետ Մորելը հայերի կողմն ե անցել։

Դոկտոր Զավրիևը բառ առ բառ կրկնեց այն, ինչ վոր նախորդ ժողովում Անդրանիկն եր ասել։ Նա ասաց, վոր մինչև հաշտության կնքումը Երզրումը ծառայում ե Ռուսաստանի շահերին, և վոր այն սպաները, վորոնք պատկանում են քաղաքակիրթ ազգերին, իրավունք չունեն այնպիսի մտածելակերպ ունենալ, ինչպես, որինակ, թե «թող հայերն ու թյուրքերն իրենց մեջ յեղած հաշիվները մաքրեն. թող նրանք իրար վիզ կտրեն, ինչու պետք ե, դրողը տանի, մենք խառնվենք նրանց հաշիվների մեջ»։ Իր ճառի վերջում, վորը ցանկալի տպավորություն չարեց, դոկտոր Զավրիևը հայտնեց, վոր «յեթե մենք մարդկությանը ծառայելու նպատակ ունենք, մեր պարտքը պիտի համարենք մնալ Երզրումում և թույլ չտալ թյուրքերին կոտորել»։

Անդրանիկի խոստումները չկատարվեցին. մահմեդական ազգաբնակությունը նրանց այլևս հավատ չեր ընծայում։ Խանութները դարձյալ փակ եյին, իսկ տեռորը շարունակում եր իշխել։ Մահմեդական քաղաքամասում վոչվոք չեր յերևում։ Միայն քաղաքային վարչության տան մոտերքում գտնված միքանի խանութպաններ բացում եյին լուսամուտները. այստեղ ցերեկով ժողովվում եյին միքանի զույգ մահմեդականներ միայն։

Վոչ մի հայ չպատժվեց, և վորպեսզի պահպանված լինի հայերի անմեղսակցության գաղափարը, նրանք կեղծավորաբար հարցնում եյին — միթե Անդրանիկի խոստումը կատարելու համար պետք ե անմեղներին պատժել։ Սակայն ռուս սպաները պատասխանում եյին — չե՞ վոր հենց իրենք անձամբ բռնել են զանազան հայ հանցավորներ, և վարչությունը դրանց բաց ե թողել. այս անհերքելի հակասությունը, սակայն, լռության եր մատնվում։ Սպանությունները շարունակվում եյին, միայն թե այժմ նրանք փոքր ինչ ծածուկ եյին կատարվում։ Դրանք տեղի յեն ունենում հեռու ընկած գյուղերում և ռուս սպաների աչքերից հեռու։ Երզրումի շրջակայքի թյուրք բնակիչներն անհետանում եյին, և նրանց բախտի մասին վոչ մի բան չեր կարելի լինում իմանալ։

Քաղաքում, ապստամբության հնարավորության պատրվակի տակ, նորից ձերբակալություններ եյին կատարվում։ Իմ կողմից արված հեղնական այն հարցին, թե ինչ են լինում ձերբակալվածները, արդյո՞ք նրանց սպանվելու վտանգ չի սպառնում — գնդապետ Մորելը

մանատարների միջև առեղծված հարաբերությունները· նրանք թող իրենք յեզրակացնեն, թե ինչ միջոցների չեն դիմում ռուսները հայերի ոճրագործություններից ազատվելու համար, և յերբ նրանք տուն կվերադառնան, իրենց ստացած դիտողությունների համար շոշափելի ապացույցներ կունենան։ Յեվ վորովհետև յես անձնապես ինձ յենթակա վոչ հետախուզային և վոչ ել հեռագրական վարչություն չունեյի, ուստի յես համոզված եյի, վոր իմ խփած հեռագրները յերբեք իրենց նպատակին չեն հասնում։ Դրա համար ել յես ոգտվեցի այս ժողովի ինձ ընձեռած առիթից և այն բոլորը, ինչ վոր յես տեսել եյի և հայերի ամարդությունների և գզվելությունների մասին ինչ վոր հաստատ աղբյուրներից լսել եյի, մանրամասն նկարագրեցի։ Յես պատկերացրի ունկնդիրների առաջ հայ զորամասերում տիրող կարգապահության բացակայության աստիճանը և վորպես որինակներ բերեցի այն, ինչ վոր լսել եյի գեներալ Ոդիշելիձեյի բերնից։ Իմ ճառը յես վերջացրի հետևյալ խոսքերով. «Մենք Երզրումում մնացող ռուս սպաներս մեզ յերբեք նպատակ չենք դրել մեր համազգեստը հայերի գզվելի ամարդությունների համար ծածկույթի տեղ ծառայեցնել, այլ մենք ցանկություն ունենք, յենթարկվելով միմիայն մեր գլխավորներին, պաշտպանել Ռուսաստանը։ Յեվ յեթե մեր Երզրումում գտնված միջոցին հայերի կողմից ամարդությունները չդադարեն, ավելացրի յես, այն ժամանակ բոլոր ռուս սպաներս ստիպված պետք է լինենք թողնել քաղաքն ու մեր ծառայությունը»։ Մի քանի սպաներ, վորոնք ինձնից հետո խոսք առան, ամենախիստ արտահայտություններով հաստատեցին իմ այս հայտարարությունը։

Անդրանիկն իր պատասխանի մեջ շեշտեց, վոր հայերը հավիտյան շնորհակալ են Ռուսաստանից, նա ասաց, վոր հայերը կազմել են մեծ Ռուսաստանի ազգաբնակության անբաժանելի մասը և չեն ունեցել այլ ձգտումներ, քան այն, ընչին վոր ձգտել է Ռուսաստանը։ Ինչ վերաբերում է հայերի կողմից կատարած կոտորածներին, դրանք հետևանք են հայերի և թյուրքերի մեջ գոյություն ունեցող թշնամության։ Նա ավելացրեց, վոր իր Երզրում գալու գլխավոր նպատակը կայանում է նրանում, վորպեսզի վերջ դնի այդորինակ հանցագործություններին, և յեթե նրան չհաջողվի այդ խնդրում հայերին խելքի բերել, նա ինքն առաջինը կլինի, վոր կհեռանա քաղաքից։

Ժողովի խոսակցությունները տեղի եյին ունենում թարգմանի միջոցով։ Գալով սպաների կողմից դրված քաղաքից հեռանալու հարցին, Անդրանիկն ասաց, վոր բոլոր նրանք, վորոնք իրենց քաջու-

թյան վրա հույս չունեն—այդպիսիները կարող են հեռանալ, և ինքն իր կողմից, վորքան հնարավոր է, կոգնի դրանց այստեղից գնալուն։

Գնդապետ Զինկևիչը բոլոր ներկա յեղողներին բացատրեց, վոր «միայն համոզմամբ, վոր ռուս սպաների Երզրումում մնալը Ռուսաստանի ոգտին է ծառայում—յես պատրաստ եմ այստեղ մնալ»։ Վերջում բոլոր սպաները վորոշեցին—սպասել ելի տաս որ, վորպեսզի իրենց վարմունքը համաձայնեցնեն գալիք դեպքերին, վորոնք կամ կհաստատեն Անդրանիկի տված խոստումները, կամ կժխտեն այն»։

Այս ժողովը տեղի ունեցավ փետրվարի 20-ին կամ 21-ին։ Դրանից քիչ հետո գնդապետ Դոլուխանովն ինձ իր զարմանքը հայտնեց իմ և մի քանի ուրիշ սպաների այն ատելության, նույնիսկ զզվանքի առիթով, վոր տածում են ռուս սպաները դեպի հայերը։ Հետևյալ որերում Անդրանիկը պատերին փակցրած թյուրքերեն լեզվով մի կոչով հայտարարում եր, վոր յեթե մեկն ու մեկն սպանի մահմեդականի թե հայի, կձերբակալվի և նույնժամյան պատժի կարժանանա. և հետո, թե թյուրքերն առանց վախենալու կարող են նորից իրենց պարապմունքները վերսկսել, և վոր յեթե դաշտային աշխատանքների տարված վորևե մահմեդական աշխատանքից յետ չդառնա, այն ժամանակ նա պատասխանատվության կկանչի վոստիկանության ամբողջ կազմին։

Յերբ յես մոտակա որերում հայ գնդապետ Զանփոլադյանի ուղեկցությամբ ձիով անցնում եյի քաղաքի փողոցներով, մենք տեսանք բազմաթիվ մարդկանց, վորոնք կարդում եյին պատերին փակցրած այդ հայտարարությունը։ Զանփոլադյանը հավատացնում եր այդ թյուրքերին, վոր յեթե մահմեդական ազգաբնակությունը վոտքի չկանգներ, այդ դեպքում նրանք հայերից վախենալու վոչ մի հիմք չպետք է ունենան։ Նրանք պատասխանեցին, վոր յերկու տարիներից իվեր մահմեդականները վոչ մի այնպիսի գործ չեն կատարել, վորի համար կարելի լիներ պատժել նրանց, և վոր իրանցից և վոչ մեկը վոչ մի դիտավորություն չունի առաջիկայում այդորինակ մի բան անել. Նրանք խնդրում են միայն, վոր անզեն և անպաշտպան մահմեդականներին չսպանեն։ Յես խնդրեցի գնդապետին, վոր նա ասի այդ մարդկանց, վոր յես ռուսական հրետանու հրամանատարն եմ, և բացատրի դրանց, վոր յես և իմ ռուս ընկերները համակրանքով ենք վերաբերվել դեպի մահմեդականները և այսուհետև ել նույն վերաբերմունքը կունենանք դեպի խեղճ մարդիկ։ Ներկա գտնվող մի քանի թյուրքեր, մանավանդ դրանցից յերկու-յերեքը հաստատեցին իմ ասածները և ասացին, վոր յես փետրվարի 7-ի կոտորածների ժամանակ նրանց կյանքը փրկել եմ։

Զանփոլադյանը, որ մեր միջնորդ-թարգմանն էր, ինքը հայկական կոմիտեյի անդամ էր։

Յերկրորդ ժողովին ներկա եյին միայն ռուս սպաները։ Միակ կողմնակի անձը, որ թույլ էր տրված ներկա լինելու, դոկտոր Զավրիևն էր։ Քննության եյին դրված հետևյալ կետերը։ Պետք է խնդրել, որպեսզի Երզրումի ամրությունների 2-րդ հրետանի գնդի դրությունը հասկացվի այն մտքով, որ նա ոչ թե հայկական մի գունդ է, ինչպես այդ յերևակայում են, այլ որ նա ռուսական է, որ ոչ մի սպա իրավունք չունի ինքնակամ հայկական ծառայության մեջ մտնել, և մեզնից ոչվոք չպետք է այդ մտքով նրան արած առաջարկությունն ընդունի։ Յեվ քանի որ գունդը ռուսական է, մենք պետք է պնդենք, որ այսուհետև էլ մենք մնալու յենք ռուսական, իսկ յեթե մեզ հայկական գունդ են դարձնելու, մենք խնդրում ենք, որպեսզի թույլ տան մեզ ինքնակամ կերպով հեռանալու քաղաքից ռուսաց բանակի մեջ ծառայելու համար, որ պաշարողական դրությունը միայն նրա համար էր, որպեսզի այն սպաներին, որոնք ցանկանում են հեռանալ, ոչ կովկասյան, այլ ուրիշ ճակատներում ծառայելու, այդպիսիներին պաշտոնանկ անելը վերացվի։ Իսկ մյուս կողմից յեթե հաստատվի պտտվող այն զրույցը, թե Անդրկովկասը բաժանվում է Ռուսաստանից, այդ դեպքում միանգամայն անհրաժեշտ է թույլ տալ, որ ռուս սպաներն այստեղից հեռանան և այս յերկրում որպես օտարականներ չմնան։

Յերկար վիճաբանություններից հետո մենք այն յեզրակացության յեկանք, որ, համաձայն ստացված շրջաբերականի, յուրաքանչյուր սպա իրավունք ունի խնդիր տալ, որպեսզի իրեն կամ ռուսական մի այլ բանակ փոխադրեն, կամ թե զինվորական մինիստրության տրամադրության տակ թողնել։ Այդ պատճառով էլ յես ասացի, որ ամեն մի այդօրինակ դիմում համապատասխան հաստատության ուղարկվի։

Ժողովի մեջ, որպես աչքի ընկնող փաստ, մեջ բերվեց 7-րդ կովկասյան լեռնային հրետանի բատալյոնի շտաբս-կապիտան Յերմոլովի գլխին պատահածները։ Սա խնդրել էր, որ իրեն ազատեն հայկական մի նոր բատալյոնում ծառայելուց, որպիսի նշանակում արդեն տեղի չէր ունեցել։

Գնդապետ Մորելն սկզբում փորձել էր յետ պահել նրան այդ մտադրությունից. բայց, ինկատի առնելով Յերմոլովի հաստատ վորոշումը, Մորելը շտաբս-կապիտանի խնդրի վրա մակագրել էր, որ հիշյալ սպան ապացուցում է, որ իր կոչմանն անհամապատասխան է, ուստի նրա առաջարկով գլխավոր շտաբը հրամայում է Յերմոլովին

24 ժամվա ընթացքում թողնել Երզրումը։ Յեվ ահա այդպիսի մի արժանավոր սպայի պատիվը շոշափվում է լոկ այն պատճառով, որ նա չի ուզում հայոց շահերին ծառայել. թող թույլ տրվի պարզորեն ասել, որ գնդապետ Մորելը հայերի կողմն է անցել։

Դոկտոր Զավրիևը բառ առ բառ կրկնեց այն, ինչ որ նախորդ ժողովում Անդրանիկն էր ասել։ Նա ասաց, որ մինչև հաշտության կնքումը Երզրումը ծառայում է Ռուսաստանի շահերին, և որ այն սպաները, որոնք պատկանում են քաղաքակիրթ ազգերին, իրավունք չունեն այնպիսի մտածելակերպ ունենալ, ինչպես, օրինակ, թե «թող հայերն ու թյուրքերն իրենց մեջ յեղած հաշիվները մաքրեն. թող նրանք իրար վիզ կտրեն, ինչո՞ւ պետք է, դրողը տանի, մենք խառնվենք նրանց հաշիվների մեջ»։ Իր ճառի վերջում, որը ցանկալի տպավորություն չարեց, դոկտոր Զավրիևը հայտնեց, որ «յեթե մենք մարդկությանը ծառայելու նպատակ ունենք, մեր պարտքը պիտի համարենք մնալ Երզրումում և թույլ չտալ թյուրքերին կոտորել»։

Անդրանիկի խոստումները չկատարվեցին. մահմեդական ազգաբնակությունը նրանց այլևս հավատ չէր ընծայում։ Խանութները դարձյալ փակ եյին, իսկ տերրորը շարունակում էր իշխել։ Մահմեդական քաղաքամասում ոչվոք չէր յերևում։ Միայն քաղաքային վարչության տան մոտերքում գտնված միքանի խանութպաններ բացում եյին լուսամուտները. այստեղ ցերեկով ժողովվում եյին միքանի զույգ մահմեդականներ միայն։

Ոչ մի հայ չպատժվեց, և որպեսզի պահպանված լինի հայերի անմեղսակցության գաղափարը, նրանք կեղծավորաբար հարցնում եյին—միթե Անդրանիկի խոստումը կատարելու համար պետք է անմեղներին պատժել։ Սակայն ռուս սպաները պատասխանում եյին—չէ՞ որ հենց իրենք անձամբ բռնել են զանազան հայ հանցավորներ, և վարչությունը դրանց բաց է թողել. այս աններքելի հակասությունը, սակայն, լռության էր մատնվում։ Սպանությունները շարունակվում եյին, միայն թե այժմ նրանք փոքր ինչ ծածուկ եյին կատարվում։ Դրանք տեղի յեն ունենում հեռու ընկած գյուղերում և ռուս սպաների աչքերից հեռու։ Երզրումի շրջակայքի թյուրք բնակիչներն անհետանում եյին, և նրանց բախտի մասին ոչ մի բան չէր կարելի լինում իմանալ։

Քաղաքում, ապստամբության հնարավորության պատրվակի տակ, նորից ձերբակալություններ եյին կատարվում։ Իմ կողմից արված հեգնական այն հարցին, թե ինչ են լինում ձերբակալվածները, արդյո՞ք նրանց սպանվելու վտանգ չի սպառնում—գնդապետ Մորելը

պատասխանեց, վոր կալանավորների մի մասն ապահով հսկողության տակ Թիֆլիս է ուղարկվում, իսկ մի մասը մնում է այստեղ վորպես պատանդ: Հայ բանդաները, վորոնք դասալիք հայ զինվորներից եյին կազմված, փողոցներում սպանում եյին անցորդներին մասամբ վախից ստիպված, մասամբ նրանց ունեցվածքը յուրացնելու նպատակով: Յերկու դեպքերումն ել թալանն անխուսափելի չեր:

Անդրանիկի գալուց առաջ կռվող զինվորները հրաժարվում եյին ճակատ գնալ: Նրա գալուց հետո թեև նրա հրամանին հնազանդվում եյին, սակայն նրանք վախկոտորեն փախչելու համար ոգտվում եյին ամեն մի հարմար առիթից: Անդրանիկը, ձիու վրա նստած, փորձեց թրով ու բռունցքների ուժով նրանց խմբի ժողովել: Ամեն մի հայի գերագույն ցանկությունն եր տեսնել իրեն ռուսական հրետանու գլխին կանգնած: Նրանք չեյին կարողանում հաշտվել այն բանի հետ, վոր ամրությունների թնդանոթները լավ կրթված թնդանոթաձիգների և բավական թվով հետևակների տրամադրության տակ են գտնվում: Դժվար չեր նրանց ներքին միտքը հասկանալ, վորը կայանում եր նրանում, վոր նահանջի րոպեյին իրենք փախչել կարողանան, գտնվելով թնդանոթների պաշտպանության տակ: Յեվ գալիք յեղելությունները հաստատեցին այդ:

Հաշտության բանակցությունների բացումը Տրապիզոնում ընդհատվեց: Երզրումի գլխավոր շտաբից տեղեկացանք, վոր փետրվարի 17-ին նշանակված բանակցությունները հետաձգվել են փետրվարի 20-ին: Յեվ վորովհետև իմ շտաբը մի տեղում չեր, այլ գտնվում եր քաղաքի յերկու հակառակ ծայրերում, իսկ դրանց միացնող հեռախոսները վատ դրության մեջ եյին, յես ստիպված եյի որական յերկու անգամ այդ ճանապարհը կտրել:

Համաձայն գնդապետ Մորելից և նրա շտաբից իմ պաշտոնական այցելությունների ժամանակ ստացած տեղեկությունների, Երզրումի շրջակայքում վոչ մի կանոնավոր թյուրքական զորք չկար: Պետք եր կռվի մտնել քյուրդերի և գյուղերի բնակիչների հետ, վորոնց մեջ կային 1916 թվականի թյուրքական բանակի կանոնավոր զինվորական ուժերի մնացորդներ: Յենթադրվում եր, վոր այս ավազակախմբերը կազմակերպված եյին այս շրջանի թյուրքերին պաշտպանելու համար ուղարկված միքանի թյուրք սպաների միջոցով: Այս խմբերն ունեյին յերկու լեռնային թնդանոթներ, վոր հայերը թողել եյին Յերզնկայում: Այս բանդաները կարող եյին մոտենալ Յերզնկա-Ոլթի-Յենի խճուղու կամ նաև Կարսի և Փալան-Թոքյանի կողմից: Գնդապետ Մորելը, չգիտեմ ինչ հիմունքներով, հավատացած եր, վոր հարձակումը կլինի Ոլթիի կողմից: Հետախուզությունները հա-

յերի կողմից կատարվում եյին վերին աստիճան անբավարար կերպով: դրանք կայանում եյին գլխավորապես գյուղերում կատարված սպանությունների, թալանի և յեղջերավոր անասուններ բռնելու ու քշելու մեջ: Նրանց տված տեղեկություններն սկզբից մինչև վերջ սուտ եյին: Յեթե նրանք հաղորդում եյին, վոր խուզարկու պահակը հանդիպել է 2000 հոգուց բաղկացած թշնամու զինված ուժերի, կարող եյինք վստահ լինել, վոր իրականում դրանց թիվը 200 հոգուց ավելի չեր: Նրանք չեյին ամաչում տեղեկացնել, վոր ընդհարման ժամանակ իրանք 300—400 հոգու փախուստի դիմելու յեն ստիպել, վորի ժամանակ, սակայն, իրանք վոչ մի սպանված և վիրավոր չեն ունեցել: Մի հայ սպա մի որ հեռախոսով հաղորդում է մեզ, վոր իր զորախումբն ընդհարում է ունեցել 400 հոգի թշնամու հետ: Բանից դուրս յեկավ, վոր դրանք յերկու խաղաղ մարդ են յեղել, վոր յերկու հանդիպակաց գյուղերից դուրս են յեկել և նորից իրենց տներն են մտել: Հայերի Յերզնկան թողնելուց հետո, մինչև թյուրքերի Երզրումը նորից յետ վերցնելը, հայ զորամասերին միայն մի անգամ աջողվեց մի հատիկ թյուրք ձիավոր բռնել: Հավանական է, վոր կամ սրա վոտներն եյին ցրտահարված, և կամ նա այն վիճակումն է յեղել, վոր այլևս չեր կարող իր ճանապարհը շարունակել:

Մեր յերկրորդ սպայական ժողովում միքանի սպաներ խնդրեցին իրենց այլ պաշտոնների փոխադրել: Յերբ յես նրանց այս խնդրի մասին գնդապետ Մորելին հայտնեցի, նա շատ վրդովվեց և ասաց, վոր պատերազմական նկատառումներով նա մերժում է թույլատրել այդ: Իմ այն նկատողությանը, թե թնդանոթները դեռևս ռուս սպաների ձեռքումն են գտնվում, և վոր այդորինակ անարդար խստությունները կարող են հրետանու կրակով պատասխանվել, և վոր, դրանից բացի, քանի վոր այդորինակ խնդիրները լիովին որինական են, և վոր այլ տեղ փոխադրությունները, յեթե տեղի ունենան, չպետք է փախուստ համարվեն,—նա պատասխանեց, վոր յեթե սպաները պնդեն իրենց ասածների վրա, այդ դեպքում նրանք կապիտան Յերմոլովի պես կարտաքսվեն, մի բան, վոր կարատավորի նրանց սպայական կոչումը: Դրա վրա յես գնդապետ Մորելին ասացի, վոր, ինչպես գնդապետ Դոլուխանովը Թիֆլիսում և Բաթումում ասել է, սպաների իրենց կամքին հակառակ իրենց պաշտոններում մնալը հազիվ թե լավ հետևանքի հասցնի: Դրան նա պատասխանեց, վոր հենց այդ հիման վրա յել նա Երզրումի համար վաթսուն անգլիական սպաներ է պահանջել, և վոր ինքը նրանց կողմից արդեն պաշտոնական համաձայնություն է ստացել: Յես ոգտվեցի այս դեպքից նրան հաղորդելու մի այլ դեպքի մասին, թե

ինչպես մի ռուս թե լեհ զինվոր, որն Երզրումում կայարանի գլխավորի պաշտոն ուներ, չցանկացավ այլես իր պաշտոնը կատարել, ձերբակալվեց և իր պաշտոնը շարունակելու ստիպվեց։ Հրամանները արագ կատարելու պատրվակի տակ յես հրամայեցի իմ բոլոր սպաներին հնար յեղածին չափ իրարու մոտիկ ապրել, որպեսզի հենց որ կարիքն ստիպի, ինչպես որ փաստորեն այդ տեղի ունեցավ, նրանք իրարու փոխադարձաբար օգնել կարողանան։

Շտաբս-կապիտան Յերմոլովը փետրվարի 25-ին Երզրումից մեկնեց։ Յես նրան հանձնարարեցի կանգ առնել Սարիղամիշում և շտաբի հրետանու գլխավորներ գեներալ Վիշնևսկուն և Գերասիմովին հաղորդել այն սոսկալի վիճակի մասին, որի մեջ հայերի պատճառով գտնվում ենք մենք, և խնդրել նրանց, որ ազատեն մեզ այս ծուղակից։

Փետրվարի 24-ին յես նկատեցի թյուրքական հետախույզների մի խմբակ, որը հետախուզություններ էր անում. դրանից յես յեզրակացրի, որ թշնամին կամ Յերզնկայումն է, կամ նույնիսկ Մամախաթունում։ Գնդապետ Մորելը նույն օրը հաղորդեց, որ ինքը թյուրքերից Երզրումը մաքրելու վերաբերող մի առաջարկ է ստացել։ Թյուրքերի կողմից Երզրումը գրավելուց հետո զորաբանակի հրամանատար Քյազիմ-բեյն ինձ ասաց, որ հիշյալ առաջարկը ոչ թե աննշան մի թուղթ էր, այլ իր ստորագրությունը կրող պաշտոնական գրություն։ Գնդապետ Մորելն ուզում էր ինձ սխալեցնել, յերբ նա այնպես էր ներկայացնում, որ իբր զորաբանակի հրամանատարի կողմից գրած պաշտոնական այդ պահանջը ոչ այլ ինչ էր, յեթե ոչ մի աննշան հայտարարություն։

Ամրությունների գլխավոր շտաբը փետրվարի 24-ին և 25-ին հայտարարեց, որ քաղաքին ոչ մի վտանգ չի սպառնում, և որ Դերսիմի կողմից նկատվել է քյուրդական մի հրոսակախումբ, որ շնորհիվ մեր կողմից ուղարկված զորաբաժնի, հեռացել է, և դրանով նրա հետագա առաջշարժման դեմն առնված է։ Սա միևնույն էր, թե Երզրումից ուղարկված մեր զորաբաժինը թշնամուն Իլիջայից միքանի կիլոմետր այն կողմն է շպրտել։ Այնինչ մենք տեղեկացանք, որ փետրվարի 26-ին հայ մի զորամաս Թեփե-դերեսիում հարձակման է յենթարկվել, և որ նրանք, որոնք կարող էին իրենց փրկել, գլխապատառ Երզրում են փախել, և որ գլխովին հոգնած մի այլ զորամաս Իլիջայից փախուստի է դիմել միևնույն ուղղությամբ։

Գնդապետ Մորելից յես բերանացի հրաման ստացա հարձակվողների վրա հրետանու կրակ բացել. սակայն յես աննպատակ համարեցի այն ուղղությամբ կրակ բացել։ Խարբերդի խճուղու վրա

յերևում էին միայն փախչող հայ զինվորներ, իսկ Տրապիզոնի խճուղու վրա խիտ շարքերով, կարծես մանյովրի դուրս յեկած հայկական մի զորամաս, որն Երզրում էր վերադառնում։ Կեսօրից հետո լսվեց նաև, որ թշնամու մի զորամաս կանգնած է Գյոլ-քյոյին շատ մոտ։ դրանց թիվը յես 1500 հաշվեցի։ Դա ոչ թե քյուրդական մի հրոսակախմբի, այլ ամենայն կանոնավորությամբ առաջխաղացող մի գնդի տպավորություն էր թողնում։

Անդրանիկը փորձում էր փախստականներին ժողովել և նրանց թշնամու դեմ ուղարկել, բայց այս յերկչոտները հենց որ թշնամու դեմ կռվելու անունը լսեցին, իսկույն փախուստի դիմեցին։ Հրետանու կրակը յերկուստեք տևեց մինչև կես-գիշեր։ Սկսած այն րոպեից, յերբ տեղի էր ունեցել քյուրդական հարձակում, իսկ այժմ էլ պատրաստվում էր նրանց հարձակումը յետ մղել, ռուս սպաներն այլևս յետ դառնալու մասին մի խոսք անգամ չէին ասում և պատվով կատարում էին իրենց վրա ընկած պարտականությունները։

Յես չկարողացա Բոյուք-Քիրեմիջիի վրա գտնված իմ մարտկոցը պահպանող հայ հետևակ զինվորներին հարձակման դիմելու ստիպել. ընդհակառակը, նրանք թողնում էին մարտկոցները և անընդհատ Խարբերդի դռնից յետ էին փախչում։ Իսկ այն հայերը, որոնք Թեփե-դերեսիի մոտ փախուստի էին դիմել, նույնիսկ փախչելիս թալանել էին անասունների նախիրը և սպանել էին ճամփին հանդիպած անզեն ու միայնակ գյուղացիներին։

Ռուսական գլխավոր շտաբի համար թյուրքերի Երզրումի վրա կատարած առաջխաղացումը բոլորովին անսպասելի չէր։ Ռազմական հրամաններ տրված չէին, իսկ յեթե գուցե կային էլ, յես, համենայն դեպս, այդ մասին ոչ մի տեղեկություն չունեի։ Իմ խնդիրը շատ պարզ էր. նա կայանում էր նրանում, որ պետք է թշնամուն մեր հրետանու կրակի տակ առնեի, որպեսզի դրանով արգելեի նրան անցնելու ամրության գոտին այս կողմը։ Կարևոր դիրքերում, հետևակ զորքից բացի, կային և լեռնային թնդանոթներ, որոնք, սակայն, իմ հրամանատարության տակ չէին։

Նույն օրը քաղաքային միլիցիան մինչև յերեկո զբաղված էր քաղաքի արական թյուրք ազգաբնակչությանը՝ ծերունիներին, յերեխաներին, իբրաց չասյալ նաև հիվանդներին, ձերբակալելու գործով։ Յերբ հարցնում էին այս միջոցի նպատակի մասին, ասում էին, որ դրանց հավաքում են յերկաթուղու գիծը ձյունից մաքրելու համար։ Յերեկոյան յես իմացա, որ մի հայ ուսանող իր ավազակախմբով, չնայած իմ դռանը կպցրած անվանաքարտին, ներս է խուժում իմ բնակարանը տնային խուզարկություն կատարելու նպատա-

կով։ Յեվ վորովհետև իմ կինն այս ինքնակամ ձեռնարկությանն ընդդիմանում է, ուսանողը չի քաշվում գանակոծելու իմ տան տիրոջը՝ մի ծերունի թյուրքի և միքանի քյուրդ ծառայողներին. ընդհակառակը, նա կարծես դրանից թև եր առել։ Ուսանողը բացատրել եր, վոր խուզարկությունը կատարվում է Անդրանիկի հրամանով։ Դրանից հետո ծերունուն թաքցնելու նպատակով, յեթե յերկրորդ անգամ նրան տանել ուզենային, յես մեր բնակարանների մեջ մի անցք բացել տվի։

Վերջին ժամանակներում, ամեն անգամ, յերբ յես այցելում եյի Անդրանիկին կամ նրա շտաբը, ինձ հետ վերցնում եյի զինակոչի բաժնի վարիչ կապիտան Վուլկևիչին, վորպեսզի յես այս մարդկանց կողմից դեպի ինձ ունեցած վերաբերմունքի յեղանակի մի վկա ունենամ։ Մի յերեկո, սպայական ժողովարան գնալիս, նա դարձյալ ուղեկցում եր ինձ։ Մեր մտնելուն պես ժողովը բացվեց։ Ներկա եյին Անդրանիկը, դոկտոր Զավրիևը, գնդապետներ Զինկևիչը, Դոլուխանովը և միքանի ուրիշ անձինք։ Մեր գալուց հետո Զինկևիչը կարդաց գլխավոր հրամանատար գեներալ Օդիշելիձեյի հետևյալ հեռագիրը. «Օսմանյան գլխավոր հրամանատար Վեհիբ-փաշայից յես մի ռադիո-հեռագիր ստացա, վորով նա զորքին հրաման է տվել գրավելու Երզրումը։ Փչացրեք ամրությունների թնդանոթները և յետ դարձեք զորքի հետ։ Օդիշելիձե»։

Այս, փոքր ինչ ուշ տրված, հրամանը ժամանակ չթողեց մեզ թնդանոթները փչացնելու։ Անդրանիկը խորը հոգոց քաշելով մեզ հաղորդեց իր վորոշումը՝ Երզրումը դարձյալ յերկու որ պահել և քաղաքն ավերելուց հետո միայն ամրությունները թողնել ու հեռանալ։ Յերբ յես դոկտոր Զավրիևի ուշադրությունը դարձնել տվի այն հանգամանքի վրա, վոր հրդեհ հանգցնելու վոչ մի միջոց չունենք, և վոր քաղաքը կվոչնչանա, և վոր մահմեդականների հիվանդներին և ծերունիներին պետք է ձերբակալել և մի այլ անհայտ տեղ ուղարկել, նա ինձ պատասխանեց, վոր այդ մասին կարգադրություն անելու հրաման արդեն տրված է։ Սակայն այս գեղեցիկ խոստումը, ինչպես նախկին բոլոր նույնանման խոստումները, մնաց չիրագործված։ Յերբ մենք քննում եյինք այն հարցը, թե ինչպես պետք է կատարել Անդրանիկի վորոշումները, մենք արդեն նահանջեցինք։

Ինչ վերաբերում է Երզրումն ելի յերկու որով պահելուն, քաղաքը, անկախ զորքի թվից, շնորհիվ նրա աննման դիրքերին, կարելի չեր 42 որ պահել վոչ միայն քյուրդերի, այլ նաև կանոնավոր բանակի դեմ։

Յեվ վորովհետև ռուսական հրամանատարությունը զինադադարի բանակցությունների ժամանակ պաշտոնապես հայտնել եր, վոր ինքն

անկարող է քյուրդերին կարգապահության տակ պահել, ուստի մեր պարտքն եր ամեն հնարավոր միջոցներ գործադրել նրանց կողմից յեղած ամեն մի հարձակում յետ մղելու։

Յերբ յես իմ շտաբի վարչատուն վերադարձա, անհրաժեշտ հրամաններ տվի, վորպեսզի թնդանոթներն անպետք դարձնեն, վորը, համենայն դեպս, յերկու որում կարող եր լիովին իրագործվել։ Անա այժմ յես իմացա իմ սպաներից, վոր, ոգտվելով մթությունից, իմ հետևակ զորքը թողել է խրամատները և փախել է։ Այս նորության մասին յես հաղորդեցի գնդապետ Մորելին։ Սա ինձ հավաստիացրեց, վոր այդ կողմից վոչ մի վտանգ չկա, վորովհետև ամրությունները թողնելու չենք։

Յես վերադարձա տուն և ժամը մեկին մոտ պառկեցի քնելու։

Ժամը 1-ի և 3-ի մեջ յես լսեցի քաղաքում ցան ու ցիր հրացանաձգության ձայներ և դրանից քիչ անց արդեն ճանաչեցի հայերի ձայները, կացինների հարվածների տակ ջարդուփշուր յեղող դռների թրըխկ-չրըխկոցները և ապա ձերբակալվող խեղճ ու անբախտ մահմեդականների հուսահատ աղաղակը։

Յերկու միտք տանջում եր ինձ. առաջինը այն, վոր վտանգվում եր մեր պատիվը, վորովհետև ովքեր իրենց աչքով չեն տեսել վախկոտ (ազատության համար կռվող) հայերի կատարած անխղճությունները, կարող եյին կարծել, վոր այդ տմարդ վայրենությունները տեղի յեն ունեցել ռուս սպաների համաձայնությամբ, և նրանք մեզ նույնչափ մեղավոր կհամարեյին, վորքան և այս վայրենիներին, յերկրորդը, վորը չեր համապատասխանում բարձր հրամանատարության հայացքներին, այն եր, վոր թյուրք կանոնավոր զորքերին մի կռիվ տալ—բայց դա կարող եր այն հետևանքն ունենալ, վոր կասեյին, վոր վերին հրամանին չլսելու հետևանքով հարձակվողների մեջ թյուրիմացություններ են տեղի ունեցել։ Ինկատի ունենալով այս յերկու կետերը, յես յեկա հետևյալ յեզրակացությանը—վաղ առավոտյան շուտ անհապաղ գնալ, փնտրել գնդապետ Մորելին և առաջարկել նրան, վոր արգելի հայերին նորանոր յեղեռնագործություններ կատարել և այդ վոչ այլ միջոցով, քան այն, վոր մենք մեր թնդանոթների մի մասի բերանները ուղղենք հայերի վրա և դրանով ստիպենք նրանց կատարելու մեր հրամանները։ Յերկրորդ՝ կխնդրեյի պարլամենտյորներ ուղարկել թյուրքաց զորքերի մոտ հաղորդելու նրանց, վոր քաղաքը յերկու որից հետո առանց արյունհեղության իրենց է տրվելու, իսկ մյուս կողմից կարելի չեր առանց հայերի մասնակցության զորախմբեր կազմել զենքի ուժով ճնշելու ապստամբությունը և այդպիսով հայերի կողմից թյուրքերի կոտորածի առաջն առնել։

Յեր յես առավոտը շուտ կապիտան Վոլկևիչի ուղեկցությամբ գնացի գնդապետ Մորելի մոտ, ճանապարհին հանդիպեցի հրետանու զինապահեստարանի առաջ հայ շտաբս-կապիտան Բագրատունյանին, վորին հանձնված եր պահեստի պահպանությունը։ Նա ասաց, վոր իհետևումն նահանջի մասին տրված հրամանի, զինապահեստը հոդս պետք ե պայթեցնի և վոր ինքն սպասում ե միայն իմ հրամանին։

Այս լուրն ինձ տարորինակ թվաց, քանի վոր զինապահեստները գտնվում եյին գնդապետ Թոլուխանովի հրամանի տակ, և այն պայթեցնելու վոչ մի հրաման չեր տրված։ Յես նրան հասկացրի, վոր այդ պայթյունի հետևանքով ռուս սպաներին, վորպես և քաղաքի այլ բնակչությունը կարելի յե վոչնչացնել, և նրան իր այդ ձեռնարկությունից յետ պահեցի, մի բան, վոր, բարեբախտաբար, հաջողվեց ինձ։ Այս յեղանակով յես փրկեցի զինապահեստները։

Յերբ յես մոտենում եյի գնդապետ Մորելի բնակարանին, տեսա, վոր բոլորը փախչում են։ Ամերիկյան հյուպատոսի տունը, վորը մեր բնակարանի դեմ հանդիման եր գտնվում, կրակի բոցերի մեջ եր։

Գնդապետ Մորելը և գնդապետ Թորգոմը հագնված եյին և փախչելու պատրաստ։ Նրանց իրերը դարսված եյին ավտոմոբիլների և միքանի կառքերի մեջ։ Առավոտյան ժամը 7-ն եր։ Յես հարցուփորձ արի իրադարձի մասին։ Ինձ ասացին, վոր նահանջի հրամանը տրված ե ժամը 5-ին առավոտյան և զարմացան, վոր յես մինչ այժմ այդ հրամանը չեմ ստացել։ Դա ինձ վախեցրեց։ Ռուս սպաների և հրետանու պաշտպանության տակ հայերին հաջողվում ե փախչել։ Յեվ այնինչ ռուս սպաներն իրենց ձեռքերով ուղղել են թնդանոթները և հարձակվողներին գրոհ են տվել, հայերն ազատ և համարձակ կոտորում են մահմեդականներին ու փախուստի դիմում։ Յեթե յես ինքս չերևայի, վոչ մի ռուս սպա նահանջի հրամանի մասին վոչինչ չեր իմանա։ Մի րոպե յես մտածեցի վազեմ բարձրանամ Մեջիդիյե ամրությունը և դիմացկուն բաճկոններ հագած և Կարսի խճուղու ուղղությամբ ամենայն ազատությամբ փախչող քաջ հայերին շրապնելի գնդակների մասս բարևի մի վողջույն ուղարկեմ, բայց հենց վոր մտածեցի, վոր նրանց մեջ կարող են գուցե մի յերկու անմեղներ գտնվել, յես իմ մտադրությունից հրաժարվեցի։

Յեվ այսպես ահա, շնորհիվ տիրապետական տենչով տարված քաջ հայերի խորամանկության և վախկոտության, թնդանոթներն անգործադրելի չարվեցին։ Յերբ յես իմ բնակարանն եյի վերադառնում, լսեցի փոքր ինչ կողմ ընկած մի փողոցից ցավի աղաղակներ և կարտեչի (գնդակների կարկուտ) պայթման վողջույնը։ Յեվ վորովհետև յես փողոցի կորության մեջն եյի գտնվում, ուստի յեղած-

պատահածն անկարող եյի տեսնել, սակայն ձյան վրա գտնված արյան բծերն ասում եյին, վոր այստեղ կոտորած ե տեղի ունեցել։ Յերբ յես դրանից հետո տեսա միլիցիայի հայ պետին ձիով կողքի փողոցով անցնելիս, յես յերևակայեցի այն սարսափների տեսարանը, վոր տեղի չեր ունեցել։

Յերբ յես իմ բնակարանը վերադարձա, հրամայեցի մարտկոցներին, վոր նույն ժամին հետևակները նահանջի համար տված նշանի հետ միաժամանակ և նրանք կառքեր պատրաստեն հրետանու սպաներին տանելու։ Ինձ հայտնեցին, վոր բոլոր կառքերի նախագնացները դեռ գիշերով փախել են։ Վոտքից մինչև գլուխ զինված գասալիքները կառքերի լծասարքերը վերցրել և, ամեն մի ձիու վրա յերկ-յերկու հոգի հեծած, փախել եյին։ Յերբ իմ ձիապանն արգելում ե նրանց, ասելով, վոր իրավունք չունեն ձիերը տանելու, այն ժամանակ նրանք իմ ձիերից մեկին գնդակահարում են։ Հիսուն փոխադրական միջոցներից մեզ միայն յերեքն եյին թողել, և դրանցից ել ոգտվեցին մեր միքանի սպաները։

Դրանից քիչ հետո մենք լսեցինք, վոր թյուրքական զորքն արդեն քաղաք ե մտել, և վերջապես համոզվեցինք, վոր դրանք վոչ թե այստեղից-այնտեղից ժողոված քյուրդական ասպատակախմբեր են, այլ թյուրք կանոնավոր զորամասեր։ Քաջ հայ հետևակ զորքը, ոգտվելով գիշերային խավարից, փախուստ եր տվել Երզրում-Կարս խճուղով։ Հազիվ թե վորևե իսկական գրոհ այսպիսի կարճ ժամանակում կարող լիներ Երզրումն այսպես հիմնովին մաքրել հայկական կեղտից։

Ինչպես խրամատներում, նույնպես և քաղաքում վորևե տեղ վոչ մի հայ վիրավոր իսկ չեյիր տեսնի։ Սա մի նոր ապացույց եր, թե ինչպիսի յեռանդով ու քաջությամբ եյին պաշտպանում հայերն Երզրումը։ Միքանի գերիներ միայն ռուս սպաներիցն եյին։ Հայերը կարող են պարծենալ, իհարկե, բացասական մտքով, քաղաքի պաշտպանության համար նրանց ցուցադրած այսորինակ մասնակցության առիթով։

Հենց վոր թյուրքերի կողմից հայտարարվեց քաղաքի գրավումը, յես իմ ադյուտանտի հետ գնացի հրամանատարության մոտ հայտնելու մեր ներկայության մասին։

Յերբ յես անցնում եյի փողոցներով, այն թյուրքերը, վորոնց հանդիպում եյինք, մեզ ամենազգացված կերպով իրենց շնորհակալություններն եյին հայտնում, վոր յես նրանց կյանքը փրկել եմ։ Շնորհակալությունը հավասար չափով վերաբերում եր նաև ռուս սպաներին, վորովհետև յեթե ռուս սպաները չլինեյին, թյուրքական

գործն Երզրումը վերագրավելուց հետո վոչ մի կենդանի թյուրք չեր գտնի:

Ռուս գրող Գեորոնիուսն ասում է հայերի մասին. «Հայերը թեև մարդիկ են, բայց իրենց տներում նրանք ման են գալիս չորս վոտների վրա»: Ռուս բանաստեղծ Լերմոնտովը նրանց գովքն այսպիսի խոսքերով է յերգում. «Դու գերի յես, դու վախկոտ ես, վորովհետև դու հայ ես»:

Ժամանակավոր հրամանատար Երզրումի և Դևե-Բոյունի ամրությունների Երզրումի 2-րդ բերդապահ-հրետանի գնդի շտաբս-կապիտան՝ ՏՎԵՐԴՈԽԼԵԲՈՎ.

Երզրում, 1918 թ. ապրիլի 29-ին.

VI. ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դե, հարգելի ընթերցող, ի՞նչ կասեք այժմ դուք հայերի մարդկայնության մասին:

Վոչ, վոչ: Յեղեք այդ յերկու ազգերի վերաբերմամբ արդար:

Դա նրանց մեղքը չի, այլ միայն մոսկովյան քաղաքականության, վորն այդ յերկու ժողովուրդներին իրարու դեմ հանեց: Մոսկովները, վոր այլ ցանկություն չունեյին, քան թյուրքերին սպանելն ու նրանց հազարամյա ազգային հռչակը վոչնչացնելուց հետո թյուրքերի ժառանգությունը գրավելը. մոսկովցին է, վորն արյան մեջ լողալու մասին է միայն հոգում. նա չեր, վոր գրգռում եր հային թյուրքի դեմ: Սրա հետևանքն այն յեղավ, վոր թյուրքերը հաստատ ապացույցներ ստացան կարծելու, վոր «յեթե նրանք ցանկանում եյին ապահովել իրենց կյանքը, պետք է վոր կոտորեյին հայերին», այնինչ հայերն ասում եյին, «վոր նորից ապրելու և առաջնություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է, վոր նրանք կոտորեն թյուրքերին»: Ահա թե ինչպես պատրաստվեցին այն վողբերգական դեպքերը, վորոնց մենք վկա յեղանք: Մի կողմում պետք է վեց հարյուր հազար հայեր վոչնչանային, իսկ մյուս կողմից՝ միլիոն ու կես թյուրքեր ու քյուրդեր:

Յեվ այսպես, դարձյալ, նույն ռուսական քաղաքականությանն ենք պարտական, վոր Մորգենտաուի նման մարդիկ, իրենց հիմար և թուլամիտ համախոհների հետ, ամոթը մի կողմը թողած, բոլոր մեղքը թյուրքերին են վերագրում և ամբողջ աշխարհի մամուլը լցնում են իրենց աղմուկով:

Մանդելշտամն ասում է, վոր, բացառությամբ Վանի, հայերը վոչ մի տեղ ապստամբելու ամենաաննշան փորձ անգամ չեն արել:*

** Տես Մանդելշտամ:*

Յես Արևելյան Անատոլիայի վիլայեթներում և կովկասյան մեր բանակի թիկունքում յեղած-գնացած անցքերի մասին վոչ մի տեղեկություն չունեմ, այնինչ ինձ շատ լավ հայտնի յե յերկրի դրության այն ընթացքը, վոր տեղի յե ունեցել իմ բանակի շրջանում: 1915 թվին Զեյթունում և Ուրֆայում յեղած անցքերը վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ հայերի զինված ապստամբություն: Մուսա-Բաբայի ապստամբությունն ել նույնպես կազմակերպված հեղափոխության մի մասն եր: Ինձ հաղորդեցին անհերքելի մի այլ փաստ, վոր ճիշտ այն վայրկենում, յերբ Դարդանելի կռիվներն իրենց գագաթնակետին եյին հասել, հայերը ֆրանսիական և անգլիական հրամանատարության հրամանով Միջերկրականի արևելյան բանակին են միանում:

Նրանք պետք է վոր աչքի առաջ ունենային, վոր Ռեյիս-ուլ-Հենզարից դեպի Գոլֆ, Ալեքսանդրետտից սկսած Դորտ-Յոլի վրայով, Մուսա-Բաբա, Հալեպ, Այնթապ, Ուրֆա և Զեյթուն տարածվող հայկական ապստամբությունը մի գործողություն եր, վորը կարող եր Սիրիան Փոքր-Ասիայից բաժանել:

Ահա այստեղից, ուր վաղուց իվեր իրենց պատրաստությունները եյին տեսնվում, հայերն սպասում եյին ապստամբության ազդանշանի:

Կարո՞ղ են արդյոք բաժան-բաժան տերությունների ներկա վարչական անձերը պնդել, վոր իմ պատմածները ճիշտ չեն: Այժմ, յերբ պատերազմն ավարտված է, ապետական քայլ կհամարվի, յեթե իսկական անցուդարձը հասարակական կարծիքի առջև դրվի:

Յեթե Մանդելշտամն այնուհետև համառորեն պնդում է, վոր այդ բոլոր յեղելությունները ապստամբություն լինելուց շատ ու շատ հեռու եյին, և վոր նրանք վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ դիմադրության փորձեր, վորոնք զինված ինքնապաշտպանության դիմելու իրավունք եյին տալիս նրանց, այն ժամանակ պետք է յես նրա ուշադրությունը հրավիրեմ այն յերևույթի վրա, վոր նրա դաշնակիցները՝ ֆրանսիացի և անգլիացի սպաները, վորոնք այդ ապստամբության իսկական կազմակերպողներն եյին, սրանք նրա այդորինակ բացատրության վրա կծիծաղեն: Այս է, ահա, հայկական կոտորածների մասին իմ ունեցած համոզմունքն ու հայացքը: Ներկայումս, յերբ համաշխարհային պատերազմը վերջացել է և, Ոսմանյան մայր յերկրից բաժանվել են Սիրիան, Միջագետքը և Արաբական թերակղզին—Ոսմանյան թագի ամենագեղեցիկ այդ գոհարները, Թյուրքիան նորից պայքարի մեջ է իրեն գցում, վորպեսզի բացառապես թյուրքերին պատկանող այդ սրբազան յերկիրը չթալանվի: Յեվ յե-*

** Տես Մանդելշտամ:*

թե կա մի բան, վորը կարող է թշվառ Թյուրքիային մխիթարել, դա այն է, վոր թեև պատերազմի յերեք տարիների ընթացքում նա յերեք ու կես միլիոն մարդկային զոհեր տվեց, սակայն այն էլ փաստ է, վոր մեր մահացու թշնամին՝ ցարիզմը ջախջախված և վոչնչացված է։

Ի թիվս այն պետությունների, վորոնք առաջացան շնորհիվ Կովկասում տեղի ունեցած անցքերի, այսոր տեսնում ենք մենք Հայաստանի հանրապետությունը։ Սակայն մենք կարող ենք հաստատ ասել, վոր թյուրքահայերը, գլուխ ունենալով Կ.-Պոլսի պատրիարք Զավեն եֆենդուն, թյուրքերին գրգռելու նպատակով վոչ մի ինտրիգ չեն դավում։ Թյուրքերը վոչինչ չունեն, վոր կազմվի հայկական մի հանրապետություն Էջմիածնի հետ, և Յերևանը լինի նրա կենտրոն, սակայն նրանք կտրականապես պահանջում են, վոր այդ հանրապետությունը Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունների հետ, վորոնք կազմված են հարավային Կովկասի զանազան ազգային տարրերից, ինչպես նաև Ոսմանյան պետության՝ Փոքր-Ասիայի այս անվիճելի սեփականատիրոջ հետ լավագույն հարաբերությանց մեջ գտնվի և նրա անձեռնմխելի ունեցվածքի վրա նախանձոտ հայացքներ չգցի։

Գալով թյուրքահայերին, յես նրանց ամենից առաջ խորհուրդ եմ տալիս, վորպեսզի նրանք թե սեփական անդորրության և բախտավորության շահերի տեսակետից և թե թյուրքերի հինավուրց շահերն աչքի առաջ ունենալով՝ իրենց հիմար յերազները՝ թե Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթները յերբևիցե կարող են Հայաստանի մասը կազմել — թողնեն։

Այն որից, յերբ թյուրքաց հայերը փաստորեն համոզված կլինեն, վոր թողել են այդ անիրագործելի ցանկության յետևից ընկնելը, նրանք իրենց թյուրք և քյուրդ հայրենակիցների հետ ամենաազնիվ բարեկամություն կստեղծեն։ Իսկ նրանք, վորոնք կուզեն անպայման հայ մնալ, այդպիսիներին միշտ էլ հնարավորություն կտրվի գաղթել Անդրկովկասյան հայկական հանրապետություն։ Իսկ այն հայերին, վորոնք Թյուրքիայում ապրել են ուզում, անխուսափելի պայման է դրվելու, վոր նրանք առանց այլևայլության իրենց ոսմանցի համարեն և ամեն մի քայլից, վորը կարող է նրանց լոյալ տրամադրությունը կասկածի մեջ դնել — հեռու մնան։ Այսուհետև թյուրքահայերի մեջ Դաշնակցության, հնչակյանների և ուրիշ կուսակցությունների համար այլևս տեղ չկա։ Յես համոզված եմ, վոր այդ կազմակերպությունները կովկասահայերի համար միայն վնասակար կարող են լինել։

Ներկայումս հարավային Կովկասի յերեք հանրապետությունների և Ոսմանյան պետության հիմնական գործը պետք է նրանում կայանա, վոր փոխադարձաբար իրարու ոգնեն և իրենց ուժերն ավերված հայրենիքը վերականգնելու, իրենց իշխանությունը կազմակերպելու և ամրացնելու գործի վրա ուղղեն։ Մի այլ խնդիր ևս պետք է զբաղեցնի այս չորս պետություններին, այն է՝ ձեռք առնել ամեն միջոցներ, վորպեսզի արգելեն ռուսական ալիքը Կովկասյան լեռներից այս կողմն անցնելու։ Դրա համար էլ այդ չորս պետությունների ստիպողական գործն է լինելու մոսկովյան ներխուժման դեմ պաշտպանողական դաշինք կապել։

Զավեն եֆենդուն՝ Կ.-Պոլսի հայոց պատրիարքին ավելի լավ է հայտնի, քան մի ուրիշին, իմ դեպի հայերը տածած բարյացակամ զգացմունքը։ Յերբ յես 1915 թվին Կ.-Պոլիս յեկա, նա այցելեց ինձ «Պերա-Պալաս» հյուրանոցում և ինձ պատրիարքարանի կողմից շնորհակալական մի ուղերձ ներկայացրեց, վորի մեջ նա ամբողջ հայ ազգի անունից իր շնորհակալությունն արտահայտեց։

Յեվ վորովհետև յես լսում եմ, վոր ներկայումս նա Կ.-Պոլսի հունական պատրիարքի սարքած ինտրիգների վորպես գործիք է ծառայում, յես, վորպես հայերի բարեկամ, խնդրում եմ նրան, վոր նա իմ վերևում արտահայտած խորհուրդներն անկողմնապահորեն քննի։ Իմ դեպի հայերն ունեցած հայացքների յեղանակի առավելությունների կշռադատումը գուցե արգելե նրան հունական պատրիարքի ձեռքում խաղալիք դառնալու։

Յեթե մենք, ինչպես վերևում ասացի, Մերձավոր Արևելքի այս չորս ազգերս Ռուսաստանի դեմ պաշտպանողական դաշինք չկապենք, յեթե մենք համաձայնության չգանք հիմնելու Հյուսիս-Կովկասյան մի հանրապետություն, վորին պետք է մեր դաշնակցության մեջ առնենք, այդ դեպքում վոչ մի կասկած չկա, վոր մենք չենք ազատվի Ռուսաստանի բռնությունից, Ռուսաստանի, վորը դարերից ի վեր մեզ իր լծի տակ գցելու մասին է միայն մտածել։

Ո՞վ գիտե, գուցե գա մի որ, յերբ խեղճ արաբներն ու պարսիկները, վորոնք ֆրանսիացիների և անգլիացիների ազդեցության տակ են ընկած, յետ շպրտեն իրենց այսորվա տերերի ձեռքերը և մեր «Միության խմբին» միանան։

Մերձավոր Արևելքի ժողովուրդները միայն այն ժամանակ ազատ կապրեն, յերբ իրենք իրենց ազատ բախտի անկախ տերը կդառնան։

Յես կարծում եմ, վոր քաղաքական այն իդեալը, վոր յես ոսմանցի, հայ, վրացի, ադրբեյջանցի քաղաքագետների առաջ պարզեցի, հնարավորություն կտա Մերձավոր Արևելքին, վորը մինչև որս խռովությունների և ինտրիգների բույն է ծառայել, վոչ ուշ քան

քան տարվա մեջ մի դրախտ դառնալ և նրանց ոտարներից անկախ զգալու չերանելի մի վիճակ կստեղծի։

Թյուրքերի համար, վորոնք Օսմանյան կայսրության մեծամասնությունն են կազմում, այս իդեալը հիմնական նշանակություն ունի։ Յեթե հայկական փոքրամասնությունն ուզում է օսմանների մեջ մնալ, նա դրանով կապացուցի, վոր, ինչպես վաթսուն տարի առաջ այդ արին հայերը, նա գնահատում է հավատարմության զգացմունքը և իսկական օսմանականությունը։

Իմ հայացքով դա այն միակ միջոցն է, վոր չես կարող եմ առաջարկել մի անգամ ընդմիշտ թաղելու արյունոտ անցյալը և հարուստ ու բախտավոր ապագա պատրաստելու համար։

Յես և իմ հայրենակիցները միշտ էլ պատրաստ ենք ամենաջերմ կերպով բանակցել այն բոլոր անձանց հետ, վորոնք հայկական հարցի համար մի ուրիշ, ավելի լավ լուծում կառաջարկեն։

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

A. MANDELSTAM. Le sort de l'empire Ottoman. Paris 1917.

Ա.*.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՎՈՋ-ԹՅՈՒՐՔ ՑԵՂԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. (էջ 187—195)

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐՎԵԼԸ

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐԸ

1. Թյուրք կառավարության և իր հպատակ հայերի միջև տիրող հարաբերությունները Հայաստանը նվաճվելուց մինչև XIX *դարի յերկրորդ կեսը՝ դեռևս լավ լուսաբանված չեն պատմության կողմից։ Թյուրքերը պնդում են, թե մինչև հայերի «դավաճանությունը» նրանց պատշաճեցրել եյին ամենամեծ ազատությամբ տոգորված մի վարչաձև (ռեժիմ)։ Հայերը Թյուրք տիրապետության ամբողջ պատմության մեջ ուրիշ բան չեն տեսնում, բայց յեթե մի յերկար մարտիրոսություն։*

Անգլիական Կապույտ գիրքը «Letraitement des Arméniens dans l'Empire Ottoman»՝ *պատրաստված լորդ* Bryce-*ի կողմից, արտահայտում է հետևյալ խորհրդածությունները.*

Հաղթող սուլթան Մոհամեդ Բ.-ը 1462 թ. հույների օրինակին համեմատ՝ Թյուրքիայի հայերին կազմակերպեց իբր «ազգ» (millet), *այսպիսով նրանց տալով մի վորոշ անձնավորություն ամբողջ Թյուրք պետության մեջ գլխավորաբար՝ կրոնական, այս ազգի գլուխ դրվեց մի պատրիարք, վորը նստում եր Կ.-Պոլսում։*

Արևելյան նահանգներում իսկ քյուրդ ավատապետ (ֆեոդալ) տերերի լուծը, վորի տակ 1514-ից սկսած յերեք դարու ընթացքին, իր ամբողջությամբն առած, ավելի տանելի չեր, քան ինչ վոր չեր նախընթաց յերեք դարերում, այն է՝ սելջուկների, մոնղոլների, կարա-կոյունլիների (սև վոչխարների) կամ պարսիկների արյունալի անիշխանության ժամանակ։ XIX *դարու սկզբին սուլթան Մահմուդ Բ.-ը մեծ մասամբ վոչնչացրեց քյուրդ ավատապետությունը և կառավարությունը կենտրոնացրեց։ Թյուրք պաշտոնյաները, վորոնք*

---

* *Տես Ջեմալ-փաշա—«Հիշողություններ», էջ 6։*

ապաքեն չեյին սիրում raya=ռայա հայեր, բայց և ատում եյին նաև անկարգապահ քյուրդերին, աշխատում եյին պահել հավասարակշռություն յերկու տարրերի միջև։

Յեվ միևնույն ժամանակ սկսավ հայ ազգի տնտեսական ու մտավոր վերածնունդը։

Հայերը, շարունակում է լորդ Բրայսի գիրքը, մեծ շահ ունեյին վոչ թե թյուրք պետության կործանումի, այլ նրա պահպանվելու մեջ։ Կայսրության մեջ ամեն տեղ ցրված՝ նրանք մեծամասնություն չկազմելով, բայց միայն Վանի նահանգում, չունեյին անկախության հույս, ինչպես ունեյին հույներն ու սլավոնները։ Ընդհակառակը, շնորհիվ իրենց մտավոր ընդունակության, նրանք կարող եյին փափագել բաժնելու իշխանությունը թյուրքերի հետ ամբողջ կայսրության մեջ, թյուրքերի, վորոնց բոլորովին պակասում եր պատշաճ տաղանդ կառավարելու և շահագործելու ընդարձակ յերկրները։ Ահա ինչի համար թյուրք տարրի հետ համաձայնությունը հայերի համար մի կենսական կարևորություն ուներ։ Յեվ XIX դարու կեսին թվում եր, թե իսկապես այս համաձայնությունը կարող եր իրականանալ։

Ռուս-թյուրքական պատերազմը 1877—1878 թ. թ., սակայն, մի բոլորովին տարբեր ուղղություն դրոշմեց թյուրքո-հայ հարաբերության վրա։ Աբդյուլ-Համիդ բնավ չկարողացավ մոռանալ իր սլավ նահանգների մի մասի ապստամբությունն ու կորուստը։

Բայց փոխանակ նրանից՝ քրիստոնյա ազգությունների հանդեպ ավելի բարյացակամ քաղաքականության հետևություն հանելու, իր սանձմանափակ ու մոլեռանդ հոգին արտահայտվեց քրիստոնյաներին հալածելու և վոչնչացնելու մեջ։

Փոխանակ սկսելու մի քաղաքականություն, վոր ձգտեր զորեղացնելու պետությունը ներդաշնակությամբ այն բոլոր ցեղերի, վորոնցից նա բաղկացած եր, սուլթանը յերևակայեց տկարացնել վոչ-թյուրք ազգություններին մեկին մյուսի դեմ հարձակումի դրդելով։ Սրանից է քյուրդերի գրգռությունը հայերի դեմ և այս վերջինների կոտորվելը։

Պ. Զարժեցկի՝ Ֆրանսիայի նախկին հյուպատոսը Վանում՝ նույնպես այն կարծիքին է, թե հարաբերությունը քյուրդերի և հայերի միջև ընդհանրապես ավելի հանդուրժելի յեր սուլթան Համիդի թագավորելուց առաջ, այն թունավորվեց կարմիր սուլթանի ձեռքով (տեսնել՝ M. Zarzecki-ի հոդվածը՝ «La question Kurdo-arménienne», Revue de Paris. 1914 թ. 15-ին ապրիլի)։

«Փոքրիկ հայ ժողովրդի կղզիացումի հետևանքով, վոր քրիստոնեյություն ընդունեց V դարում, իսլամ ժողովուրդների մեջտեղում,

վորի գերազանցությունն որ ավուր շեշտվում եր Փոքր Ասիայում, նրանք իրերահաջորդ հաղթական իսլամների կողմից նկատված եյին իբր մի ստոր ցեղի պատկանածներ։ Քյուրդերն իսլամություն ընդունելով՝ լավ աչքով եյին դիտվում այս հաղթողների կողմից և մի նախապատվություն ունենալով հայերի վրա, շատ բնականորեն քաջալերվեցան։ Բայց և այնպես, քանի վոր նրանց ծառայեցնում եյին թե իրենց դաշտերը մշակելու, և թե ուրիշ աշխատանքների համար, քուրդ բեյերն և աղաները մի վորոշ չափով բարյացակամորեն վարվում եյին հայերի հետ և նրանց պաշտպանում ուրիշ ավատապետ քյուրդ տերերի կեղեքումների դեմ, վորոնք փորձում եյին նրանց հափշտակել իրենց դրացիներից և իրենց իշխանության տակ դնել, կամ նրանցից անցողակի մի շահ կորզելու համար՝ կողոպտելով նրանց գյուղերը։ Այնպես վոր հաճախ տեսնվում է այս շրջանում, վոր քյուրդ աշիրաթները կռվում եյին մեկը մյուսի դեմ, վորովհետև իրենց հայերը հարձակման են յենթարկվել ու չարչարվել կամ կողոպտվել վորևե քյուրդի կողմից։

Մեկ խոսքով՝ հայերի և քյուրդերի հարաբերությունն իրար հետ յեղել է տերերի և ճորտերի (serfs) հարաբերություն. հայերն աշխատում եյին, քյուրդերն ել նրանց պաշտպանում։ Դարերից ի վեր այս դրությանը սովորած՝ հայերը չեյին յերևակայում, թե կարող է ուրիշ կերպ ել լինել, և չեյին բողոքում իրենց ճակատագրի դեմ։ Սրանով հանդերձ նրանք նյութապես շատ դժբախտ չեյին. իրենց քյուրդ աղային մի վորոշ հողատուրք վճարելուց հետո՝ ընդհանրապես նրանց դեռ բավական բան մնում եր ապրելու համար։ Այս առաջին շրջանի վերջանալու մոտերը, յերբ կառավարության զորությունն ամրանում եր ի վնաս քյուրդ պետերի կամ, ավելի ճիշտը, դերեբեյների ուժին, մանավանդ Ոսման-փաշայի Վանա վրա կատարած արշավանքի հետևանքովը՝ քյուրդերի պահանջները հայերի հանդեպ ավելի նվազ խիստ եյին. վորպեսզի նրանց բողոքները չհասնեյին յերկրի կառավարիչ թյուրք փաշային, քյուրդ տերերը խնայում եյին հայերին՝ շարունակելով հանդերձ, ինքնին հասկանալի յե, աշխատեցնել նրանց և պաշտպանել ուրիշ աշիրեթների դեմ։ Իրերի ստացած այս նոր վիճակի շնորհիվ՝ ել ավելի նպաստավոր յեղավ հայերի վիճակը Թանզիմաթի հաստատությամբ. շատ հայեր հարստացան, ձեռք բերին ընդարձակ վարելահողեր, վորոնցից շատերը մշակվում եյին նույնիսկ աղքատ քյուրդերի ռայաների ձեռքով։ Քյուրդ ռայաների և հայերի միջև հարաբերությունները, սակայն, միշտ ել լավ են յեղել։

Յերրորդ շրջանը բովանդակում է Աբդյուլ-Համիդի թագավորությունը։ Յերբ պետությունները ճնշում եյին սրան Բեռլինի դաշ-

նագրով հանձն առած բարենորոգումները գործադրել, նա կամեցավ խեղդել հայոց հարցը «ջնջելով հայերին». մի մեծ վեզիրի վերագրած արտահայտության համեմատ նա յեռանդոտ ոգնականներ գտավ քյուրդերի մեջ։ Իրենք իսկ գժգոհ հայերի դանդաղ, բայց առաջխաղաց բարձրացումից, գայրացած նրանց հեղափոխական փորձերից, քյուրդերն ուրախությամբ ընդունեցին այն «հրամանը», վոր Յելդըզից գաղտնաբար տրված եր նրանց՝ ճնշելու հայերի նորածին շարժումը՝ ահաբեկումի յենթարկելով նրանց։ Յեվ յերբ Աբդյուլ-Համիդ՝ համիդիյեյի գունդերը կազմելիս՝ միևնույն ժամանակ նաև իբր միջոց carte blanch (բացարձակ ազատություն) տվավ քյուրդ աշիրեթներին հայերի հետ վարվել ինչպես վոր իրանց համար լավ թվի, քյուրդերի ավարառության ու կողոպտելու բնազդին ազատ ընթացք տրվեց։ Այն ատեն կատարվեցան հափշտակություններ, առանձին սպանություններ։ Հետո, վորովհետև հայերը, վորոնք ունեցան իրենց ազգության գիտակցությունը և արժանապատվությունը, այլևս չեյին կամենում իրենց հետ վարվեն նրանց ուզածին պես, իրենց կողմից ճնշումներ յեղան. անջատ դեպքերն ընդհանրացվեցին, տարածվեցին և այն տեղերը, ուր իշխում եր դեռ համաձայնությունը։ Իսլամի կրոնական մոլեռանդությունը, վորոնց համար շեյխերն ու մոլլաներն իբր հավատարիմ թարգմաններ Աբդյուլ-Համիդի մտադրությունների, կոչ արին՝ ներկայացնելով հայերին իբր թե կամենում են տեր դառնալ յերկրին, թունավորեց քյուրդերի և հայերի միջի հարաբերությունները, մանավանդ յերբ նրանց առաջնորդեցին հայ հեղափոխական կոմիտեները. սպանություններն ու ընդհանուր հափշտակությունները վերածվեցին ընդհանուր կոտորածի և կազմակերպված ավարառության, վորի ընթացքում, ինչպես հայտնի յե, ոսմանյան իշխանությունն իր ոգնությունն եր ընծայում քյուրդերին՝ ընդդեմ հայերի։ Սասունի, Պոլսի, Տրապիզոնի, Դիարբեքիրի, Վանի և այլն կոտորածները, վոր արյունով վողողեց հայերով բնակված նահանգները 1894, 1895 և 1896 թվերին, արդեն շատ ծանոթ են և դեռ ներկա հոգիներին, և պետք չկա նրան վերհիշել։ Աբդյուլ-Համիդ այսպիսով հասել եր իր նպատակին՝ ստեղծելով հայ ու քյուրդ ժողովուրդների միջև, վորոնք յերբեմն ապրել են դարերով բավական լավ համերաշխությամբ, անվստահության մշտական մի հոսանք, հակամարտություն, ատելություն, վորը ապագային ավելի պիտի շեշտվեր, և վորի դժբախտ արդյունքները ճշգրտվում են տարիներից իվեր, և յերկրի ներկա խառնակ վիճակի պատճառներից մեկն ե»։

Մենք համաձայն ենք պ. Զարժեցկուն այն բոլորի համար, ինչ վոր ասում ե Աբդյուլ-Համիդի հայերի հանդեպ գործ դրած քաղաքականության մասին։ Մենք նույնպես ընդունում ենք, կարմիր սուլթանից առաջ յեղած շրջանի համար, վոր քյուրդ տերերը թողնում եյին տրուկ հայերի համար «ընդհանրապես բավականին բան ապրելու համար», բայց մենք համամիտ չենք պ. Զարժեցկուն, յերբ նա պնդում ե թյուրք իշխանության Հայաստանում զորանալու բախտավոր ազդեցությունը քյուրդերի և հայերի հարաբերությունների վրա։ Կապույտ գիրքը նույնպես, մեզ թվում ե, սխալ ճամպա չե բռնել։ Առնվազն, մեր անձնական ծանոթության հիման վրա, վոր մենք կարողացել ենք ստանալ հայ ամենահեղինակավոր աղբյուրներից, հակառակն ե, ինչ վոր տեղի ունեցել ե համիդական շրջանից առաջ. թյուրք իշխանությունները համարյա միշտ բռնել են քյուրդերի կողմը, և այն սակավաթիվ դեպքերում, յերբ նրանք միջամտում եյին ինպաստ հայերի, սրանք յենթակա յեն յեղել բեյերի կողմից սարսափելի և անխուսափելի վրեժխնդրության, վոչ մի կասկած չկա, թե սուլթան Համիդը չեր, վոր նվիրագործեց կոտորածի վարչաձևը (ռեժիմը) Հայաստանում։ Սակայն ամեն ժամանակ, նույնիսկ նրանից առաջ թյուրք ձեռքը ծանրապես կշռում եր հայկական նահանգների վրա։

Կապույտ գրքի և պ. Զարժեցկու կողմից Հայաստանի վիճակի հանդիսադրությունը Թյուրքիայում մինչև պատերազմը մենք մի փոքր լավատես ենք գտնում։ Արդարև՝ պետք չե ժխտել, թյուրքերը թույլ եյին տալիս հայերին նույնպես և հույներին մի շատ լայն կրոնական ինքնավարություն և նույնիսկ մինչև մի վորոշ աստիճանի յեվ ազգային, վորովհետև նա բովանդակում եր կտակների, ամուսնության և ապահարզանի իրավասություն, նույնպես և դպրոցների հոգաբարձությունը։ Հայ ազգը 1863 թվին նույնիսկ ստացավ մի իսկական սահմանադրություն, վորը հանդուրժում եր ընդհանուր ժողովի (ազգային) աթոռանիստ ունենալով Կ.-Պոլսի պատրիարքարանը և բաղկացած 140 անդամից, վորոնցից 120-ն ընտրվում եյին ուղղակի ժողովրդի կողմից։ Մի վորոշ չափով մարդ իրավունք ունի ասել, թե հույն և հայ պատրիարքությունները ներկայանում եյին իբր պետության մեջ պետություններ։ Սակայն, յեթե այս պատրիարքությունները զորավոր կերպով ոգնեցին պահպանելու յերկու ժողովուրդների ազգային վոգին թյուրք տիրապետության դարավոր շրջանում, նրանք ավելի բան չեյին, քան շատ թույլ պատվարներ նրանց նախնիների համար թյուրք բռնապետության դեմ, յերբ վերջինս լավ եր համարում ջախջախել նրանց։ Պետք չե մոռանալ, վոր թյուրքերն ստեղծեցին ազգություններ (millet) այն ժամանակ, յերբ նրանք իրենց փառքի և հզորության գագաթնակետի վրա եյին,

նագրով հանձն առած բարենորոգումները գործադրել, նա կամեցավ խեղդել հայոց հարցը «ջնջելով հայերին». մի մեծ վեզիրի վերագրած արտահայտության համեմատ նա յեռանդոտ ոգնականներ գտավ քյուրդերի մեջ։ Իրենք իսկ դժգոհ հայերի դանդաղ, բայց առաջխաղաց բարձրացումից, զայրացած նրանց հեղափոխական փորձերից, քյուրդերն ուրախությամբ ընդունեցին այն «հրամանը», վոր Յըլդըզից գաղտնաբար տրված եր նրանց՝ ճնշելու հայերի նորածին շարժումը՝ ահաբեկումի յենթարկելով նրանց։ Յեվ յերբ Աբդյուլ-Համիդ՝ համիդիեյի գնդերը կազմելիս՝ միևնույն ժամանակ նաև իբր միջոց carte blanch (բացարձակ ազատություն) տվավ քյուրդ աշիրեթներին հայերի հետ վարվել ինչպես վոր իրանց համար լավ թվի, քյուրդերի ավարառության ու կողոպտելու բնազդին ազատ ընթացք տրվեց։ Այն ատեն կատարվեցան հափշտակություններ, առանձին սպանություններ։ Հետո, վորովհետև հայերը, վորոնք ունեցան իրենց ազգության գիտակցությունը և արժանապատվությունը, այլևս չեյին կամենում իրենց հետ վարվեն նրանց ուզածին պես, իրենց կողմից ճնշումներ չեղան. անջատ դեպքերն ընդհանրացվեցին, տարածվեցին և այն տեղերը, ուր իշխում եր դեռ համաձայնությունը։ Իսլամի կրոնական մոլեռանդությունը, վորոնց համար շեյխերն ու մոլլաներն իբր հավատարիմ թարգմաններ Աբդյուլ-Համիդի մտադրությունների, կոչ արին՝ ներկայացնելով հայերին իբր թե կամենում են տեր դառնալ յերկրին, թունավորեց քյուրդերի և հայերի միջի հարաբերությունները, մանավանդ յերբ նրանց առաջնորդեցին հայ հեղափոխական կոմիտեները. սպանություններն ու ընդհանուր հափշտակությունները վերածվեցին ընդհանուր կոտորածի և կազմակերպված ավարառության, վորի ընթացքում, ինչպես հայտնի յե, ոսմանյան իշխանությունն իր ոգնությունն եր ընծայում քյուրդերին՝ ընդդեմ հայերի։ Սասունի, Պոլսի, Տրապիզոնի, Դիարբեքիրի, Վանի և այլն կոտորածները, վոր արյունով վողողեց հայերով բնակված նահանգները 1894, 1895 և 1896 թվերին, արդեն շատ ծանոթ են և դեռ ներկա հոգիներին, և պետք չկա նրան վերհիշել։ Աբդյուլ-Համիդ այսպիսով հասել եր իր նպատակին՝ ստեղծելով հայ ու քյուրդ ժողովուրդների միջև, վորոնք յերբեմն ապրել են դարերով բավական լավ համերաշխությամբ, անվստահության մշտական մի հոսանք, հակամարտություն, ատելություն, վորը ապագային ավելի պիտի շեշտվեր, և վորի դժբախտ արդյունքները ճշգրտվում են տարիներից իվեր, և յերկրի ներկա խառնակ վիճակի պատճառներից մեկն ե»։

Մենք համաձայն ենք պ. Զարժեցկուն այն բոլորի համար, ինչ վոր ասում ե Աբդյուլ-Համիդի հայերի հանդեպ գործ դրած քաղաքականության մասին։ Մենք նույնպես ընդունում ենք, կարմիր սուլթանից առաջ յեղած շրջանի համար, վոր քյուրդ տերերը թողնում եյին սորուկ հայերի համար «ընդհանրապես բավականին բան ապրելու համար», բայց մենք համամիտ չենք պ. Զարժեցկուն, յերբ նա պնդում ե թյուրք իշխանության Հայաստանում զորանալու բախտավոր ազդեցությունը քյուրդերի և հայերի հարաբերությունների վրա։ Կապույտ գիրքը նույնպես, մեզ թվում ե, սխալ ճամպա չի բռնել։ Առնվազն, մեր անձնական ծանոթության հիման վրա, վոր մենք կարողացել ենք ստանալ հայ ամենահեղինակավոր աղբյուրներից, հակառակն ե, ինչ վոր տեղի ունեցել ե համիդական շրջանից առաջ. թյուրք իշխանությունները համարյա միշտ բռնել են քյուրդերի կողմը, և այն սակավաթիվ դեպքերում, յերբ նրանք միջամտում եյին ինպաստ հայերի, սրանք յենթակա յեն յեղել բեյերի կողմից սարսափելի և անխուսափելի վրեժխնդրության, վոչ մի կասկած չկա, թե սուլթան Համիդը չեր, վոր նվիրագործեց կոտորածի վարչաձևը (ռեժիմը) Հայաստանում։ Սակայն ամեն ժամանակ, նույնիսկ նրանից առաջ թյուրք ձեռքը ծանրապես կշռում եր հայկական նահանգների վրա։

Կապույտ գրքի և պ. Զարժեցկու կողմից Հայաստանի վիճակի հանդիսադրությունը Թյուրքիայում մինչև պատերազմը մենք մի փոքր լավատես ենք գտնում։ Արդարև՝ պետք չե ժխտել, թյուրքերը թույլ եյին տալիս հայերին նույնպես և հույներին մի շատ լայն կրոնական ինքնավարություն և նույնիսկ մինչև մի վորոշ աստիճանի յել ազգային, վորովհետև նա բովանդակում եր կտակների, ամուսնության և ապահարզանի իրավասություն, նույնպես և դպրոցների հոգաբարձությունը։ Հայ ազգը 1863 թվին նույնիսկ ստացավ մի իսկական սահմանադրություն, վորը հանդուրժում եր ընդհանուր ժողովի (ազգային) աթոռանիստ ունենալով Կ.-Պոլսի պատրիարքարանը և բաղկացած 140 անդամից, վորոնցից 120-ն ընտրվում եյին ուղղակի ժողովրդի կողմից։ Մի վորոշ չափով մարդ իրավունք ունի ասել, թե հույն և հայ պատրիարքությունները ներկայանում եյին իբր պետության մեջ պետություններ։ Սակայն, յեթե այս պատրիարքությունները զորավոր կերպով ոգնեցին պահպանելու յերկու ժողովուրդների ազգային վոգին թյուրք տիրապետության դարավոր շրջանում, նրանք ավելի բան չեյին, քան շատ թույլ պատվարներ նրանց նախնիների համար թյուրք բռնապետության դեմ, յերբ վերջինս լավ եր համարում ջախջախել նրանց։ Պետք չե մոռանալ, վոր թյուրքերն ստեղծեցին ազգություններ (millet) այն ժամանակ, յերբ նրանք իրենց փառքի և հզորության գագաթնակետի վրա եյին,

ինչպես և նրանք արտոնություններ (կապիտուլյասիոն) եյին շնորհում օտար պետություններին։ Երկու դեպքումն էլ պատճառը բնավ չէր գտնվում Օսմանյան պետության տկարության մեջ այլ իր իսլամական աստվածպետական նկարագիրը, որ նրան ներշնչում էր ամենամեծ արհամարհանք դեպի քրիստոնյաները, ռայաները և օտարերկրացիները և նրան արգելում էր խառնվել նրանց ներքին գործերին։ Քրիստոնյաների այս հոգևոր ինքնավարությունը բնավ յերբեք չէր արգելում ամենանվազ չափով Թյուրքերի բացարձակ իշխանությանը՝ նրանց կյանքի և ստացվածքի վրա։ Եվ շատ անգամ՝ 1877—1878-ի պատերազմից շատ առաջ՝ հայերը պետք է փորձն առած լինեյին, թե իրենց ազգային սահմանադրությունն ընդհանրապես առած գոյություն չուներ, թե զուր է իրենց տերերի վրա բողոքել Բ. Դռան իրենց գրկանքների ու հարստահարությունների դեմ, որի զոհերն եյին։

Մեղադրելու այս իրավունքը, սակայն, շատ գնահատելի առավելություն ունեցավ հայերի համար, իրենց մարտիրոսությունը սակավ առ սակավ հասավ Եվրոպայի ականջին, մանավանդ 1863-ի ազգային ընդհանուր ժողովի սաեղծվելուց հետո, ուր հեռավոր արևելյան նահանգների յերեսփոխանները կարող եյին լսելի դարձնել իրենց տրտունջները։ Այս ժամանակից սկսած է, որ քաղաքակիրթ աշխարհը կարող էր իրեն հաշիվ տալ, թե յերբ մեծ քաղաքներում՝ ինչպես Կ.-Պոլիս, Իզմիր, Ադրիանոպոլ, Բրուսսա, Սալոնիկ—հայերն ունեյին մի տանելի կյանք պետության ոգուն ծառայելով իրենց մտավոր կարողությունը և առևտրական ընդունակությունները,—հեռավոր գավառներում, Թյուրք պաշտոնյաները և քյուրդ բեյերն իրարու դեմ մրցում եյին այս ազգի դժբախտ գյուղացիներին շահագործելու մեջ։ Յուրաքանչյուր քյուրդ բեյ կամ աղա իշխում էր հայ գյուղերի մի որոշ խմբի վրա, որը կեղեքում էր իր կամայականության համեմատ, այսինքն խեղճ գյուղացիներն ստիպված եյին վճարել կառավարության ոչ միայն կանոնավոր տուրքերը, այլ և հավելվածական տուրքեր և կամայական վճարումներ քյուրդ բեյերին, ինչպես են hafirlik (տարեկան մի որոշ գումար), hala կամ bachlik (իր աղջիկն ամուսնացնելու արտոնության համար)*։

* Այս տուրքի մասին տեղեկություններ ենք գտնում «Սասունի գործը քննող հանձնախմբին կից հյուպատոսական պատվիրակների հավաքական տեղեկագրի» մեջ, Թվագրված 1895 թ. հուլիսի 28, Մուշ (Livre jaune, affaires arméniens. 1893—1897, էջ 97—98)։

«Շնորհիվ հայ գյուղերի խմբավորումին, նույնպես և յերկրի դրքածին (configuration), շնորհիվ քյուրդերի մեջ իրարու դեմ գոյություն ունեցող հակամարտության Կավառի և Տալորի բնակիչները կարողացել եյին մինչև այժմ պահպանել լավ հարաբերություն իրենց դրացի և այցելու քյուրդերի հետ. նրանք ապրում եյին, մի վկայի արտահայտությամբ, իբր հողի և ջրի յեղբայրներ, և այն դժվարությունները, որոնք ծագում եյին

Դեռ ավելին՝ յերբ քյուրդ բեյերն իրարու դեմ կռիվ ունեյին, նրանք հարձակվում եյին իրենց հակառակորդի հայ գյուղերի վրա։ Եվ վա՜յ «շուն քրիստոնյաներին», յեթե նրանք համարձակվեն խլամ քյուրդերի վրա բողոքել Թյուրք պաշտոնյային։ Յեթե Բարձրագույն Դուռը պատահաբար հրամայեր նահանգապետին (vali—վալի) ձերբակալել քյուրդ բեյին նրա ստահակության և հարստահարության պատճառով, կուսակալը (վալին) օգտվում էր այս առիթից՝ կորզելով ավազակից մի մեծ գումար, որի օգնությամբ բեյը բնավ չի նեղվում, անշուշտ հասկանալի է, նա իր վճարած գումարը կհատուցաներ հայ գյուղացիների միջոցով, որոնք իրենց բողոքով այս ձանձրույթն եյին պատճառել իրեն։

Բայց և այնպես, հակառակ իրենց բոլոր Թշվառության, հայերը դարավոր լծի տակ բթացած ու տրորված՝ ամենափոքր փորձն անգամ չարին ըմբոստանալու, և մյուս կողմից՝ Թյուրքերն էլ դեռ չեյին հետևում ամբողջ ցեղը ջնջելու մի ծրագրի։ Նրանք շահագործում եյին գյուղացիների աշխատանքը, առևտրականների և սեղանավորների ժրաջանությունը և օգտվում եյին նույնիսկ բավական հաճախ իրենց վարչական գործերում հայերի մտավոր նրբիմացությունից։

XIX դարի կեսերի շուրջը տերերը նույնիսկ այնքան գոհ եյին իրենց ստրուկներից, որ նրանք հայերին տվին «հավատարիմ ազգ» (milleti sadyka) մակդիրը՝ զատելու համար ուրիշ ազգերից, ինչպես հույները, որոնք ջանադիր եյին Թոթափելու իրենց լուծը։

Բայց 1856 թ. ռուս-Թյուրքական պատերազմը վերջ տվավ այս շատ համեմատական հովվերգությանը։ Հայ ժողովուրդը նույն ժամանակ ցույց տվավ մեծ չափով ուղղամտություն օսմանյան կառավարության հանդեպ. նա օգնեց կառավարությանն իր բոլոր ուժո-

նրանց մեջ,—առաջ յեկած կենդանիներ գողանալուց՝ փոխնիփոխը քշում տանում եյին և վերստին յետ բերվում,—միշտ վերջանում էր շահակից կողմերի ուզածին պես։

Ճշմարիտ է նաև ավելացնել, թե, յեթե քյուրդերի հարաբերությունը հայերի հետ բավարար էր, շատ վաղուց վերջինները պաշտպանություն և օգնություն եյին գտնում պետք յեղած դեպքում քյուրդ աղաների մոտ՝ վճարելով նրանց իրենց յեկամուտի համեմատական մի մասն իբր տարեկան հողատուրք, որ ծանոթ էր hafır=հաֆըր անունով և բաղկանում էր ամբողջ յեկամուտի մի որոշ մասից՝ կենդանիներ, հնչուն փող, նրա վրա ավելացնելով հագուստեղեն, յերկրագործական գործիքներ և այլն։

Յերբ մի հայ գյուղացի ամուսնացնում էր իր աղջիկը, իր աղան առնում էր hala=հալա անվան տակ. յերկրի սովորության համեմատ փեսայացուի կողմից հարսնացուի հօրը վճարած գումարի կեսը։ Յուրաքանչյուր գյուղ կամ յուրաքանչյուր տուն կախումն ուներ մի կամ մի քանի աղաներից, որոնց այս զանազան հարկահավաքումը նկատում էր իբր սեփականության իրավունք այն աստիճանի, որ նա ժառանգական իրավունքով փոխանցվում է կամ ծախվում յերկուստեք համաձայնությամբ։ Յեթե հայը մերժում է որևէ պատճառով չվճարել, աղան նրանից խլում է բռնությամբ՝ հափշտակելով նրա կենդանին կամ նրան պատճառելով որևէ վնաս»։

մը՝ լավ յերևալու նրա աչքին և չկոտորվելու համար՝ տալով բանակին սնունդ, բեռնակիր գրաստներ, խոտ, և այս բոլորը ձրի։

Հայ գյուղացիները հյուրընկալեցին և խնամեցին անձնվիրաբար վիրավոր զինվորներին։ Հակառակ այս բոլոր զոհողություններին՝ ռուս բանակի տարած յուրաքանչյուր հաղթանակը Հայաստանում անդրադառնում եր մի անլուր խժդժությամբ։ Ոսմանյան բանակի նահանջի ժամանակ ավարառությունն ու սպանությունն այն աստիճանի չեր, վոր Թյուրք կառավարությունն ինքն իսկ պարզեց Բարձրագույն Դռան հայերի ուղղամտությունը և անիրավ հալածանքը, վոր նրանց համար սահմանում եր զինվորությունը։

1856-ի պատերազմից հետո Ռուսաստանից գաղթած չերքեզները թափվեցին հայ գյուղերի վրա և միացան քյուրդերին շահագործելու դժբախտ ժողովրդին։ Հայերը բողոքում եյին իրենց պատրիարքարանը, վերջինս բողոքում եր Բարձրագույն Դուռը, իսկ Դուռը, ինչպես միշտ, խոստանում եր ամեն բան և չեր անում վոչինչ։ Հայերը շարունակում եյին կրել մարտիրոսությունը։ Սակայն 1867-ին Զեյթունում տեղի ունեցավ ապստամբություն, մի ապստամբություն, վոր առաջ բերավ Ֆրանսիայի միջամտությունը. բայց այս չեղավ միակը։

2. Ռուս-Թյուրքական պատերազմին՝ 1877—1878՝ Հայաստանը նորից մատնվեց կրակի և արյունի Թյուրք զինվորների և ավազակ քյուրդերի ձեռքով։

Սակայն ոսմանյան բանակի պարտությունից հետո Դուռը, մի բոպե վախենալով, թե ռուսները չպահանջեն Հայաստանի գրավումը, ինքը գրգեց հայերին հայտարարելու իրենց ինքնավարությունը Թյուրք գերիշխանության տակ։ Հայերի Ներսես պատրիարքը գնաց մեծ դուքս Նիկոլայի բանակատեղը՝ Սան-Ստեֆանո և խնդրեց ռուսների ոժանդակությունը հաստատելու մի վարչական ինքնավարություն։ Բայց անգլիական նավատորմը յերևալով Պոլսի առջև, և Թյուրքիան ստանալով հավաստիացում, թե Ռուսիան պիտի ստիպվի պարպել Հայաստանը, նա վերադառնում ե իր վորոշումին և բանակցության միջոցին ռուս լիազորներն ինքնավարության փոխարեն հազիվ կարողացան ձեռք բերել բարենորոգության խոստում։ Սան-Ստեֆանոյի դաշնագրի՝ կնքված 19 փետրվարի (3 մարտի) 1878՝ 16-րդ հոդվածն իսկապես ուներ՝—վորովհետև ռուս զորքի Հայաստանի գրաված, բայց Թյուրքիային վերադարձվելիք յերկրամասերից հեռանալը կարող ե տեղի տալ ընդհարումների և բարդությունների՝ վնասակար յերկու յերկրների լավ հարաբերություններին, ուստի Բարձրագույն Դուռը հանձն ե առնում հայերով բնակված նահանգների տե-

ղական պետքերի պահանջած բարվոքումներ ու բարենորոգումներ առանց ուշացնելու իրականացնել և յերաշխավորել նրանց ապահովությունը քյուրդերի և չերքեզների դեմ։

Մյուս կողմից Անգլիայի և Թյուրքիայի միջև 4 հուլիսի 1878-ին կնքված Կիպրոսի կոչված համաձայնության զորությամբ՝ սուլթանը խոստացավ Անգլիային, վորը յերաշխավորում եր նրա Ասիայի հողամասը Ռուսիայի դեմ, «ներմուծել անհրաժեշտ բարենորոգումները (վորն ավելի ուշ պիտի հաստատվեր յերկու պետությունների կողմից) ունենալով լավ վարչաձևի հանգամանք և պաշտպանել Բ. Դռան քրիստոնյա հպատակ ժողովրդին և ուրիշներին, վորոնք գտնվում են խնդրի նյութ դարձած հողամասերի վրա»։

Հայերը մի ուրիշ փորձ արին Բերլինի վեհաժողովի առջև պետություններին ընդունել տալու իրենց ինքնավարության ծրագիրը՝ հանդուրժելով Դռան կողմից հայ ընդհանուր մի նահանգապետի անվանվելուն՝ պետությունների հավանության գրավականով։ Սակայն վեհաժողովը չընդունեց այս դիմումը։ Ընդհակառակն, վեհաժողովը Ռուսիայի առջև Թյուրքիայի հանձն առած բարենորոգումներ ներմուծելու պարտականությունը փոխակերպեց մի հանձնառության՝ բոլոր ստորագրող պետությունների հանդեպ։ Բերլինի 1878 հուլիսի 13-ին կնքված դաշնագրի 61-րդ հոդվածն ունի.—

«Բարձրագույն Դուռը հանձն ե առնում իրականացնել առանց շատ ուշացնելու այն բարվոքումներն ու բարենորոգումները, վորոնք պահանջում են հայերով բնակված նահանգներում տեղական պետքերը, և յերաշխավորել նրանց ապահովությունը չերքեզների և քյուրդերի դեմ։ Նա պարբերական տեղեկություն պիտի տա ձեռք առած միջոցների մասին այն պետություններին, վորոնք պիտի հսկեն նրա գործադրության վրա»։

3. Թյուրքիան, ինչպես և պետք եր սպասել, չկատարեց միջազգային այն պարտականությունը, վոր նրա վրա դրված եր Բերլինի դաշնագրով։ Վեց պետությունների հավաքական նշանավոր ծանուցագիրը՝ ուղղված Դռանը 7 սեպտեմբերի 1880-ին, վոչ մի կասկածի տեղ չի թողնում սրա նկատմամբ.—«Այն ժամկետը, վորի մեջ Բարձրագույն Դուռը կարծում եր թե պիտի կարողանա բացատրվել կատարված վոճիրների համար, կամ մատնանշել իբր կատարված՝ հայերով բնակված նահանգներում, հաստատում ե, թե նա մերժում ե ճանաչել այն նահանգների մեջ տիրող անիշխանության աստիճանը և իրերի դրության մի վիճակ, վորի տևողությունն առաջ պիտի բերի ամենայն հավանականությամբ քրիստոնյա ժողովուրդների բնաջնջումը մի ընդարձակ շրջանում»։

Յեվ ծանուցագիրը յեզրակացնում էր.

«Շատ հարկեցուցիչ է իրականացնել՝ առանց ժամանակ կորցնելու՝ հայերի կյանքն ու ստացվածքը յերաշխավորելու սահմանված բարենորոգումները. անմիջապես ձեռք առնել միջոցներ քյուրդերի ասպատակությունների դեմ. առանց հապաղումի գործադրել տնտեսական նոր հնարավորությունները (combinaison financiere), զինայր կազմակերպությունը (jandarmerie) առժամապես դնել մի ավելի բավարար հիմքի վրա, մանավանդ տալ ընդհանուր նահանգապետներին մի ավելի հաստատուն լիազորություն և մի ավելի ընդարձակ պատասխանատվություն»։

Աբդուլ-Համիդի կառավարությունն այս խորհուրդներին հետևելու նկատմամբ ձեռնպահ մնաց, բայց անշահախնդիր. վոչ մի բարենորոգում չգործադրվեց։ Ընդհակառակը, կառավարությունն ավելի ու ավելի գրգռեց քյուրդերին հայերի դեմ և ծրագրված յեղանակով նրանց թույլ տվավ կալվածազրկել հայերին։ Քյուրդ ավազակներից նույնիսկ կազմակերպեց (1890 թ.) կառավարությունը անկանոն հեծելազորքի գնդեր (համիդիյե), վորոնք յեղան աղետն ամբողջ Հայաստանի։ Վերջապես հայերի դանդաղ բնաջնջումն այլևս չէր բավարարում կարմիր սուլթանին, և 1894 օգոստոսին նա փորձեց մի փոքրիկ նախաբան կոտորած Սասունում։

Սակայն պետությունները վրդովվեցին, և ռուս-ֆրանս-անգլիական մի հյուպատոսական հանձնախումբ հաստատեց թյուրքերի և քյուրդերի գարշագործությունը սասունցիների դեմ։ 1895 ապրիլին ֆրանս, ռուս և անգլիական դեսպանները կազմեցին մի հուշագրություն և Հայաստանի համար բարենորոգումների մի ծրագիր, վորը մայիսին ներկայացրին Դռան։ Դուռը բանակցության մտավ, հակառաջարկներ արավ և ամեն կերպով աշխատեց ձգձգել գործը։ Սակայն 20 հոկտ. 1895 թ. ստիպված էր հրատարակել մի հրովարտակ, վորով նա ընդունում էր յերեք պետությունների առաջարկների ինչ-ինչ մասերը։

Բայց միևնույն ժամանակ Աբդուլ-Համիդի կառավարությունը՝ տեսնելով, թե այսուհետև իրեն թույլ չպիտի տրվի սահմանափակվել միայն լոկ բարենորոգումներով, վճռեց դիմել միակ միջոցին, վոր մնում էր իրեն՝ խույս տալու նրան գործադրելուց—հայերի ջնջմանը։ Նա կազմակերպեց 1895-ի կոտորածները։

Էջ 198.—

Յեվ ավելի լավ հաստատելու համար հայ ազգի դեմ նյութված ահռելի դավադրության բարոյական պատասխանատվությունը, կարելի յե այստեղ մեջ բերել 1895-ի կոտորածների վրա խորհրդածությունները մի մարդու,—վորն ընդհանրապես ճանաչված է գերման ժողովրդի մեծամասնության կարծիքի ամենահեղինակավոր ներկայացուցիչներից մեկը,—Mitteleuropa=Միջին Յեվրոպայի նշանավոր հեղինակ՝ պ. Ֆրիդրիխ Նաումանի։

Ահավասիկ ինչ է ասում ավելի քան քսան տարի առաջ պ. Ֆրիդրիխ Նաումանը.

«Հենց վոր մարդ քննում է 80,000 կամ 100,000 հայերի բռնաման բնաջնջումը, լավ կամ վատ՝ նրա մասին կարող է ունենալ միայն մի կարծիք—այսինքն՝ մի կատարյալ դատապարտություն՝ լի բուռն զայրույթով մարդասպանների և նրանց սադրիչների դեմ։ Գարշելի խժդժություններ գործվեցան, զանգվածորեն ավելի բազմաթիվ ու վատթար, քան Կարլոս Մեծի արածը սաքսոնների դեմ։ Ի՜նչ զրկանքներ, վոր Լեպսիուս մեզ նկարագրել է, գերազանցում է մինչև այժմ մեր իմացածները։ Սիրտ՝ ինչն է մեզ արգելում ընկնել Թյուրքիայի վրա և ասել. «Կործանվիր, դու չարագործ» (Nieder, du Schutt)։ Մի բան մեզ արգելում է այս անել. այն, վոր թյուրքը մեզ պատասխանում է. «Յես նույնպես պայքարում եմ իմ գոյության համար», և մենք հավատում ենք սրան։ Մենք հավատում ենք հակառակ բոլոր վոխակալության, վորը մեզ զգալ տվավ մահմեդական արյունալի բարբարոսությունը, վոր թյուրքերը գտնվում են իրավացի ինքնապաշտպանության գործողության մեջ, վորովհետև նախ և առաջ հայկական հարցում և հայերի կոտորածի մեջ տեսնում ենք թյուրք ներքին քաղաքականության մի գործ, մի հին մեծ պետության հոգևարքի մի դրվագ, վորը չի կամենում թույլ տալ սպանվել՝ առանց վերջին անգամ արյունահեղ մի փորձի։

«Բոլոր մեծ պետությունները,—շարունակում է պ. Նաուման,—բացի Գերմանիայից գործադրեցին այն յեղանակը (մեթոդը), վորը վերջացավ Թյուրքիայի արդի գոյություն ունեցող վիճակի կործանումով։ Այս գործողությամբ հայտարարվում են Թյուրքիայից կախում ունեցող ժողովուրդների մարդու իրավունքները՝ կամ մարդկություն, կամ քաղաքակրթություն, կամ քաղաքական ազատություն, մեկ խոսքով՝ մի բան, վոր նրանց հավասար դարձներ թյուրքերին...

«Նույնչափ սակավ հռոմեական բռնակալ պետությունը կարող էր հանդուրժել նազովրացիների կրոնքին, նույնչափ սակավ թյուրք պետությունը՝ այս արևելյան Հռոմի քաղաքականության շարունակությունը կարող է հանդուրժել ազատ Արևմուտքի քրիստոնեության հանդիսադրությանը իր հպատակների մեջ։ Վոչ թե վորովհետև քրիստոնեությունը տարբեր դավանություն ունի, քան իրենը, այլ

վորովհետև գործնական արգելք և հանդիսանում օսմանյան տիրապետության, յերբ նա հասկացվի արևմտյան ձևով...

«... Թյուրքիայի համար կորսվելու վտանգը կար հայկական հարցի մեջ:

«Այն ժամանակ նա դիմեց բարբարոս, ասիական մի պետական հարվածի, նա տասանորդեց հայերին այն աստիճանի, վոր նրանք չկարողանան քաղաքականապես վոտքի կանգնել առաջիկա շրջանում: Դժնդակ մի գործ, հուսահատ քաղաքականության փորձ, անգութ, մանրամասնությունների մեջ խայտառակություն, բայց քաղաքական պատմության մի կտոր՝ ասիական ձևով»:

A. MANDELSTAM. Le sort de l'empire Ottoman. Paris 1917 *.

Բ **.

ԿՈՏՈՐԱԾԻ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ

(ԵՋ 247—255)

1914 թ. փետրվարի 8-ի ռուս-թյուրքական նախատեսած ընդհանուր քննիչները Բ. Դռան կողմից անվանվեցին՝ պետությունների հետ ջանադիր բանակցություններից հետո, և մայիսի 10/23 նրանք իրենց պայմանագիրը ներքին գործերի նախարար Թալեաթբեյի հետ ստորագրեցին: Սրանք եյին մի նորվեգիացի՝ պարոն Հոֆ և մի հոլլանդացի՝ պարոն Վեստենենկ: Թյուրքերը, սակայն, իրենց պայմանագրում աջողեցան ներմուծել միքանի տրամադրություններ, վորոնք յեղականորեն նվազեցնում եյին քննիչների իշխանությունը: Այսպես՝ օսմանյան «բարձրագույն» պաշտոնյաները, վորոնք դուրս եյին մնում քննիչների անվանումի շրջանից, գուեհկացան՝ մինչև խաբուսիկ դարձնելու աստիճան այս վերջինների հեղինակությունը: Յեվ փետրվարի 8-ի դաշնագիրը բացահայտորեն բռնաբարելով մի հոդված ավելցվեց պայմանագրության վրա, վոր թույլ եր տալիս կառավարության նրանց պաշտոնանկ անել ամեն ժամանակ՝ նրանց մի տարեկան թոշակը վճարելով:

Սակայն ընդհանուր քննիչները բնավ չկարողացան գործադրել այս նվազեցրած հեղինակությունը: Պարոն Հոֆը միայն ճանապարհորդեց մինչև Վան նույն տեղից, համարյա, անմիջապես վերադառնալու համար: Վորովհետև թյուրք կառավարությունը փութաց օգտվել յեվրոպական պատերազմից՝ ջնջելու համար պայմանագիրը և «հետաձգելու» բարենորոգման գործը:

---

* Կապույտ գիրք, եջ 635:

** Տես Ջեմալ-փաշա—«Հիշողություններ», եջ 86—87:

1914 թվի աշնան օսմանյան հպատակ ամեն մարդ 18-ից մինչև 50 տարեկան զինվորագրվեցին բանակում, և հայերը, նույնիսկ նրանք, վորոնք վճարել եյին զինվորական տուրք, թվի մեջ առնվեցին: Սակայն 1914 թվի սկզբին՝ օսմանյան առաջին պարտությունից հետո՝ բոլոր հայերը դուրս հանվեցին թյուրք շարքերից և կազմեցին «աշխատավոր» ջոկատներ, վորպեսզի գործածվեն ճանապարհներ և ամրություններ շինելու: Միևնույն ժամանակ մի հրամանագիր կարգադրում եր Օսմանյան պետության քաղաքացի բոլոր հայերին զինաթափում: Այս հրամանագիրը սկիզբ դրավ մի անհաբեկիչ վարչաձևի բոլոր հայ նահանգներում: Յերբ հայերը հանձնում եյին զենքերը, անմիջապես հաղորդվում եր Կ.-Պոլիս իբր մի դավադրության հայտնաբերում: Ընդհակառակը, յերբ խուզարկությունը փափագելի արդյունք չեր տալիս, գործադրվում եյին սարսափներ. շատ անմեղ հայեր ստիպված եյին զենք գնել խոլամներից կառավարության տալու համար (Կապույտ գիրք, եջ 637—638): Իսկ վոմանք նախատեսելով, թե հայերի զինաթափումը նախաշավիղն ե կոտորածի, վերապահեցին զենքերը ինքնապաշտպանության համար, վորոշելով իրենց կյանքն ավելի թանգ ծախել, քան իրենց հայրենակիցները 1895 թ.:

ՏԵՂԻՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Հակառակ թյուրք կառավարության ստապատիր հայտարարության՝ վոչ մի հայկական ապստամբություն չի յեղել: Հայերը զենքի դիմեցին այն դեպքում, յերբ տեսան իրենց սպառնացող կոտորածը, հնազանդելով ներքին բնազդին՝ ծախել իրենց կյանքը, վորքան հնար ե, ավելի թանգ:

Վանում նրանք դիմեցին զենքի՝ շրջակա գյուղերի ազգաբնակության մեծագույն մասի կոտորվելուց հետո և կուսակալ Ջևդեթբեյի հրամանով նրանց միքանի գլխավորներին դավաճանորեն սպանելուց հետո, վորը սրա հետ մեկտեղ հայերի թաղը շրջապատեց խրամներով: Թշնամություններն սկսան թյուրքերը, վորոնք չկարողացան գրավել հայերի դիրքերը և պաշարումը վերացրին 1915 թ. մայիսի 20-ին՝ ռուսների մոտեցած ժամանակ: Վանից վտարվելով Ջևդեթ քաշեց իր մարդասպան ջոկատներով (կասաբ-թաբուրի), ինչպես ինքն անվանում եր նրանց, Սղերդի վրա, ուր նա բնակիչների մեծագույն մասը կոտորեց (մայիսի վերջը): Ենվեր-փաշայի արժանավոր փեսան հետո անմիջապես դիմեց Բաղեշ, ուր նա կո-

տորեց (հունիսի վերջը) 15.000 հայ, վորոնք շատ թույլ մի դիմադրություն միայն արին։ Նույն միջոցին Դիարբեքիրի թյուրքերն ու քյուրդերն արդեն կոտորել եյին հայերին Սըլիվանի, Բշերիկի և այն ընդարձակ դաշտի, վորը Դիարբեքիրից տարածվում ե մինչև Սասունի լեռների ստորոտը։ Սասունի լեռցիները, սակայն, ուժեղացած փախստականներով՝ վճռեցին իրենք իրենց պաշտպանել։ Հուլիսի սկզբում թյուրքերը 20.000 մի զինվորական դնդով զորացած՝ Քյազիմ-բեյի հրամանատարությամբ կոտորեցին Մուշի դաշտի բոլոր գյուղացիներին՝ հակառակ հուսահատ մի դիմադրության. հուլիսի 10-ին նույնիսկ Մուշ քաղաքը ռմբակոծվեց. այդ մարդիկ սպանվեցին չորս օր դիմադրելուց վերջը, կիներն ու յերեխաներն այրվեցին՝ նրանց հավաքավայրի մեջ։ Սասունցիների դիմադրությունը խորտակվեց միայն օգոստոսի 5-ին յերկար ու սոսկալի մի կռվից հետո, ուր նրանց մեծ մասը վոչնչացավ։ Հուլիսի վերջին թյուրքերն աջողեցան առժամապես մտնել Վան և բնակիչներից նրանց, վորոնք չկարողացան հետևել ռուս բանակին նրա վայրկենապես կատարված նահանջի ժամանակ, կոտորեցին։

Սակայն պետք ե խոստովանել, թե Վանի, Բաղեշի, Մուշի և Սասունի շրջանների հայերը բնավ չեյին թերացել իրենց հավատարմության մեջ մինչև այն վայրկյանը, յերբ պետք եր թույլ տալ կոտորվել առանց դիմադրության՝ իբր «վնասակար ու վտանգավոր տարրեր» իրենց՝ օսմանյան սիրելի հայրենիքի բարօրության և ապահովության համար։ Նույնպես պետք ե խոստովանել, վոր հակառակ կրած բոլոր տանջանքներին և բռնադատումներին, վորոնք կատարվեցին պատերազմի առաջին շրջանում, նրանք կարողացան թաքցրնել միքանի զենքեր և համարձակվեցին գործածել իրենց մարդասպանների դեմ, վորոնց մի վորոշ թիվը նրանց պիտի ուղեկցեր իրենց վերջին ճամպորդության ընթացքին։ Սակայն պետք ե հաստատել նաև, վոր հայերը զենքերը գործածեցին միայն ինքնապաշտպանության համար, և վոչ մի տեղ նրանք նախահարձակ չեն յեղել թյուրք զորքի վրա։

Ել ավելի սխալ ե խոսել հայերի ապստամբության մասին՝ Օսմանյան պետության մյուս մասերում։

Զեյթունում «ապստամբությունը» սահմանափակված եր պաշտպանելու մի վանք մի քանիյակ հայերի կողմից, վորոնց զայրացրել եյին զինվորների (ժանդարմների) գործ դրած խժդժությունները. կղզիացած մի դեպք և բնավ չպաշտպանված ազգաբնակության կողմից, և վորն, այսուամենայնիվ, տեղահան յեղավ։

Սեբաստիայի կուսակալության միքանի քաղաքները, ինչպես Ամասիա և Շաբին-Գարահիսար, նախ՝ ամեն միջոց գործ դրին ար-

գելելու բաղխումը թյուրքերի հետ. բայց նախատեսելով կոտորածը՝ նրանք նախընտրեցին վոչնչանալ զենքը ձեռին։ Նույն կերպով վոչընչացան Ուրֆայի հայ բնակիչները։ Մուսա-դաղի հայերը, վորոնք միևնույն պայմաններում եյին գտնվում, ապաստվեցին ֆրանսիական նավատորմով։

Այսպես՝ բոլոր զինված դիմադրության դեպքերում մենք չենք տեսնում հեղափոխականներ, այլ դժբախտներ, վորոնք կարողացել են պահել միքանի զենք և ավելի շուտ նախընտրել են մաքառել մինչև մահ, քան թե յենթարկվել դանդաղ մահվան կամ տարագրության թշվառությանը։ Սակայն մարդ տեսնում ե, թե ինչ բանի յեր ծառայում ամեն տեսակ դիմադրությունից հրաժարվելը և զենքեր հանձնելը Հ. քաղաքի նման, վորի կուսակալը բոլոր զենքերը ժողովելուց հետո շտապում ե հաղորդել Պոլիս հայերի պոռթկած մի ապստամբության մասին, և վորին հանձնարարվեց խեղդել ապստամբությունը։

Հայերն, ուրեմն, չպիտի հանդիմանվեն իրենց կյանքը պաշտպանած լինելու համար։ Սակայն պետք չե մոռանալ, վոր մի փոքրիկ փոքրամասնություն միայն իվիճակի յեր նույն բանն անելու։ Հայերի մեծամասնությունն արդեն պատերազմի սկզբում ստիպվեց իր զենքերը հանձնել կառավարության, և այս դժբախտները պետք ե առանց ամենափոքր դիմադրության ընդունեյին կառավարության՝ նրանց համար պատրաստած դաժան ճակատագիրը։

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թյուրք մի հիշատակագիր, վորի վերնագիրն եր «Ճշմարտությունը հայերի հեղափոխական շարժումի մասին և կառավարության ձեռք առած միջոցները»*, ասում ե.—«Նույն մարտ ամսուն հայկական մի ապստամբություն պայթեց Թիմարի համայնքում, վորը կախումն ուներ Վանից։ Հետո շուտով ապստամբությունը տարածվեց Գավաշ ու Շատախ գավառներում։ Նույնիսկ Վան քաղաքում ապստամբական շարժումը ել ավելի ուժգին յեղավ. քաղաքի կարևոր մասերը հրդեհվեցին. հարյուրավոր անձեր՝ թե զինվորական և թե քաղաքացի՝ սպանվեցին»։

Այս թյուրքական ճշմարտությունն ե։ Ահավասիկ ամերիկյան ճշմարտությունը։—Մի ամերիկուհի՝ միսս Գրաս Հիգլեյ Կնապպ՝ Վանա հայկական թաղը թյուրքերի կողմից պաշարված միջոցին՝ գտնըվում եր Ամերիկյան Միացյալ Նահանգների տանը։ Նրա վկայությունն

* La vérité sur le mouvement révolutionaire arménieus et les mesures gouvernementales.

ամենաբարձր արժեքն ունի (Կապույտ գիրք, էջ 32—47)։ Նա ժխտում է, թե հայերը գրգռեցին թյուրքերին. բոլորովին ընդհակառակը. նրանց ղեկավարներն աշխատում էին արգելել բախումը։ Այս բախումի պատճառ չեղավ ընդհանուր նահանգապետ Ջևդեթ-բեյը, վորը դավաճանորեն սպանել տվավ հայ ղեկավար Իշխանին և նրա ուրիշ հայրենակիցներին, վորոնք նույնիսկ իր խնդրանքով գնում էին Շատախի շրջանը՝ խաղաղացնելու այնտեղ ծագած խռովությունը. միևնույն ժամանակ Ջևդեթ-բեյը ձերբակալեց և Պոլիս ուղարկեց Վանա յերեսփոխան Վռամյանին։ Այս տեսնելով հայերն այլևս ամեն վստահություն կորցրին կուսակալի վերաբերմամբ և մերժեցին տալ նրան այն 3000 զինվորցուները, վորոնք նախապես խոստացված էին, թեպետև նրան առաջարկեցին 400 հոգի։ Ջևդեթը, սակայն, պնդեց 3000-ի վրա և հայտարարեց, թե ինչ էլ վոր լինի, նա պիտի հաղթի «ապստամբությանը»։ Միս Կնապպ ասում է՝ բայց դեռ վոչ մի ապստամբություն չկար։ Կուսակալը, սակայն, հայոց թաղը շրջապատեց խրամների մի գծով. հայերը վճռեցին իրենց կյանքը ծախել, վորքան հնար է, ավելի թանգ. պատրաստեցին մի պաշտպանողական գիծ։ Թշնամություններ սկսան թյուրքերը 1915 թ. ապրիլի 20-ին. բայց թյուրք զենքերը փառքով շատ չզարդարվեցին։ Մինչդեռ Վանա 1500 հայերը աջողությամբ պաշտպանում էին իրենց թաղը ոսմանյան կանոնավոր զորքի դեմ, թյուրքերն ու քյուրդերը հրդեհում էին շրջակա գյուղերը և կոտորում այր մարդկանց, կիներին և յերեխաներին։ Քսանյոթօրյա պաշարումից հետո ռուսներն ազատեցին քաղաքը, և թյուրքերը փախան (6/19 մայիսի 1915 թ.)։

Միս Կնապպի պատմածը հաստատված է պարոն Յարրոյի՝ ամերիկյան տան մանչերի վարժարանի տնօրենի կողմից։ (Տեսնել՝ «Վանի հերոսական պաշտպանությունը» տետրակը, Ժնև, 1916 թ., տպագրություն «Դրոշակ», էջ 3—12)։ Թյուրք հիշատակագրի հավաստիացնելը՝ թե ռուսների Վան գրավելուց հետո՝ «քաղաքում մնացած իսլամ բնակչությունը կոտորվեց», այս ավելի չէ, քան թյուրքական սուտ։ Ընդհակառակը, իսլամները՝ մեծ մասամբ գրավված տեղերի փախստականներ՝ շուրջ 1000 հոգի խնամվեցին ամերիկացի միսիոնարների և կոմսուհի Տոլստայի կողմից և հետո անմիջապես ռուս զորավարի միջոցով տեղավորվեցին գյուղերում (պատմեց միս Կնապպ. Կապույտ գիրք, էջ 41—42)։

Այն հետաքրքրական պատմությունից, վոր գրել է Վանի ինքնապաշտպանության համար հայ պարոն Ռշտունին (Կապույտ գիրք, էջ 48—70) առնում ենք հետևյալ դեպքերը.—«Հենց վոր գերմանները պատերազմ հայտարարեցին ռուսներին, թյուրք կառավարու-

թյունը պաշարման դրություն հայտարարեց Վանում և զենքի տակ կանչեց 21 տարեկանից մինչև 45 տարեկան բոլոր այր մարդկանց՝ առանց ցեղի և կրոնի խտրության։ Հայերը՝ քաջալերված իրենց գլխավորների կողմից՝ իրենց պարտականությունը կատարելու՝ պատասխանեցին կոչին, և սկզբում նրանց հարաբերությունը թյուրքերի հետ բավական լավ էր։ Բայց և այնպես հայ, ասորի զինվորների մեծ մասը մնաց առանց զենքի և զինվորական հանդերձանքի, և տալիս էին վատ սնունդ, վորը առաջ բերավ դասալքություն։ Թյուրքիայի պատերազմ մտնելուց հետո թյուրք կառավարությունը հայերի հանդեպ բռնեց կասկածելի մի դիրք, մանավանդ յերբ իմացավ, թե նրանց յեղբայրակիցներից վոմանք կռվում էին ռուս բանակում։ Անմիջապես զինաթափվեցին բոլոր հայ զինվորները և գործածվեցին իբրև բանվորներ։ Բայց թյուրք բանակի առաջին ձախողանքի ժամանակ թյուրք կառավարությունը հայերի հետ վարվում էր բավական բարյացակամությամբ և նույնիսկ շողոքորթում էր նրանց։ Բայց յերբ ռուս բանակը նահանջեց, թյուրք զորքը վոչնչացրեց հայ և ասորի ազգաբնակության մեծագույն մասը դատարկված գյուղերում, ինչպես և Բաշկալե, Սարայի և ուրիշ տեղեր։ Ապա կոտորածը տարածվեց Վանա շրջակա գյուղերում՝ Նորադուզ, Հագարան, Բողազ-Քյասան և ուրիշ տեղեր։ Յեվ, սակայն, այս լուրերն իմանալով հանդերձ՝ Վանի հայ ղեկավարները խորհուրդ տվին իրենց ժողովրդին լռությամբ հանդուրժել և կոտորածի վոչ մի պատրվակ չտալ թյուրքերին։ Կառավարությունն էլ իր կողմից շատ անգամ ոգտագործեց Դաշնակցություն կուսակցության պետերին՝ հանգստացնելու հայերին և արգելելու մի վտանգավոր ապստամբություն։ Այսպես Վռամյանն ուղարկվեց իբր հաշտարար միջնորդ Վոստան և Բայրաք, ուր հայերը պաշտպանվել էին քյուրդերի դեմ։ Յերբ կուսակալ Ջևդեթ-բեյը վերադարձավ իր զինվորական արշավանքից, շնորհակալություն հայտնեց Վռամյանին նրա վարմունքի համար։ Բայց և այնպես այս բանը չարգելեց նույն Ջևդեթին՝ Շատախի խռովությունների ժամանակ ճանապարհին սպանել տալ Իշխանին և մյուս հայերին, վորոնք ուղարկված էին միջնորդության համար, և դավաճանությամբ ձերբակալելով Վռամյանին և ուրիշներին, վորոնք կանչված էին նրա մոտ խորհրդակցելու համար։ Ջևդեթ-բեյը անթափանցելի մի նկարագիր ուներ։ Յերբեմն նա յերդվում էր, թե ինքը չի կամենում անպատվել իր հորը, վորը խաղաղությամբ կառավարել էր Վանը դժվար ժամանակներում, յերբեմն նա գոռում էր՝ յեթե հայերը չհանձնեն իրենց զենքերը և դասալիքներին, նա պիտի կոտորել տա բոլորին։ 1915 թ. ապրիլի

19-ին Վանի շրջանի վերաբերյալ Ականցի բնակիչները կոտորվեցին։ 20-ին թյուրք զինվորները Վանում սպանեցին յերկու հայերի, վորոնք ուզել եյին արգելել միքանի կիների բռնաբարումը։ Այս յեղավ թշնամության ազդանշանը։ Զինվորների և հայերի միջև տեղի ունեցած տեսարանը դիտված եր գերման միսիոնարների և իրենց պետ պարոն Շպեռի կողմից, վորը մի նամակով բացատրած եր կուսակալին։ Բայց վերջինս, այսուամենայնիվ, հրամայեց կրակ բանալ հայ թաղի վրա» (Կապույտ գիրք, եջ 63—64)։

Ռուբեն՝ Սասունի հայերի միակ վերապրող ղեկավարը՝ Սասունի, Բաղեշի և Մուշի կոտորածները բացատրում է հետևյալ կերպով (եջ 80—87).—Յեվրոպական պատերազմի սկզբին հայ Դաշնակցության կուսակցությունը Կարնո մեջ ժողով գումարեց՝ վորոշելու համար իր դիրքը։ Յերիտասարդ թյուրքերն այնտեղ փութացրին իրենց պատվիրակներին, վորոնք առաջարկեցին հայերին մասնակցել մի կազմակերպության՝ Կովկասում ապստամբություն առաջ բերելու համար. սրանք առաջարկեցին հայերին՝ աջողվելու դեպքում կազմել մի հայկական նահանգ՝ ռուս և թյուրք հողամասերից՝ ոսմանյան հովանավորության տակ։ Բայց հայերը մերժեցին՝ մեծ զայրույթ պատճառելով թյուրքերին։ Ավելի ուշ՝ ռուս-թյուրք հարաբերությունը խզվելուց առաջ՝ այս վերջինները նոր բանակցություն սկսան հայ ղեկավարների հետ, բայց նորից ձախողվեց (եջ 80—81)։ Այն ժամանակ նրանք պահանջեցին, վոր գյուղացիները հանձնեն իրենց զենքերը։ Հայերը պատասխանեցին, թե նրանք չեն կարող իրենց զենքերը հանձնել, վորչափ քյուրդը մինչև իր ակռաները զինված պիտի մնա։ Այնուհետև թյուրքերն առաջ բերին միքանի բաղխումներ տեղական բնույթ կրող, վորոնք, սակայն, կարգադրվեցին կառավարության և դաշնակցական ղեկավարների միջև կատարված բանակցությամբ (եջ 83)։ Բայց 1915 թ. մայիսի վերջին Ջևդեթ-բեյը Վանից փախչելով մտավ Սղերդ իր «մարդասպան» (բուչեր) ջոկատներով և կոտորեց ազգաբնակության մեծ մասը։ Հետո Ջևդեթ-բեյը քայլեց Բաղեշի վրա (հունիսի վերջին)։ Նա սկսավ քաղաքում բռնաբար գանձելով 5000 թյուրքական վոսկի փրկանք և կախաղան հանելով մի քանյակ հայ գլխավորներին։ Ապա ձերբակալել ու գնդակահարել տվավ առողջակազմ մարդիկներին քաղաքից դուրս։ Խուժանը բռնեց կիներին ու մանուկներին և քշեց դեպի հարավ. ազգաբնակության մնացած մյուս բոլոր մասը, վորոնք, ինչպես ասում են, խեղդեցին Տիգրիսում։ Միքանի անցողական դիմադրություններ շատ դյուրավ խեղդվեցին զինվորների կողմից։ Ինքնապաշտպանության դիմողները՝ իրենց վերջին փամփուշտը կրակելուց հետո՝ իրենք իրենց թունավորեցին կամ անձնասպան յեղան իրենց տներում (Կապույտ գիրք, եջ 84)։ Կոտորողները, սակայն, բուռն դիմադրության հանդիպեցին Սասունի շրջանում։ Բաղեշի խժդժություններից շատ առաջ թյուրքերն ու քյուրդերը կոտորել եյին Սըլիվանի, Բշերիկի և Դիարբեքիրից մինչև Սասունի լեռների ստորոտը տարածվող դաշտի հայերին։ Հազարավոր փախստականներ յեկան կանխազգեկուցել Սասունի և Մուշի բնակիչներին նրանց սպասող ճակատագիրը, և հայերը վճռեցին իրենք իրենց պաշտպանել։ Հունիսի սկզբին քյուրդ ցեղերը հարձակվեցին Սասունի լեռների վրա, բայց նրանց գրոհը յետ մղվեց այն յերեսուն հազար հայերի կողմից, վորոնք ամրացել եյին դիրքերում։ Սակայն ամսու վերջին Քյազիմ-բեյի հրամանատարությամբ տասը հազար կանոնավոր զինվոր յեկավ Կարինից, և թյուրքերն սկսան բռնաջնջել դաշտի և Մուշ քաղաքի հայերին՝ զինաթափումի պատրվակի տակ։ Դաշտի հարյուր գյուղերի բնակիչների մեծ մասը յերեվան բերավ մի հուսահատ դիմադրություն. բայց շուտով հատավ փամփուշտի պաշարը, և նրանք վոչնչացան։

Նրանք, վորոնք զենք չունեյին և բնավ մի բան չեյին արած կառավարության դեմ, նույնպես նվազ պաղարյունությամբ չկոտորվեցին։ Նույնիսկ Մուշ քաղաքում հայերն ամրացան դիրքերում և չորս որ կռվեցին. թյուրք հրետանին գերման սպաների հրամանակարգով խորտակեց նրանց դիրքերը, և բոլոր պաշտպանվողներն սպանվեցին կռվելով։ Կիներն ու մանուկները կենտրոնացրին բանակատեղում և կենդանույն այրեցին։ Մարդախողխողները բռնում եյին յերեխաներին մի վոտքից և ձգում կրակի մեջ և կանչում մորը, վորն արդեն այրվում եր՝ «ահա ձեր աղուծները»։ Խորոված մարմնի հոտը լցրել եր ոդը և դեռ շատ որեր. ահա ինչ վոր գերի ընկած թյուրք զինվորները պատմում եյին ռուսներին, և վորոնք ներկա յեն յեղել այդ տեսարանին (եջ 86)։

Մուշը վոչնչացնելուց հետո Քյազիմ-բեյի գունդերը հարձակվեցին Սասունի լեռների վրա, վորը գրավվեց հայերի հերոսական դիմադրությունից հետո, և վորոնցից շատ քչերը կարողացան ազատվել նախճիրից (եջ 87)։

Մի գերման վկա, վոր շարժումների միջոցին գտնվում եր Մուշում, հաղորդում է, թե քաղաքը ռմբակոծվեց հուլիսի 10-ին այն պատրվակով, թե հայերը կամենում են փախչել։ Հուլիսի 11-ին հայերին յերեք որ շնորհեցին աքսորի պատրաստվելու համար. բայց յերկու ժամ վերջը զինվորներն սկսան մտնել տները՝ ձերբակալելու բնակիչներին և տանելու բանտ, մինչդեռ ռմբակոծությունը վեր-

ակսավ։ Լսվում էին տներում այրվող մարդոց վողորմելի ճիչերը։ Վկան խնդրեց կառավարչից առնվազն գոնե գթալ մանուկներին, բայց վերջինս պատասխանեց, թե հայ մանուկները պետք է վոչնչանան իրենց ազգի հետ։ Մուշն ամբողջությամբ այրվեց։ Միքանի վերապրողներ ուղարկվեցին Ուրֆա։ Յուրաքանչյուր սպա պարծենում էր իր անձամբ սպանած հայերի թվով (եջ 89—90)։

Թյուրք կառավարության հիշատակագիրը («Ճշմարտությունը» և այլն) բոլորովին լռում է Մուշի, Բաղեշի և Սասունի արյունալի դեպքերի մասին։ Նա բավականանում է անցողակի կերպով ասել, թե 1914 թ. վերջին՝ Մուշում և Խիզանում զինայինները զինված հարձակումի յենթարկվեցին։

Հ.-ում 1915 թ. մայիսի սկզբին կուսակալը դիմեց բողոքական գերմանական միսսիոնի ոֆիսին (պաշտոնարան)՝ համոզելու հայերին իրենց զենքերը հանձնել։

Այս միջամտության պատճառով հայերը մի համաժողով ունեցան իրենց թյուրք համաքաղաքացիների հետ, վորոնք հայերին յերաշխավորեցին նրանց ապահովությունը, յեթե նրանք ընդունեն իրենց յեղած զինահանձնումի հրավերը։ Հայերը համաձայնվեցին· Նույնիսկ բանտարկված մարդիկ (400 զինակոչներ) ցույց տվին այն տեղերը, ուր զենքերը պահված եյին։ Այնուհետև կուսակալը հանել տվավ զենքերի լուսանկարները և ուղարկեց Պոլիս՝ հայտարարելով, թե Հ. քաղաքում մի ապստամբություն պոռթկալու կետի վրա յե, և խնդրում է կատարյալ լիազորություն ճնշելու համար։ Ընդունելով այս լիազորությունը՝ նա տեղահան արավ հայերին (Կապույտ գիրք, միսս Դ. Ա.-ի վկայությունը՝ նույն տեղի գերման կարմիր խաչի անդամներից՝ դանիացի տիկին)։

Սեբաստիայի նահանգում Դուզասար, Գավրա, Խոսան, Խանձոտ և այլն տեղերի հայերն իրենց ամբողջ ուժը գործ դրին պապատերազմի առաջին շրջանում արգելելու վորևէ բաղխում, բայց յերբ տեսան, թե իրենց այս կրավորական դիմադրությունը վոչ մի ոգուտ չունի, նրանք դիմեցին զենքի և յերկար որեր պաշտպանվեցին։ Շաբին-Գարահիսարի և Ամասիայի հայերն աջողեցան մինչև իսկ թյուրքերին քշելու իրենց քաղաքներից· բայց նրանք վոչնչացան մինչև վերջին անձը՝ գերազանց ուժերի հարձակումով։ (Մուրադի պատմածը· Կապույտ գիրք, եջ 324)։ Շաբին-Գարահիսարի դեպքը պատմում է թյուրք հիշատակագիրն այնպիսի լկիրշ ու այլանդակ կերպով, վորի գաղտնիքը միայն թյուրքերը գիտեն· «Այս տարվա հունիսի սկիզբը հայերը հանկարծակի և առանց վորևէ շարժառիթի (sic!) հարձակվեցին Շաբին-Գարահիսար քաղաքի վրա և հրդեհեցին

խալաֆների թաղը։ Ութ հարյուր ապստամբներ, վորոնք փակված եյին քաղաքի միջնաբերդում, լսել անգամ չուզեցին կայսերական կառավարության հայրական խորհուրդները յեվ հաշտարար առաջարկները։ Նրանք պատճառ յեղան հարյուր հիսուն մարդու սպանության, վորոնց թվում և ժանդարմների հրամանատարին»։

Վերապատվելի Տիգրան Անդրեասյան՝ Զեյթունի հայ-բողոքականների յեկեղեցու պաստորը հետևյալ կերպով է բացատրում շարժումը·

«Զորաշարժի ժամանակ՝ 1914 թ. ոգոստոսին Զեյթունի հայերը զենքի կանչվեցին· բայց շատերը փախան լեռը զինվորական ծառայությունից ազատվելու համար։ Նրանցից մի խումբ՝ թվով 25 հոգի հարձակվեց խլած նորակոչների վրա, վորի պատճառով Մարաշի գավառապետ (մյութեսարիֆ) Հայդար-փաշան Զեյթուն յեկավ 600 զինվորով ոգոստոսի 31-ին։ Զեյթունցիները վոչ մի դիմադրություն չարին և հանձնեցին 25 հանցավորներին։ Հայդար-փաշան սրանով չգոհանալով՝ պահանջեց հանձնել զենքերը և այս պատրվակի տակ սկսավ ծեծել ու չարչարել ժողովրդին ամենաանգութ կերպով· նրանք, վորոնք հրացան չունեյին, գնեցին, վորպեսզի կարողանան մի բան հանձնել։ Հետո փաշան վերադարձավ Մարաշ իր հետ տանելով բավական թվով հայեր՝ իբր նորակոչներ։ Սակայն նրանցից շատերը չկարողանալով տանել այն հոռի վարմունքը, վորին յենթարկեցին նրանց զորանոցներում, փախան և Զեյթուն յեկան։ Դասալիքներին հետապնդելը թյուրքերին մի նոր պատրվակ տվավ ամեն տեսակ խժդժություններ կատարելու։ Բայց յերբ 1915 թ. փետրվարին միքանի տաք-գլուխներ մի դավադրություն կազմեցին կառավարության դեմ, հայ յեպիսկոպոսն անձամբ լուր տվավ։ Յեվ յերբ մի քանյակ հուսահատված հայեր մարտ ամսում սպանեցին միքանի վոստիկանի և ապաստանեցին Զեյթունի մոտ մի վանք, քաղաքի ամբողջ ժողովուրդը դատապարտեց նրանց և հայտնեց կառավարության նրանց փախստավայրը։ Թյուրքերը գրավեցին վանքը ծանր կորուստներ կրելուց հետո· իսկ պաշտպանվողների մեծ մասն ազատվեց՝ խույս տալով։ Ընդհակառակը, քաղաքի անմեղ ժողովուրդը տեղահան յեղավ ու քշվեց Միջագետք» (Կապույտ գիրք, եջ 479—481)։

Պետք է նշանակել նաև, վոր թյուրք կառավարության հիշատակագիրն իսկ միայն յերկու դեպք է հիշում Զեյթունի բնակիչների դեմ·

1. «Մարտի 31-ին 1331 (=1915) մի հայ ավազակախումբ ամրացավ վանքում, վորն իշխում էր Զեյթունի վրա, և կրակ բաց արավ զինվորների մի վաշտի վրա, վորը մոտենում էր վանքին։ Վաշտի հրամանատարն, ինչպես և նրան ընկերացող զինայիններն

սպանվեցին»։ 2. «Դասալիքներից և հայ ավազակներից բաղկացած խմբեր հարձակվեցին Զեյթունի կառավարական շենքի վրա և փորձում եյին (sic!) ջնջել իսլամ ժողովրդին առանց խնայելու կիներին ու յերեխաներին»։ Այսպես, ուրեմն, նույնիսկ թյուրք կառավարության խոստովանությամբ, Զեյթունի քաղաքացի ժողովուրդը չե, այլ ավազակախմբեր, վորոնք թշնամական գործողություններ եյին սկսել կառավարության դեմ։ Մյուս կողմից պետք ե նշանակել, վոր ամբաստանության յերկրորդ կետն այնքան նվազ իրավաբանորեն կազմված ե, վոր անկարելի յե հասկանալ։

Անտիոքի մոտ Մուսա-դաղի վեց գյուղերի ժողովուրդը վճռեց չենթարկվել աքսորի պատրաստվելու համար տրված հրամանին, վորը տվել եր թյուրք իշխանությունը, և թվով 5000 հոգի քաշվեցին լեռը։ Թյուրք զնդերը հարձակում գործեցին նրանց վրա 1915 թվի հուլիսի 21-ին. բայց հայերը պաշտպանվեցին 53 որ և վերջապես ազատվեցին Ֆրանսիայի նավատորմով, վորը նշմարեց նրանց տագնապի նշանը և սեպտեմբերի 14-ին փոխադրեց նրանց Յեգիպտոս (Վերապատվելի Անդրեասյանի պատմածը. Կապույտ գիրք, եջ 512—520)։

Ուրֆայի հայերը նույնպես յենթակա եյին տեղահանության և լավ կերպով ամրացան իրենց թաղում։ Նրանք ամբողջ մի ամիս պաշտպանվեցին 6000 թյուրք զինվորների դեմ, բայց հետո ընկճվեցին գերազանց թվի առջև և կոտորվեցին (եջ 526 և 532, մի ոտար վկայի հաշվագրություն)։

A. MANDELSTAM. Le sort de l'empire Ottoman. Paris 1917. (p. 294—301)

Գ.*.

M. EDGAR GRANVILLE-Ի՝ ՌՈՒՍԻԱՅԻ ԴԵՄ ԲԱՆԱՁԵՎԱԾ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Այս գիրքը մամուլի տակն եր, յերբ ծանոթացանք պ. Եդգար Գրանվիլի հոդվածին՝ «Ցարիզմը Փոքր-Ասիայում. Հայոց խնդրի ծագումը» (հրատարակված *Revue politique Internationale*, 1917 թ. № 26, եջ 149—208)**։

Պ. Եդգար Գրանվիլ, յեթե թյուրք չե, ամեն պարագայի, մեզ թվում ե, պատկանում ե թյուրքասերների այն խմբին, վորոնց հաճելի չե ներել Թյուրքիայի հին և նոր վոճիրները Ռուսիայի կարծեցյալ մթին դավերով. դավեր, վորոնք լույս աշխարհ հանեն այնքան շատ գրավական ունի այսոր սիրահոժար կերպով ընդունվելու վորևե համայնքի կողմից, վոր Ռուսիայում ինքնակալությունը տապալվելուց հետո՝ մեր յերկրի հանդեպ ամենավայրագ ատելությունը կարող ե ծածկել ցարիզմի դեմ սրբազան զայրույթի վերարկուի տակ։ Մենք, սակայն, համոզված ազատամիտ ռուս մարդ մեր ամբողջ կյանքում՝ յերդվյալ թշնամի ամեն տեսակ բռնակալության, բոլոր մարդոց և բոլոր ժողովուրդների ազատության իդեալին բուռն փափագող— մենք մերժում ենք Թյուրքիայի այս արդարացումն, վոր կատարված ե մեր հին վարչաձևի սխալներով ու հանցանքովը։ Վոչ, նոր Ռուսիան, վորը տապալեց հինը և վորը ժխտում ե նրան իր ամեն հարաբերություններում, վոչ մի իրավունք չունի ժխտելու Թյուրքիայի հանդեպ իր նախորդների քաղաքականությունը։ Նա պիտի չկարմրի Բալկանյան ժողովուրդներին թյուրքական լծից ազատելու համար։ Յեվ յեթե նա կոչված ե անհետացնելու Ռուսիայի ներքին հին քաղաքականության բոլոր հետքերը, վոր նա ուներ այլածինների հանդեպ ընդհանրապես, և հայերի վերաբերմամբ մասնավորապես, նա պիտի չկարմրի հին Ռուսիայի արտաքին գործերի նախարարի քաղաքականության համար հայերի վերաբերմամբ։ Հայերին՝ քյուրդ և թյուրք մարդասպանների դանակից ազատելու համար հետապնդած պայքարը պիտի մնա մեր պատմության փառավոր եջերից մեկը։

Պ. Եդգար Գրանվիլ ասում ե. «Մարդիկ հազիվ անգամ ուզել են հասկանալ, թե Արևելքի թույնը, վոր անդամալուծում ե իսլամական վերածնության ամեն ջանք և թյուրք-քրիստոնյաների հարաբերությունների բարելավումը, նույնացավ այն թույնի հետ, վոր ցարիզմը պատվաստեց Ռուսիային՝ բարոյապես բաժանելով նրան Արևմտյան Յեվրոպայից։ Ավելի քան մի դար Ոսմանյան պետության դիվանագիտական բժիշկներն իրանց հիվանդի վրա յենթադրում եյին մի անբուժելի հիվանդություն, և այնքան անգամ նախասել եյին նրա վերահաս մահն առանց կռահելու, թե ախտաբուժության ամենապարզ և ամենաազդու յեղանակը պիտի լիներ մարմնի կազմից տարհանել ոտար դավերի թույնը, դեղախառնուրդից՝ ցարական քաղաքականության քայքայիչ մասը։ Արևելքում միշտապես ցարիզմի դիտակետն ե յեղել, վոր ճշտորոշում եր ոտար բոլոր դավերն այս յերկրներում, ուր պետությունները չկամենալով ցարի միջոցով աղարտել իրենց համբավը՝ միանում են նրան ստանալու համար «կարկանդակի» այնքան փափագած մի մասը (Նույն տեղ, եջ 150—151)... ցարիզմի լուծական դեղը (դիսսոլվանտ) այնքան իշխանաբար գործադրված նշանավոր գործավար Իգնատյևի հեռատեսն-

* Տես Ջեմալ-փաշա—«Հիշողություններ», եջ 7—8։

** Միքանի շշուկներին նայելով՝ Գրանվիլ—կեղծ անուն և Զվիցերիա բնակվող թյուրք մի բարձր պաշտոնատարի։

րի կողմից, զորավարի, վոր Արևելքում քայքայիչ քաղաքականության քիմիագետ պետն եր, վերջացավ վարակելով ամբողջ միջազգային քաղաքականությունը։ Ինչ վոր կամենում ենք ցուցադրել այստեղ անհերքելի վկայությունների լուսով, այս լուծիչ դեղի ստորերկրյա ճշգրիտ գործունեությունն ե մի մասնավոր խնդրում, վորն արդի քաղաքական պատմության մի առանձին գլուխն ե կազմում» (եջ 152)։

Տեսնենք պ. Եդգար Գրանվիլի անհերքելի վկայությունները.—

Աբդյուլ-Համիդի շրջանի համար ասում ե. «Յեղավ մի շրջան, յերբ Նիկոլայ 2-րդ և Աբդյուլ-Համիդ մրցում եյին իրենց վայրագությամբ իրենց իշխանության յենթակա Հայաստանում. ամեն մարդ գիտե, վոր 1895—1896 թ. ցարի և իր խորհրդականների բռնած դիրքը քաջալերեց «կարմիր սուլթանին» հայերին կոտորելու՝ իր հոռի քաղաքականության մեջ։ Այն ժամանակ եր, յերբ իշխան Լոբանով-Ռոստովսկին՝ ցարի արտաքին գործերի նախարարը՝ մեջտեղ նետեց այս նշանաբանը, թե Ռուսիայի համար նախընտրելի ե իր սահմանի վրա ունենալ մի «Հայաստան առանց հայի», վորովհետև հայերը ռուս փափագների համար ներկայանում եյին միայն խռովարար տարրեր, առանց վորոնց ավելի դյուրին պիտի լիներ ցարիզմի համար կուլ տալ հայկական նահանգներն այն որ, յերբ կատարվելու լինի Փոքր Ասիայի բաժանումը» (եջ 158—159)։ Յեվ դարձյալ. «Յեվ Աբդյուլ-Համիդի ամենամտերիմ գործակիցը՝ հայերին վոչնչացնելու գործում յեղավ Լոբանով-Ռոստովսկին, վոր ղեկավարում եր ցարի արտաքին քաղաքականությունը «յեղբայր ժողովրդի» համար ամենավողբերգական մի վայրկյանում» (եջ 166)։

Թվում ե, պ. Գրանվիլ մտածում ե, վոր Լոբանով-Ռոստովսկու կարծեցյալ «նշանաբանի» պարզ հաստատումը մի «անհերքելի վկայություն ե» ռուսների մեղսակցության կարմիր սուլթանի կազմակերպած կոտորածներուն։ Նա Ռուսիայում գտնվող հայ տարրերի վոչնչացումի մի ուրիշ ապացույց ե տեսնում նրա մեջ Պլեեյից—իշխան Գոլիցինի շրջանում, վորն ախորժ հոժարությամբ համեմատում ե այն քաղաքական ազատության հետ, վորը վայելում եյին Թյուրքիայի հայերը։ Պ. Գրանվիլը, ուրեմն, մի ահագին ամբաստանություն ե մեջտեղ նետում առանց հաստատելու։ Այս ամբաստանության հանդեպ մենք հակադրում ենք նախ այն բազմաթիվ ցուցումները, վորոնք վերաբերում են Ռուսիայի այս շրջանում կատարած դերին, վորոնք գտնվում են ֆրանսիական՝ 1893—1897 թ. Դեղին գրքում հայերի գործերի մասին, և մանավանդ կոմս Վոլինոյի՝ Ֆրանսիայի Ս.-Պետերբուրգի գործավարի հեռագիրը արտաքին գործերի նախարար պ. Հանոտոյին 1896 թ. դեկտեմ-

բերի 10-ին № 319.—«Քիչ առաջ յես տեսա պ. դը-Նելիդովին, վորը յերեկ ընդունվել եր կայսեր կողմից, և վորը վաղ առավոտ մեկնելու յե Կ.-Պոլիս, ուր նա լինելու յե չորեքշաբթի։ Նա ինձ հաղորդեց իմաստն այն հրահանգների, վոր բերանացի տրվեց նրան և վորոնք գրավոր նրան պիտի տրվեն իր մեկնելուց առաջ։ Կայսրը նրան հրամայել ե իր անունով հրավիրել սուլթանին ամենավճռական բառերով անհապաղ և առանց հետին մտքերի գործադրել խոստացված բարենորոգումները և նրան ազդարարել, վոր, յեթե նա չհամակերպի Յեվրոպայի միաձայն փափագին, ինքն իրեն յենթարկում ե մի մեծ վտանգի։ Պ. դը-Նելիդովը ինձ ասաց, վոր նա պիտի աշխատի առաջ բերել պետությունների կատարյալ համաձայնություն Թյուրքիայի գործերին վերաբերյալ և սուլթանից չծածկել, վոր, յեթե նա չկատարի իր հանձնառությունները և այսպիսով առաջ բերի նորից անկարգություններ, ինքն իրեն յենթարկում ե յեվրոպական միջամտության, վորի հետևանքները կարող են Ոսմանյան պետության համար լինել աղետաբեր»։ Ընդհանրապես մենք թախանձանքով հանձնարարում ենք պ. Գրանվիլին, յեթե նա անկեղծ կասկած ունի կոտորածների հեղինակների մասին, հիշված ֆրանսիական Դեղին գրքի ընթերցումը, նույնպես և Լեպսիուսի գրքի։ Դարձյալ կարելի յե, վոր Եդգար Գրանվիլ անգիտակ ե մինչև այժմ ներկա Գերմանիայի մի ձայնատարով (porte-voix) հայտնված հիմնալի տեսությունը կոտորածների մասին—պ. Ֆրիդրիխ Նաումանի, և վորը մենք առաջ բերինք այս հատորում (եջ 199)։

Գալով մեծ պատերազմից առաջ յեղած շրջանին՝ պ. Գրանվիլ փոքր ինչ նեղն ե ընկնում Ռուսիայի՝ նույն կառավարության հանդեպ հայերի բռնած նոր դիրքի նկատմամբ, վորի հետ նրանք անկեղծ խաղաղություն կնքեցին փոխադարձաբար։ Իսկապես պետական մեծ մարդը և մեծ սրտի տեր, ինչպիսին եր կոմս Վարանցով-Դաշկով Կովկասում ցարի ընդհանուր փոխարքան, Պլեեյի և Գոլիցինի ատելի քաղաքականությունը փոխարինեց մի ազատական խելացի քաղաքականության, վորը լավագույն պտուղներ տվավ։ Նա այս ազատ քաղաքականությունն սկսավ, համարյա, իր իսկ կամենալովը՝ ոգտվելով ցարի հետ իր ունեցած բարեկամական հարաբերություններից և շատ հաճախ ընդհարվելով ռուս հետադիմականների խուլ դիմադրության։

Պ. Գրանվիլ ուրիշ կերպ ե բացատրում կոմս Վարանցով-Դաշկովի քաղաքականությունը. «Կովկասում ցարի ընդհանուր փոխարքա կոմս Վարանցով-Դաշկովի՝ Նիկոլայ 2-րդի մտերիմ բարեկամի խորհրդով ռուս կառավարությունը մեքենան յետ դարձրեց և հայ

յեկեղեցական բռնագրավված հարստությունը վերադարձրեց, վերաբացեց դպրոցները, վերջ տվավ քաղաքական դատավարությանց և բազմադիմի հարստահարության, վերջապես փայփայեց հայերին և նրանց գրավեց ցարական քաղաքականության համար Փոքր-Ասիայում։ Խնդիրը վերաբերում եր Կովկասի հայերի անջատական գրգռումին վերջ դնելու՝ նրանց աչքին պատկերացնելով Արարատի թագավորության հին ծրագիրը՝ Փոքր-Ասիայի մի մեծ մասի գրավումով ընդարձակել մի հայ թագավորություն ցարի գավազանի տակ, ուստի վերակոչում եյին «թագավոր հայ յերկրների» տիտղոսի իրավունքը, տիտղոս, վոր հանդիսանում է ամբողջ Ռուսիայի կայսրների բազմաթիվ անվանումների մեջ։ Վարանցով-Դաշկով՝ նպաստավորված հայ խորհրդականներով՝ ձեռնամուխ յեղավ շատ մեծ ճարտարությամբ և հաջողեցավ քիչ տարիների ընթացքում ստեղծել ամեն տեսակ ստորերկրյա աշխատանք Փոքր-Ասիայում, վորի կարևորությունը հայտնաբերվեց այն վայրկյանին, յերբ համաշխարհային պատերազմը թույլ տվավ ցարիզմին քաղելու այնքան համբերատարությամբ պատրաստված մի գործի պտուղները» (Ն. տեղ, եջ 166—167)։

Յեվ պ. Գրանվիլ յեզականորեն թյուրքական մելամաղձությամբ բացատրում է. «Ուրիշ անգամ Կովկասի խուժաններին գրգռում եյին հայերի դեմ. այժմ սրանք պետք է իբր գործիք ծառայեյին թյուրքերի դեմ։ Հայերի դժբախտությունն առաջ եր գալիս նրանից, վոր թույլ եյին տալիս քաշ տրվել» (եջ 167)։

Անհավասիկ մեր հեղինակն ինչպես է դատում ռուս բարենորոգչական գործունեյությունը Հայաստանում. «Թյուրքիային մահացու հարված տալու համար կարծում եյին, թե նա հոգեվարքի մեջ է գտնվում Բալկանյան պատերազմի ժամանակ. վոչինչ ավելի բարեպատեհ եր, քան հայկական հարցի վերաբացումը, վորի համար համիդյան կոտորածներից սկսված ձեռք եր բերված Յեվրոպայի շահագրգռությունը, և վորը թույլ եր տալիս ցարիզմին՝ մեղսակից 1895 թվի համիդիզմին՝ ներկայանալ աշխարհի կարծիքի առջև իբր հովանավորող այն ժողովրդին, վորին քանի տարի առաջ նպաստեց խողխողել։ Զանազան պարագաներ դյուրացրին այս խաղը «դիվանագիտական», վորի մասին պիտի խոսենք ավելի հետո. առաջին տեղում հայ-քյուրդ հարաբերությունները, հետո 1908 թվից ի վեր թյուրքական նոր վարչաձևի և հայ հեղափոխականների միջև ծագած վերահաս տարաձայնությունը, վորը ցարիզմի գործակալները գիտցան ոգտագործել, յեթե վոչ ստեղծել» (Նույն տեղ, եջ 172—173)։

Պ. Գրանվիլի այս հաստատումի հանդեպ մենք գտնում ենք ռուս րինջագույն գրքի ծանրությունը, ինչպես և ներկա հրատարակու-

թյան մեջ պարզաբանված բոլոր պարագաները։ Բայց հետևենք փոքր ինչ իրեն՝ մանրամասնության փաստաբերության մեջ։

Հայ-քյուրդ հարցի մասին խոսելու համար պ. Գրանվիլ գլխավորաբար հենվում է Ֆրանսիայի հին հյուպատոս պ. Զարժեցկու հրատարակության վրա (Նույն տեղ, եջ 174—179)։ Այս հեղինակն այն կարծիքին է, թե սուլթան Աբդյուլ-Համիդն է, վոր ստեղծել է «հայ և քյուրդ ժողովուրդների միջև, վորոնք յերբեմն դարերով ապրում եյին բավական լավ խելացիությամբ, անվստահության, հակառակության, ատելության մի մշտական հոսանք»։

Պ. Զարժեցկի «միայն մի լուծում է տեսնում՝ յեվրոպական վերահսկողությունը», վորը նա փնտռում է ռուսական գրավումից ավելի։ Մենք տեսանք ավելի վերը, ռուս կառավարությունն ինքն իսկ իր գնդերով գրավելուց ավելի՝ նախընտրում է այս վերահսկողությունը։ Այս չե պ. Գրանվիլի կարծիքը։ Նա պարզ ու կորուկ՝ կողմնակից է Յեվրոպայի ձեռնպահության։ «Յեթե Յեվրոպան լրջորեն կամենում եր բարենորոգումներ՝ փոխանակ Արևելքում դավեր կիրարկելու՝ նա պիտի կարողանար իր նպատակին հասցնել տալ Թյուրքիայում վերանորոգչական շարժումն իր պարզ ձեռնպահությամբ։ Քաղաքական գործերում մի ընդհանուր կանոն է, վոր դրսից պարտադրված մի բարենորոգում՝ առանց խնդրին նյութ դարձած յերկրի խորաթափանց ճանաչողության՝ ստեղծում է միշտ խռովություն, առանց հանգելու մի գործնական արդյունքի. բարենորոգումները պետք է ներսից պարտադրվեն առօրյա գործերին շատ մոտից ծանոթության տեր մարդոց կողմից, գործերի, վորոնք իրենց տեսական դրոշմն են գնում կյանքի վրա» (Նույն տեղ, եջ 178)։ La Turchia farà da se—Թյուրքիան ինքն իր գլխուն, այնպես չե՞, պ. Գրանվիլ։ Արդյոք դուք չե՞ք հիշում, վոր Յեվրոպան հաճախ ձեռնպահ է մնացել։ Որինակ՝ 1896 թ. և 1913 թվի միջև Թյուրքիան վոչ մի ճնշումի չի յենթարկվել Հայաստանի խնդրի համար։ Յեվ վորո՞նք են այս ժամանակամիջոցում գործադրված բարենորոգումները։

Գալով յերիտասարդ թյուրքերի ժամանակին՝ պ. Գրանվիլն ասում է. «Ցարիզմը՝ քան թե մյուս բոլոր պետությունները՝ գլխավոր շահն ուներ փայտ դնելու (արգելք հարուցանելու) թյուրք հեղափոխության անիվի մեջ։ Նրա համար վերջին խլած պետությունների վերերիտասարդացումը, Ոսմանյան պետության ամրապնդումը՝ սկզբունքով անընդունելի եր, և առանց տհաճության չեր, վոր նա տեսնում եր Արևմուտքի կարծիքը, վորը յերիտասարդ թյուրքերի մեջ վողջունում եր ժողովրդապետական (դեմոկրատիկ) մի վարակիչ վոգու գործը վերածնելու Արևելք։ Արդարև՝ այն շատ ծանր

ոխակները, վոր գործեցին այս անփորձ հեղափոխականները նոր վարչաձևի առաջին տարիներում, շատ բան կատարեց նրանց վերաբերմամբ Յեվրոպայի կարծիքը փոխելու մեջ, բայց նրանց ջանքերի անկեղծությունը կասկածից դուրս է, նույնիսկ նրանց վկայությամբ, վորոնք ամենաշատ քննադատում եյին նրանց» (տեսնել Անդրե Մանդելշտամ «Թյուրք նոր վարչաձևի մասին», «Ռուսսկայա միսլ» հանդեսի մեջ. նույն տեղ, եջ 183)։ Մենք անցողակի դիտել ենք տալիս, թե մենք խոստովանել ենք հիշված հոդվածում յերիտասարդ թյուրքերի ազատամտության անկեղծությունը միայն ապրիլի 13-ի պետական հարվածի շրջանի համար։ Իսկ ինչ վերաբերում է պ. Գրանվիլի հավաստիացումին՝ ռուս կառավարության բռնած դիրքի յերիտասարդ թյուրքերի նկատմամբ, մենք նրան ուղարկում ենք մեր այս աշխատության առաջին մասին, և մեր վորակով իբր համեստ աշխատավոր ռուս քաղաքականության նույն միջոցին մերձավոր Արևելքում, մենք ամենավճռական կերպով հերքում ենք։ Պ. Գրանվիլը պետք է վոր ոգտված լինի շատ թունավոր աղբյուրներից։

Սակայն ինչ եր «ցարիզմի վերջնական նպատակը»։ Պ. Գրանվիլ ասում է, թե խնդիրն այս եր. «Մի որ մոտենալ Բոսֆորին, շրջան անելով Սև ծովում հարավային յեզերքով. քանի վոր Բուլղարիան անկախ դառնալով փակել եր Ռուսիայի ուղիղ ճանապարհը դեպի Կ.-Պոլիս»։ Բայց անմիջապես ավելացնում է. «Ռուս բաղձանքները շարունակ բացատրվում են միևնույն առաջնորդող շարժառիթով, այն է՝ դեպի ազատ ծովը մի անցքի վորոնում, վորը հայկական հարցում նրանց պիտի քաշե դեպի Ալեքսանդրետի ծոցը» (եջ 184)։

Վերը տվինք ռուսական նարնջագույն գրքից հայկական բարենորոգումներին վերաբերյալ մի բավական մանրամասն վերլուծում, վորպեսզի ամեն անկողմնակալ ընթերցող կարողանա իր ընտրությունն անել մեր՝ Հայաստանում ռուսական քաղաքական նպատակների համար տված սահմանումներից և պ. Գրանվիլի տվածներից։ Ուստի ավելորդ է նրան վերադառնալ։ Ընդհակառակն, այստեղ պիտի կանգ առնենք այն անորակելի ամբաստանության վրա, վորն այս հեղինակն ուղղում է ռուսական դիվանագիտության այն միջոցների նկատմամբ, վոր նրան պիտի ներկայանար գործածել իր նպատակներին հասնելու։

«Այն որվանից, ասում է հեղինակը, յերբ 1907 թվին անգլո-ռուսական համաձայնությունն ազատ ասպարեզ թողեց ռուսական դիվանագետին, «ռուսական գործակալները Փոքր-Ասիայում ուժեղացրին

իրենց գործունեյությունը յերկու ճակատի վրա։ Պետք եր մի կողմից ստեղծել մի պատրվակ ցարի մերձավոր միջամտության համար, մյուս կողմից միջազգային կարծիքի, վոր շահագրգռված է հայերի ճակատագրով, թե վերջինները փափագում են իր հովանավորությունը։ Մի պատրվակ ունենալու համար բավական եր արծարծել քյուրդ-հայ հակամարտությունը։ Ռուս հյուպատոսները՝ հայկական կոչված վեց նահանգներում հայթայթեցին զենք և ռազմանյութ, վոր նրանք բաժանում եյին հեղափոխականներին՝ առանց մոռանալու և քյուրդերին՝ պատրաստ ռուսների հետ միասին փոխակալությամբ քայլելու թյուրք նոր վարչաձևի դեմ, վորը փորձեց հայերի ոգտին ջնջել նրանց արտոնությունները» (նույն տեղ, եջ 185—186)։

Յեվ վորո՞նք են պ. Գրանվիլի ասելի ամբաստանության ապացույցները։ Քննենք նրանք մի առ մի։

1. Պ. Վալտեր Գինես (Walter Guiness), վոր ճամփորդել է Հայաստանում 1913 թ. վերջերը, մատնանշվում է National Rewiew-ի մեջ «Ռուսիայի մի ազդու գաղափարածավալի (պրոպագանդ) բազմաթիվ ցուցումների վրա». այս ճանապարհորդը հաստատել է քյուրդերի սերը դեպի Ռուսիա, վորոնցից շատերը զինված են ռուսական հրացաններով. նա մինչև իսկ մի անմատչելի գյուղում գտել է մի ռուսի քյուրդական հագուստով և քյուրդական կյանքով ապրող (եջ 186)։ 1913 թ. ապրիլին Մոսուլում ֆրանսիական կրոնական առաքելության գլխավորն իր պարիզցի բարեկամին մասնակից է արել քյուրդական պետերի մի ժողովին, վորը քննում եր այն հարցը գիտնալու համար, թե նրանք պետք է քայլեն «Ռուսիայի հետ, վորը նրանց գրգռում է առաջ բերելու մի խռովություն, վորպեսզի նույն միջոցին պատրաստված միջամտություն կատարե». մի ինչ-վոր Բեգակ խաղում է յեղել Ռուսիայի գրգռիչ գործակալի (աժան պրովոկատոր) դերը։

«Ֆրանսիական միսիոնարներն են յեղել, բացագանչում է հոգեհույզ կերպով պ. Գրանվիլ, վորոնք 1913 թ. միջամտել են արգելելու Նիկոլայ 2-րդի կողմից կանխամտածված կոտորածները. Նիկոլայի դեսպաններն արդեն գործունեյության մեջ եյին «շահելու» յեվրոպական պաշտոնարանները (կաբինետ) ձեռք բերել համաձայնություն, վորպեսզի ցարին վստահեն Փոքր-Ասիայի քրիստոնյաների հովանավորությունը. առաջ բերելով քյուրդ-հայկական կոտորածների մի նոր շարք, վորի շնորհիվ կարելի լիներ ահազանգ հնչեցնել Յեվրոպայում, ջնջել համակրության վերջին մնացորդը, վոր նոր Թյուրքիան դեռ ուներ անգլիական հասարակական կարծիքի մեջ և ռուսական միջամտությունը պարտադրեր իբր մի բարեգործություն քրիստոնյաների համար» (եջ 187)։

Մենք մի փոքր կասկածում ենք, վոր քյուրդերը ճշմարտապես սիրում են ռուսներին, ինչպես յենթադրում է պ. Վալտեր Գինես. ներկա պատերազմում նրանք ավելի շատ հակառակ ապացույցները տվին: Ինչ վերաբերում է Մոսուլի ֆրանսիական առաքելության գլխավորի կարծեցյալ պատմությանը, մենք փարում ենք ամենաբարձր յերևակայության շրջանը: Ռուսաստանը յերբեք չի գրգռել քյուրդերին հայերի դեմ, այլ, ընդհակառակն, ռուսական հյուպատոսական գործակալները նախարարի հրամանն ունեյին ոժանդակելու, վորքան այս կարող եր նրանցից կախում ունենալ, հաստատելու լավ հարաբերություններ յերկու տարրերի միջև:

2. Պ. Գրանվիլը չարչրկում է անգլիական պետական մարդոց ինչ-ինչ հայտարարությունների իմաստը և հայտնաբերում է, վոր նրանց «խորհրդավոր» ակնարկությունները ծածկում եյին Անգլիայի անհանգստությունը՝ տեսնելով վոր Ռուսիան յուրացնում է հայկական հարցը և ոգտագործում այն խռովությունները, վոր նա կարող է դյուրավ հարուցել Յեվրոպային, քանի վոր ուղղակի պատրաստված եր զինվորապես հաստատվելու վեց նահանգներում» (եջ 189): Մենք ավելի շատ հավատում ենք, վոր ակնարկված հայտարարությունն արտահայտում է Թյուրքիայի կողմից գրգռված նոր կոտորածների յերկյուղը: Թող ընթերցողը դատե: Լորդ Բրայս 1913 թվի մարտի 8-ին ասել է. «Ինչ-ինչ նշաններ ցույց են տալիս, վոր հայերը լրջորեն կոչ են արել ռուսական միջամտության... Յենթադրեցեք, վոր հայերը խնդրում են հովանավորություն, արդյոք պիտի հակառակենք այս պահանջին, վոր Ռուսիան գործադրել տա բարենորոգումները»: Յեվ սըր Եդվարդ Գրեյ՝ մայիսի 30-ին «զգուշորեն ակնարկություն է անում՝ արտաքին քաղաքականության մասին իր ընդհանուր հայտարարության մեջ «մտահոգության պատճառով», վոր ծնվել է Թյուրքիայի ասիական նահանգներում խռովություններ, կոտորածներ առաջ գալու հնարավորությունից, մտահոգություն, վոր զբաղեցնում է Անգլիայի լավագույն քաղաքականությունը փափագող արգելելու, վոր չի ծագի Փոքր-Ասիային վերաբերյալ մի քաղաքական հարց» (եջ 189): Սըր Եդվարդ Գրեյ այս խոսքերն արտասանելիս արդյոք մտածել է Ռուսիայի՞ կողմից գրգռված կոտորածների մասին: Իսկապե՜ս, պ. Գրանվիլ:

3. Պ. Գրանվիլ ցուցադրելու համար Ռուսիայի գրավումներ անելու նպատակները Հայաստանում՝ ճգնում է ներկայացնել Եջմիածնի կաթողիկոսին և Պողոս Նուբար-փաշային իբր ցարի պարզ գործակալներ: Նա ավելացնում է, վոր 1913 թ. վոչ միայն Ֆրանսիան ու Անգլիան, այլ նույնիսկ գերմաններից վոմանք (Լեպսիուս և Ռորբախ) ցարիզմի խաղը խաղացին Պարիզում «հայ միջազգայնականի գումարման» ժամանակ (եջ 189—192): Մենք այս գրքում բավական ճշտորոշումներ արինք հայկական հարցին վերաբերյալ՝ Ռուսիայի դերի մասին, ուր կարող ենք ուղարկել պ. Գրանվիլին: Ռուսիան յերբեք չի կամեցել գրավել Հայաստանը: Ինչ վերաբերում է հայերին, նրանք փափագել են ամեն բանից առաջ իրենց թշվառ ճակատագրի բարելավումը: Յեվ ապահովաբար նրանք պետք է նախընտրեյին վորևե մեկի վարչաձևը, վորի պահպանումն այնքան սիրելի չեր թվում պ. Գրանվիլի սրտին:

4. Բոլոր նախընթացի մեջ չկա Ռուսիայի դեմ պ. Գրանվիլի նետած ահագին ամբաստանության ապացույցի ստվերն անգամ. յերբ նա ասում է (եջ 189) «բայց ճակատից Թյուրքիայի վրա հարձակվել՝ առանց նրա կռնակին խրելու մի դանակ, հարմար չեր ցարիզմի մեթոդին, վորը դյուրավ գտնում եր մի գործիք, ընդունակ գործադրելու այդպիսի մի պետք: Ի՞նչ կար ավելի դյուրին, քան հայերին ու քյուրդերին նետել իրարու դեմ՝ կյանքն անտանելի դարձնելով թե մեկի և թե մյուսի համար, վորպեսզի նրանք փափագեն «ազատվել», վոր նրանց համար պիտի բերե ցարն այն որը, յերբ միջազգային բարեդիպությունը թույլ կտա նրան այս բանը»:

Ահավասիկ մի թանձրացած դեպքի միակ առաջբերումը *հրաշավոր ամբաստանության հենարանի համար. «1913 թվի գարնան, ասում է պ. Գրանվիլ, քյուրդերի մի ավազակախումբ՝ կաշառված Բիթլիսի ռուսական հյուպատոսի կողմից՝ փորձեց նույն տեղում հայերի կոտորած առաջ բերել, ճիշտ այն դեպքը, վոր պ. Սազոնով ծանուցեց յեվրոպական պաշտոնարաններին՝ Փոքր-Ասիայի իր հյուպատոսներին հավատալով: Այս կոտորածներն ազդանշան պիտի տային ցարական միջամտության. բայց Դոան կողմից խեղդվեց իր սաղմում, վորը հոտն առնելով, կենտրոնացրեց Բիթլիսում զինվորների մի ուժեղ զորամաս՝ պատրաստ լինելու ամենափոքր խռովության դեպքում: Քյուրդ ապստամբները դրվեցին անկարելիության մեջ նախքան կարողանային սպանել մի հայ անգամ. իսկ նրանց գլխավորը փախավ ռուսական հյուպատոսարանը, վորը ամբողջ գործի մեղսակից և կազմակերպողն եր: Միջամտության վտանգը բոլորապես վերացված եր, իսկ ռուսական հյուպատոսը չպատժվեց իր կառավարությունից. միայն պ. Սազոնով չընդունեց նրան ձևի համար և յետ կանչեց Բիթլիսից՝ այնքան անշնորհք գտնվելու համար, վոր ուղղակի հանցանքի մեջ բռնվեց» (եջ 190—191):*

Յեվ այս ամբաստանության ապացույցն ահավասիկ. «Նրանց, վորոնք կարող են կասկածել այսպիսի մի գործի ճշմարտության

վրա, հիշեցնում՝ ենք, թե նա տարվեց յերեսփոխանական ժողովին (սարին պալատ) և վոր անգլիացի շատ յերեսփոխաններ տեղյակ եյին այս բանին նույնիսկ այն րոպեյին, յերբ այս դեպքը տեղի յեր ունենում։ Լորդ Լամինգտոն (Lamington) լորդերի պալատում մի հարցապնդումի նյութ դարձուց» (եջ 191, ծան. 1)։ Ուրեմն Անգլիայում մի հարցապնդում յեղավ Բիթլիսի քյուրդերի ապստամբության մասին։ Բայց պ. Գրանվիլ չի տալիս նրա հետևանքը։ Յեվ ահա այս է բոլորը։

«Նրանք, վոր կարող են կասկածել» գնահատենք այս «ապացույցի» ուժը։ Իսկապես 1913 թվին տեղի ունեցավ քյուրդերի ապստամբություն։ Ինչպես վոր հայտարարել եր յերեսփոխան Վալտեր Գինեսը՝ պ. Գրանվիլի սիրելին, թյուրքերն ատված եյին քյուրդերից,—ինչպես և հայերից, ինչպես և պետության բոլոր վոչ-թյուրք ցեղերից, ավելացնում ենք մենք։ Յեվ ապստամբությունը ճնշելուց հետո իսկապես միքանի գլխավորներ ապաստանեցին ռուսական հյուպատոսարանը, վորը նրանց չհանձնեց թյուրք մարդասպաններին։ Վորովհետև Արևելքում ռուսական ներկայացուցիչները յերբեք չեն հանձնում քաղաքական հանցագործներին։ Վոչ Հուսեյին Ջահիդը և Ջավիդ-բեյերը՝ 1909 թ. մարտի 31-ին Կ.-Պոլսում ապաստանած ռուսական դեսպանատունը և վոչ դերվիշ Վահդեդի՝ նրանց հակառակորդը, վորը քիչ հետո ապաստան գտավ Իզմիրի հյուպատոսարանը, վոչ ազատական կուսակցության բազմաթիվ անդամները չհանձնվեցին իրենց քաղաքական հակառակորդներին։ Միակ բացառությունը Կավակլի Մուստաֆայի դեպքն է, վորը Թալաաթ և վոստիկանապետ Ազմի ձեռք ձգեցին ստոր կերպով խաբելով դեսպանին նրա ինքնության մասին։ Ուստի զարմանալու վոչինչ չկա, վոր ռուս հյուպատոսը չե հանձնել իրեն ապաստանած փախստական քյուրդերին։ Իսկ ինչ վերաբերում է Սազոնովի դեմ ուղղված ամբաստանության, նա անհիմն է. անշուշտ պ. Եդգար Գրանվիլը չէ, վոր պիտի հաջողի նվաստացնել այդ կատարյալ ջենտլմեն մարդու համաշխարհային համբավը, այս մեծ պարկեշտ մարդու, վորի քաղաքականությունը միշտ դրոշմված է յեղել ամենաբարեխիղճ ուղղամտությամբ։ Բայց ինչպես վոր պ. Սազոնովի ամբաստանությունը բովանդակում է նաև նրա կարծեցյալ գործիքի՝ Ռուսիայի Բիթլիսի հյուպատոս պ. Շիրկովինը, անտարակույս նույնպես և Ռուսիայի Կ.-Պոլսի դեսպանությանը, վորին պատկանելու մեծ պատիվն ունեցանք ամբողջ 16 տարի, մենք հայտարարում ենք վճռականորեն.—

Պ. Եդգար Գրանվիլի պնդումները՝ Ռուսիայի գրգռիչ դերի մասին Բիթլիսի գործում և Հայաստանում ընդհանրապես անհեթեթ յեվ սուտ զրպարտություններ են, վորոնք մերժում ենք ամենամեծ զայ-

րույթով և ամենակատարյալ արհամարհանքով։ Մեր պաշտոնական գիրքը մեզ հնարավորություն է տալիս այս շրջանում ճանչնալ ռուսական քաղաքականության բոլոր մանրամասնությունները, վորը մենք հակադրում ենք իբր ամենամեծ պաշտոնական հերքումն այս ակնարկությունների։ Նրանք թելադրված են մի շատ նախանձահույզ թյուրքասերի այն հաստատ հոգատարությամբ, վոր Ռուսիայի վրա նետվի բոլոր նախատինքը, վոր կապված է թյուրք անվան հետ՝ հայկական կոտորածներից սկսած։ Ռուսական հեղափոխության մեջ պ. Գրանվիլ կարծել է գտնել հարմար առիթը իր թյուրք բարեկամներին մի ծառայություն մատուցանելու՝ գործածելով փոքրիկ նըրբամտություններ ցարիզմը փոխանցել Ռուսիային։ Ռոմանյան պետության նոր բախտախնդիր ասպետը չի աջողել սրանում։ Վորովհետև յեթե ներքին քաղաքականության ասպարեզում ցարիզմը կարողացավ իր լծի տակ կորացնել ռուս ժողովրդին, նա, ընդհակառակը, անգիտակցաբար յենթարկվեց ռուսական մեծ հոգու ազդեցությանը, յերբ նա իր դերն եր խաղում միջազգային ասպարեզում։ Իր ցարական վարչաձևի մթին խորքից Ռուսաստանն Արևելքում յերբեք չե վառել ուրիշ կրակ, բայց յեթե միայն ազատության։ Այն ռուսական նավերը, վորոնք կռվում եյին Նավարինում, Նիկոլայ 1-նի նավերն եյին։ Յեվ ռուս գեղջուկներն են՝ ներսում համարյա՝ ստրուկ, վորոնք կռվեցին ռումինների, բուլղարների, սերբերի ազատության համար։ Արևելքի համար, ասում է պ. Գրանվիլ, «ռուս ժողովրդի միջոցով ցարիզմի տապալումը ամեն պարագայի ամենամեծ դեպքն է, վոր կատարվում է յերեք դարուց իվեր։ Նա նշանակում է հույսի վերանորոգում արդյունավետ աշխատության (նույնտեղ, եջ 208)։ Ցարիզմի ազդեցությունից բուժված Յեվրոպայի համար առաջադիմության ծարավի Արևելքի հետ։ Ծերունի շահագործող Յեվրոպայի սռնակոշիկի տակ Ասիան ճզմելու դրությունն ապրել է իր ժամանակը»։ Մենք նույնպես թշնամի յենք Ասիայի ճըզմվելուն, պ. Գրանվիլ։ Ահա թե ինչու համար մենք հույս ունենք, թե հայերը, քյուրդերը, արաբները, սիրիացիները, հույները, հրեաները,—այն բոլոր խեղճ ցեղերը, վորոնք դարերից իվեր հեծում են Թյուրքիայի սռնակոշիկի տակ—վերջապես պիտի ազատվեն ընդհանուր արյունի մի հեղեղով, վոր յերեք տարուց իվեր թափում են արդեն Անտանտայի ազգերը, և վորի մեջ այնքան արյունի միլիոնավոր կաթիլներ կան ռուս ժողովրդի։ Դուք չեք աղոտացնի Ռուսիայի պատմական փառքը, պ. Գրանվիլ։

Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Биб...
7/XI 1922

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		էջ
	Առաջաբան	I
I.	*Պատմության միքանի էջեր*	5
II.	*Ադանայի դեպքերը*	21
III.	*Տաճկահայաստանի ռեֆորմների նախագիծը*	33
IV.	*Արևելյան Անատոլիայի անցուդարձը համաշխարհային պատերազմի ընթացքում*	50
V.	*Յեզրակացություն*	86
VI	*Հավելվածներ*	91

ՀՀ Ազգային գրադարան
NL0201347